

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՏԻՈՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ
ԴՐԱ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ 2009-2012ԹԹ. ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ	4
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	5
ԳԼՈՒԽ I. ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 2003-2007 ԹԹ.....	7
1.1. Հայաստանում կոռուպցիայի մակարդակի գնահատականը, գերիշխող տեսակները, բնագավառներն ու ոլորտները	7
1.2. ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրա միջոցառումների իրականացման 2003-2007 թթ. ծրագրի արդյունքները.....	10
1.3. Կոռուպցիայի դեմ պայքարում Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունները.....	17
ԳԼՈՒԽ II. ՀՀ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 2008-2012 ԹԹ.....	20
2.1. Կոռուպցիայի դեմ պայքարի արդյունավետ, համակարգված քաղաքականությունը.....	20
2.2. ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման միջոցառումների ծրագրի հիմնական սկզբունքներն, նպատակներն ու ակնկալվող արդյունքները	20
2.3. ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության հիմնական ուղղությունները և խնդիրները	24
2.4. Հակակոռուպցիոն քաղաքականություն իրականացնող մարմիններ	25
2.5. Կադրերի պատրաստումը և վերապատրաստումը, կոռուպցիայի մասին տեղեկատվության կառավարումը	28
ԳԼՈՒԽ III. ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ.....	32
3.1. Կոռուպցիայի կանխարգելման միջոցները.....	32
3.2. Կոռուպցիայի քրեականացումը և իրավապահ գործունեությունը	36
3.3. Կոռուպցիայի դեմ պայքարում քաղաքացիական հասարակության աջակցությունը	43
ԳԼՈՒԽ IV. ՀՀ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ, ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁԻՆ ՈՒՐՏՆԵՐՈՒՄ ՈՒ ՃՅՈՒՂԵՐՈՒՄ	49
4.1. Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտ	49
4.2. Հանրային ֆինանսների կառավարման ոլորտ.....	51
4.3. Պետական գնումների համակարգ.....	54
4.4. Հարկային և մաքսային համակարգեր.....	55
4.5. Կրթության ոլորտ	58
4.6. Առողջապահության ոլորտ.....	61
4.7. Դատական համակարգ.....	68
4.8. Քրեակատարողական ծառայություն	70
4.9. Իրավաբանական անձանց պետական գրանցում.....	74
4.10. Դատական ակտերի հարկադիր կատարման ծառայություն.....	76
4.11. Ոստիկանական ծառայություն	78
4.12. Քաղաքական հատված և քաղաքական կոռուպցիա	81
4.13. Ընտրական համակարգ	85
4.14. Տեղական ինքնակառավարում.....	90

4.15. Մասնավոր հատված..... 99

ԳԼՈՒԽ V. ՀՀ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՏԻՈՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԴՐԱ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ
ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ..... 101

ՀԱՎԵԼՎԱԾ: ՀՀ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՏԻՈՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ և ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ 2009-2012թթ.
ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ և ԳՆԱՀԱՏՄԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ 104

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԱԶԲ	Ասիական զարգացման բանկ (ADB)
ԱԺ	Ազգային ժողով
ԱՀՌԾ	Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիր
ԱՄՆԱԶ	ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալություն (USAID)
ԱՄՊ	Առևտրի միջազգային պալատ
ԱՊՀ	Անկախ պետությունների համագործակցություն (CIS)
ԱՏԵՀՑ	Անցումային տնտեսությամբ երկրների հակակոռուպցիոն ցանց (OECD/ACN)
ԲՀԻ	Բաց հասարակության ինտիտուտ (OSI)
ԲՓՀ	Բերթելսմանի փոխակերպման համաթիվ (BTI)
ԳՄՀՀ	Գործարար միջավայրի և ձեռնարկությունների գործունեության հարցման (BEEPS)
ԵԱՀԿ	Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպություն (OSCE)
ԵԽ	Եվրոպայի խորհուրդ (CoE)
ԵԿԱ	Եվրոպայի և կենտրոնական Ասիայի [երկրներ]
ԵՀՔ	Եվրոպական հարևանության քաղաքականության (ENP)
ԶԼՄ	Զանգվածային լրատվության միջոցներ
ԶԿԵԲ	Զարգացման և վերակառուցման եվրոպական բանկ (EBRD)
ԷԱԳ	Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի Եվրասիական խումբ (EAG)
ԹԻ	Թրանսփարենսի ինթերնեշնլ (TI)
ԿԱ համաթիվ	Կառավարման արդյունավետության համաթիվ
ԿԲ	ՀՀ Կենտրոնական բանկ
ԿԴՊՊԽ	Կոռուպցիայի դեմ պայքարող պետությունների խումբ (GRECO)
ԿՈ համաթիվ	Կառավարման որակի համաթիվ
ԿԸՀ	Կոռուպցիայի ընկալման համաթիվ
ԿՀՀ	Կոռուպցիայի հսկելիության համաթիվ
ԿՊԽ	Կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդ
ՀԱԱ	Համախառն ազգային արդյունք
ՀԲ	Համաշխարհային բանկ (WB)
ՀԲԻ	Համաշխարհային բանկի իֆստիտուտ
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՌԻՄԾ	Հակակոռուպցիոն ռազմավարություն և դրա իրականացման միջոցառումների ծրագիր
ՀՀ ՖՆ	ՀՀ Ֆինանսների նախարարություն
ԶԻՀ համաթիվ	Զայնի իրավունքի և հաշվետվողականության համաթիվ
ՄԱԶԾ	Միացյալ ազգերի զարգացման ծրագիր (UNDP)
ՄԱԿԿԴԿ	Միավորված ազգերի կազմակերպության Կոռուպցիայի դեմ կոնվենցիա (UNCAC)
ՄԱՆԻՎԱԼ	Փողերի լվացման դեմ պայքարի միջոցառումները գնահատող հատուկ փորձագետների հանձնաժողով (MONEYVAL)
ՄԶՆ	Մեծ Բրիտանիայի միջազգային զարգացման նախարարություն (DFID)
ՄԻՊ	Մարդու իրավունքների պաշտպան
ՄՀ	Հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման մոնիտորինգի հանձնաժողով
ՏԶԿ/ԹԻ	Տարածաշրջանային զարգացման կենտրոն/Թրանսփարենսի ինթերնեշնլ
ՏՀԶԿ	Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն (OECD)
ՄՑԵ	Միջինից ցածր եկամուտ ունեցող երկրներ
ՓԼ/ԱՖ	Փողերի լվացում և ահաբեկչության ֆինանսավորում
ՔԱ համաթիվ	Քաղաքացիական ազատությունների համաթիվ
ՔԻ	Քաղաքական իրավունքների համաթիվ
ՔՕԽ	Քաղաքացիական ծառայության խորհուրդ
ՔԿ համաթիվ	Քաղաքական կայունության համաթիվ
ՔՕ	Քրեական օրենսգիրք
ՕԳ համաթիվ	Օրենքի գերակայության համաթիվ
ՖԱՏՖ	Ֆինանսական միջոցառումների աշխատանքային խումբ (FATF)
ՖԴԿ	Ֆինանսական դիտարկումների կենտրոն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ կառավարությունը կոռուպցիայի դեմ պայքարը ճանաչել է իր գործունեության առանցքային հիմնահարցերից մեկը: **2000թ.** մայիսին՝ առաջին անգամ սահմանելով կոռուպցիայի դեմ պայքարի պետական քաղաքականության հիմնական ուղղությունները, կարևորելով արդյունավետ և կշռադատված կադրային քաղաքականության իրականացումը, պետական ծառայողների սոցիալական և իրավական պաշտպանության պետական երաշխիքների ապահովումը, բարձրաստիճան պաշտոնատար անձանց եկամուտների հայտարարագրումը, պետական գնումները կարգավորող օրենսդրության կիրարկումը, ձեռնարկությունների լիցենզավորման գործընթացն ու պետական գրանցումը, ինչպես նաև տնտեսության ստվերայնացման և քրեականացման դեմ պայքարը:
2. Վերջին տարիներին ՀՀ կառավարությունը ընդունելով կոռուպցիայի հետևանքով առաջացող վտանգները՝ կոռուպցիայի դեմ պայքարելու մի շարք քայլեր է ձեռնարկել: Այսպես, **2001-2003թթ.** ՀՀ կառավարությունն ամբողջականացրեց կոռուպցիայի դեմ պայքարի պետական քաղաքականությունը, օրենսդրական և ինստիտուցիոնալ հիմնական շրջանակները: Մշակվեց և ՀՀ կառավարության կողմից ընդունվեց ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման միջոցառումների **2003-2007թթ.** ծրագիրը (ՀՌԻՄԾ), որը սահմանում է կոռուպցիայի դեմ պայքարի պետական քաղաքականությունը: ՀՌԻՄԾ նպատակը կոռուպցիայի հաղթահարումն է, այն ծնող եւ տարածմանը խթանող պատճառների ու պայմանների վերացումը, հանրապետությունում բարոյահոգեբանական առողջ մթնոլորտի ձևավորումը:
3. Կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում ՀՀ կառավարության ստանձնած պարտավորությունների կատարման և ՀՌԻՄԾ իրականացումն ապահովող քաղաքական կամքի դրսևորման կարևորագույն գրավականը կոռուպցիայի դեմ պայքարի, պետական կառավարման արդյունավետ համակարգի ձևավորման ուղղությամբ որդեգրված քաղաքական ուղենիշներն ու սահմանված թիրախներն են: Մասնավորապես, ՀՀ Նախագահի նախընտրական ծրագիրը ՀՀ կառավարման համակարգի զարգացման **2012թ.** թիրախ է ընդունում Եվրոպական միության նորանդամ երկրների ներկա մակարդակը, նշելով, որ կառավարման համակարգը բնութագրող միջազգայնորեն ընդունված ցուցանիշներով **2012թ.** Հայաստանը կգերազանցի այդ երկրների ներկա ցուցանիշներին: Այս քաղաքական պարտավորությունն անմիջականորեն ընկած է սույն ռազմավարության նպատակների և խնդիրների ձևակերպման հիմքում: Այս սկզբունքով են ընտրված ՀՌԻՄԾ իրականացման ակնկալվող արդյունքների թիրախները:
4. **2008թ.** ապրիլին ՀՀ Ազգային ժողովը հաստատեց ՀՀ Նախագահի **2008թ.** փետրվարի 29-ի ընտրությունների արդյունքում ձևավորված կառավարության ծրագիրը, որում կոռուպցիայի դեմ պայքարը ճանաչվում է պետական քաղաքականության գլխավոր բաղադրիչներից մեկը: ՀՀ կառավարությունը կոռուպցիայի դեմ արդյունավետ պայքարի և հասարակության վստահության ապահովման գլխավոր նախապայման է համարում իրական քաղաքական մրցակցությունն ապահովող բազմակուսակցական համակարգի լիարժեք կայացումը: ՀՀ կառավարությունը նախանշել է ՀՌԻՄԾ հիմնական ուղղությունները. մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանություն, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության արդյունավետության բարձրացում, կոռուպցիայի դեմ պայքարի մասին հասարակության իրազեկում, կոռուպցիայի դեմ պայքարում քաղաքացիական հասարակության ներգրավում և այդ գործընթացում նրա ակտիվության բարձրացում, պետական կառավարման համակարգի կատարելագործում, պետական կառավարմանը հասարակության մասնակցության արդյունավետության բարձրացում, օրենքի առջև բոլորի հավասարության սկզբունքի ապահովում՝ հասարակության բոլոր անդամների համար, այդ թվում՝ իշխանավորների, տնտեսավարողների համար հավասար մրցակցային դաշտի ձևավորում և ստվերային տնտեսության կրճատում: ՀՀ կառավարությունը պարտավորվել է նաև հետամուտ լինել ՀՌԻՄԾ-ում ԳՐԵԿՈ-ի և ՏՀԿ անցումային տնտեսություններ ունեցող երկրների հակակոռուպցիոն ցանցին ՀՀ անդամակցությունից բխող պարտավորությունների և ՄԱԿԴԿ պարտավորությունների կատարմանը, ինչպես նաև դրանցից բխող իրավական ակտերի ընդունմանը:
5. Արդյունավետ պետական կառավարումը, մասնավորապես պայքարը կոռուպցիայի դեմ, ճանաչվել է ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության գերակա ուղղություններից մեկը: ՀՀ Ազգային անվտանգության ռազմավարությունը ամրագրել է, որ ինստիտուցիոնալ բարեփոխումները մասնավորապես միտված են ժողովրդավարական պետության հզորացմանը, պետական կառավարման մարմինների արդյունավետ գործունեության, դատական իշխանության անկախության

և անաչառության ապահովմանը, որոշումների նախապատրաստման և վերահսկողության գործընթացներում քաղաքացիական հասարակության դերի բարձրացմանը, կոռուպցիայի, մասնավորապես կաշառակերության դեմ պայքարի ուժեղացմանը:

ԳԼՈՒԽ I. ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 2003-2007 ԹԹ.

1.1. Հայաստանում կոռուպցիայի մակարդակի գնահատականը, գերիշխող տեսակները, բնագավառներն ու ոլորտները

6. Հայաստանում Կոռուպցիայի ընկալման համաթիվը 1999-2000 թվականների 2.5 միավորը հետագա տարիներին տատանվելով 3.0 միավորի շուրջ, 2007թ.-ին կազմել է 3.0: Հայաստանը 163 երկրների շարքում զբաղեցնելով 99-րդ հորիզոնականը, առավել բարվոք դիրք է գրավում թե՛ ԱՊՀ երկրների, թե՛ Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի 20 երկրների շարքում:
7. Համաձայն Համաշխարհային Բանկի Ինստիտուտի Կոռուպցիայի Հսկողության Համաթվի (ԿՀՀ), Հայաստանում կոռուպցիայի հսկողությունը 2006թ.-ին բարելավվել է: 2006թ. Հայաստանը 209 երկրների շարքում գտնվել է 35-րդ տոկոսային հորիզոնականում: Այս ցուցանիշով ՀՀ-ն ԱՊՀ երկրների շարքում գրավում է երկրորդ տեղը, զիջելով միայն հարևան Վրաստանին: ԿՀ համաթիվով 2006թ. Հայաստանը զիջում է թե՛ ԵԿԱ երկրների միջին ցուցանիշին, թե՛ Կենտրոնական և արևելյան Եվրոպայի երկրների միջինին, թե՛ ցածր միջին եկամուտ ունեցող երկրների միջինին: Միաժամանակ, այս ցուցանիշով Հայաստանը գերազանցում է ՄՅԵ խմբում ԵԿԱ տարածաշրջանի միջին ցուցանիշը (տե՛ս աղյուսակ 1 և 2):

Աղյուսակ 1. Հայաստանի համար ՀԲԻ կառավարման ցուցանիշների դինամիկան (տոկոսային գնահատական, 0-100, 1998-2006թթ.)

	1998	2000	2002	2003	2004	2005	2006
1. Կարգավորման որակ	26.6	28.1	56.7	57.1	53.2	56.9	59.0
2. Կառավարման արդյունավետություն	29.7	18.7	45.5	45.5	44.5	49.3	51.2
3. Չայնի լսելիություն և հաշվետվողականություն	35.3	37.2	34.8	33.3	30.0	30.4	26.9
4. Քաղաքական կայունություն	22.6	17.9	23.6	28.3	31.6	38.2	35.1
5. Օրենքի գերիշխանություն	38.0	36.1	35.6	39.4	38.0	41.5	38.1
6. Կոռուպցիայի հսկողություն	21.6	23.0	32.4	33.8	28.9	33.5	35.0

Աղյուսակ 2. ԱՊՀ և Արևելյան Եվրոպայի երկրների կառավարման համակարգի ցուցանիշները 2006թ. (տոկոսային գնահատական, 0-100)

	Կոռուպցիայի հսկողություն	Կառավարման արդյունավետություն	Կարգավորման որակ	Չայնի լսելիություն և հաշվետվողականություն	Քաղաքական կայունություն	Օրենքի գերիշխանություն
Սլովենիա	81.1	84.4	72.7	84.6	82.7	75.2
Էստոնիա	80.1	85.3	92.2	78.8	71.2	80.5
Լատվիա	68.4	73.5	82.4	72.6	73.6	63.8
Չեխիա	66.0	80.1	79.5	77.4	70.2	73.3
Սլովակիա	65.5	78.2	83.4	78.4	76.4	61.4
Լեհաստան	60.2	69.2	69.3	76.9	54.3	59.0
Բուլղարիա	57.3	60.2	66.3	65.4	57.2	50.0
ԱԵ և ՄԲ՝ միջինը	56.3	62.1	65.7	65.3	56.6	53.3
Ռումինիա	53.4	53.6	62.0	61.5	50.0	50.5
Վրաստան	44.7	50.7	44.4	44.7	21.6	32.9
Հայաստան	35.0	51.2	59.0	26.9	35.1	38.1
Մոլդովա	30.1	22.3	41.5	32.7	29.8	32.4
ԱՊՀ միջինը	22.2	26.3	28.2	21.3	27.2	20.0
Բելառուս	21.4	10.4	4.9	4.3	52.4	11.9

Տաջիկստան	18.9	14.2	17.6	11.1	10.6	12.9
Ղազախստան	18.4	33.6	36.1	19.7	46.2	23.8
Ադրբեջան	15.0	27.5	34.1	14.9	15.9	22.4
Ղրղզստան	10.2	21.3	28.3	27.9	13.0	10.5

*Արևելյան Եվրոպայի և Մերձբալթյան երկրներ

8. Հայաստանում կոռուպցիայի հիմնական տեսակները կարելի է դասակարգել հետևյալ խմբերի գործառնական, վարչական և քաղաքական կոռուպցիա:
9. **Գործառնական կոռուպցիան** ուղղված է գործընթացներն ու պաշտոնական ընթացակարգերն արագացնելուն և գործառնական ծախքերը կրճատելուն՝ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի և օրինական գործառնությունների շրջանակներում քաղաքացուն կամ տնտեսվարողին հանրային ծառայությունները, մասնավորապես, սահմանվածից կարճ ժամկետում մատուցելու նպատակով:
10. Գործառնական կոռուպցիան հայաստանյան ընկերությունները դիտում են որպես իրենց գործունեության համեմատաբար երկրորդական խոչընդոտ: ՀՖԻ-ի տվյալների համաձայն հայաստանյան ընկերությունների շուրջ **10%**-ն է համարում, որ ոչ պաշտոնական վճարներ կատարում է հաճախակի: Ոչ պաշտոնական վճարները մեծ բեռ են հատկապես փոքր ձեռնարկությունների համար՝ կազմելով տարեկան իրացման շուրջ **1.2%-ը**: Հատկանշական է նաև, որ պետական ծառայողների հետ շփման և պաշտոնական ընթացակարգերի վրա ավելի շատ ժամանակ տրամադրում են միջին և մեծ ձեռնարկությունների ղեկավարները: Համեմատության համար նշենք, որ ՄՑԵ երկրներում գործարարները գրեթե կրկնակի ավելի ժամանակ են հատկացնում պաշտոնյաների հետ շփումներին և վարչական ընթացակարգերին քան նրանց հայաստանյան գործընկերները: ԵԿԱ երկրների համեմատ ևս հայաստանյան գործարարները նվազ ծանրաբեռնված են պաշտոնական կամ վարչական փոխհարաբերություններով:
11. Գործառնական կոռուպցիայի մակարդակը կրճատվել է կարգավորման քաղաքականության և կարգավորման մեխանիզմների շարունակական բարելավման հաշվին: Համաձայն ՀՖԻ Կարգավորման որակի (ԿՈ) համաթվի **1996**թ. Հայաստանը գտնվում էր կարգավորման առավել վատ համակարգեր ունեցող երկրների ամենացածր խմբում, իսկ **2003** թվականին այդ ցուցանիշը թռիչքաձև բարելավվել է, իսկ Հայաստանը դիրքերն ամրապնդել է երկրների միջինից բարձր՝ **55-ից 60** տոկոսային խմբում: Միաժամանակ, նվազել է այն գործարարների թիվը, ովքեր կառավարության քաղաքականության բարդությունն ու ոչ թափանցիկությունը համարել են ձեռնարկատիրության համար էական կամ հիմնական խոչընդոտ: Հատկանշական է նաև, որ նշված ժամանակահատվածներում կարգավորման որակի բարելավումն ուղեկցվել է կառավարման ընդհանուր արդյունավետության բարձրացմամբ: ՀՖԻ Կարգավորման որակի և կառավարման արդյունավետության **2006**թ. համաթվերով Հայաստանը առաջ է ԵԿԱ երկրների միջին ցուցանիշից, սակայն զիջում է Կենտրոնական և արևելյան Եվրոպայի երկրների միջինին: Միաժամանակ, այս ցուցանիշներով Հայաստանը գերազանցում է թե՛ ցածր միջին եկամուտ ունեցող երկրների միջինը, թե՛ ՄՑԵ խմբում ԵԿԱ տարածաշրջանի միջին ցուցանիշը:
12. **Վարչական կոռուպցիայի** պարագայում խախտվում կամ վերապահորեն են կիրարկվում գործող իրավական նորմերը: Ըստ ԳՄՁԳՀ արդյունքների հայաստանյան ընկերությունների շուրջ **1/3-ը** համարում են, որ կոռուպցիան խոչընդոտում է իրենց գործունեությանը, իսկ **20%-ը** կոռուպցիան համարում են ձեռնարկատիրական գործունեության հիմնական խոչընդոտ: Ավելին, հարկային վարչարարությունը և կարգավորիչ քաղաքականության անորոշության բարձր աստիճանը հայաստանյան ընկերություններն ընկալում են որպես ձեռնարկատիրության հիմնական խոչընդոտ:
13. Տնային տնտեսությունների մեծամասնությունը կոռուպցիոն գործարքների հիմնական դրդապատճառների թվում ևս նշում է վարչական կոռուպցիայի տարբեր դրսևորումները: Այսպես, հարցվածների շուրջ **42%-ը** համարում է, որ առանց կոռուպցիայի հնարավոր չէ «գործերն առաջ տանել», **28.5%-ը** համարում է, որ կոռուպցիոն գործարքների դրդապատճառը պատժամիջոցներից խուսափելն է, **18.7%-ը** կոռուպցիայի դրդապատճառ է համարում պաշտոնական բարձր վճարներից խուսափելը, իսկ **25.4%-ը** կոռուպցիան արդարացնում է եկամտի լրացուցիչ աղբյուր ձեռք բերելու ձգտումով:

14. Վարչական կոռուպցիայի մակարդակի աճն ուղեկցվել է օրենքի գերակայության ապահովման մակարդակի հարաբերական վատթարացմամբ: **2006**թ. այս համաթվով Հայաստանը առաջ է ԵԿԱ երկրների միջին ցուցանիշից, սակայն զիջում է Կենտրոնական և արևելյան եվրոպայի երկրների միջինին:
15. Ըստ ՀԲԻ տվյալների, **2005** թվականին ընկերությունների **47.5%**-ը վստահություն չի հայտնել սեփականության իրավունքի պաշտպանության և պայմանագրերի կատարման ապահովման իրավական համակարգի հանդեպ: Ընդ որում, սեփականության և ձեռնարկատիրական իրավունքների պաշտպանության իրավական համակարգի հանդեպ անվստահությունն առանձնապես ահագանգող է փոքր ձեռնարկությունների շրջանում: Այս առումով, Հայաստանի համեմատ, թե՛ ԵԿԱ, թե՛ ՄՅՇ երկրներում, գործարարները միջինում ավելի են վստահում իրավական համակարգին:
16. Մարդու իրավունքների պաշտպանի (ՄԻՊ) **2006**թ. զեկույցը փաստում է, որ հանրային մարմինները քաղաքացիների դիմում-բողոքների հետ առընչվելիս միշտ չէ, որ ղեկավարվում են իրավունքի գերակայության սկզբունքով կամ ելնում են “Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին” ՀՀ օրենքով ամրագրված սկզբունքներից: Դատարանների դեմ **2004-2006**թթ ՄԻՊ գրասենյակին ուղղված բողոքները շարունակաբար գերակշռել են: Ինչպես նշում է ՄԻՊ **2006**թ. զեկույցը բողոքների նման քանակը հիմք է տալիս եզրահանգելու, որ բնակչության վստահությունը դատարանների հանդեպ հեռու է բավարար լինելուց: Վարչական կոռուպցիայի դրսևորման առավել ռիսկային բնագավառներն ու ոլորտներն են նշված առողջապահության, կրթության, աշխատանքի և սոցիալական ապահովության ոլորտները, ինչպես նաև ոստիկանության, դատախազության, ՀՀ արդարադատության և ՀՀ պաշտպանության նախարարությունների համակարգերը, Երևանի քաղաքապետարանը, մարզպետարանները և տեղական ինքնակառավարման մարմինները:
17. ԳՄԶԳՀ **2005**թ. արդյունքների համաձայն, հայաստանյան ընկերությունները համարում են, որ ոչ պաշտոնական վճարներ առավել հաճախ կատարում են հարկային և մաքսային պարտավորությունների կատարման ու ներկրման, պետական պատվերներ ձեռք բերելու, ձեռնարկատիրական գործունեության իրականացման արտոնագրեր և թույլտվություններ ստանալու, հանրային ծառայությունների (էլեկտրականություն և հեռախոս) բաժանորդագրման և սպասարկման, ինչպես նաև տեսչական գործառնություններ իրականացնող տարբեր կառույցների հետ առընչվելիս: Հատկանշական է, որ **2002**թ. համեմատ **2005**թ.-ին կտրուկ` շուրջ տասն անգամ, ավելացել է այն ընկերությունների թիվը, որոնք ոչ պաշտոնական վճարների կատարումը համարել են հաճախակի դատարանների և պետական գնումների համակարգի հետ առընչվելիս: Ընդ որում, ընկերությունների մեծամասնությունը ոչ պաշտոնական վճարները հաճախակի է համարում հարկային ոլորտում:
18. **Քաղաքական կոռուպցիայի** պարագայում կոռուպցիոն գործարքն ուղղված է օրենսդրական կամ կարգավորիչ նորմերի փոփոխությանը` մասնավոր անձի կամ խմբի շահերին համապատասխան, և հանրային քաղաքականությունը ծառայեցնում է մասնավոր շահերին, որը հանգեցնում է մրցակցության միջավայրի և քաղաքացիական հասարակության կայացման խաթարմանը:
19. **2002-2006**թթ. Հայաստանում քաղաքական կոռուպցիայի դրսևորումների, մասնավորապես ձայնի իրավունքի և հաշվետվողականության, քաղաքական իրավունքների, ընտրական գործընթացների օրինականության, քաղաքացիների արտահայտվելու և միավորման ազատության, մամուլի ազատության մակարդակի գնահատման միջազգային ցուցանիշները էական փոփոխություն չեն կրել:
20. Ֆրիդոմ Հաուզ կազմակերպության Ազգերն անցումային շրջանում զեկույցի մաս կազմող կոռուպցիայի համաթիվը Հայաստանի համար նախորդ տարիների նման մնացել է անփոփոխ կազմելով **5.75** միավոր: Ըստ զեկույցի տվյալների Հայաստանում ընտրական գործընթացներին, լրատվամիջոցների ազատությանը և քաղաքացիական հասարակության կայացմանը **2007**թ. նախորդող տասնամյակում էականորեն չի փոփոխվել: **2004**թ.-ից հրապարակվող Երկրները խաչմերուկում զեկույցի համաձայն **30** անցումային եկրների շարքում Հայաստանը զբաղեցնում է միջինից բարձր դիրքեր` քաղաքացիական ազատությունների, օրենքի իշխանության, կոռուպցիայի դեմ պայքարի և թափանցիկության, հաշվետվողականության և ձայնի իրավունքի առումով:
21. Բավարար չափով կայացած և ուժեղ չեն հայաստանյան լրատվամիջոցները և հետևաբար, չեն կարող քաղաքացիներին ապահովել լրատվամիջոցների պատշաճ ազատությունը, լրագրողական պրոֆեսիոնալիզմը և տեղեկատվության բազմակարծությունը: Տնային տնտեսությունների հարցման արդյունքների համաձայն, քաղաքացիների մեծամասնությունը համարում է, որ կոռուպցիայի

մակարդակն ամենաբարձրն է ընտրական համակարգում, իսկ հարցվածների 95%-ը համարում է, որ ընտրական համակարգն այս կամ այն չափով կոռուպացված է:

22. Ըստ ՀԲԻ տվյալների ընկերությունների շուրջ 42%-ը ձեռնարկատիրական գործունեության հիմնական խոչընդոտների շարքում նշել է հակամրցակցային միջավայրը: Բերթելսման հիմնադրամի 2008թ. զեկույցը նշում է, որ չնայած կոռուպցիայի դեմ պայքարի Հայաստանի իշխանությունների ջանքերին և ԱՊՀ տարածքում լավագույն կարգավորիչ համակարգերից մեկն ունենալու հանգամանքին, քաղաքական կոռուպցիայի դրսևորումների հետևանքով տնտեսական մրցակցության խոցելի միջավայրը շարունակաբար վտանգում է Հայաստանի հետագա տնտեսական զարգացմանը: Ըստ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ), Հայաստանում քաղաքացիական հասարակությունը գնահատվում է որպես թույլ:

23. Այսպիսով, Հայաստանի զարգացման ներկա փուլում կոռուպցիայի մակարդակի, գերիշխող տեսակների, բնագավառների ու ոլորտների գնահատականները վկայում են որ.

- ՀՀ-ում 2003-2006թթ. կոռուպցիայի ընդհանուր մակարդակը գնահատող ցուցանիշները հիմնականում փոփոխություններ չեն կրել, իսկ Հայաստանը շարունակում է դասվել կոռուպցիայի բարձր մակարդակ ունեցող երկրների շարքին:
- Կոռուպցիայի ընդհանուր մակարդակի գնահատման ցուցանիշներով Հայաստանն առավել բարենպաստ դիրքերում է ԱՊՀ երկրների շարքում, սակայն էապես զիջում է Արևելյան Եվրոպայի և Մերձբալթիան երկրների կոռուպցիայի ընդհանուր մակարդակի համապատասխան ցուցանիշներին:
- Գործառնական կոռուպցիայի մակարդակի կրճատմանը նպաստել է կարգավորման քաղաքականության և մեխանիզմների շարունակական ու զգալի կատարելագործումը, ընդ որում կարգավորման որակի բարելավումը հստակորեն ուղեկցվել է կառավարման ընդհանուր արդյունավետության բարձրացմամբ:
- Անձանց օրինական շահերի պաշտպանությանն ուղղված օրենքի գերակայության ապահովման թերությունների, դատական համակարգի հանդեպ անվստահության և այլ պատճառներով վատթարացել են վարչական կոռուպցիայի մակարդակը նկարագրող ցուցիչները, ընդ որում, այդ ցուցանիշներով Հայաստանը զգալիորեն ետ է մնում Կենտրոնական և արևելյան Եվրոպայի երկրներից:
- Քաղաքական կոռուպցիայի բարձր մակարդակի պայմաններում խոցելի է դառնում տնտեսական մրցակցության միջավայրը: ՀՀ քաղաքացիները ընտրական համակարգը համարում են կոռուպացված, իսկ վերջին տարիներին քաղաքացիական հասարակության կառույցների որոշակի թուլացումն էականորեն սահմանափակում է քաղաքական կոռուպցիայի դրսևորումներին դիմակայելու դրանց դերն ու կարողությունները:

1.2. ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրա միջոցառումների իրականացման 2003-2007 թթ. ծրագրի արդյունքները

24. **ՀՌԻՄԾ-ն** սահմանում է կոռուպցիան ու դրա հիմնական պատճառները, նշում է կոռուպցիայի դեմ պայքարի հիմնական միջոցներն ու ուղղությունները:

25. **ՀՌԻՄԾ-ն առավելապես կողմնորոշված էր կոռուպցիայի կանխարգելման միջոցառումների, նոր ինստիտուցիոնալ կառույցների, օրենսդրական դաշտի կատարելագործմանը`** կարևորելով կոռուպցիայի դեմ պայքարում հասարակության լայն մասնակցությունը և հակակոռուպցիոն միջոցառումների մոնիտորինգի դերը: ՀՌԻՄԾ որոշ բնութագրական միջոցառումներ վերաբերվում էին օրենսդրական բացերի և հակասությունների վերացմանը` օրենսդրական նախագծերի փորձաքննության և կոռուպցիոն ռիսկերի բացահայտման միջոցով, կոռուպցիայի դեմ պայքարելու իրավապահ մարմինների կարողությունների զարգացմանը` նրանց մասնագիտական հմտությունների զարգացման և անհրաժեշտ սարքավորմամբ ապահովելու, ինչպես նաև իրավապահ մարմինների աշխատակիցների վարձատրության և սոցիալական ապահովության մեխանիզմների կատարելագործման և վարքագծի կանոնների ներդրման միջոցով:

26. Ընդհանուր առմամբ **ՀՌԻՄՍ 2003-2007թթ. միջոցառումների ծրագրի շրջանակներում կոռուպցիայի կանխարգելման ուղղությամբ ընդունվեցին ավելի քան հիսուն օրենքներ և ենթաօրենսդրական ակտեր**, ձևավորվեցին կոռուպցիայի դեմ պայքարին ուղղված հիմնական կառույցները, ընդունվեցին և վավերացվեցին կոռուպցիայի դեմ պայքարի միջազգային կարևորագույն կոնվենցիաներն ու համաձայնագրերը, երկիրն անդամակցեց կոռուպցիայի դեմ պայքարի ուղղությամբ միջազգային համագործակցությունն ապահովող ամենահեղինակավոր կազմակերպություններին:
27. Հայաստանի Հանրապետությունում հակակոռուպցիոն քաղաքականության ամբողջական և արդյունավետ իրականացումն ապահովելուն ուղղված **պետական լիազորված մարմինների** գործունեության համադրման և կոռուպցիայի առաջացման ու տարածման պատճառները վերացնելու, դրանց կանխարգելման ուղղությամբ տարվող պետական քաղաքականությունը կատարելագործելու նպատակով **2004թ. ՀՀ նախագահի հրամանագրով ստեղծվեց Կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդ (ԿՊԽ)՝ ՀՀ վարչապետի նախագահությամբ: ԿՊԽ կանոնակարգի համաձայն ստեղծվեց նաև Հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման մոնիտորինգի հանձնաժողով: Կոռուպցիայի դեմ պայքարի համակարգված և արդյունավետ քաղաքականության իրականացումն ապահովելուն կոչված կառույցների ձևավորմանն ու կայացմանը զուգահեռ, ստեղծվեցին նաև կոռուպցիայի կանխարգելման, բացահայտման ու հետապնդման մասնագիտացված գործառույթներ իրականացնող մի շարք կառույցներ և ստորաբաժանումներ:**
28. Օրենսդրորեն հստակեցվել, կանոնակարգվել և ինստիտուցիոնալիզացվել են **անօրինական գործարքների միջոցով գույք և եկամուտներ** ձեռք բերելու դեմ պայքարի մեխանիզմները: Քրեականացվել է հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացումը՝ փողերի լվացումը: ՀՀ-ն վավերացրել է այս ոլորտում կարևորագույն կոնվենցիաներն ու միջազգային համաձայնագրերը: **2004թ. ընդունվել է «Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքը: 2008թ. ընդունվել է «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքը, որն ընդհանուր առմամբ համապատասխանում է Ֆինանսական միջոցառումների աշխատանքային խմբի (FATF)-ի միջազգային ստանդարտներին և կարգավորում է ՀՀ-ում ՓԼ/ԱՖ դեմ պայքարում գործառույթներ իրականացնող մարմինների փոխհարաբերությունները: ՓԼ/ԱՖ դեմ պայքարի արդյունավետ և համակարգված իրականացման նպատակով **2005թ. ստեղծվել է ՀՀ ԿԲ Ֆինանսական դիտարկումների կենտրոնը (ՖԴԿ)**, որն ուսումնասիրում է կասկածելի գործարքները և կարող է ՀՀ ԿԲ Խորհրդին եզրակացություն տրամադրել դրանց սառեցման կամ կասեցման վերաբերյալ: ՀՀ-ն Եվրոպայի խորհրդի Փողերի լվացման դեմ պայքարի միջոցառումները գնահատող հատուկ փորձագետների հանձնաժողովի (ՄԱՆԻՎԱԼ) անդամ է և Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի Եվրասիական խմբի (ԷԱԳ) դիտորդ:**
29. Օրենսդրորեն հստակեցվել են ՀՀ-ում **արժույթային հարաբերությունների կարգավորումը** և այդ հարաբերությունների օրինականության նկատմամբ վերահսկողությունը: **2004թ. ընդունվեց «Արժույթային կարգավորման և արժույթային վերահսկողության մասին» ՀՀ օրենքը:** Մասնավորապես, հստակեցվեցին փողային գնանշումները ՀՀ դրամով կատարելու, ՀՀ-ում աշխատավարձերի ՀՀ դրամով վճարման, ՀՀ-ում ոչ-ռեզիդենտների միջև գույքի գործարքներում արտարժույթով վճարումների, գյուղատնտեսական, սպառողական և այլ փոխառությունների արտարժույթով տրամադրման և այլ հարցերը: Պատասխանատվություն սահմանվեց արժույթային հարաբերությունները կարգավորող օրենքների և իրավական այլ ակտերի խախտումների համար:
30. Օրենսդրորեն կարգավորվել է **վճարահաշվարկային (ՎՀ) ծառայություն** մատուցողների, մասնավորապես, առևտրային բանկերի, վարկային կազմակերպությունների և վճարահաշվարկային կազմակերպությունների գործունեությունը, ապահովվել է դրամական հոսքերի թափանցիկությունն ու վերահսկելիությունը, կրճատվել է տնտեսության մեջ կանխիկի շրջանառության տեսակարար կշիռը: Այսպես, **2004թ. ընդունվեց նաև «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքը, որով էականորեն կրճատվել են համակարգային ռիսկերը:** ՎՀ ոլորտը կարգավորող ՀՀ օրենսդրությունը հիմնականում համապատասխանեցվել է ԵՄ օրենսդրության պահանջներին, իսկ այս ոլորտում գործող վարչական կառույցները կայացել են թե՛ ինստիտուցիոնալ, թե՛ մարդկային կարողություններով: Օրենսդրորեն հստակեցվել են նաև ՀՀ ԿԲ վերահսկողների կողմից ՀՀ տարածքում գործող **բանկերում ստուգումների անցկացման** ընթացքում ծագող հարաբերությունները, և էապես կրճատվել են այդ հարաբերություններով պայմանավորված ՀՀ ԿԲ վերահսկողների կողմից պաշտոնական դիրքի չարաշահման ռիսկերը

31. **Հարկային ոլորտում** հարկերի հաշվարկման և վճարման մեխանիզմների պարզեցման, հարկ վճարողների իրավունքների և պարտականությունների հստակեցման, առկա հակասությունների վերացման, հարկային օրենսդրության կայունության ապահովման, ինչպես նաև հարկային վարչարարության կատարելագործման նպատակով, ՀՀ կառավարությունը նախաձեռնել է ՀՀ Հարկային օրենսգրքի մշակումը: ՀՀ կառավարությունը հավանության է արժանացրել «ՀՀ-ում հարկային վարչարարության յոթ հիմնական նպատակները» և «ՀՀ-ում հարկային վարչարարության քաղաքականությունները՝ ըստ յոթ հիմնական նպատակների» ռազմավարությունը: Օրենսդրորեն հստակեցվել և կատարելագործվել են հարկատուների իրավունքների պաշտպանության վարչական և դատական մեխանիզմները, սահմանվել են հարկային ծառայողների գործողությունների կամ անգործության բողոքարկման ընթացակարգերը, գանգատարկման հանձնաժողովի կազմը, դիմում-գանգատի քննարկման կարգը և ժամկետները: Օրենսդրորեն սահմանված վարքագծի կանոնները պարտավորեցրել են հարկային ծառայողներին, իրենց իրավասությունների սահմաններում և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ու ժամանակին պատշաճ կարգով անկողմնակալորեն քննության առնել հարկատուների առաջարկությունները, դիմումներն ու բողոքները: Օրենսդրորեն խստացվել է հարկային պարտավորությունների կատարումից խուսափելու համար պատասխանատվությունը: ՀՀ Քրեական օրենսգիրքը քրեականացնում է նաև քաղաքացիների կողմից հարկային պարտավորությունները կատարելուց խուսափելը, ինչպես նաև կեղծ ձեռնարկատիրության միջոցով հարկերից խուսափելը: Հարկային պարտավորությունների կատարումից խուսափելու և հարկային խարդախությունների դեմ պայքարին ուղղված օրենսդրության վարչական և քրեական գործող նորմերը ԵՄ չափանիշների գնահատման համակարգում համարվում են ՀՀ-ում հարկային ոլորտի համեմատաբար կայացած հատվածը: **2003-2007**թթ. ՀՀ ԿԱ հարկային պետական ծառայության (ՀՊԾ) հրամաններով պարտադիր քննարկման առկա են դառնում հարկային ծառայողների՝ դատարանի կողմից հաստատված անգործության փաստերը, ինչպես նաև ի վնաս հարկային մարմնին կայացված դատական ակտերը: **2005**թ.-ից հրապարակվում է տարեկան արդյունքներով հարկային վնասներ հայտարարագրած և ապառքներ կուտակած հարկ վճարողների ցանկերը:
32. Պարզեցվել է **մաքսային** սահմանով տեղափոխվող ապրանքների, ինչպես նաև դրանց վերաբերյալ մաքսային մարմիններին հետաքրքրող տեղեկատվություն պարունակող փաստաթղթերի հետքացթողումային հսկողության ընթացակարգը: Օրենսդրական փոփոխությունների շնորհիվ սահմանային կետում հիմք է ընդունվում հայտատուի կողմից ներկայացված գինը, իսկ դրա արժանահավատության ստուգումը ըստ փաստաթղթերի իրականացվում է մաքսային ծառայության կողմից բացթողումից հետո՝ երեք տարվա ընթացքում: Հեշտացվել է Ֆիզիկական անձանց կողմից ներմուծվող ապրանքների մաքսային ձևակերպումները, ներդրվել է մաքսազերծման ինքնահայտարարագրման մեխանիզմը: Վերջինիս շնորհիվ նվազագույնի է հասցվել հայտատու - մաքսավոր փոխհարաբերությունը և բացառվել է մաքսային արժեքի հայտարարագրման ժամանակ վարչարարական միջամտությունը: Բարելավվել է մաքսային հսկողության իրականացման արդյունավետությունը, քաղաքացիների մաքսային հայտարարագրման և ձևակերպումների գործընթացը իրականացվում է նաև **on-line** ճանապարհով, հեշտացվել է բեռների փոխադրման ընթացքում կատարվող ստուգումների ընթացակարգը և էապես կրճատվել բեռնափոխադրման զննության ժամանակահատվածը: Մաքսային վերահսկողության ծառայության կողմից պարբերաբար արձագանքվում է քաղաքացիների կամ տնտեսվարող սուբյեկտների կողմից մաքսային գործընթացի վերաբերյալ բողոքարկման գործընթացին:
33. Օրենսդրորեն ամրագրվել են **աուդիտորական գործունեության իրականացման** հիմունքները և կանոնակարգվել են աուդիտորական գործունեության հետ կապված հարաբերությունները: Աուդիտորական գործունեություն իրականացնող ինստիտուտների կայացմանը, հաշվապահական հաշվառման և ֆինանսական հաշվետվությունների ստանդարտների համարժեք կիրառմանը նշանակալիորեն նպաստել են **2005**թ. ընթացքում աուդիտորների որակավորման քննությունների անցկացման կարգավորումը, աուդիտորների վարքագծի կանոնների ներդրումը և միջազգային ստանդարտներին համապատասխանող աուդիտի ստանդարտների ընդունումը: Աուդիտորական գործունեություն իրականացնող անձանց որակավորման կարևորագույն օրենսդրական գործառնություններ են տրվել աուդիտորների և հաշվապահների անդամակցությամբ ստեղծված հասարակական կազմակերպությանը՝ մասնագիտացված կառույցին:
34. Օրենսդրորեն հստակեցվել են **լիցենզավորման ենթակա գործունեության** տեսակները: «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքում **2003**թ. փոփոխություններ և լրացումներ են կատարվել մի շարք

ոլորտներում և բնագավառներում լիցենզավորման ենթակա գործունեության տեսակների ցանկում: Ընդհանուր առմամբ, **2003-2008**թթ. լիցենզավորման ենթակա գործունեության տեսակները քանակապես ավելացել և որակապես հստակեցվել են, ընդ որում գործունեության ներդրված տեսակների մեծամասնությունը պահանջում է լիցենզավորում՝ բարդ ընթացակարգով:

35. Օրենսդրորեն հստակեցվել են **տնտեսական մրցակցության պաշտպանության** բնագավառի մի շարք կարևորագույն խնդիրներ և դրանց կարգավորման իրավական լծակները: Օրենսդրորեն կարգավորվել է նաև պետական օժանդակությունն ու դրա արգելումը, սահմանվել է տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրության խախտումների համար տնտեսվարող սուբյեկտների և պետական ու տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնատար անձանց անհատական պատասխանատվությունը: Զգալիորեն խստացվել է պատասխանատվությունը տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտումների համար, մասնավորապես, բազմակի անգամ ավելացել են այս բնագավառում տարբեր իրավախախտումների համար նախատեսվող տուգանքների չափերը: Հստակեցվել և խստացվել են տնտեսվարողների կողմից նրանց առնչվող հարցերի քննարկման, վարույթի, հետազոտության, ստուգման, ուսումնասիրության կամ մոնիտորինգի համար անհրաժեշտ տեղեկատվության ներկայացման պարտավորությունները և դրանց կատարման կարգը: Օրենսդրորեն հստակեցվել են ՀՀ Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի (ՏՄՊՊՀ), իրավասություններն ու գործառույթները: ՏՄՊՊՀ-ին տրվել են վարչական վարույթ հարուցելու և դրա շրջանակներում, ինչպես նաև տնտեսվարողների կողմից ներկայացված տեղեկությունների արժանահավատության, նրանց փաստացի գործունեության բացահայտման կամ ՏՄՊՊՀ որոշումների կատարման նկատմամբ վերահսկողության նպատակով, հետազոտություն, ուսումնասիրություն, մոնիտորինգ, ինչպես նաև ստուգում իրականացնելու կարևորագույն լիազորություններ: ՏՄՊՊՀ-ին տրվել է նաև պետական մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց՝ տնտեսական մրցակցության օրենսդրությանը հակասող գործողությունները դադարեցնելու միջնորդությամբ ՀՀ կառավարությանը դիմելու լիազորություն: Օրենսդրորեն սահմանվել է ՏՄՊՊՀ անդամների եկամուտների հայտարարագրման պահանջը: ՏՄՊՊՀ գործունեության թափանցիկությունը ապահովվել է գործունեության տարեկան ծրագրերի, հաշվետվությունների և պաշտոնական տեղեկագրերի հրապարակման, պաշտոնական կայքի և կանոնավոր հրավիրվող մամուլի ասուլիսների միջոցով:

36. **Հանրային ֆինանսների կառավարման** ոլորտում Հայաստանը շարունակաբար բարելավել է գործընթացներն ու ընթացակարգերը: Օրենսդրորեն հստակեցվել է բյուջետային գործընթացում հարաբերությունների կարգավորումը: Բարելավվել է նաև ՀՀ պետական բյուջեի թափանցիկությունը՝ հիմնական բյուջետային փաստաթղթերը և բյուջեի կատարման հաշվետվությունները հրապարակվում և հասարակությանը մատչելի են դառնում խելամիտ ժամկետներում: **2004**թ.-ից պետական գանձապետական համակարգն անփոփոխ և հրապարակում է ՀՀ համայնքների բյուջեների կատարման ընթացքի վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն, ինչը հնարավորություն է ընձեռում բարելավել համայնքների բյուջեներին հատկացվող դոտացիաների, սուբսիդիաների և սուբվենցիաների արդյունավետ իրականացման վերահսկողությունը: **2008**թ.-ին, առաջին անգամ, ՀՀ պետական բյուջեն ձևավորվել է **GFS 2001**-ի հիման վրա, որի շնորհիվ կբարելավվի պետական բյուջեի ընկալելիությունը, թափանցիկությունը և վերահսկելիությունը:

37. **2005**թ.-ից ներդրվել են **հաշվապահական հաշվառման** ստանդարտները, որոնք գործում են թե՛ հանրային, թե՛ մասնավոր հատվածներում: **2007**թ. սկսվել է Հանրային ոլորտի հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների ներդրման գործընթացը: Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման համակարգի և գանձապետական համակարգի երկրորդ սերնդի բարեփոխումների ծրագրի շրջանակներում մշակվել և ներդրվել են հաշվային պլանը և հաշվապահական հրահանգները: Օրենսդրորեն հստակեցվել է մասնագիտական պատասխանատվությունը հաշվապահական հաշվառման վարման համար:

38. Հանրային հատվածում **ներքին աուդիտի** համակարգի զարգացման ռազմավարության շրջանակներում, **2003-2008**թթ. ներդրվել և զարգացել է ՀՀ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում ներքին աուդիտի ապակենտրոնացված համակարգը: **2008**թ. հաստատվել է հանրային ֆինանսների կառավարման համակարգի մասնագետների ուսուցման, շարունակական վերապատրաստման և որակավորման համակարգի ներդրման ռազմավարությունը: **2008**թ. ՀՀ Ազգային ժողովն առաջին ընթերցմամբ ընդունել է ՀՀ կառավարության հեղինակած «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որն էապես ընդլայնում է ներքին աուդիտի խնդիրները,

բարձրացնում է ներքին աուդիտի վստահելիությունը, ներառում է ռիսկերի գնահատումը և դրանց կառավարման դրույթները, ինչպես նաև մեծացնում է գլխավոր աուդիտորների անկախության աստիճանը և սահմանում միջազգային չափանիշներին համահունչ ներքին աուդիտորների որակավորման պահանջները: ՀՀ ՖԷՆ աշխատակազմում **2005**թ. ստեղծվել է Ներքին աուդիտի գնահատման և ֆինանսական վերահսկողության վարչությունը, որը համակարգում է ներքին աուդիտի համակարգի կայացման գործընթացը, գնահատում է ներքին աուդիտի պլանների և հաշվետվությունների որակը և օժանդակում է ներքին աուդիտորների ուսուցմանը:

- 39. 2005**թ. ՀՀ սահմանադրության փոփոխությունները էականորեն մեծացրեցին **աուդիտի գերագույն մարմնի**՝ ՀՀ Վերահսկիչ պալատի անկախության աստիճանը և բարձրացրեցին այս կառույցի դերը՝ որպես երկրի կառավարման համակարգում վերահսկողության և հակակշիռների կարևորագույն մեխանիզմներից մեկը: **2006**թ. ընդունված «Վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքը օրենսդրորեն ամրագրեց աուդիտի գերագույն մարմնի լիազորությունների շրջանակի և գործառնությունների ընդլայնումը: **2003-2007**թթ. ՎՊ-ն անդամակցել է աուդիտի գերագույն կառույցների **INTOSAI, EUROSAI** և **ASOSAI** միջազգային հեղինակավոր կազմակերպություններին:
- 40.** Օրենսդրորեն հստակեցվել է միջազգային չափանիշներին են համապատասխանեցվել **պետական գնումների** համակարգն ու գործընթացները և գնումների գործընթացին մասնակից կողմերի հարաբերությունները: **2004**թ. ընդունված «Գնումների մասին» ՀՀ օրենքը համապատասխանում է ՄԱԿ-ի Միջազգային առևտրային օրենքի հանձնաժողովի (**UNCITRAL**) մոդելի պահանջներին և չափանիշներին: Պետական գնումների բնագավառի օրենսդրական փոփոխությունները հիմք հանդիսացան Առևտրի միջազգային կազմակերպության (**WTO**) Պետական գնումների համաձայնագրին (**GPA**) ՀՀ անդամակցության բանակցությունների համար: Հստակեցվել են մեկ աղբյուրից գնումներ կատարելու հիմքերը, պետական կամ ծառայողական գաղտնիք պարունակող գնումներին մասնակցելու իրավունք ունեցող մասնակիցների որոշման կարգը, պետական և ծառայողական գաղտնիք չպարունակող պետական գնումների անվանացանկի կազմման կարգը, պարբերաբար հրապարակվել են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցանկերը և այլն: **2006**թ. համեմատ **2007**թ.-ին կտրուկ նվազել է մեկ աղբյուրից կատարվող ոչ մրցութային գնումների ծավալը: **2006**թ. հաստատվել է էլեկտրոնային գնումների համակարգի ներդրման ռազմավարությունը, որն ուղղված է պետական ծախսերի կառավարման արդյունավետության բարձրացմանն ու բյուջետային գործընթացում կոռուպցիոն ռիսկերի կրճատմանը:
- 41.** **Պետական ծառայության բարեփոխումների ուղղությամբ**՝ Հայաստանում ստեղծվել և օրենսդրորեն կարգավորվել են քաղաքացիական և համայնքային ծառայությունները, ինչպես նաև պետական ծառայության առանձին տեսակները: Պետական և համայնքային ծառայության մասնագիտական կադրային ներուժի ընտրությունն ու առաջխաղացումը ապահովվում է մրցութային հիմունքներով: Պետական ծառայողների և համայնքային ծառայողների վարձատրության համակարգը կանոնակարգված է և կախածության մեջ է դրված զբաղեցրած պաշտոնից, որակավարման մակարդակից ու ստաժից: Պարբերաբար բարձրացվում է պետական ծառայողների աշխատավարձերի նվազագույն շեմը: Պետական և համայնքային ծառայողների համար ստեղծվել են վերապատրաստման կառույցներ և նորացված ծրագրեր: Տարանջատվել են պետական կառավարման մարմինների աշխատակազմերը քաղաքական իշխանության մարմիններից, միասնականացվել են գործադիր իշխանության մարմինների աշխատակազմերի կառուցվածքները, ձևավորվել են տնտեսության զարգացմանը համահունչ նոր մարմիններ՝ տեսչություններն ու գործակալությունները: Ծառայության առանձնահատկություններով պայմանավորված՝ ընդունվել են քաղաքացիական ծառայողների վարքագծի կանոններ, դատավորի, դատախազի, դիվանագետի և այլ պետական ծառայողների էթիկայի կանոնները: Օրենքով սահմանված էթիկայի կանոնների և շահերի բախման սահմանափակումների նկատմամբ հսկողությունն իրականացնելու են ստեղծված համապատասխան էթիկայի հանձնաժողովները, որոնց լիազորությունների շրջանակները նույնպես հստակ նկարագրված են: ՀՀ քաղաքացիական ծառայության համակարգում փորձնական կարգով էթիկայի հանձնաժողովներ և էթիկայի կանոնակարգեր են մշակվել ՀՀ առողջապահության, ՀՀ կրթության և գիտության, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի աշխատակիցների համար: Օրենսդրորեն ներդրվել է ՀՀ քաղաքացիների գույքի և եկամուտների հայտարարագրման մեխանիզմը: **2006**թ. ընդունվել է «Ֆիզիկական անձանց գույքի և եկամուտների հայտարարագրման մասին» ՀՀ օրենքը: ՀՀ կառավարությունը սահմանել է ՀՀ իշխանության մարմինների ղեկավար աշխատողների

գույքի և եկամուտների հայտարարագրման համակարգի արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կարևորագույն կարգերը, մեթոդական ուղեցույցներն ու ընթացակարգերը, հայտարարագրերում ներառվող տեղեկությունների հրապարակման կարգը: Կանոնակարգվել են նաև բնամթերային (ոչ դրամական) եկամուտներ կամ բնամթերքի, գույքի (բացառությամբ դրամական միջոցների) աշխատանքի, ծառայության, մտավոր սեփականության արդյունքի տեսքով իրավունքների փոխանցումից ստացված եկամուտների հայտարարագրման կարգերը: Օրենքը և ընդունված կարգերը կկիրարկվեն **2009**թ.-ից և կտարածվեն **2008**թ. ստացված եկամուտների վրա:

- 42.** Պետական ծառայության մեջ **պատասխանատվության, թափանցիկության, հաշվետվողականության** ներդրման և զարգացման ուղղությամբ նշանակալի նախաձեռնություններ են պետական կառավարման մարմինների կողմից տեղեկատվության տրամադրման ոլորտի բարեփոխումները: Ընդունվել է «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը, օրենսդրորեն սահմանվել են պետական և ծառայողական գաղտնիք համարվող տեղեկությունների ցանկը, նախատեսվել է վարչական պատասխանատվություն պաշտոնատար անձանց համար՝ տեղեկատվություն չտրամադրելու համար, սահմանվել է պաշտոնատար անձի համար տուգանք « անձի օրինական շահերին վերաբերող տեղեկատվության» փաստաթղթերն կամ նյութերը ոչ լրիվ կամ աղավաղված ներկայացնելու համար: **2004-2007**թթ. կառավարության քաղաքականությունը ուղղվել է պետական կառավարման մարմիններում տեղեկատվության մշակումն ու տարածումը ապահովող կառույցների՝ հասարակայնության հետ կապերի ստորաբաժանումների ստեղծմանն ու կարողությունների զարգացմանը: Մի շարք նախարարությունների համար ստեղծվել են տեղեկատվական կենտրոն/ընդունարաններ: ԵԱՀԿ Հայաստանյան գրասենյակի օժանդակությամբ ստեղծվել են հակակոռուպցիոն հանրային ընդունարաններ: «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի ընդունմամբ **2004** թ. կանոնակարգվել են վարչական մարմինների և ֆիզիկական կամ իրավաբանական անձանց միջև ծագած հարաբերությունները:
- 43.** Հակակոռուպցիոն ռազմավարության հաստատումից հետո կառավարությունն իրականացրեց կոռուպցիայի դեմ պայքարի ծրագրի տեղեկացման վերաբերյալ քարոզարշավներ: Հայաստանում գործող մի շարք միջազգային կազմակերպությունների կողմից իրականացվող համանման միջոցառումները կատարվել են կառավարության հետ համաձայնեցված և համագործակցությամբ: Հանրային հեռուստատեսության ալիքներով պարբերաբար կազմակերպվել են հաղորդաշարեր, քաղաքացիական հասարակության և պետական պաշտոնյաների մասնակցությամբ թոք շոուներ:
- 44.** Մշակվեցին և կիրառվեցին **հանրային մասնակցային կառավարման** տարբեր մեխանիզմներ, որոնք նախադեպ հանդիսացան և կիրառվում են տարբեր ռազմավարական ծրագրերի մշակման գործընթացներում: Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները ներկայացված են խոշոր պետական ծրագրերի իրականացման կառավարման խորհուրդների կազմում: ՀՀ պետական կառավարման մարմիններն իրականացնում են նաև խորհրդատվության և հետադարձ կապի ապահովման միջոցառումներ: **2005**թ. ներդրվեց ՀՀ պետական բյուջեից հասարակական կազմակերպություններին դրամաշնորհների տրամադրման պրակտիկան: Նկատելի է քաղաքացիական հասարակության ակտիվացումը կոռուպցիայի դեմ պայքարում՝ քարոզարշավների, մամուլի, հեռուստատեսության միջոցով:
- 45.** **Առողջապահության բնագավառում** կարևորվել են ոլորտում իրականացված համակարգային բարեփոխումները, այդ թվում՝ ամբուլատոր-պոլիկլինիկական ծառայությունների մատչելիության ընդլայնումը բնակչության համար: Այդուհանդերձ, իրականացված միջոցառումները ունեցել են սահմանափակ ազդեցություն և բժշկական ապահովագրության, բժշկական ծառայությունների որակական և տեխնիկական չափորոշիչների, առողջապահության անհատականացված տեղեկատվական համակարգի բացակայությունը, երաշխավորված անվճար բժշկական օգնության և ծառայությունների պետական պատվերների տեղաբաշխման համակարգի անկատարությունը, վճարովի բժշկական ծառայությունների չկարգավորվածությունը շարունակում են կոռուպցիոն բարձր ռիսկեր պահպանել համակարգում:
- 46.** **Կրթության ոլորտում** նոր ինստիտուցիոնալ կառույցների ստեղծումը, մասնավորապես հանրակրթության ավարտական և բուհի ընդունելիության քննությունների կազմակերպումը «Գնահատման և թեստավորման» կենտրոններում, հանրակրթության տեսչության ստեղծումը նախապայմաններ է ստեղծել կոռուպցիոն ռիսկերի կրճատման համար: Նույն նպատակին են ծառայել նաև բարձրագույն կրթության համակարգում կրեդիտային համակարգի ներդրումը, բուհի ընդունելության համակարգի վերակազմավորումները, բոլոր տեսակի արտոնությունների վերացումը,

բուհի լիցենզավորման ընթացակարգերի հստակեցումները, բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթություն ստանալու համար պետական պատվերների համակարգի վերափոխումները: Օրենսդրական փոփոխություններն են կատարվել կրթական հաստատությունների ինքնավարության, արդյունավետ, թափանցիկ և հրապարակային գործունեության ապահովման, կրթության որակի չափորաշիջների սահմանման ուղղությամբ: Բարձրացվել են հանրակրթության աշխատողների վարձատրությունը, բարելավվել է կրթական հաստատությունների ֆինանսական վիճակը:

47. ՀՀ Սահմանադրության մեջ փոփոխությունների կատարմամբ առավել հստակեցվեցին **իշխանության բոլոր ճյուղերի գործառույթներն ու լիազորությունները**, նվազագույնի հասցվեց իրավունքների և պարտականությունների կրկնությունները, ընդունվեցին նոր «Դատական օրենսգիրքը», «Վարչական դատավարության օրենսգիրքը» «Վերահսկիչ պալատի մասին», «Դատախազության մասին» օրենքները և մի շարք այլ օրենքներ: Հստակեցվեցին ՀՀ կառավարության և պետական կառավարման այլ մարմինների գործառույթները: Իրավական ակտերը հասարակության համար հասանելի դարձնելու նպատակով ՀՀ օրենսդրական ակտերի տեղեկատվական բազան տեղադրվեց ինտերնետում, ՀՀ պետական կառավարման մարմինների ինտերնետային կայքերը պարբերաբար թարմացվում են իրավական ակտերի նախագծերով և ընդունված ակտերով, հրապարակվում է «Պաշտոնական տեղեկագիր» պարբերականը:

48. ՀՀ Սահմանադրության փոփոխությունները սկզբի դրեցին իրավապահ համակարգի ինստիտուցիոնալ բարեփոխումներին: «Դատախազության մասին» օրենքով տարրանջատվեցին նախաքննություն վարելու և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնելու գործառույթները: Սահմանվեցին դատախազության անկախության և հրապարակայնության երաշխիքները: Հստակեցվեցին, ամբողջականացվեցին և միջազգային կոնվենցիաների դրույթներին համապատասխանեցվեցին «պաշտոնատար անձ» հասկացությունը, կոռուպցիոն հանցագործությունների սուբյեկտները, պատժաչափերը, կոռուպցիոն հանցագործությունների արդյունքում ստացված եկամուտների, օգուտների բռնագանձման մեխանիզմները: Օրենսդրորեն սահմանվեցին օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմիններն և նրանց իրավունքներն ու պարտականությունները, օպերատիվ-հետախուզական գործունեության նկատմամբ հսկողությունը և վերահսկողությունը: Բարելավվել են իրավապահ մարմինների նյութատեխնիկական ապահովվածությունը: Բարձրացվել է կոռուպցիայի դեմ ներգրավված իրավապահ մարմինների աշխատակիցների մասնագիտական որակավորումը և կոռուպցիայի դեմ պայքարի կարողությունները:

49. ՀՀ Սահմանադրության փոփոխություններով ամրագրվեցին **դատական համակարգի** անկախության և բնականոն գործունեության նախադրյալները: ՀՀ դատական օրենսգրքի ընդունմամբ ստեղծվեցին ընդհանուր իրավասության և մասնագիտացված դատարաններ՝ հնարավորություն ընձեռելով առավել բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննել գործերը, ստեղծվեց դատական դեպարտամենտը և կարգադրիչների ինստիտուտը: Կանոնակարգվեցին դատավորների գործունեության սկզբունքները, նշանակման կարգը, անկախության երաշխիքները, վարքագծի կանոնները, վերջիններիս պատասխանատվության ենթարկելու հիմքերը և կարգը, սահմանվեցին արդարադատության խորհրդի լիազորությունները, դատավոր անդամների ընտրության կարգը: Հիմնադրվեց դատական դպրոցը, որն ապահովում է դատավորների թեկնածուների որակավորման ստուգումը, դատավորների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստումը, դատական ծառայողների մասնագիտական վերապատրաստումը: Վարչական դատավարության օրենսգրքով սահմանվեցին նորաստեղծ վարչական դատարանում և վճռաբեկ դատարանում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց վարչական և նորմատիվ ակտերի, գործողությունների կամ անգործության դեմ ֆիզիկական և իրավաբանական անձանց դատական պաշտպանության իրավունքի իրականացման կարգը, ինչպես նաև ֆիզիկական եւ իրավաբանական անձանց դեմ վարչական մարմինների և պաշտոնատար անձանց հայցադիմումների քննության կարգը: «Քրեկատարողական ծառայության մասին» ՀՀ նոր օրենքով հստակեցվեցին քրեակատարողական ծառայության գործունեության հիմնական սկզբունքները, քրեակատարողական ծառայության մարմինների, դրանց գործունեության կազմակերպման սկզբունքները, ծառայություն անցնելու կարգը և պայմանները, ծառայողների իրավունքները, պարտականությունները, պատասխանատվությունը, իրավական ու սոցիալական երաշխիքները ինչպես նաև ծառայության հետ կապված այլ հարաբերություններ: «Փաստաբանության մասին» ՀՀ

օրենքի ընդունումը նպաստեց մրցակցային դատական համակարգի կայացմանը: Էական քայլեր ձեռնարկվեցին դատավորների սոցիալական վիճակի բարելավման, դատարանների նյութատեխնիկական հնարավորությունների զարգացման գործում:

50. Այսպիսով, հիմք ընդունելով ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման **2003-2006**թթ. միջոցառումների ծրագրի արդյունքները, ինչպես նաև կոռուպցիայի մակարդակի գնահատման միջազգային ցուցանիշներն ու տեսակները, դրանց միտումների վերլուծությունը, կարել է եզրակացնել և առանձնացնել հետևյալ հիմնական քաղաժ դասերը.

- Կոռուպցիայի մակարդակը Հայաստանում մնում է բարձր՝ այն կրում է համակարգային բնույթ:
- ՀՌԻՄԾ-ն չի ներառել կոռուպցիայի դեմ պայքարի հստակ, չափելի և հասանելի նպատակներ ու խնդիրներ, կողմնորոշված չի եղել կոնկրետ արդյունքների ստացմանը, չի ամբողջականացրել հիմնախնդիրների լուծման գործում միջոցառումների իրականացման արդյունքները:
- ՀՌԻՄԾ միջոցառումներն հիմնականում կողմնորոշված են եղել կոռուպցիայի կանխարգելմանը, համեմատաբար թույլ են ընդգրկել կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման և հետապնդման, կոռուպցիայի վերաբերյալ հանրության իրազեկման և հանրային աջակցության միջոցները: Հանրության կրթության, քարոզչության, քաղաքացիական հասարակության մասնակցության գործընթացներն իրականացվել են քաղաքացիական հասարակության կողմից:
- ՀՀ հակակոռուպցիոն քաղաքականության, ծրագրերի համակարգման և մոնիտորինգի համակարգը դեռևս ձևավորման փուլում է: Այն ամրապնդված չէ գործուն մեխանիզմներով: Իրականացվող մոնիտորինգը վարչական է և սահմանափակվում է օրենսդրական նախաձեռնությունների վերաբերյալ կոնկրետ նախագծերի ընդունման մասին որոշումների կայացմամբ: ՀՌԻՄԾ-ն չի ներառել ըստ ոլորտների և բնագավառների կոռուպցիայի մակարդակի գնահատման համակարգը, բովանդակային կատարողական մոնիտորինգի և հաշվետվությունների պահանջները, այդ թվում՝ արդյունքների տարեկան ամփոփման պահանջները, ընթացիկ իրավիճակի չափելի նկարագիրը և միջոցառումների իրականացման ելքերի և արդյունքների գնահատման ցուցիչները:
- ՀՌԻՄԾ իրականացման մեխանիզմները պատշաճ կերպով չեն ապահովվել պետական կառավարման մարմինների կողմից հակակոռուպցիոն կոնկրետ ծրագրերի մշակումը, քաղաքացիական հասարակության կառույցների հետ համագործակցությունը, նրանց արդյունավետ մասնակցությունը: Բացակայում են նաև ՀՌԻՄԾ-ի ամենամյա վերանայման և տարեկան ծրագրերի մշակման և հաստատման մեխանիզմները:

1.3. Կոռուպցիայի դեմ պայքարում Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունները

51. Կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում ՀՀ ստանձնած պարտավորությունները շարունակաբար ընդլայնվել են, իսկ այդ ոլորտում վարվող պետական քաղաքականությունը շողկապվել և համադրվել է երկրի կայուն զարգացման գերակայություններին՝ **2008**թ. դառնալով կառավարության գործունեության գլխավոր ուղղություններից մեկը:

52. **2004**թ. հունվարին Հայաստանը անդամակցել է ԳՐԵԿՈ-ին, իսկ **2004**թ. հունիսին և դեկտեմբերին, համապատասխանաբար, ստորագրել և վավերացրել է «Կոռուպցիայի մասին» քրեական իրավունքի կոնվենցիան և «Կոռուպցիայի մասին» քաղաքացիական իրավունքի կոնվենցիան: Հայաստանի կառավարության կողմից հակակոռուպցիոն միջոցառումների արդյունավետության գնահատման ԳՐԵԿՈ-ի առաջին զեկույցն ընդունվել է **2006**թ. մարտին: Զեկույցը նախանշել է **24** առաջարկություններ՝ ուղղված կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում առկա իրավիճակի բարելավմանը: ԳՐԵԿՈ-ի առաջարկությունների մեծամասնությունը կանխարգելիչ և բացահայտող բնույթի են և հիմնականում (**24** առաջարկությունից՝ **20**-ը) նպատակաուղղված են օրենքների և ընթացակարգերի ընդունմանն ու բարելավմանը: Վեց առաջարկություն վերաբերում են հանրային ծառայողների և աուդիտորների վերապատրաստմանը, մեկով առաջարկվում է համապատասխան ուսումնասիրությունների իրականացում՝ բացահայտելու կոռուպցիայի և դրա դրսևորումների առավել ամբողջական պատկերը Հայաստանում, իսկ մյուսը կարևորում է հակակոռուպցիոն միջոցառումների և դրանց իրականացման արդյունքների վերաբերյալ հանրության կանտնավոր

իրագրելու անհրաժեշտությունը: ՀՀ կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդը հաստատել է ԳՐԵԿՈ-ի առաջարկությունների կատարման ապահովող միջոցառումների ծրագիրը:

53. Հայաստանը ներգրավված է նաև Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀՀԿ)՝ նախկին խորհրդային 8 երկրների համար նախաձեռնած «Ստամբուլի հակակոռուպցիոն գործողությունների պլան» ծրագրում: Այն կոչված է բարելավելու նշված երկրների հակակոռուպցիոն քաղաքականությունը միջազգային փորձագետների կողմից մշակված առաջարկությունների միջոցով: Հայաստանին վերաբերող առաջարկությունները մշակվել և ընդունվել են 2004թ.: ՏՀՀԿ-ի 24 առաջարկությունները դասակարգված են երեք խմբերում. 1) «Ազգային հակակոռուպցիոն քաղաքականություն և ինստիտուտներ» (7 առաջարկություն). 2) «Օրենսդրություն և կոռուպցիայի քրեականացում» (8 առաջարկություն). 3) «Քաղաքացիական ծառայության թափանցիկություն և ֆինանսական վերահսկողություն» (9 առաջարկություն): ՏՀՀԿ-ի թվով 7 առաջարկությունները ամբողջովին կամ մասամբ համընկնում են ԳՐԵԿՈ-ի համապատասխան առաջարկությունների հետ: Հայաստանի կառավարությունը ՏՀՀԿ-ի հակակոռուպցիոն ցանցի քարտուղարությանը պարբերաբար զեկուցում է առաջարկությունների կատարման գործընթացի վերաբերյալ: 2006թ. ՏՀՀԿ-ի մոնիտորինգի 6-րդ հանդիպման ընթացքում քննարկվել է Հայաստանի առաջընթացը առաջարկությունների կատարման գործում և ընդունվել երկրի գնահատման (մոնիտորինգի) զեկույցը: Չեկույցն ընդգծել է մի շարք դրական միտումներ, մասնավորապես 24 ներկայացված առաջարկություններից միայն 4-ն է գնահատվել «չկատարված», 11 առաջարկություն՝ «մասնակի կատարված», 8 առաջարկություն՝ «հիմնականում կատարված է» և 1 առաջարկություն՝ «ամբողջությամբ կատարված»: Միաժամանակ զեկույցը նշել է, որ իրականացված միջոցառումներից շատերը միայն առաջին քայլն են կոռուպցիայի նվազեցման ճանապարհին և որ դեռևս մեծ աշխատանք է պահանջվում թեթևացնելու կոռուպցիայի «բեռը» հանրային և տնտեսական կյանքի տարբեր ոլորտներում:
54. Եվրամիության եվրոպական հարևանության քաղաքականության (ԵՀՔ) շրջանակներում Եվրոպական միությունն ու Հայաստանը 2006թ. վավերացրել են գործողությունների ծրագիրը, որում կոռուպցիայի դեմ պայքարը ներառված է որպես գերակա ոլորտ: Հայաստանի գործողությունների ծրագրում հատուկ գերակայությունների մեջ ներառվել են 8 հակակոռուպցիոն միջոցառումներ, այդ թվում՝ պատշաճ քննության ապահովումը և կոռուպցիոն հանցանքների հետապնդումը, Քրեական օրենսգրքի համապատասխանեցումը միջազգային ստանդարտներին, դատավորների և դատախազների էթիկայի կանոնների մշակումը, պաշտոնյաների կողմից գույքի և եկամտի սխալ հայտարարագրման դեպքում պատասխանատվության սահմանումը, դատավորների աշխատավարձերի բարձրացումը և այլն: Այս գործողությունների ծրագրում նշված համարյա բոլոր միջոցառումները միաժամանակ ներառված են նաև ՄԱԿ-ի, Եվրոպայի խորհրդի «Քրեական իրավունքի մասին» և «Քաղաքացիական իրավունքի մասին» կոնվենցիաներում, ԳՐԵԿՈ-ի ու ՏՀՀԿ-ի առաջարկություններում:
55. 2005թ. ՀՀ-ը ստորագրել է Միավորված ազգերի «Կոռուպցիայի դեմ» կոնվենցիան (ՄԱԿԴԿ), որը վավերացվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից՝ 2006թ.: Որպես կոնվենցիայի պահանջների մոնիտորինգի իրականացման նախնական փուլ, Հայաստանը պետք է ՄԱԿ-ի Թմրամոլության և հանցավորության դեմ գրասենյակին ներկայացնի ՄԱԿ-ի «կոռուպցիայի դեմ» կոնվենցիայի Հայաստանի ինքնագնահատման զեկույցը՝ վերջինիս կողմից նախապատրաստված հարցաշարերին համապատասխան:
56. 2006թ. Հայաստանի Հանրապետության կառավարության և ԱՄՆ «Հազարամյակի մարտահրավեր» կորպորացիայի միջև կնքված համաձայնագրով ՀՀ կառավարությունը կպահպանի Հազարամյակի մարտահրավերներ հիմնադրամի չափորոշիչների նկատմամբ ստանձնած իր պարտավորությունը, որոնց կատարումը գնահատվում է ՀՀ կառավարության գործունեությունը այնպիսի ոլորտներում, ինչպես քաղաքական իրավունքների և քաղաքացիական ազատությունների, կոռուպցիայի հսկողության, կառավարման արդյունավետության, օրենքի գերակայության, ինչպես նաև քաղաքացիների ձայնի լսելիությունը և հաշվետվողականությունը:
57. 2005թ. ստորագրված ՆԱՏՕ-ի հետ ՀՀ Անհատական գործընկերության գործողությունների ծրագրով, ՀՀ կառավարությունը պարտավորվել է ակտիվորեն մասնակցել ԳՐԵԿՈ-ի գործունեությանն ու իրականացնել ԳՐԵԿՈ-ի առաջարկությունները, իրականացնել ՀՌԻՄՕ-ն, ներդնել պետական պաշտոնյաների կողմից կոռուպցիայի կանխարգելման և հետապնդման հստակ և թափանցիկ

հաշվետվողականության մեխանիզմ, բարելավել իրազեկումը կոռուպցիայի վերաբերյալ՝ պետական պաշտոնյաների ուսուցման և վերապատրաստման միջոցով:

ԳԼՈՒԽ II. ՀՀ ՀԱԿԱԿՈՒՌՈՒՊՑԻՈՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 2009-2012 ԹԹ.

2.1. Կոռուպցիայի դեմ պայքարի արդյունավետ, համակարգված քաղաքականությունը

58. ՀՀ կառավարությունը Հայաստանում հակակոռուպցիոն քաղաքականության արդյունավետ և համակարգված իրականացումն ապահովում է կոռուպցիայի դեմ պայքարի քաղաքականության տարրերը ՀՀ Հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման միջոցառումների **2009-2012**թթ. ծրագրի արդյունքների և միջոցների **ամբողջականացնելու միջոցով**:
59. ՀՀ Հակակոռուպցիոն քաղաքականության արդյունավետ և համակարգված իրականացումն ապահովելու նպատակով ՀՀ կառավարությունը **2009-2012**թթ. շարունակելու է հետևողականորեն.
- կիրառել կոռուպցիայի դեմ պայքարի **միջազգային գործիքները**, այդ թվում՝ ՄԱԿ-ի և ԵԽ կոնվենցիաները, գործընկերային գնահատման կառույցները, և կոռուպցիայի դեմ պայքարի միջազգային լավագույն փորձը՝ դրանց վերլուծության, տեղայնացման և ներդրման միջոցով:
 - ձևավորել կոռուպցիայի դեմ պայքարում **հանրային աջակցություն**՝ քաղաքացիական հասարակության գործուն մասնակցության և հանրային քարոզչության միջոցով:
 - ապահովել ՀՀ հակակոռուպցիոն քաղաքականության պարբերական **վերանայումն ու ճշգրտումը**, ինչպես նաև դրա **ներդաշնակությունը** այլ ոլորտներում և բնագավառներում վարվող պետական քաղաքականության գերակայություններին՝ ՀՌԻՄՄ միջոցառումների իրականացման և դրանց նախնական ու միջանկյալ արդյունքների շարունակական մոնիտորինգի, կանոնավոր գնահատման և քաղված դասերի ներառման միջոցով:
 - ապահովել կոռուպցիայի դեմ պայքարի քաղաքականության իրականացման համար պատասխանատու **մարմինների** արդյունավետ և համակարգված գործունեությունը՝ այդ մարմինների գործառնությունների տարանջատման, մասնագիտական կարողությունների զարգացման, դրանց գործունեության նկատմամբ վերահսկողության սահմանման և այդ մարմինների միջև արդյունավետ համագործակցության ապահովման միջոցով:
 - համաչափորեն կիրառել հակակոռուպցիոն քաղաքականության հիմնական **միջոցները**՝ կոռուպցիայի կանխարգելումը, բացահայտումն ու պատասխանատվության ենթարկումը, հանրության կրթությունը և քարոզչությունը՝ օրենսդրության կատարելագործման և, ինստիտուցիոնալ բարեփոխումների ու իրավական նորմերի հետևողական կիրարկման միջոցով:

2.2. ՀՀ Հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման միջոցառումների ծրագրի հիմնական սկզբունքներն, նպատակներն ու ակնկալվող արդյունքները

60. ՀՀ Հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման միջոցառումների ծրագրի հիմնական քաղաքական ուղենիշներն ու սահմանված թիրախները խարսխված են ՀՀ կառավարության ծրագրում և ՀՀ Նախագահի նախընտրական ծրագրում պետական կառավարման արդյունավետ համակարգի ձևավորման և կոռուպցիայի դեմ պայքարի ուղղությամբ ստանձնած պարտավորությունների վրա:
61. Միաժամանակ, ՀՌԻՄՄ նպատակները և խնդիրները տարանջատված են ըստ ակնկալվող արդյունքների՝ **վերջնական (ազդեցության), միջանկյալ և գործոնային**: Ընդ որում, յուրաքանչյուր մակարդակում ակնկալվող արդյունքներին ներկայացվող հիմնական պահանջներն են. դրանց շոշափելիությունը, իրատեսականությունը, չափելիությունը և համադրելիությունը:
62. ՀՌԻՄՄ իրականացումից ակնկալվող վերջնական և միջանկյալ արդյունքների **2012**թ. թիրախները համապատասխանում են Կենտրոնական և արևելյան Եվրոպայի երկրների (ԿԱԵ) խմբի պետական կառավարման արդյունավետության **2007**թ. միջին ցուցանիշներին, որոնք ընդհանուր

առմամբ գերազանցում են, թե՛ ԵԿԱ, թե՛ ՄՅԵ երկրների խմբի միջին ցուցանիշներին: Կառավարման արդյունավետության ոլորտում ԿԱԵ երկրների ընթացիկ միջին ցուցանիշները բնութագրական են առավելապես Բուլղարիայի, Ռումինիայի և Հունգարիայի համար: Հետևաբար, նշված երկրների ցուցանիշներն այս ոլորտում հիմնականում համընկում են Հայաստանի համար **2012**թ. սահմանված թիրախներին:

- 63. ՀՌԻՄԾ հիմնական նպատակը և ակնկալվող վերջնական արդյունքը Հայաստանում կոռուպցիայի ընդհանուր մակարդակի էական կրճատումն է:** Մասնավորապես, ՀՀ կառավարությունն ակնկալում է, որ ՀՌԻՄԾ իրականացման արդյունքում **2012**թ. կվերանա կոռուպցիայի համակարգային բնույթը, նշանակալիորեն կսահմանափակվի դրա տարածվածության աստիճանը, կվեճանա քաղաքացիներին մատուցվող հանրային ծառայությունների որակը, զգալիորեն կբարելավվի սոցիալական արդարության ընկալումը տնային տնտեսությունների և գործարարների շրջանում, կամրապնդվի երկրում քաղաքական համակարգի կայունությունը, նախապայմաններ կստեղծվեն տնտեսության արտադրողականության բարձրացման համար՝ մեծացնելով երկրի մրցունակությունը և տնտեսության գրավչությունը ներդրումների համար:
- 64.** ՀՌԻՄԾ իրականացման վերջնական արդյունքները կգնահատվեն Կոռուպցիայի ընկալման համաթիվ (ԹԻ) և Կոռուպցիայի հսկողության համաթիվ (ՀԲԻ) ցուցիչներով:
- 65.** ՀՌԻՄԾ իրականացման վերջնական արդյունքների **2012**թ. թիրախները սահմանվում են.
- Կոռուպցիայի ընկալման համաթիվ (ԹԻ)՝ **4.1** միավոր (**2007** թվականի **3.0**-ի փոխարեն),
 - Կոռուպցիայի հսկողության համաթիվ (ՀԲԻ)՝ **(-0.05)** միավոր՝ (**2007** թվականի **(-0.58)**-ի փոխարեն):
- 66.** Ընթացիկ իրավիճակի և **2012**թ. թիրախի միջև առկա խզումը ԿԸՀ և ԿՀՀ համաթիվերի համար կազմում է համապատասխանաբար **11.0%** (**1.1** միավոր **0-10** միջակայքում) և **10.6%** (**0.53** միավոր, **(-2.5) -2.5** միջակայքում) միջակայքային տոկոսային կետ:
- 67.** ՀՌԻՄԾ **միջանկյալ արդյունքները** գործառնական, վարչական և քաղաքական կոռուպցիայի մակարդակների էական կրճատումն է:
- 68.** ՀՀ կառավարությունն ակնկալում է, որ **2012**թ. **գործառնական կոռուպցիայի** մակարդակի կրճատման արդյունքում կբարձրանա կառավարման արդյունավետությունը, կբարելավվեն կարգավորման որակն ու կառավարման գործառույթները և կբարձրանա տեղական ինքնակառավարման համակարգի արդյունավետությունը: Գործառնական կոռուպցիայի մակարդակի կրճատման ՀՌԻՄԾ միջանկյալ արդյունքի **2012**թ. թիրախները սահմանվում են.
- **Կառավարման արդյունավետության բարձրացում.** Կառավարման արդյունավետության համաթիվ (ՀԲԻ)՝ **0.15** միավոր (**2007** թվականի **(-0.16)**-ի փոխարեն):
 - **Կարգավորման որակի և կառավարման գործառույթների բարելավում.** Կարգավորման որակի համաթիվ (ՀԲԻ)՝ **0.37** միավոր (**2007** թվականի **0.26**-ի փոխարեն):
- 69.** Նախանշված թիրախների և առկա վիճակի միջև խզումը նշանակալի չէ և հիմնականում ենթադրում է նշված ուղղություններով ընթացիկ բարեփոխումների շարունակականության ապահովում:
- 70.** ՀՀ կառավարությունն ակնկալում է, որ **2012**թ. **վարչական կոռուպցիայի** մակարդակի կրճատման արդյունքում էականորեն կբարձրանա օրենքի գերակայության ապահովման մակարդակը, կտրուկ կվեճանա դատական համակարգի անկախության աստիճանը, կբարձրանա պաշտոնի չարաշահումների հայտնաբերման և հետապնդման մակարդակը, էականորեն կբարձրանա կառավարման մարմինների հաշվետվողականության և թափանցիկության մակարդակը, ինչպես նաև կամբողջականացվի հակակոռուպցիոն քաղաքականության իրականացման ինստիտուցիոնալ համակարգը: Վարչական կոռուպցիայի մակարդակի կրճատման ՀՌԻՄԾ միջանկյալ արդյունքի **2012**թ. թիրախները սահմանվում են.
- **Օրենքի գերակայության ապահովման մակարդակի բարձրացում.** Օրենքի գերակայության համաթիվ (ՀԲԻ)՝ **(-0.15)** միավոր (**2007** թվականի **(-0.52)**-ի փոխարեն):

- **Կառավարման մարմինների գործունեության հաշվետվողականության, թափանցիկության և հրապարակայնության մակարդակի բարձրացում.** Չայնի լսելիության և հաշվետվողականության համաթիվ (ՀԲԻ)՝ **(-0.47)** միավոր (**2007** թվականի **(-0.72)**-ի փոխարեն):

71. Վարչական կոռուպցիայի կրճատման նշված թիրախների և ընթացիկ վիճակի միջև առկա խզումն զգալի է և հիմնականում ենթադրում է նշված ուղղություններով արմատական քայլերի հետևողական իրականացում: Գործառնական կոռուպցիայի մակարդակի կրճատման թիրախների համեմատ, վարչական կոռուպցիայի մակարդակի կրճատման թիրախներն առավել հավակնոտ են:

72. ՀՀ կառավարությունն ակնկալում է, որ **2012**թ. **քաղաքական կոռուպցիայի** մակարդակի կրճատման արդյունքում կմեծանա քաղաքական կայունությունը, կբարձրանա քաղաքական իրավունքների և քաղաքացիական ազատությունների, այդ թվում՝ քաղաքական բազմակարծության և մասնակցության, խոսքի և դավանանքի ազատության, միավորվելու, կազմակերպվելու աստիճանը, կկատարելագործվեն ընտրական գործընթացները, կմեծանա լրատվամիջոցների անկախության և կայունության աստիճանը, կհզորանա քաղաքացիական հասարակությունը և կընդլայնվի կառավարման գործընթացներին քաղաքացիական մասնակցությունը, էականորեն կբարելավվի շահերի բախումների կարգավորումը և կապահովվի արդյունավետ հակամենաշնորհային քաղաքականության իրականացումը: Քաղաքական կոռուպցիայի մակարդակի կրճատման ՀՌԻՄՄ միջանկյալ արդյունքի **2012**թ. թիրախները սահմանվում են.

- **Քաղաքական կայունության բարձրացում.** Քաղաքական կայունության համաթիվ (ՀԲԻ)՝ **0.23** միավոր (**2007** թվականի **(-0.30)**-ի փոխարեն)
- **Քաղաքական իրավունքների և քաղաքացիական ազատությունների ապահովման մակարդակի բարձրացում և ընտրական գործընթացների կատարելագործում.** Քաղաքական իրավունքների համաթիվ/ԱԱ (ՖՀ)՝ **2** միավոր (**2007** թվականի **5**-ի փոխարեն), Քաղաքացիական ազատությունների համաթիվ/ԱԱ (ՖՀ)՝ **2** միավոր (**2007** թվականի **4**-ի փոխարեն):

73. **Քաղաքական կոռուպցիայի** մակարդակի կրճատման նշված թիրախների և ընթացիկ վիճակի միջև առկա խզումը էական է և ենթադրում է նշված ուղղություններով արմատական փոփոխությունների իրականացում՝ քաղաքացիական հասարակության կառույցների լայն ներգրավմամբ: Քաղաքացիական հասարակության զարգացման համեմատաբար դրական միտումները ամուր հիմք են ծառայում կառավարման մարմինների և քաղաքացիական հասարակության կառույցների միջև արդյունավետ համագործակցություն ծավալելու համար: Ընդ որում, թե՛ գործառնական, թե՛ վարչական կոռուպցիայի մակարդակի կրճատման թիրախների համեմատ, քաղաքական կոռուպցիայի մակարդակի կրճատման թիրախներն ամենահավակնոտ են, իսկ մարտահրավերների սպեկտրն առավել լայն է և ընդգրկուն:

74. ՀՌԻՄՄ իրականացման միջանկյալ արդյունքների **2012**թ. թիրախները, ըստ կոռուպցիայի տեսակների ու մակարդակների գնահատման համար ընտրված ցուցիչների, ամփոփված են աղյուսակ **3**-ում:

Աղյուսակ 3. ՀՌԻՄՄ իրականացման ակնկալվող արդյունքները, ընթացիկ և թիրախ ցուցիչները, թիրախային խզումը միջակայքերը, վերջնական և միջանկյալ արդյունքների մակարդակներում

ՄԱԿԱՐԴԱԿ	ԱՐԴՅՈՒՆՔ	ՑՈՒՑԻՉ	ԸՆԹԱՑԻԿ ՑՈՒՑԻՉ	ԹԻՐԱԽ	ԽՁՈՒՄ		ՄԻՋԱԿԱՅՔ
		ՀԱՄԱԹԻՎ/ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ (ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ)	ՄԻԱՎՈՐ/ԿԱՐԳ (ՏԱՐԻ)	ՄԻԱՎՈՐ/ԿԱՐԳ (ՏԱՐԻ)	ՄԻԱՎՈՐ	% ԿԵՏ	ՑԱՐԳ ԲԱՐՁՐ
ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ	Կոռուպցիայի ընդհանուր մակարդակի կրճատում	Կոռուպցիայի ընկալման համաթիվ (ԹԻ)	3.0/99 (2007)	4.1 (2012)	1.1	11.0%	0÷10
		Կոռուպցիայի հսկողության համաթիվ (ՀԲԲ)	-0.58/35 (2006)	-0.05 (2012)	0.53	10.6%	-2.5÷2.5
ՄԻՋԱԿԱՅԸ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ	Գործառնական կոռուպցիայի մակարդակի կրճատում	Կարգավորման որակ (ՀԲԲ)	0.26/59 (2006)	0.37 (2012)	0.11	2.2%	-2.5÷2.5
		Կառավարման արդյունավետություն (ՀԲԲ)	-0.16/51 (2006)	0.15 (2012)	0.31	6.2%	-2.5÷2.5
	Վարչական կոռուպցիայի մակարդակի կրճատում	Օրենքի գերակայություն (ՀԲԲ)	-0.52/38 (2006)	-0.15 (2012)	0.37	7.4%	-2.5÷2.5
		Չայնի լսելիություն և հաշվետվողականություն (ՀԲԲ)	-0.72/27 (2006)	0.47 (2012)	1.19	23.8%	-2.5÷2.5
	Քաղաքական կոռուպցիայի մակարդակի կրճատում	Քաղաքական կայունություն (ՀԲԲ)	-0.30/35 (2006)	0.23 (2012)	0.53	10.6%	-2.5÷2.5
		Քաղաքական իրավունքներ/ԱԱ (ՖՀ)	5 (2007)	2 (2012)	3	50.0%	7÷1
Քաղաքացիական ազատություններ/ԱԱ (ՖՀ)		4 (2007)	2 (2012)	2	33.3%	7÷1	

2.3. ՀՀ Հակակոռուպցիոն ռազմավարության հիմնական ուղղությունները և խնդիրները

75. ՀՌԻՄԾ իրականացման հիմնական խնդիրը հանրային կառավարման և տնտեսության առանձին ոլորտներում և բնագավառներում գործառնական, վարչական և քաղաքական կոռուպցիայի մակարդակների կրճատման նպատակով կոռուպցիայի **կանխարգելման, քրեականացման և հանրային աջակցության** միջոցների արդյունավետ կիրառումն է:
76. Կոռուպցիայի **կանխարգելման** ուղղությամբ կարևորվում է ՀՌԻՄԾ շրջանակներում ներառված ոլորտների և բնագավառների զարգացման քաղաքականության և դրանցում իրավահարաբերությունները կարգավորող ՀՀ օրենսդրության շարունակական կատարելագործումը: Մասնավորապես կարևորվում են. միջազգային չափանիշներին և լավագույն փորձին համապատասխանող կարգավորման քաղաքականության կանխատեսելիության չափորոշիչների սահմանումը, կարգավորման մեխանիզմների և ընթացակարգերի հետագա պարզեցումն ու հստակեցումը, օրենսդրական և ենթօրենսդրական ակտերում առկա կոռուպցիոն ռիսկերի կրճատմանը միտված դրույթների ամրագրումը, օրենսդրության հետևողական կիրարկման և համապատասխանության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների ամրագրումը, օրենսդրությամբ սահմանված գործառույթների իրականացման թերացումների համար համարժեք պատասխանատվության միջոցների սահմանումը, օրենսդրության մեջ առկա հակասությունների և գործառույթների կրկնությունների բացահայտումն ու վերացումը, ինչպես նաև օրենսդրության համապատասխանեցումը կոռուպցիայի դեմ պայքարին միտված միջազգային պայմանագրերի և հանձնառությունների պահանջներին:
77. Կոռուպցիայի կանխարգելման ուղղությամբ կարևորվում է նաև պետական մարմինների գործունեության արդյունավետության, թափանցիկության, հրապարակայնության և հաշվետվողականության և օրինականության ապահովումը: Մասնավորապես կարևորվում են պետական մարմինների գործառույթների տարանջատումը, դրանց կառուցվածքի բարելավումը, պետական մարմինների աշխատակիցների մասնագիտական չափորոշիչների սահմանումը, աշխատակազմի կարողությունների զարգացումը, աշխատանքի արդյունավետության գնահատման համակարգերի ներդրումը, պետական ծառայողների վարձատրության և սոցիալական ապահովության համակարգերի բարելավումը, պետական և համայնքային ծառայողների վարքագծի և շահերի բախման օրենսդրական կարգավորումը, մասնագիտական ծառայությունների համար վարքագծի կանոնակարգերի ընդունումը, հանրային ծառայությունների մատուցման որակի չափորոշիչների սահմանումը, դրանց համապատասխանեցում միջազգային չափանիշներին և լավագույն պրակտիկային, հանրային ծառայությունների մատուցման ընթացակարգերի, գործարքների և գործառնությունների ժամկետների, գործառնական ծախսերի, ծառայությունների որակի վերաբերյալ քաղաքացիների ընկալման և բավարարվածության աստիճանի գնահատումը, պետական մարմինների ինստիտուցիոնալ կարողությունների զարգացումը, դրանց գործունեության նկատմամբ վերահսկողության ընթացակարգերի կատարելագործումը, պետական մարմինների միջև արդյունավետ հաղորդակցության և համագործակցության ապահովումը:
78. Կոռուպցիայի **քրեականացման** ուղղությամբ Հայաստանում գերակա են. միջազգային ընդունելի մոտեցումներին համապատասխան կոռուպցիոն հանցագործությունների շրջանակի սահմանումը, առանձին հանցակազմերի հստակեցումը, համարժեք պատիժների և պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետների հարցերի կարգավորումը, վկաների, փորձագետների, տուժածների և տեղեկություններ հաղորդող անձանց պաշտպանության ինստիտուտի, կոռուպցիոն հանցագործությունների նախնական քննության արդյունավետությունը, իրավապահ մարմինների կարողություններն, իրավապահ մարմինների և քաղաքացիական հասարակության կառույցների միջև համագործակցությունը: Նշված խնդիրների լուծումը հնարավորություն կտա հաղթահարել հանրապետությունում առկա անպատժելիության մթնոլորտը և պատասխանատվության ենթարկել մեղավոր անձանց՝ անկախ նրանց դիրքից և զբաղեցրած պաշտոնից:
79. Կոռուպցիայի դեմ պայքարին **քաղաքացիական հասարակության աջակցության** ապահովման ուղղությամբ կարևորվում են. հասարակության գործուն մասնակցությունը կոռուպցիայի կանխարգելմանը, բացահայտմանը և հանրային իրազեկմանը: Մասնավորապես կարևորվում է հակակոռուպցիոն քաղաքականության մշակմանը, իրականացմանը, վերահսկողությանն ու գնահատմանը քաղաքացիների և հասարակական միավորումների մասնակցությունն ապահովող

մեխանիզմների և մոդելների ներդրումը, տեղեկատվության ազատության օրենսդրական երաշխիքների ապահովումը, հանրային կառավարմանը քաղաքացիական հասարակության կառույցների արդյունավետ մասնակցության ինստիտուցիոնալ կարողությունների զարգացումը, հանրության իրազեկումը հակակոռուպցիոն մարմինների գործունեության վերաբերյալ, պետական մարմիններում էլեկտրոնային կառավարման համակարգերի ներդրումը, կոռուպցիայի հիմնախնդրի, տեսակների ու դրսևորումների, դրա հետևանքների ու վտանգավորության աստիճանի վերաբերյալ քաղաքացիների կրթությունը, ինչպես նաև մասնավոր հատվածում կոռուպցիայի կրճատմանը նպաստող գործարար միջավայրի ձևավորումը, թափանցիկության, հաշվետվողականության և օրինականության խթանումը:

- 80. ՀՌԻՄԾ-ն սահմանում է գործառնական, վարչական և քաղաքական կոռուպցիայի մակարդակների կրճատման խնդիրները փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի, հանրային ֆինանսների կառավարման ոլորտներում, պետական գնումների, հարկային և մաքսային համակարգերում, կրթության և առողջապահության ոլորտներում, դատական համակարգերում, քրեակատարողական, իրավաբանական անձանց պետական գրանցման, դատական ակտերի հարկադիր կատարման, ոստիկանական ծառայություններում, տեղական ինքնակառավարման համակարգում, քաղաքական և մասնավոր հատվածներում, ինչպես նաև ընտրական համակարգում: ՀՀ կառավարությունը հատկապես կարևորում է քաղաքական կայունության, քաղաքական իրավունքների և քաղաքացիական ազատությունների ապահովման մակարդակի շարունակական բարձրացումը, ազատ և արդար ընտրությունների ապահովման ընտրական գործընթացների կատարելագործումը:
- 81. Աշխատանքի և սոցիալական ապահովության, շրջակա միջավայրի պահպանության, գյուղատնտեսության, տրանսպորտի ու հաղորդակցության, քաղաքաշինության, կենսաթոշակային ապահովության, մշակույթի, կոմունալ- կենցաղային, միգրացիայի և փախստականների, սեյսմիկ պաշտպանության, արխիվների, գույքի կառավարման և գրանցման, լիցենզավորման և թույլտվությունների, մտավոր սեփականության իրավունքների պաշտպանության, ստանդարտների և հավատարմագրման, հանրային այլ ծառայությունների վերաբերյալ կոռուպցիոն ռիսկերի բացահայտման ու մեղմանն ուղղված ուսումնասիրությունները կնախատեսվեն ռազմավարության միջոցառումների ծրագրում, որոնց արդյունքներով կմշակվեն կոռուպցիոն ռիսկերի կրճատման ուղղությամբ միջոցառումներ:
- 82. ՀՌԻՄԾ իրականացման հիմնական խնդիրների շարքում առանձնանում է նաև դրա իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսների ապահովումը:

2.4. Հակակոռուպցիոն քաղաքականություն իրականացնող մարմիններ

- 83. Հայաստանում գործում է կոռուպցիայի դեմ պայքարի ապակենտրոնացված կառավարման համակարգ, որտեղ հակակոռուպցիոն քաղաքականության մշակման, հսկողության և համակարգման գործառնությունները տարանջատված են կոռուպցիայի բացահայտման մասնագիտացված մարմիններից:
- 84. Հայաստանի Հանրապետությունում հակակոռուպցիոն պետական քաղաքականության ամբողջական և արդյունավետ իրականացումը ապահովում է կոռուպցիայի դեմ պայքարում ընդգրկված պետական մարմինների գործունեության համադրման, կոռուպցիայի պատճառների վերացման, դրա կանխարգելման ուղղությամբ տարվող պետական քաղաքականությունը կատարելագործելու նպատակով ստեղծված **Կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդը** : Ընդհանուր առմամբ, հակակոռուպցիոն քաղաքականության մշակման, հսկողության և համակարգման, փոփոխությունների կառավարման, արդյունքների գնահատման գործընթացները լիարժեք կերպով իրականացնելու համար Խորհրդի ինստիտուցիոնալ կարողությունները, այդ թվում մարդկային, նյութական և ֆինանսական միջոցները, բավարար չեն եղել: Մասնավորապես վերջինս իր առջև դրված խնդիրների ու նպատակներին հասնելու համար, օժտված չի եղել հակակոռուպցիոն արդյունավետ քաղաքականության մի շարք կարևոր գործառնություններով. կոռուպցիայի կանխարգելման վերաբերյալ գիտելիքների ընդլայնում և տարածում, կոռուպցիայի դեմ պայքարում քաղաքացիական հասարակության ներգրավում, կոռուպցիոն դեպքերի վերաբերյալ քաղաքացիների դիմումներին, զանգվածային լրատվության միջոցների հրապարակումներին արձագանքելը: ՀՀ կառավարության պատվերով կոռուպցիայի մակարդակի գնահատման, առանձին բնագավառներում կոռուպցիայի

տարածվածության և միտումների, կոռուպցիոն ռիսկերի գնահատման և դրսևորումների բացահայտման վերաբերյալ ուսումնասիրություններ և հանրային հարցումներ չեն իրականացվել: Առանձին ոլորտներում և բնագավառներում կոնկրետ հակակոռուպցիոն ծրագրեր և կոռուպցիոն դրսևորումների կանխարգելմանն ուղղված միջոցառումներ չեն մշակվել և չեն իրականացվել:

85. ՀՀ նախագահի օգնականի նախագահությամբ և ՀՀ Ազգային ժողովի պատգամավորական խմբակցությունների և խմբերի, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների, ՀՀ պետական կառավարման մի շարք մարմինների ներկայացուցիչների մասնակցությամբ Խորհրդին կից ստեղծվել է **Հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման մոնիտորինգի հանձնաժողով** (այսուհետ՝ Հանձնաժողով): Հանձնաժողովի նախագահը և անդամները Հանձնաժողովի աշխատանքների մասնակցում են հասարակական հիմունքներով: Հանձնաժողովի որոշումներն ունեն խորհրդատվական բնույթ: Հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման մոնիտորինգի հանձնաժողովի հիմնական գործառնությունն են. ա) անցկացնել հակակոռուպցիոն ռազմավարության և գերատեսչական հակակոռուպցիոն ծրագրերի իրականացման նկատմամբ դիտարկումներ (մոնիտորինգ)՝ ներգրավելով հասարակայնության, զանգվածային լրատվության միջոցների և քաղաքացիական հասարակության ինստիտուտների ներկայացուցիչներին, բ) ուսումնասիրել և ընդհանրացնել կոռուպցիայի դեմ պայքարի գործում միջազգային կազմակերպությունների, ՀՀ պետական մարմինների փորձը և առաջարկություններ նախապատրաստել հակակոռուպցիոն պայքարի մեխանիզմների կատարելագործման վերաբերյալ, գ) դիտարկումներ իրականացնել ՀՀ միջազգային համաձայնագրերից բխող պարտավորությունների և հանձնառությունների, միջազգային կազմակերպությունների կողմից ներկայացված առաջարկությունների (երաշխավորությունների) ներդրման և կատարման նկատմամբ, դ) կոռուպցիոն հնարավոր ռիսկերի բացահայտման նպատակով իրականացնել իրավական նորմատիվ ակտերի նախագծերի փորձաքննություն և ներկայացնել առաջարկություններ դրանց կատարելագործման վերաբերյալ: Հանձնաժողովը՝ հասարակական կազմակերպությունների մասնակցությամբ, ձևավորել է տասներկու աշխատանքային խմբեր՝ ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության ծրագրի բաժիններին համապատասխան և դրանց միջոցով կազմակերպել մոնիտորինգի աշխատանքները: Աշխատանքային խմբերի մի մասը նիստեր չի գումարել: Մի շարք աշխատանքային խմբեր իրականացրել են օրենսդրական նախագծերի հակակոռուպցիոն փորձաքննություն, որը սակայն օրենսդրական փոփոխությունների չի հանգեցրել: Ընդհանուր առմամբ, աշխատանքային խմբերի գործունեությունը շարունակական չի եղել, ինչը հիմնականում պայմանավորված է եղել որակյալ կադրերով համարված մասնագիտական անձնակազմի բացակայությամբ: Հանձնաժողովը գործելով հասարակական հիմունքներով հնարավորություն չի ունեցել ձևավորելու լիարժեք կարողություններ մասնագիտական գործունեություն ծավալելու համար: Հանձնաժողովի կազմը և քաղաքացիական միավորումների ներկայացուցիչների ընդգրկման մեխանիզմները բավարար հիմքեր չեն ապահովել լիարժեք մասնակցային գործընթացի իրականացման համար: Ավելին, հասարակական կազմակերպությունների առաջադրման քաղաքականացված մեխանիզմը խոչընդոտում է Հանձնաժողովի գործունեությանը մասնագիտական ներուժի ներգրավմանը: Հանձնաժողովը ֆինանսական միջոցների, ինչպես նաև մարդկային կարողությունների ու նյութական ռեսուրսների բացակայության պայմաններում հնարավորություն չի ունեցել ձևավորելու ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության մոնիտորինգի ամբողջականացված համակարգ:

86. Կոռուպցիոն հանցագործությունների բացահայտումը և նախաքննությունը իրականացնում են ՀՀ հատուկ քննչական ծառայությունը, ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանությունը, ՀՀ Ազգային անվտանգության ծառայությունը: Համապատասխան գործառնությունն ունեն նաև ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն: Կոռուպցիոն հանցագործությունների նախաքննության և հետաքննության նկատմամբ հսկողությունը, ինչպես նաև կոռուպցիոն հանցագործություններով դատարանում մեղադրանքի պաշտպանությունը իրականացնում է ՀՀ գլխավոր դատախազությունը: Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց կողմից մարդու խախտված իրավունքների և ազատությունների առաջնային պաշտպանության գործառնություն իրականացնում է Մարդու իրավունքների պաշտպանը: Բյուջետային միջոցների և պետական ու համայնքային սեփականության օգտագործման նկատմամբ արտաքին պետական վերահսկողությունն իրականացնում է **2007թ.** ստեղծված ՀՀ վերահսկիչ պալատը: ՓԼ/ԱՖ դեմ պայքարի շրջանակներում կասկածելի գործարքներն ուսումնասիրում, և դրանց սառեցման կամ կասեցման վերաբերյալ ՀՀ ԿԲ Խորհրդին եզրակացություն է տրամադրում ՀՀ ԿԲ Ֆինանսական դիտարկումների կենտրոնը: Ձեռնարկատիրության զարգացման և սպառողների շահերի

պաշտպանության նպատակով տնտեսական մրցակցության պաշտպանումն ու խրախուսումը, բարեխիղճ և ազատ մրցակցության համար անհրաժեշտ միջավայրի ապահովումը, հակամրցակցային գործունեության կանխարգելումը, սահմանափակումը և նախագուշացումը, և տնտեսական մրցակցության պաշտպանության նկատմամբ վերահսկողությունը իրականացնում է լայն լիազորություններով օժտված անկախ պետական մարմինը՝ ՀՀ Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովը:

- 87.** Հաշվի առնելով Հայաստանում հակակոռուպցիոն քաղաքականության ձևավորված կառույցներն ու կոռուպցիայի դեմ պայքարի գործող պրակտիկան, հակակոռուպցիոն քաղաքականությունն իրականացնող մարմինների զարգացումը **2009-2012**թթ. միտված է լինելու դրանց հետագա ինստիտուցիոնալ զարգացմանը, գործունեության համակարգմանը, ինչպես նաև կոռուպցիայի կանխարգելման և բացահայտման մարմինների համագործակցության ապահովմանը:
- 88.** Հայաստանում հակակոռուպցիոն ամբողջական և արդյունավետ քաղաքականության սահմանումը և դրա արդյունքների գնահատումը, կոռուպցիայի դեմ պայքարում ընդգրկված պետական մարմինների գործունեության համակարգումը, կոռուպցիայի կանխարգելման պետական քաղաքականության կատարելագործումը շարունակելու է իրականացնել ներկայում գործող Կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդը: Միաժամանակ ամբողջականացվելու են խորհրդի կազմն ու գործառնությունների շրջանակը: Խորհրդի կազմում ներգրավվելու են դատական դեպարտամենտի, քաղաքացիական հասարակության ու գործարար աշխարհի ներկայացուցիչներ: Նոր ձևաչափով կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի հիմնական գործառնություններն են լինելու. ա) համակարգել ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության ծրագրի մշակման, իրականացման, դիտարկման և գնահատման աշխատանքները, բ) համակարգել և համադրել կոռուպցիայի դեմ պայքարի համապատասխան լիազորություններով օժտված մարմինների գործունեությունը, գ) կոռուպցիայի դեմ պայքարի գործում տարածաշրջանային և միջազգային կազմակերպությունների հետ համագործակցությունը, դ) համակարգել ՀՀ գերատեսչական (ոլորտային) հակակոռուպցիոն ծրագրերի մշակման և իրականացման գործընթացը, ե) կոռուպցիայի կանխարգելման հարցերով հասարակության գիտելիքների ընդլայնումն ու տարածումը:
- 89.** **Հայաստանում կոռուպցիայի կանխարգելման արդյունավետ քաղաքականության իրականացման, մոնիտորինգի, լիազորված մարմինների միջև համագործակցության, Կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի լիարժեք և արդյունավետ գործունեության ապահովման նպատակով** առաջարկվում է խորհրդին կից ստեղծել կոռուպցիայի կանխարգելման կառուցվածքային ստորաբաժանում, որի հիմնական գործառնություններն են լինելու.
- հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման միջոցառումների ծրագրի մշակման աշխատանքների կազմակերպումը և իրականացումը, ծրագրի մոնիտորինգն ու գնահատումը, կանոնավոր վերանայումը, ծրագրի իրականացման առաջընթացի հաշվետվությունների ամփոփումը,
 - կոռուպցիայի մակարդակի, տեսակների և տարածվածության վերաբերյալ հետազոտությունների և հարցումների կազմակերպումը,
 - պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից տեղեկատվության ստացումը և վերլուծությունը, տարբեր ոլորտներում կոռուպցիոն ռիսկերի հետազոտությունների իրականացումը,
 - առանձին պետական կառավարման մարմինների կողմից մշակված նախագծերի կոռուպցիոն ռիսկերի վերաբերյալ եզրակացությունների նախապատրաստումը:
 - կրթալուսավորչական միջոցառումների կազմակերպումը, հակակոռուպցիոն քարոզչության կազմակերպումը, կոռուպցիայի դեմ պայքարի շրջանակներում հանրային իրազեկումը, այդ թվում՝ էլեկտրոնային կայքի վարման միջոցով
 - կոռուպցիայի դեմ պայքարի պետական կառավարման մարմինների և մասնավոր հատվածի կազմակերպությունների աշխատակիցների համար վերապատրաստման թեմատիկ դասընթացների կազմակերպումը,

- կոռուպցիայի դեմ պայքարի միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության ապահովումը, միջազգային պայմանագրերից բխող պարտավորությունների, հանձնառությունների վերաբերյալ զեկույցների, հաշվետվությունների մշակումը,
- քարտուղարական ծառայություններ կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի աշխատանքներին:

90. Կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդին կից կառուցվածքային ստորաբաժանման կազմակերպչական կառուցվածքը և կարգավիճակը ուղղկիորեն կպայմանավորվեն նրա հիմնական գործառնություններով: Այս կառուցվածքային ստորաբաժանման պահպանման ծախսերն առաջարկվում է իրականացնել ՀՀ կառավարության աշխատակազմի բյուջեի շրջանակներում՝ մասնագետների փոքրաթիվ թվաքանակով:

2.5. Կադրերի պատրաստումը և վերապատրաստումը, կոռուպցիայի մասին տեղեկատվության կառավարումը

91. Կոռուպցիայի դեմ պայքարի արդյունավետությունը մեծապես պայմանավորված է կոռուպցիայի դեմ պայքարի պետական քաղաքականությունն իրականացնող մարմինների մասնագետների մասնագիտական կարողություններով ու գիտելիքներով: **2003-2007թթ.** հակակոռուպցիոն քաղաքականություն իրականացնող հիմնական մարմինների մասնագետների համար կազմակերպվել են վերապատրաստման առանձին դասընթացներ, որոնք սակայն հիմնականում վերաբերել են կոռուպցիայի դեմ պայքարի առանձին տարրերին և չեն ապահովել մասնագիտական ամբողջական տեղեկատվության հասանելիությունը: Կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում կադրերի պատրաստման և վերապատրաստման խնդիրները պետք է լուծվեն այս ոլորտում ուսուցման և շարունակական վերապատրաստման համակարգի միջոցով:

92. Կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում **ուսուցման** խնդիրներն ուղղվելու են Հայաստանի Հանրապետության հանրակրթական ու բարձրագույն մասնագիտական կրթության հաստատություններում առանձին մասնագիտությունների մագիստրոսական կրթական ծրագրերում կոռուպցիայի կանխարգելման, բացահայտման և հանրային իրազեկման թեմաների մշակմանն ու ներդրմանը:

93. Հանրակրթական դպրոցների համար ուսումնական ծրագրերը կկազմվեն ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից՝ կսահմանվեն նաև այն դասընթացներն ու դասագրքերն, որտեղ պետք է տեղ գտնեն հակակոռուպցիոն թեմաները: Ուսումնական ծրագրերում պետք է գերակշռեն կոռուպցիայի տեսակների, պատճառների, դրսևորումների և հետևանքների, կոռուպցիայի դեմ պայքարի միջոցների, կոռուպցիայի մակարդակի և հակակոռուպցիոն ծրագրերի ազդեցության գնահատման վերաբերյալ թեմաները:

94. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության հաստատած պահանջներին համապատասխան բարձրագույն ուսումնական հաստատությունները կկազմեն ուսումնական ծրագրեր, որտեղ պետք է գերակշռեն հանրային կառավարման արդյունավետ համակարգերի, թափանցիկ, հրապարակային, հաշվետվողական և մասնակցային կառավարման, կոռուպցիոն ռիսկերի գնահատման և օրենսդրության հակակոռուպցիոն փորձաքննության, հանրային ծառայության, հանրային ֆինանսների կառավարման և պետական գնումների վերահսկման համակարգերի, հանրային տեղեկատվության սկզբունքներին և այլ հարակից թեմաները: Կոռուպցիայի բացահայտման ուսումնական ծրագրերում պետք է գերակշռեն կոռուպցիայի քրեականացման, փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման բացահայտման, կոռուպցիոն հանցագործությունների հատկանիշների հայտնաբերման, ապացույցների հավաքման և քննության մեթոդների, կոռուպցիոն հանցագործությունների համար պատիժների սահմանման, միջազգային իրավական գործիքներն և այլ հարակից թեմաները:

95. Կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում մասնագետների շարունակական **վերապատրաստման** խնդիրը նախատեսվում է կազմակերպել ինչպես կրթական հաստատությունների, այնպես էլ պետական մարմիններին կից գործող մասնագիտական վերապատրաստման կառույցների միջոցով: Կոռուպցիայի բացահայտման և հետապնդման թեմատիկ մասնագիտական սեմինար-

դասընթացների իրականացման նպատակով կօգտագործվեն ՀՀ Դատախազության դպրոցի, ՀՀ Ոստիկանական ակադեմիայի, ՀՀ Դատական դպրոցի, ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության բարձրագույն դասընթացների, ՀՀ Կենտրոնական Բանկի, հարկային և մաքսային մարմինների ուսումնական կենտրոնների կարողությունները: Վերապատրաստման այս հաստատություններն ունեն բավարար, սակայն սահմանափակ կարողություններ կոռուպցիայի բացահայտման համակարգում ներգրավված մասնագետների շարունակական վերապատրաստման համար: Հետևաբար անհրաժեշտ է զարգացնել դրանց ինստիտուցիոնալ կարողությունները՝ ապահովել համապատասխան մասնագետներով, լսարաններով, ուսումնական սարքավորումներով և նյութերով, գրադարանով ու տեղեկատվական կենտրոնով:

96. Կոռուպցիայի բացահայտման և հետապնդման ոլորտում մասնագետների վերապատրաստման գործընթացում կարևորվում է ոստիկանների, դատախազների, հարկային, մաքսային, ազգային անվտանգության մարմինների համապատասխան աշխատակիցների համար կոռուպցիայի դեմ պայքարի համատեղ ուսուցման դասընթացների կազմակերպումը՝ ներգրավվելով միջազգային կազմակերպությունների համապատասխան կառույցների ուժերը:
97. Շարունակական վերապատրաստման ծրագրերին մասնակցությունը պետք է լինի պարտադիր, իսկ դասընթացները պետք է կազմակերպվեն որոշակի պարբերականությամբ: Միջնաժամկետից երկարաժամկետ հատվածում եռամյա պարբերականությամբ վերապատրաստումները կհամարվեն նվազագույն պահանջ, քանի որ առաջ կգան բազմաթիվ թեմաներ, որոնց պետք է ծանոթանան մասնագետները, և անհրաժեշտություն կառաջանա ավելի մեծ հաճախականությամբ կազմակերպել վերապատրաստման դասընթացները: Վերապատրաստման ծրագրերն ամբողջապես կֆինանսավորվեն գործատուի միջոցների հաշվին:
98. Կոռուպցիայի կանխարգելման և բացահայտման վերապատրաստման ծրագրերը, մասնավորապես կուղղվեն հակակոռուպցիոն քաղաքականության և ռազմավարության մշակման ու պլանավորման կարողությունների, ինչպես նաև առանձին ուղղություններով համապատասխան ծրագրերի նախագծեր մշակելու ունակությունների զարգացմանը, հակակոռուպցիոն քաղաքականության համակարգման և միջգերատեսչական համագործակցության ապահովման միջազգային լավագույն փորձի ուսումնասիրմանը: ՓԼ/ԱՖ ոլորտում մասնագիտական վերապատրաստման ծրագրերը մասնավորապես կուղղվեն ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների և ծրագրային ապահովման միջոցներից օգտվելու, ՓԼ/ԱՖ ոլորտում օրենսդրության պահանջներին համապատասխանության առաջնորդ իրականացման, դեպքերի հետաքննման վերլուծական գիտելիքների և հմտությունների զարգացմանը: Դատախազության համակարգի մասնագետների վերապատրաստման գործընթացում մասնավորապես կարևորվում է կոռուպցիայի բացահայտման և կոռուպցիոն դեպքերի քննության նկատմամբ հսկողության իրականացման լավագույն փորձի փոխանցումը մասնագետներին:
99. Կարևորվում է նաև կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում մասնագետների համար ուսումնական այցերի և կարճաժամկետ աշխատանքային գործուղումների կազմակերպումը կոռուպցիայի դեմ պայքարի լավագույն փորձ ունեցող երկրների համապատասխան հաստատություններ, ինչպես նաև այդ երկրների համապատասխան մասնագետների այցեր Հայաստանի Հանրապետություն՝ կոռուպցիայի դեմ պայքարի հիմնահարցերով գիտագործնական պարապմունքներ անցկացնելու համար:
100. Կոռուպցիայի վերաբերյալ **տեղեկատվության հավաքագրման, փոխանակման և վերլուծության** գործող համակարգը ներառում է ՀՀ Կենտրոնական Բանկի Ֆինանսական դիտարկումների կենտրոնի գործառնությունները՝ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի գործում, ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի գործառնությունները՝ քաղաքացիների գույքի և եկամուտների հայտարարագրման գործում, ՀՀ գլխավոր դատախազության գործառնությունները՝ կոռուպցիոն հանցագործությունների նախաքննության և դատական քննության արդյունքների վիճակագրության ամփոփման գործում, իրավապահ մարմինների օպերատիվ հետախուզական գործառնությունները՝ կոռուպցիայի բացահայտման գործում, ինչպես նաև ՀՀ Վիճակագրության ազգային ծառայության գործառնությունները՝ կոռուպցիոն հանցագործությունների ամփոփ վիճակագրության տրամադրման գործում:
101. Իրավապահ մարմինների համատեղ քննարկումների արդյունքում, ներկայում ՀՀ քրեական օրենսգրքում ամրագրված հանցագործություններից, որպես կոռուպցիոն ռիսկ պարունակող,

առանձնացվել են հատուկ հանցատեսակներ: ՀՀ գլխավոր դատախազի հրամանով հաստատվել է քննչական աշխատանքների մասին հաշվետվության հատուկ ձև, որում արտացոլվում է Կոռուպցիոն ռիսկ պարունակող հանցագործությունների վիճակագրությունը¹: ՀՀ ոստիկանությունը ամփոփում է իրավապահ մարմինների կողմից տրամադրված տվյալները և փոխանցում ՀՀ վիճակագրության ազգային ծառայությանը: Այդուհանդերձ, կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ համակողմանի, ամբողջական և մատչելի վիճակագրության համակարգը գործնականում ձևավորված չէ: Հաշվետվությունների գործող համակարգը, մասնավորապես, մանրամասն տեղեկություններ չի տրամադրում կոռուպցիոն բոլոր հանցատեսակների, դրանցում պաշտոնատար անձանց ներգրավվածության չափի, առընչվող պետական հաստատությունների մասին, ինչը չի նպաստում հաստատությունների միջև համեմատական վերլուծություն կատարելուն, կոռուպցիոն ռիսկերը հայտնաբերելուն, կոռուպցիայի միտումներն ու տարածվածությունը գնահատելուն և այլն: Կոռուպցիոն իրավախախտումների վիճակագրությունը չի ներառում պետական ծառայողների վարչական իրավախախտումները: Խիստ սահմանափակ են նաև Հայաստանում կոռուպցիայի մակարդակը, գերիշխող տեսակները, բնագավառներն ու ոլորտները գնահատող ուսումնասիրություններն ու հետազոտությունները, դրանց արդյունքների վերլուծության համադրումն ու կիրառումը պաշտոնական վիճակագրության հետ:

102. Կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում կադրերի պատրաստման և վերապատրաստման, կոռուպցիայի մասին տեղեկատվության կառավարումը բարելավելու նպատակով առաջարկվում է.

- **Ներդնել կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում ուսուցման համակարգ.** ուսուցման գործընթացին ներկայացվող պահանջների սահմանման, հանրակրթական հաստատություններում, բարձրագույն մասնագիտական կրթական հաստատություններում առանձին մասնագիտությունների մագիստրոսական կրթական ծրագրերում կոռուպցիայի կանխարգելման, բացահայտման և հանրային իրազեկման թեմաների մշակման և ներդրման, ուսումնական ծրագրերը, գիտամեթոդական ու կրթական գործընթացի կազմակերպման համար պահանջվող այլ նյութերը, ինչպես նաև ուսումնական գործընթացի համապատասխան բյուջեներից ֆինանսավորման կարգը հաստատելու, բարձրագույն ուսումնական հաստատությունների կարողությունների զարգացման, ուսուցման համակարգի ներդրման աշխատանքների լուսաբանման, համակարգի ներդրման իրավական հիմքերի ձևավորման միջոցով:
- **Ներդնել կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում մասնագետների շարունակական վերապատրաստման համակարգ.** վերապատրաստման ծրագրերի կազմակերպման կարգը հաստատելու, հակակոռուպցիոն քաղաքականության իրականացման գործում ներգրավված պետական մարմիններին կից վերապատրաստման հաստատությունների կարողությունները գնահատելու, այդ հաստատությունների միջոցով վերապատրաստման ենթակա պաշտոնյաների շրջանակը սահմանելու, վերապատրաստում իրականացնող կազմակերպությունները բացահայտելու, շարունակական վերապատրաստման աշխատանքների ֆինանսավորման աղբյուրներն ու կարգը սահմանելու, վերապատրաստման ծրագրերը և ուսումնական ձեռնարկները՝ ըստ մասնագիտությունների հաստատելու միջոցով:
- **Ապահովել կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում կադրերի պատրաստման և վերապատրաստման համակարգի շարունակական կատարելագործումը՝** ուսուցման և մասնագետների վերապատրաստման կարիքների գնահատման և ներգրավված կառույցների կարողությունների շարունակական զարգացման, ուսուցման և վերապատրաստման գործընթացների կազմակերպման համար պահանջվող ֆինանսական միջոցներն ապահովելու միջոցով:
- **Բարելավել կոռուպցիայի վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման, փոխանակման և վերլուծության համակարգը՝** կոռուպցիայի դեմ պայքարի առանձին մարմինների միջև և միջազգային ու տարածաշրջանային կազմակերպությունների հետ կոռուպցիայի վերաբերյալ տվյալների փոխանակման ընթացակարգերի հստակեցման, կոռուպցիոն իրավախախտումների վերաբերյալ վիճակագրության համակարգի ամբողջականացման, դրա վերլուծության մեթոդիկայի մշակման և ներդրման, կոռուպցիայի մակարդակը, գերիշխող տեսակները,

¹ ՀՀ գլխավոր դատախազի հրամանով առանձնացվում են 22, իսկ Հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման մոնիտորինգի հանձնաժողովի որոշմամբ՝ 59 հանցատեսակներ

բնագավառներն ու ոլորտները գնահատող ուսումնասիրությունների և հետազոտությունների իրականացման, քաղաքացիական հասարակության կառույցներին նման հետազոտությունների պատվիրակման, պաշտոնական վիճակագրության հետ դրանց արդյունքների վերլուծության համադրման և կիրառման միջոցով:

ԳԼՈՒԽ III. ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԴԵՍ ՊԱՅՔԱՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

3.1. Կոռուպցիայի կանխարգելման միջոցները

103. Կոռուպցիայի կանխարգելման միջոցների շարքում հատկապես կարևորվում է **բարեխիղճ հանրային ծառայության** կայացումն ու զարգացումը՝ հանրային ծառայության համակարգի ամբողջականացման, հանրային ծառայությունը որակյալ մասնագետներով համալրելու, հանրային ծառայողների մասնագիտական ունակությունների կատարելագործման և վերապատրաստման, նրանց վարձատրության և խրախուսման համակարգերի ներդրման, հանրային ծառայողների վարքագծի և շահերի բախման կանոնակարգման միջոցով:
104. Պետական կառավարման համակարգի բարեփոխումների ներկա փուլում, **հանրային ծառայության համակարգի ամբողջականացման** ճանապարհին կանգնած են մի շարք մարտահրավերներ: Օրենսդրորեն միասնականացված և ամբողջականացված չեն հանրային ծառայության շրջանակները: Պատշաճ կերպով կանոնակարգված չեն ծառայության մի տեսակից մյուսին անցման հնարավորությունները, նույնականացված և համապատասխանեցված չեն ծառայողների գիտելիքների, ստաժի և փորձառության չափանիշները, քաղաքական և հայեցողական պաշտոններին և ծառայության մի շարք տեսակների մասնագիտական գործունեությանը ներկայացվող պահանջները: Ընդհանուր առմամբ, պետական կառավարման մարմինների աշխատակազմերի կառավարման կարողությունները մնում են թույլ, ինչը խոչընդոտում է արժանիքների վրա հիմնված մասնագիտական ծառայության ձևավորմանը: Հասարակական միավորումները քաղաքացիական ծառայողների մրցույթային և ատեստացիոն հանձնաժողովներում ընդգրկված չեն:
105. Քաղաքացիական ծառայողների թափուր պաշտոնի մրցույթների թեստավորման և հարցազրույցի գործընթացները և դրանց արդյունքում նվազագույն շեմը հաղթահարած թեկնածուներից համապատասխան մարմնի ղեկավարի կամ աշխատակազմի ղեկավարի կողմից պաշտոնի նշանակումը լիարժեքորեն կանոնակարգված չէ, սահմանված չեն ընտրության կամ նշանակման հստակ չափանիշներ, ինչը հանգեցնում է հայեցողական սուբյեկտիվ մոտեցումների կիրառման հնարավորությունների: Հստակ սահմանված չեն նաև հարցազրույցի արդյունքում թեկնածուների գնահատման ընթացակարգերը: Նշված թերությունները հավասարապես վերաբերվում են նաև պետական ծառայողների առաջխաղացման և մասնագիտական պիտանիության մակարդակի պարբերական գնահատման գործընթացներին, որոնց հիմնական մեթոդը շարունակաբար մնում է ատեստացիան: Ի լրումն, ատեստացիայի ընթացքում չեն բացահայտվում պետական ծառայողների վերապատրաստման կարիքները, ինչը սահմանափակում է ատեստացիայի դերը անձնակազմի որակավորման բարձրացման գործընթացի կազմակերպման գործում:
106. Պետական ծառայության մի շարք տեսակներում կիրառվում է անձնակազմի պարբերական ռոտացիա (փոխատեղում)՝ աշխատակիցների մասնակցությունը կոռուպցիոն համաձայնություններում սահմանափակելու նպատակով, ինչը դիտվում է որպես առանցքային հակակոռուպցիոն կանխարգելիչ միջոց:
107. Չնայած Հայաստանում **պետական և համայնքային ծառայողների վերապատրաստման** ծրագրերի, վերապատրաստողների և ինստիտուցիոնալ կարողությունների առկայությանը, վերապատրաստման քաղաքականությունը ըստ էության սահմանափակվում է օրենսդրության հիմունքների վերաբերյալ երկշաբաթյա դասընթացներով, մինչդեռ համապատասխան մասնագիտական հմտությունների և կարողությունների դասավանդումը մնում է անբավարար: Ավելին, վերապատրաստման դասընթացները և ծրագրերը չեն ընդգրկում պետական և համայնքային ծառայողների գործունեության օրենսդրական սահմանափակումները և նրանց վարքագիծը կանոնակարգող դրույթները, ինչպես նաև երկրում կոռուպցիայի դեմ պայքարի քաղաքականության տարրերը:
108. **Պետական և համայնքային ծառայողների վարձատրության համակարգում** աշխատավարձի բազային պաշտոնային դրույքաչափը տարեց-տարի հետևողականորեն բարձրացել է: Այդուհանդերձ, հանրային հատվածում աշխատավարձի մակարդակը շարունակաբար զգալիորեն զիջում է մասնավոր հատվածում համարժեք պաշտոնների վարձատրության մակարդակին՝ հինգից-տաս անգամ, ինչը ընդհանուր առմամբ խոչընդոտում է որակյալ մասնագետներով պետական ծառայության համակարգի

համալրմանը և մեծապես պայմանավորում է կոռուպցիոն ռիսկերի դրսևորմանը պետական հատվածում: Հանրային ծառայողի վարձատրության համակարգն ուղղակիորեն պայմանավորված չէ նրա կողմից կատարվող աշխատանքների ծավալով և որակով: Կիրառվող ատեստավորման համակարգը փոխկապակցված չէ վարձատրության մակարդակի փոփոխության հետ: Պետական կառավարման որոշ մարմիններում օրենսդրորեն սահմանվել են արտաբյուջետային միջոցներ, որոնք մասնավորապես ուղղվում են նաև այդ մարմիններում **պետական ծառայողների խրախուսմանը**: Թեև նման մոտեցումը բարելավում է արտաբյուջետային միջոցներ տնօրինող մարմիններում պետական ծառայողների նյութական պայմանները և լրացուցիչ խթաններ ստեղծում արդյունավետ աշխատանքի համար, այդուհանդերձ, նման համակարգը անհավասար պայմաններ է ստեղծում պետական ծառայության միասնական համակարգում ընդգրկված ծառայողների համար և առաջացնում լրացուցիչ կոռուպցիոն ռիսկեր: Քաղաքացիական և որոշ պետական հատուկ ծառայողների սոցիալական ապահովության, մասնավորապես կենսաթոշակային, կյանքի, բժշկական ապահովագրության և սոցիալական պաշտպանության մյուս խնդիրները դեռևս իրենց լուծումները չեն գտել:

109. Այսպիսով, հանրային ծառայության ամբողջականացման, որակյալ մասնագետներով համալրման, ծառայողների մասնագիտական ունակությունների կատարելագործման և վերապատրաստման, վարձատրության և խրախուսման համակարգերի զարգացման նպատակով անհրաժեշտ է.

- **Ամբողջականացնել հանրային ծառայության բոլոր տեսակների օրենսդրական կարգավորումը.** պետական առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների կողմից մատուցվող ծառայությունները հանրային ծառայության շրջանակներում ներառելու, հանրային ծառայողների իրավունքների ու պարտականությունների, հավաքագրման, առաջխաղացման և պաշտոնաթողության, վարքագծի և շահերի բախման կանոնակարգման միասնական սկզբունքները սահմանելու միջոցով:
- **Ներդնել հանրային ծառայությունների որակի գնահատման և վերահսկողության մեխանիզմները.** միջազգային չափանիշներին համապատասխան հանրային ծառայությունների որակի չափորոշիչները և ընթացակարգերը՝ այդ թվում՝ գործարքների և գործառնությունների ժամկետներ, գործառնական ծախքերի, ծառայությունների որակի վերաբերյալ քաղաքացիների ընկալման և բավարարվածության նվազագույն ցուցանիշներ սահմանելու միջոցով:
- **Ներդնել միասնական հանրային ծառայության արդյունավետ կառավարման ինստիտուտը.** միասնական հանրային ծառայության ոլորտում լիազոր մարմնի խնդիրները և գործառնությունները, լիազորությունները, հաշվետվողականությունը և ընթացակարգերը սահմանելու միջոցով:
- **Նվազեցնել քաղաքական պաշտոնյաների դերը մասնագիտական անձնակազմի ձևավորման, միանձյա հայեցողական որոշումների կայացման գործում.** պետական ծառայություն մրցույթային հիմունքներով աշխատանքի ընդունման ընթացակարգերը միասնականացնելու, համապատասխան մարմնի աշխատակազմի ղեկավարին թափուր պաշտոնների համալրման պատասխանատու ճանաչելու միջոցով:
- **Կրճատել հանրային ծառայողների թափուր պաշտոնների համալրման ընթացակարգերում առկա կոռուպցիոն ռիսկերը.** թեստավորման և գիտելիքների գնահատման փուլի կազմակերպչական աշխատանքները պատվիրակելու, համապատասխան գիտական և ուսումնական հաստատությունների կողմից այդ բնագավառում տրված որակավորման վկայականները ճանաչելու, թեկնածուների ընտրության հարցազրույցների փուլի աշխատանքները համապատասխան պետական կառավարման մարմիններ ապակենտրոնացնելու, հարցազրույցների գնահատման բալային համակարգ և մրցույթում հաղթող թեկնածուի ընտրության կոլեգիալ կարգ ներդնելու միջոցով:
- **Բարձրացնել հանրային ծառայողների հաշվետվողականության մակարդակը.** ծառայողների ըստ աշխատանքային ծրագրերի կատարողականի արդյունքների գնահատման վրա հիմնված վարձատրության, խրախուսման և պաշտոնեական առաջխաղացման փոխկապակցված համակարգի ներդրման միջոցով:
- **Ամբողջականացնել պետական և համայնքային ծառայողների վերապատրաստման ծրագրերը.** պարտադիր վերապատրաստման ծրագրերում պետական ծառայողների գործունեության

սահմանափակումների, վարքագծի կանոնների և շահերի բախման կարգավորման, արդյունավետ հաղորդակցության, ծառայությունների մատուցման, տեղեկատվության ազատության, կոռուպցիայի կանխարգելման և համանման այլ թեմաներով դասընթացներ ընդգրկելու միջոցով:

- **Կրճատել պետական և համայնքային ծառայության գործառույթներով պայմանավորված կոռուպցիոն ռիսկերը.** դրանց կանխարգելման, բացահայտման և պատասխանատվության միջոցների կիրառման վերաբերյալ վերապատրաստման առանձին դասընթացների, կրթական ծրագրերի կազմակերպման, պետական և համայնքային ծառայության ընթացակարգերը մանրամասն նկարագրող ուղեցույցների կիրառման միջոցով:
- **Բարձրացնել հանրային ծառայության համակարգում վարձատրության մակարդակի մրցունակությունը.** պետական և հանրային ծառայողների վարձատրության միջնաժամկետ և երկարաժամկետ քաղաքականությունը սահմանելու միջոցով:
- **Ներդնել խրախուսման և պատասխանատվության համարժեք մեխանիզմներ հանրային ծառայությունների առավել մեծ կոռուպցիոն ռիսկեր պարունակող բնագավառներում.** դատական, դատախազական, հարկային, մաքսային, ոստիկանության, ազգային անվտանգության ծառայությունների, քաղաքական և հայեցողական առանձին պաշտոնների համար վարձատրության, նյութական և բարոյական խրախուսման առավել նպաստավոր պայմանների և դրանց համարժեք վերահսկողության մեխանիզմների և պատասխանատվության առավել խիստ միջոցների սահմանման, ինչպես նաև միջնաժամկետ հատվածում վարձատրության և խրախուսման արտաբյուջետային ֆոնդերի կիրառման միջոցով:

110. Պետական պաշտոնյաների վարքագծի և շահերի բախումների կարգավորման, շահերի հայտարարագրման համակարգի արդյունավետ գործունեության համար անհրաժեշտ են համապատասխան օրենսդրություն, պաշտոնյաների վարքագիծը և շահերի բախումը կարգավորող օրենսդրության պահանջների խախտման համար պատասխանատվության միջոցների սահմանում և հետևողական կիրառում, շահերի հայտարարագրման համակարգում ներառվող պաշտոնյաների հստակ շրջանակի սահմանում, և **համակարգի արդյունավետ գործունեությունն ապահովող գործուն մարմիններ:**

111. Հայաստանում հանրային ծառայողների վարքագծի և շահերի բախման կանոնակարգումը պետական և համայնքային ծառայության տարբեր հատվածներում միասնական չէ և իրականացվում է այդ ծառայությունները կարգավորող օրենսդրությամբ: Դիվանագիտական ծառայության, Ազգային ժողովի աշխատակազմում պետական ծառայության և մաքսային ու հարկային ծառայությունների առանձնահատկությունները հաշվի չեն առնված՝ այդ ծառայողների վարքագիծը և շահերի բախումը կանոնակարգող դրույթներում: Ընդ որում, բացակայում են շահերի բախման չափանիշները և օրենսդրության կիրառման ընթացակարգերը: Պետական ծառայության օրենքների մասնատվածության արդյունքում որոշ համանման ծառայություններում տարբերակված մոտեցում է ցուցաբերվում ծառայողների գործունեության սահմանափակումների նկատմամբ: Այսպես, հարկային ծառայողները չեն կարող անդամակցել քաղաքական կուսակցություններին, մինչդեռ այդ սահմանափակումը չի տարածվում մաքսային ծառայողների վրա, որոնք նույնպես ներգրավված են եկամուտների հավաքագրման գործընթացում: Բարձրաստիճան քաղաքական, հայեցողական և պետական այլ պաշտոններ զբաղեցնող անձանց վարքագիծը և շահերի բախումը կարգավորված չէ:

112. Սահմանված չեն **շահերի բախումը նկարագրող իրավիճակները**, շահերի բախման կարգավորման ընթացակարգերը, կարգավորող համապատասխան մարմինները, սահմանափակման խախտումների համար կոնկրետ պատժամիջոցները: Հստակեցված չէ պետական կառավարման այն մարմինը, որը պետք է իրականացնի այս սահմանափակումների կիրառման նկատմամբ վերահսկողություն և կիրառի պատժամիջոցներ: Պետական և համայնքային ծառայողների մասնագիտական **վարքագծի միասնական էթիկայի կանոններ և դրանք վերահսկող միասնական մարմին** գոյություն չունեն:

113. Հանրային ծառայողների **շահերի հայտարարագրման** գործող ինստիտուտը հիմնականում սահմանափակվում է պաշտոնյաների գույքի և եկամուտների հայտարարագրման օրենսդրական պահանջով: **2006թ.** «Ֆիզիկական անձանց գույքի և եկամուտների հայտարարագրման մասին» ՀՀ օրենքի ընդունմամբ օրենսդրորեն ներդրվել է ՀՀ քաղաքացիների **գույքի և եկամուտների**

հայտարարագրումը: Պետական պաշտոնյաների գույքի և եկամուտի հայտարարագրումը իր մեջ համադրում է եկամուտների հայտարարագրումը հարկային պարտավորությունների կատարման, և թե եկամուտների և գույքի հայտարարագրումը՝ շահերի բախման և կոռուպցիոն դեպքերի բացահայտման տեսանկյունից: Պետական պաշտոնյաների գույքի և եկամուտների հայտարարագրերի արժանահավատության ստուգման համար անհրաժեշտ առկա ինստիտուցիոնալ կարողություններն ու ռեսուրսները սահմանափակ են, իսկ պահանջվող մեթոդաբանությունն ու ընթացակարգերը դեռևս մշակված չեն: Հավաքված տեղեկատվությունը կուտակվում է, սակայն դրանց հավաստիությունը չի ստուգվում և չի համադրվում այլ աղբյուրների հետ, չի վերլուծվում անօրինական եկամուտների և գույքի ձեռքբերման տեսանկյունից և չի տրամադրվում իրավապահ մարմիններին հետագա օգտագործման և վերլուծության նպատակով, չի համադրվում շահերի բախման այլ բաղադրիչների հետ: Բացի այդ, օրենքը ներառում է հայտարարատուների մեծ շրջանակ, ինչը հնարավորություն չի տալիս կենտրոնանալու բարձրաստիճան պաշտոնյաների վրա:

114. Պետական պաշտոնյաների և նրանց փոխկապակցված անձանց գույքի և եկամուտների հայտարարագրերում ներառվող հրապարակման ենթակա տեղեկությունները էլեկտրոնային լրատվամիջոցների համար անմիջականորեն մատչելի չեն: Ընդհանուր առմամբ, պետական ծառայողների գույքի և եկամուտների վերաբերյալ հայտարարագրերում ներառվող տեղեկատվության հրապարակման և այդ տեղեկատվությունը հասարակությանը տրամադրման մեխանիզմները բավարար չափով թափանցիկ չեն:

115. Այսպիսով, **հանրային ծառայողների վարքագծի և շահերի բախման կանոնակարգման, վարքագծի կանոնների հետևողական կիրառման, պետական պաշտոնյաների շահերի հայտարարագրման ինստիտուտի կայացման նպատակով անհրաժեշտ է.**

- **Ամբողջականացնել հանրային ծառայողների վարքագծի և շահերի բախման օրենսդրական կարգավորումը.** քաղաքական, հայեցողական և հանրային ծառայողների վարքագծի և շահերի բախման կանոնակարգման միասնական սկզբունքները և կանոնները, վարքագծի կոնկրետ կանոնների խախտումների համար պատասխանատվություն սահմանելու, պետական պաշտոնյաների գույքի և եկամուտների հայտարարագրման գործող համակարգը շահերի հայտարարագրման միասնական համակարգում ներառելու միջոցով:
- **Ներդնել վարքագծի և շահերի բախման կանոնակարգման առավել խիստ կանոններ և ընթացակարգեր հանրային ծառայությունների առավել մեծ կոռուպցիոն ռիսկեր պարունակող բնագավառներում.** դատական, դատախազական, հարկային, մաքսային, ոստիկանության, ազգային անվտանգության ծառայությունների, քաղաքական և հայեցողական առանձին պաշտոնների համար շահերի բացահայտման, շահերի թույլատրելի բախումների շրջանակների նեղացման, նվերների ստացման և տրամադրման կանոնների ու սահմանափակումների խստացման, այլ գործունեությամբ զբաղվելու բացառման, վարքագծի կանոնների խախտումների և շահերի բախումների վերաբերյալ տեղեկություններ հայտնողների խրախուսման և պաշտպանության միջոցով:
- **Օպտիմալացնել հանրային ծառայողների շահերի հայտարարագրումը.** քաղաքական, հայեցողական, ղեկավար և բարձրագույն խմբի պաշտոնների, գլխավոր և առաջատար խմբերի պաշտոնների, կոռուպցիոն մեծ ռիսկեր պարունակող ծառայությունների և գործառույթներ իրականացնող պաշտոնների և որոշումների կայացման գործընթացներում չընդգրկված հանրային ծառայողների նկատմամբ հայտարարագրման տարբերակված համակարգ ներդնելու միջոցով:
- **Ներդնել հանրային ծառայողների վարքագծի կանոնների և շահերի հայտարարագրման համակարգի արդյունավետ կառավարման ապակենտրոնացված ինստիտուցիոնալ մոդելը.** կենտրոնական լիազոր մարմնի խնդիրները և գործառույթները, լիազորությունները, հաշվետվողականությունը և ընթացակարգերը սահմանելու, յուրաքանչյուր պետական մարմնում էթիկայի հանձնաժողով ստեղծելու, յուրաքանչյուր պետական մարմնում վարքագծի կանոնների ներդրման, շահերի հայտարարագրման ռեեստրի ստեղծման ու վարման, ընթացակարգերի պահպանման նկատմամբ վերահսկողության, էթիկայի և շահերի բախման հարցերով հաշվետվության պատրաստման պատասխանատու պաշտոնյա նշանակելու միջոցով:

- **Հգորացնել պետական և համայնքային մարմիններում հանրային ծառայողների վարքագծի կանոնների և շահերի հայտարարագրման հարցերով պատասխանատուների կարողությունները.** շահերի հայտարարագրման, վարքագծի կանոնների և էթիկայի նորմերի ու դրանց ընթացակարգերի, խախտումների, դեպքերի ու փաստերի մասին տեղեկացման, բացահայտման և կիրառվող պատժամիջոցների վերաբերյալ գործնական ուղեցույցների մշակման և ուսուցման կազմակերպման միջոցով:
- **Ապահովել հանրային ծառայողների շահերի հայտարարագրման թափանցիկությունն ու հրապարակայնությունը.** քաղաքական, հայեցողական, պետական և համայնքային ծառայության ղեկավար ու բարձրագույն խմբի ծառայողների շահերի հայտարարագրերը, այդ թվում՝ գույքի և եկամուտների հայտարարագրերը, համապատասխան մարմինների ինտերնետային կայքերում տեղակայելու, պաշտոնյաների շահերի հայտարարագրերի վերաբերյալ քաղաքացիների հարցադրումներին կամ զանգվածային լրատվության միջոցների հրապարակումներին հրապարակայնորեն արձագանքելու միջոցով:

116. Կարևորվում է պետական մարմինների կողմից իրենց գործունեության **հաշվետվությունների հրապարակումը:** Ներկայում պետական կառավարման միայն մի քանի մարմիններ են հետևում այս սկզբունքին՝ ինտերնետային կայքերում հրապարակելով իրենց գործունեության տարեկան հաշվետվությունները: Ընդհանուր առմամբ քաղաքացիական հասարակության և ձեռնարկատիրական շրջանակները տեղեկատվության մատչելիությունը համարում են կարևոր հիմնախնդիր: Դեռևս առկա են բազմաթիվ խոչընդոտներ, որոնք էականորեն խանգարում են հրապարակային հաշվետվության և հանրության հետ կապի արդյունավետ իրականացմանը: Պաշտոնական տեղեկատվությունը որոշ դեպքերում մատչելի չէ հանրությանը: Պետական և տեղական ինքնակառավարման մարմինները շատ դեպքերում խուսափում են՝ տարին գոնե մեկ անգամ հրապարակել իրենց տնօրինած տեղեկությունները: Բավարար չափով չի իրականացվում Տեղեկատվության ազատության մասին ՀՀ օրենքով սահմանված պարտադիր հրապարակման ենթակա տեղեկությունների, ինչպես նաև մարմինների տարեկան և ընթացիկ գործունեության մասին հաշվետվությունների հրապարակումը: Ոչ կանոնավոր և չհամակարգված է իրականացվում նաև **հանրային իրազեկվածության բարձրացման** նպատակով քաղաքացիներին մատուցվող ծառայությունների կանոնակարգերի և տեղեկատվական թերթիկների մշակումն ու տարածումը:

117. Այսպիսով, կոռուպցիայի կանխարգելման գործում հիմք ընդունելով պետական կառավարման մարմինների կազմակերպման, գործունեության և որոշումների ընդունման գործընթացների հրապարակային հաշվետվության ապահովման անհարաժեշտությունը, առաջարկվում է.

- **Ապահովել պետական կառավարման մարմինների գործունեության վերաբերյալ հաշվետվությունների հրապարակայնության սկզբունքը.** բոլոր պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների կազմակերպման, տարվող քաղաքականության, դրանց ղեկավարների գործունեության, բնակչությանը մատուցվող ծառայությունների, գրանցված կոռուպցիոն դեպքերի, կոռուպցիոն հնարավոր ռիսկերի և վտանգների վերաբերյալ տեղեկատվությունը հրապարակային հաշվետվություններում արտացոլելու, գործունեության ծրագրերի և ֆինանսավորման հաշվետվությունները կանոնավոր և պարբերաբար՝ առնվազն տարին մեկ անգամ հրապարակման, հանրային վերահսկողության մեխանիզմների կիրառման և խրախուսման միջոցով:

3.2. Կոռուպցիայի քրեականացումը և իրավապահ գործունեությունը

118. ՀՀ-ն վավերացրել է կոռուպցիայի քրեականացման չափանիշները սահմանող հիմնական միջազգային կոնվենցիաներն ու համաձայնագրերը, որոնց արդյունքում փոփոխություններ և լրացումներ են կատարվել ՀՀ քրեական օրենսգրքում (ՔՕ): Այնուամենայնիվ, ՀՀ օրենսդրությունը միջազգային փաստաթղթերի դրույթներին շարունակական համապատասխանեցման և ներդաշնակեցման կարիք ունի:

119. Կոռուպցիա հանդիսացող արարքների շրջանակի հստակ սահմանանումն ու սպառիչ օրենսդրական կարգավորումը էականորեն պայմանավորում են կոռուպցիայի դեմ պայքարի արդյունավետությունը: Ընդ որում կարևորվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված հանցակազմերի

նկարագրությունների ընկալելիությունը և տարաբնույթ մեկնաբանությունների բացակայությունը թե՛ իրավակիրառողների, թե՛ հասարակության, այդ թվում՝ հանցագործության սուբյեկտների և տուժողների շրջանում: ՀՀ քրեական օրենսգրքում քրեականացված են թե՛ կաշառք ստանալը (հոդված 311), թե՛ կաշառք տալը (հոդված 312): Հստակեցվել և ընդլայնվել են կաշառք տալու և ստանալու հանցակազմերի բովանդակությունը՝ արարքի օբյեկտիվ կողմում ներառելով ոչ միայն «դրամ, գույք, գույքի նկատմամբ իրավունք, արժեթղթեր» ստանալը, այլ նաև «որևէ այլ առավելություն ստանալը»: Ուժը կորցված է ճանաչվել պաշտոնատար անձին, առանց նախնական պայմանավորվածության, որպես նվեր նվազագույն աշխատավարձի հնգապատիկը չգերազանցող արժեքի գույք, գույքի նկատմամբ իրավունք կամ գույքային այլ օգուտ ստանալու նորմը: Ավելին, «պաշտոնատար անձինք» հասկացության շրջանակներում են ներառվել նաև օտարերկրյա և միջազգային կազմակերպությունների պաշտոնատար անձինք: Դրա հետ մեկտեղ քրեականացվեց ոչ միայն կաշառք տալը, այլև այն «խոստանալը կամ առաջարկելը», ինչը ուղղակիորեն բխում է Եվրոպայի խորհրդի և ՄԱԿ-ի կոնվենցիաների պահանջներից և պայմանավորված է կաշառք տալու հանցակազմի օբյեկտիվ կողմը կազմող այս երեք գործողությունների տարբերությամբ:

120. 2008 թ.ՔՕ լրացումներով նախատեսվեցին երկու նոր հանցակազմեր ևս, այն է՝ **պաշտոնատար անձ չհանդիսացող հանրային ծառայողի կողմից ապօրինի վարձատրություն ստանալը** (հոդված 311.1) և **պաշտոնատար անձ չհանդիսացող հանրային ծառայողին ապօրինի վարձատրություն տալը** (հոդված 312.1)՝ տարանջատելով կաշառքելու ակտիվ և պասիվ տեսակները ըստ այն չափանիշի, թե դրա սուբյեկտը պաշտոնատար անձն, թե հանրային ծառայողը և հանցակազմերում ներառելով այն սուբյեկտներին, որոնք դուրս էին մնացել «պաշտոնատար անձ» հասկացության շրջանակներից ՔՕ 311 և 312 հոդվածներով նախատեսված հանցակազմերի առումով:

121. Կոռուպցիայի քրեականացման տեսանկյունից առանցքային հարցերից մեկը կոռուպցիոն հանցագործության սուբյեկտի՝ «պետական պաշտոնատար անձ» հասկացության շրջանակների բացահայտումն է: Դրանց շրջանակը, որը տեղ է գտել ՀՀ ՔՕ-ում «պաշտոնատար անձ» և «հանրային ծառայող» հասկացությունների բացահայտման ներքո, ընդհանուր առմամբ, համահունչ է ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիայի 2-րդ հոդվածի 2-րդ ենթակետում տրված սահմանմանը և միջազգային մոտեցումներին՝ չնայած, որ փաստորեն առանձնացվել են նույնական օբյեկտիվ կողմով, բայց տարբեր անվանումներով հանցակազմեր: Ընդ որում նախատեսված սանկցիաները առավել մեղմ են հանրային ծառայողների պարագայում: Պետք է ընգծել, որ միջազգային փաստաթղթերի առումով «պաշտոնատար անձ» հասկացությունը, ըստ էության ներառում է նաև հանրային ծառայողներին: Ընդ որում, «պաշտոնատար անձ» հասկացության առումով, նշանակություն չունի նաև այն հանգամանքը, թե անձը «վճարվում է, թե ոչ» այդ պաշտոնում: ՔՕ-ում տեղ գտած բնորոշումները չեն հստակեցնում այս հանգամանքը:

122. ՀՀ Քրեական օրենսգրքում որպես ինքնուրույն հանցակազմ է նախատեսվել **իրական կամ ենթադրյալ ազդեցությունը** շահադիտական նպատակով օգտագործելը (հոդված 311.2): Այդուհանդերձ, քրեականացված է միայն ազդեցության պասիվ չարաշահումը, մինչդեռ ազդեցության ակտիվ չարաշահումը՝ «դրամի, գույքի, գույքի նկատմամբ իրավունքի, արժեթղթերի կամ որևէ այլ առավելության շորթումը» քրեականացված չէ: ՔՕ-ի 311.2 հոդվածով կարգավորված ազդեցության պասիվ չարաշահումը, իր հերթին, զերծ չէ թերի կարգավորումներից: Մասնավորապես, 311.2 հոդվածը հստակ չի սահմանում հանցակազմի մյուս կողմի՝ իրավաբանական կամ ֆիզիկական անձանց, որոնց օգտին որևէ գործողություն պետք է կատարվի, արարքի օբյեկտիվ կողմը, այն է՝ «ոչ իրավաչափ առավելություն» խոստանալը, առաջարկելը կամ տրամադրելը, ինչը տեղ է գտել ՄԱԿ-ի Կոնվենցիայում: Ավելին, 311.2 հոդվածով նախատեսված գործողություններն ընդգծում են ազդեցության չարաշահման պարտադիր կապը պաշտոնատար անձի կամ պաշտոնատար անձ չհանդիսացող հանրային ծառայողի լիազորությունների շրջանակի հետ, մինչդեռ Կոնվենցիայի սահմանումն ավելի լայն է և նշված հանգամանքով պայմանավորված չէ:

123. ՀՀ ՔՕ 308 հոդվածով քրեականացված է **«պաշտոնական լիազորությունները չարաշահելը»**: Այդուհանդերձ, առկա կարգավորման տեսանկյունից խնդիր է թերևս այն, որ արարքը քրեորեն պատժելի իրավախախտում համարելու համար պաշտոնական դիրքը չարաշահելու արդյունքում առաջացող գույքային վնասը կապվում է նվազագույն աշխատավարձի հինգապատիկի չափը գերազանցող գումարի հետ: Նման սահմանափակումը չի բխում ՄԱԿ-ի կոնվենցիայի պահանջներից (հոդված 19):

124. **Պաշտոնատար անձի կողմից գույքի հափշտակումը**, ապօրինի յուրացումը կամ այլ՝ ոչ նպատակային օգտագործումը որպես ինքնուրույն հանցակազմ նախատեսված չէ ՀՀ ՔՕ-ում: Սակայն, օրենսգրքի 179 հոդվածը որպես «գույքի յուրացում կամ վատնում» հանցակազմը ծանրացնող հանգամանք է դիտարկում նույն գործողության կատարումը պաշտոնեական դիրքն օգտագործելով:
125. ՀՀ-ում քրեականացված չէ նաև **իրավաբանական անձանց պատասխանատվությունը** կառույցի իրավախախտումների համար, ինչը միջազգայնորեն ընդունելի մոտեցում է և ամրագրված է նաև ՄԱԿ-ի Կոնվենցիայի 26-րդ հոդվածում: Իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության ինստիտուտը ոչ միայն կոռուպցիոն հանցագործությունների առումով, այլև ընդհանուր առմամբ, երբևէ չի կիրառվել ՀՀ-ում՝ ինչը մասամբ պայմանավորված է նաև մայրցամաքային իրավական համակարգի առանձնահատկություններով: Մինչդեռ, հատկապես առևտրային կազմակերպությունների, հսկայական ընկերակցությունների աճին զուգահեռ մեծանում է նաև կոռուպցիոն իրավախախտումներում նրանց ներգրավվածության աստիճանը:
126. ՀՀ օրենսդրությամբ նախատեսված է միայն իրավաբանական անձի քաղաքացիական և վարչական պատասխանատվությունը: Մինչդեռ, մի շարք միջազգային կառույցների կողմից ՀՀ-ում իրականացված մոնիտորինգի արդյունքներում բազմիցս ընդգծվել է կաշառքի և փողերի լվացման հետ կապված հանցագործությունների համար իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության ինստիտուտի ներդրման անհրաժեշտությունը²: Հատկապես մատնանշվում են Քրեական իրավունքի մասին կոնվենցիայի 18 հոդվածով նախատեսված կորպորատիվ պատասխանատվության նորմերը, որոնք պահանջում են քրեականացնել ֆիզիկական անձի կողմից ի շահ իրավաբանական անձի կատարված ակտիվ կաշառքը, ազդեցությունը շահադիտական նպատակով օգտագործելը և փողերի լվացումը: Իրավաբանական անձանց պատասխանատվության ենթարկելիս առաջարկվում են այնպիսի համարժեք սանկցիաներ, ինչպես պետության հետ գործարքներ կնքելու իրավունքից մշտապես կամ ժամանակավորապես զրկելը (օրինակ՝ պետական գնումների հետ կապված և այլն), պետական աջակցություն ստանալուց զրկելը, հանցագործության արդյունքում ստացված օգուտների բռնագրավումը, ռեստիտուցիան, առևտրային գործունեություն իրականացնելու իրավունքից զրկելը, դատական վերահսկողության տակ դնելը, իրավաբանական անձի լուծարումը, խնամակալի նշանակումը և այլն³:
127. **Քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետները** ածանցվում են և կապված են հանցագործությունների համար սահմանված պատժաչափերի հետ: ՀՀ քրեական օրենսգրքում «կոռուպցիոն» հատկանիշներ պարունակող հանցագործությունների համար նախատեսված են տարբեր պատժաչափեր, համապատասխանաբար տարբեր են նաև վաղեմության ժամկետները⁴: Մինևույն ժամանակ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքը հայցային վաղեմության առավել երկար ժամկետ է սահմանել այն դեպքերի համար, երբ անձի իրավունքի խախտումը նրա համար առաջացրել է վնաս, և խախտումը կապված է գործարքների կնքման կամ դրանց կատարման ընթացքում կոռուպցիոն գործողության հետ: Այս պարագայում վնասի հատուցման պահանջներով հայցային վաղեմության ժամկետը սահմանափակվում է 10 տարով՝ այն գործողության կատարման օրվանից հաշված, որն առաջացրել է վնաս (հոդված 333): Այդուհանդերձ, վաղեմության ժամկետի տևողության պայմանավորումը պատժաչափի հետ թերևս համարժեք չէ կոռուպցիոն իրավախախտումները հայտնաբերելու և հետաքննելու առանձնահատկություններին, քանզի դա ավելի շատ ժամանակ է պահանջում՝ համեմատած այլ հանցագործությունների դեմ պայքարելու պրակտիկայի հետ: Կոռուպցիոն իրավախախտումների առնչությամբ վարույթ հարուցելու համար վաղեմության ավելի երկար ժամկետ սահմանելու պահանջը բխում է նաև ՄԱԿ-ի Կոնվենցիայից: ՀՀ քրեական օրենսդրության մեջ համապատասխան փոփոխություններ կատարելու անհրաժեշտությունը ընդգծվել է նաև միջազգային փոձագետների կողմից⁵:

² Evaluation Report on Armenia, adopted by GRECO at its 27th Plenary Meeting of March 10, 2006, Monitoring Report of Istanbul Anti-Corruption Action Plan for Armenia of October 2005, Monitoring Report of Istanbul Anti-Corruption Action Plan for Armenia of December 2006.

³ Commentary 24 on the OECD Convention and the Legislative Guide for the Implementation of the UN Convention, para. 338.

⁴ Ընդհանրացնող հանցամանքների առկայությունից կամ բացակայությունից կախված վաղեմության ժամկետները պաշտոնատար անձի կողմից կաշառք ստանալու համար կազմում են 5-15 տարի (հոդված 311), կաշառք տալու համար՝ 5-10 տարի (հոդված 312), առևտրային կաշառքի համար՝ 2-5 տարի (հոդված 200) և այլն:

⁵ Տե՛ս OECD-ի կոռուպցիայի դեմ պայքարի «Ստամբուլի հակակոռուպցիոն գործողությունների պլանի» 6-րդ հանդիպման Յայաստանի վերաբերյալ հաշվետվությունը, 13 դեկտեմբերի 2006թ., Փարիզ, առաջարկ 9-ին վերաբերող հատվածը:

128. Կոռուպցիայի դեմ պայքարում կարևորվող հիմնախնդիրներից է նաև **պաշտոնատար անձանց անձեռնամխելիության հարցը**, որը լուրջ խոչընդոտ է հանդիսանում կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ քրեական հետապնդման իրականացման համար: Միջազգային լավագույն փորձը ներկայումս գնում է բացարձակ անձեռնամխելիությունից դեպի գործառնական անձեռնամխելիության, որը որոշակի պաշտպանություն է ապահովում միայն պաշտոնատար անձի լիազորություններից բխող գործողությունների կատարման ժամանակ: Կարևորվում է նաև անձեռնամխելիությունից զրկելու մեխանիզմների պարզեցումը: ՀՀ Ընտրական օրենսգրքը, հատուկ մեխանիզմ է նախատեսում Ազգային ժողովի պատգամավորի, համայնքի ղեկավարի կամ ավագանու անդամի թեկնածուների, կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամների, իսկ համապետական ընտրությունների ժամանակ՝ նաև տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամներին, կալանավորվելու, նրանց դատական կարգով վարչական կամ քրեական պատասխանատվության ենթարկելու համար՝ դա թույլատրելով միայն համապատասխանաբար կենտրոնական ընտրական հանձնաժողովի կամ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի համաձայնությամբ (հոդվածներ 33, 127,111): Նշված անձանց շրջանակը բավականին լայն է և կարիք ունի սահմանափակման: Մինևույն ժամանակ «Դատախազության մասին» ՀՀ օրենքի համաձայն դատախազի նկատմամբ քրեական հետապնդում հարուցում է գլխավոր դատախազը (հոդված 44): Իսկ դատավորին չի կարելի կալանավորել, նրան որպես մեղադրյալ ներգրավել, դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկել՝ առանց ՀՀ արդարադատության խորհրդի առաջարկի հիման վրա Հանրապետության Նախագահի տված համաձայնության (ՀՀ Դատական օրենսգրք, հոդված 13): Վերադաս անհատական որոշում կայանողների (ՀՀ Նախագահ, գլխավոր դատախազ) մասնակցության ընթացակարգերը դատավորներին և դատախազներին անձեռնամխելիությունից զրկելուն կարիք ունի վերանայման⁶:

129. **Հանցագործությունների վտանգավորության աստիճանի** համարժեք գնահատումը կոռուպցիոն հանցագործությունների քրեականացման կարևոր տարրն է: Մասնավորապես, առևտրային կաշառք ստանալը (200 հոդվածի 3րդ մաս) պատժվում է առավել թեթև պատժաչափով, քան պաշտոնատար անձի կողմից կաշառք ստանալու դեպքում (311 հոդվածի 1-ին մաս): Իհարկե, պատժաչափերի տարբերությունը կարող է բացատրվել հանցագործության սուբյեկտների և օբյեկտների կարևորության աստիճանով, սակայն մասնավոր հատվածում կոռուպցիոն երևույթների տարածումը ոչ պակաս լուրջ հիմնախնդիր է ազատ շուկայական տնտեսական համակարգ հռչակած պետության համար, ուստի հազիվ թե հիմնավորված է նման տարբերակում սահմանելը: Թերևս կարելի է նշել նաև պաշտոնատար անձի կողմից կաշառք ստանալու (հոդված 311) և նույն արարքը հանրային ծառայողի կողմից կատարելու (հոդված 311.1) դեպքում սանկցիաների տարբերությունը, ինչպես նաև ակտիվ (կաշառք տալ) և պասիվ (կաշառք ստանալ) կաշառակերության համար նախատեսված պատժաչափերի համադրելիությունը և դրանց նկատմամբ միասնական մոտեցման դրսևորման հարցը: Կոռուպցիոն հանցագործությունների պատժաչափերի խստացումը մեխանիկորեն կհանգեցնի նաև վաղեմության ժամկետների փոփոխության⁷: Ավելին, պատժաչափերի վերանայումը և համապատասխանեցումը իրատեսական՝ միջազգայնորեն ընդունված պատժաչափերին նպատակահարմար է նաև իրավական փոխօգնության և կոռուպցիոն հանցագործություններ կատարած անձանց հանձնման համար հետ կապված հարցերում լրացուցիչ բարդություններից խուսափելու առումով:

130. **Կոռուպցիայի արդյունքում ստացված եկամուտների ազդրավման, բռնագրավման մեխանիզմների** առումով, օրենսդրությունը նախատեսել է հանցավոր ճանապարհով ստացված գույքի, այդ թվում՝ հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման և հանցավոր ճանապարհով ստացված եկամուտներն օրինականացնելու արդյունքում ուղղակի կամ անուղղակի առաջացած կամ ձեռք բերված գույքի, ներառյալ՝ այդ գույքի օգտագործումից ստացված եկամուտների կամ այլ տեսակի օգուտների, այդ արարքների կատարման համար օգտագործված կամ օգտագործման համար նախատեսված գործիքների, իսկ հանցավոր ճանապարհով ստացված գույքի չհայտնաբերման դեպքում՝ այդ գույքին համարժեք այլ գույքի պարտադիր բռնագրավումը: Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների սառեցման հարցը կազավորվում է «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 199 հոդվածը, անդրադառնալով քրեական գործով վարույթն ավարտելիս իրեղեն ապացույցների

⁶ Դայաստանի վերաբերյալ ԳԲԵԿՈ-ի 2008թ.-ի զեկույցում /Greco RC-III (2008) 3E Strasbourg, 13 June 2008/

⁷ Նույն տեղում:

ճակատագրին, սահմանում է, որ հանցավոր ճանապարհով ձեռք բերված դրամը, այլ արժեքները և մյուս առարկաները դատարանի դատավճռով ուղղվում են դատական ծախսերի հատուցմանը, հանցագործությամբ պատճառված վնասի հատուցմանը, իսկ եթե հայտնի չէ վնաս կրած անձը, որպես եկամուտ՝ հանձնվում են պետությանը: Այդուհանդերձ, նշված դրույթը սահմանափակվում է միայն գործով վարույթի ընթացքում առգրավված իրեղեն ապացույցներով: Մինչդեռ, բռնագրավված միջոցների կառավարման հարցը գործնական մեծ կարևորություն ունի և բխում է նաև ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիայի 31 հոդվածի 3-րդ կետի, Քրեական իրավունքի մասին կոնվենցիայի և այլ փաստաթղթերի պահանջներից: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 236 հոդվածը որոշակի կարգավորումներ է նախատեսել միայն առգրավված միջոցների կառավարման հետ կապված: Սակայն, բռնագրավված գույքի կառավարման հարցը դեռևս բաց է մնում: Երկրների մեծ մասում բռնագանձվող միջոցները վերածվում են պետական սեփականության և ուղղվում են հանցագործությամբ պատճառված վնասի հատուցմանը: Մտահոգիչ է մնում նաև բռնագրավումը գործնականում կիրառելու դեպքերի սակավաթվությունը:

131. **Վկաների, փորձագետների և տուժածների պաշտպանության** ինստիտուտը կարևորվում է կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման և դրանց դեմ արդյունավետ պայքարի տեսանկյունից, քանի որ այս սուբյեկտները առնչվելով կոռուպցիոն իրավախախտման հետ, կարող են հաղորդել կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման հետ կապված արժեքավոր տեղեկություններ: Համապատասխան երաշխիքների և պաշտպանության մեխանիզմների բացակայության պարագայում նվազում է վարույթն իրականացնող մարմիններին օժանդակելու նրանց պատրաստակամությունը և ցանկությունը: 2006թ. իրականացված փոփոխություններով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքը համարվեց քրեական դատավարությանը մասնակցող անձանց պաշտպանությանն ուղղված նոր դրույթներով (գլուխ 12-ը (հոդված 98-99.1), որով փորձագետների և տուժածների պաշտպանության խնդիրները ՀՀ օրենսդրությամբ հիմնականում կարգավորվեցին:
132. ՀՀ օրենսդրությունը, սակայն, ուղղակիորեն չի անդրադարձնում **տեղեկություններ հաղորդող անձանց պաշտպանությանը**, որոնք իրենց կամքով ու նախաձեռնությամբ, բարեխղճորեն և հիմնավոր տեղեկություններ են հաղորդում իրավասու մարմիններին կոռուպցիոն իրավախախտումների վերաբերյալ փաստերի մասին: Նման պաշտպանության տրամադրում նախատեսված է և ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիայի 33 հոդվածով և Քրեական իրավունքի մասին կոնվենցիայի 22 հոդվածով: Թեև ՀՀ քրեական դատարավարության օրենսգրքում կատարված փոփոխություններով պաշտպանություն է տրամադրվել բավական լայն շրջանակի անձանց՝ բացի վկայից, փորձագետից և տուժածներից, ներառելով նաև դատավարությանը մասնակցող մյուս անձանց, այդուհանդերձ, տեղեկություններ հաղորդող անձինք կարծես թե դուրս են մնացել պաշտպանության ենթակա անձանց շրջանակից: Այս առումով, վերջիններիս վերաբերյալ դրույթների ուղղակիորեն ներառումը ՀՀ քրեադատավարական օրենսդրության մեջ կարևոր խթան է կառույցիոն հանցագործությունների բացահայտման և դրանց վերաբերյալ տեղեկություններ հաղորդելու խուսափելու իրավիճակների կրճատման համար:
133. **Կոռուպցիոն հանցագործությունների նախնական քննությունը** Հայաստանի Հանրապետությունում ապակենտրոնացված է և որպես կանոն այն իրականացնում է նախաքննության այն մարմինը, որի վարույթում գտնվող գործի քննության ընթացքում բացահայտվել է հանցագործությունը: Կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման օժանդակում են օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինները: Ընդ որում, ֆինանսական տվյալների մատչելիության ապահովման, ֆինանսական գործարքների գաղտնի վերահսկման, կաշառք ստանալու կամ կաշառք տալու նմանակման իրավասություն ունեն միայն ոստիկանության և ազգային անվտանգության մարմինները: Կոռուպցիոն հանցագործությունների նախնական քննության օրինականության վերահսկողությունը իրականացնում է ՀՀ դատախազությունը:
134. Այդուհանդերձ մտահոգիչ է կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման արդյունավետությունը: Այսպես, 2007թ. կոռուպցիոն իրավախախտումների վերաբերյալ քննության մարմինների կողմից հարուցվել է՝ 69, ավարտվել է՝ 73, կարճվել է՝ 28 և դատարան է ուղարկվել 45 քրեական գործ: Ընդ որում, նույն ժամանակահատվածում, դատարան ուղարկված պետությանը պատճառված նյութական վնասի վերաբերյալ գործերով նյութական վնասի չափը կազմել է 527,602 մլն.

դրամ, որից գործը մինչև դատարան ուղարկելը վերականգնված գումարի չափը կազմել է **380,070** մլն. դրամ⁸:

- 135. Օպերատիվ-հետախուզական գործունեության շրջանակներում իրականացվող միջոցառումները** և հատկապես՝ օպերատիվ փորձարարությունը, կաշառք ստանալու հանցագործության բացահայտման աստիճանը բարձրացնելուն ուղղված մեկ այլ արդյունավետ միջոցներ են: Միաժամանակ, օպերատիվ փորձարարության և կաշառքի պրովոկացիայի դեպքերը սահմանազատող և օպերատիվ փորձարարության օրենքով նախատեսված պայմանների խստագույն պահպանմամբ իրականացումը երաշխավորող օրենսդրական կարգավորումները հստակ չեն, ինչը նպաստավոր պայմաններ է ստեղծում նաև օպերատիվ մարմինների աշխատակիցների կողմից հայեցողական որոշումներ կայացնելու համար՝ բարձրացնելով կոռուպցիոն ռիսկերն օպերատիվ-հետախուզական գործունեության ոլորտում: Հստակ կարգավորման կարիք են գգում օպերատիվ փորձարարության և կաշառք տալու նմանակման պայմանները: Այս առումով, կարևոր է միջազգային լավագույն փորձի ուսումնասիրությունը, որպեսզի կրճատվեն օպերատիվ մարմինների աշխատակիցների կողմից հայեցողական որոշումների կայացումը՝ համապատասխան իրավական կարգավորումների միջոցով: Դրա հետ մեկտեղ՝ կաշառք ստանալու հանցագործության բացահայտմանն ուղղված այն գործողությունները, որոնք կարող են կատարվել օպերատիվ-հետախուզական գործունեության իրականացնելու իրավասությամբ չօժտված անձանց կողմից, պետք է բացառվեն:
- 136.** Կոռուպցիոն հանցագործությունների դեմ պայքարում իրավապահ մարմինների **արդյունավետությունը** մեծապես պայմանավորված է նաև վերջիններիս կարողություններով, ինչպես նաև իրավապահ մարմինների և քաղաքացիական հասարակության կառույցների միջև, այդ թվում՝ ՋԼՄ-ների, գործարար հատվածի, հասարակական կազմակերպությունների, քաղաքացիների հետ ակտիվ համագործակցությամբ: Ընդ որում՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքը սահմանում է վերոնշյալ հարաբերությունների ծագման հիմքերը: Այսպես, դատախազը, քննիչը, հետաքննության մարմինը, իրենց իրավասության շրջանակներում, քրեական գործ են հարուցում, մասնավորապես հանցագործությունների մասին ֆիզիկական և իրավաբանական անձանց, լրատվության միջոցների իրենց ուղղված հաղորդումների առկայության դեպքում (ՀՀ ՔԴՕ, **176** հոդված):
- 137.** Կոռուպցիոն հանցագործությունների դեմ արդյունավետ պայքարի առումով կարևորվում է նաև **միջազգային համագործակցության հետագա ընդլայնումը**: ՀՀ-ն արդեն իսկ կնքել է մի շարք երկկողմ և բազմակողմ համաձայնագրեր փոխադարձ իրավական օգնության, հանձման, քրեական գործերով վարույթների փախսանցման և այլ հարցերի շուրջ: Ավելին, այս ուղղությամբ քայլերի ատիվացմանն էին ուղղված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում կատարված փոփոխությունները՝ առանձին գլուխ նախատեսելով միջազգային պայմանագրերի բացակայության դեպքում քրեական գործերով իրավական օգնության մասին (ՔԴՕ, գլուխ **54.1**):
- 138.** **Իրավապահ մարմինների և մասնավոր հատվածի միջև համագործակցության** առումով առանցքային նշանակություն ունի քաղաքացիներին և այլ անձանց կողմից կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ քննչական մարմիններին և դատախազությանը հայտնելու խարախուսումը, ինչը նշված է նաև ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիայի **39** հոդվածի **2**-րդ կետում: Համագործակցության խթանմանն ուղղված օրինակ է ՀՀ քրեական օրենսգրքում տեղ գտած նորը, որի համաձայն կաշառք տվող անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե այդ անձը կաշառք տալու մասին կամավոր հայտնել է իրավապահ մարմիններին (հոդված **312**, մաս **4**): Գործնականում այս համագործակցությունը պատշաճ չի իրականացվում, ինչը որոշակիորեն պայմանավորված է նաև իրավապահ մարմինների հանդեպ անբավարար վաստահությամբ և հետևանքներից վախենալու կամ անվտանգության անբավարար երաշխիքների ընկալմամբ: Ավելին, կատարված հանցագործությունից հետո այդ մասին իրավապահ մարմինն հայտնելը վերջինիս հնարավորություն է տալիս տեղեկատվություն հավաքել կատարված հանցագործության մասին, հարուցել քրեական գործ և ձեռք բերել հայտնողի ցուցմունքը: Այդուհանդերձ, հանցագործության մասին հայտնելն ևս ինքնին բավարար հիմքեր չի ստեղծում կոռուպցիոն հանցագործության բացահայտման համար՝ այլ ապացույցների ձեռք բերման գրեթե անհնարին լինելու պատճառով՝ դրանով իսկ նվազեցնելով խրախուսման արդյունավետությունը: Քրեական պատասխանատվությունից

⁸ Կոռուպցիոն հանցագործությունների նախաքննության արդյունքների մասին 33 գլխավոր դատախազության կիսամյակային տվյալներ 2007թ. (կազմված՝ 2008թ. հունվարի 14-ին):

ազատելը կնպաստի կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման արդյունավետության բարձրացմանը հետևյալ երկու պայմանների միաժամանակյա առկայության դեպքում. (ա) անձը կատարել է ՀՀ քրեական օրենսգրքի 312-րդ հոդվածի առաջին մասով նախատեսված արարքը՝ պաշտոնատար անձին անձամբ կամ միջնորդի միջոցով նրա կամ այլ անձի համար դրամ, գույք, գույքի նկատմամբ իրավունք, արժեթղթեր կամ որևէ այլ առավելություն խոստանալու կամ առաջարկելու ձևով, և (բ) այդպիսի խոստումից կամ առաջարկից հետո անձը այդ մասին հայտնել է քրեական հետապնդման մարմիններին և ապա համագործակցել է նրանց հետ՝ հանձնելով կաշառքի առարկան կաշառք տալու նմանակում օպերատիվ-հետախուզական միջոցառման շրջանակներում: Այդ իսկ պաճառով, խրախուսման առկա եղանակները վերանայման կարիք ունեն:

139. Այսպիսով, կոռուպցիայի հետագա քրեականացման, օրենսդրական և ինստիտուցիոնալ բարեփոխումների համակարգված իրականացման նպատակով անհրաժեշտ է.

- **Ամբողջականացնել և որոշակիացնել կոռուպցիոն հանցագործությունների շրջանակը.** քրեականացման բնագավառում միջազգային ընդունելի մոտեցումներին համահունչ օրենսդրության և դրա կիրարկման պրատիկայի ամփոփման և կատարելագործման, ակտիվ և պասիվ կաշառակերության հանցակազմերի իրավական կարգավորման հետագա հստակեցման, ակտիվ և պասիվ ազդեցության չարաշահում առանձին իրավախախտման սահմանման, պաշտոնական լիազորությունները չարաշահելու համար պատասխանատվության ենթարկելու նախապայմանները վերանայելու, պաշտոնատար անձի կողմից գույքի հափշտակումը, ապօրինի յուրացումը կամ ոչ նպատակային օգտագործումը որպես ինքնուրույն կոռուպցիոն հանցակազմ սահմանելու, ինչպես նաև առկա հանցակազմերում տարբերությամբ մեկնաբանությունների տեղիք տվող անորոշ ձևակերպումները հստակեցնելու միջոցով.
- **Բարձրացնել կոռուպցիայի դեմ պայքարի արդյունավետությունը.** կոռուպցիոն հանցագործությունների լատենտայնությունը նվազեցնելու, որպես խրախուսման միջոց քրեական պատասխանատվությունից ազատելու վերաբերյալ օրենսդրական դրույթները վերանայելու, կաշառքի պրովոկացիայի հանցակազմը և կարգավորումները վերանայելու և հստակեցնելու, կաշառք տալու նմանակման և օպերատիվ փորձարարության իրականացման պայմանները միջազգային լավագույն պրակտիկային համապատասխան հստակ կարգավորման ենթարկելու, այդ թվում՝ օպերատիվ փորձարարությունը միայն կաշառքի ստացման հանցագործության նախապատրաստման կամ սկզբի մասին օպերատիվ տեղեկությունների կամ կաշառքի շրթման փորձի վերաբերյալ հաղորդման առկայության դեպքում թույլատրելու միջոցով.
- **Ներդնել իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության ինստիտուտը.** իրավաբանական անձի օգտին ֆիզիկական անձի կողմից կատարված կոռուպցիոն հանցագործությունը քրեականացնելու, կորպորատիվ կառավարման, վերահսկողության և ներքին հսկողության գործուն համակարգերի ներդրման, ֆիզիկական և իրավաբանական անձանց սուբսիդիար պատասխանատվության սկզբունքի ներդրման, քրեական, քաղաքացիական և վարչական պատասխանատվության ենթարկվող իրավաբանական անձանց նկատմամբ արդյունավետ, համաչափ և զսպող քրեական կամ ոչ քրեական պատժամիջոցների, ներառյալ դրամական պատժամիջոցների, սահմանման միջոցով.
- **Մահմանել կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման և դրանք կատարած անձանց պատասխանատվության ենթարկելու օպտիմալ և միջազգայինորեն ընդունելի վաղեմության ժամկետները.** կոռուպցիոն հանցագործությունների համար վաղեմության ժամկետների տևողության հարցում միջազգային փորձն ուսումնասիրելու, ՀՀ-ում կոռուպցիոն գործերով վաղեմության ժամկետներն անցնելու հետևանքով վարույթի կարճման վիճակագրությունը վերլուծելու և միջազգային փորձի հետ համադրելու, քրեական հետապնդումից անձեռնամխելի անձանց կատեգորիաները նվազեցնելու, դատավորներին և դատախազներին անձեռնամխելիությունից զրկելու ընթացակարգերը վերանայելու միջոցով.
- **Ապահովել կոռուպցիոն հանցագործությունների համար համարժեք և համադրելի խստության, արդյունավետ պատժատեսակներ ու պատժաչափեր.** կոռուպցիոն հանցագործությունների համար սանկցիաների տարբերակման միջազգային փորձն ուսումնասիրելու, ՀՀ-ում կոռուպցիոն հանցագործությունների համար պատժատեսակների կիրառման

վիճակագրությունը վերլուծելու և միջազգային փորձի հետ համադրելու, պատժի անխուսափելիության սկզբունքի ապահովման, քրեախրավական ներգործության մեթոդներին զուգահեռ՝ պատժի քաղաքացիաիրավական և վարչաիրավական մեթոդներ կիրառելու միջոցով.

- **Զարգացնել կոռուպցիայի արդյունքում ստացված եկամուտների առգրավման և բռնագրավման մեխանիզմները.** հանցավոր ճանապարհով ձեռք բերված և բռնագրավված միջոցների կառավարման թափանցիկ և արդյունավետ մեխանիզմներ ներդնելու, այդ թվում՝ բռնագրավված միջոցները պետական սեփականության վերածելու և դրանք հանցագործությամբ պատճառված վնասի հատուցմանը կամ հարակից այլ ծրագրերին ուղղելու միջոցով.
- **Բարձրացնել վկաների, փորձագետների և տուժողների, ինչպես նաև տեղեկություններ հաղորդող անձաց պաշտպանության ինստիտուտի արդյունավետությունը.** օրենսդրության առկա նորմերի և մեխանիզմների գործանականում պատշաճ կիրառման, այլ արդիական միջոցներով դրանց շրջանակի ընդլայնման, պաշտպանության տակ գտնվող անձանց տեղափոխության համար այլ պետությունների հետ համաձայնագրերի կնքման և պայմանավորվածությունների հաստատման, ՀՀ քրեադատավարական օրենսդրության մեջ տեղեկություններ հաղորդող անձանց պաշտպանության մասին դրույթներ ներառելու միջոցով.
- **Բարձրացնել իրավապահ մարմինների գործունեության արդյունավետությունը կոռուպցիայի դեմ պայքարում.** իրավապահ մարմինների գործառույթների հստակ տարանջատման, դրանց գործունեության համակարգման և փոխգործակցության հստակ ընթացակարգերի սահմանման, կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման կարողությունների զարգացման, առանձին հանցատեսակներով քննության իրականացման հարցում մասնագիտացված կառուցվածքային ստորաբաժանումների, հաստիքային միավորների սահմանման, նախաքննության և հետաքննության մարմինների նկատմամբ վերահսկողության և հսկողության մեխանիզմների կատարելագործման, մարդկային, ֆինանսական և նյութատեխնիկական անհրաժեշտ ռեսուրսների ապահովման միջոցով:
- **Ապահովել կոռուպցիայի դեմ պայքարում իրավապահ մարմինների և քաղաքացիական հասարակության միջև ակտիվ և արդյունավետ համագործակցությունը.** իրավապահ մարմիններին կոռուպցիոն իրավախախտումների վերաբերյալ տեղեկություններ հաղորդելը խրախուսող գործուն իրավական մեխանիզմներ սահմանելու, ստացվող տեղեկությունները վերլուծելու և դրանց արագ արձագանքման համակարգեր զարգացնելու, կոռուպցիայի դեմ պայքարող մարմինների հանդեպ՝ հասարակության վստահությունը բարձրացնելու և այդ նպատակով քարոզչական աշխատանքներ իրականացնելու, իրավապահ մարմինների գործունեության հրապարակայնության, թափանցիկության, հաշվետվողականության և օրինականության ապահովման հստակ ընթացակարգեր ներդնելու միջոցով:
- **Զարգացնել միջազգային համագործակցությունը կոռուպցիոն հանցագործությունների դեմ պայքարում.** ընդլայնելով փոխադարձ իրավական օգնության, քրեական գործերով վարույթների փոխանցման, հանցանք կատարած անձանց հանձման հարցերը կարգավորող երկկողմ և բազմակողմ միջազգային պայմանագրերի շրջանակը՝ անդրադառնալով նաև քրեական գործերով համատեղ քննչական միջոցառումների իրականացման, հատուկ քննչական տեխնիկաների կիրառման հարցերի կարգավորմանը այդ պայմանագրերում:

3.3. Կոռուպցիայի դեմ պայքարում քաղաքացիական հասարակության աջակցությունը

140. 2003-2007թթ. Հայաստանում ձևավորվել է պետական քաղաքականության մշակմանը քաղաքացիական հասարակության մասնակցության փորձ: Փորձնական կարգով քաղաքացիական հասարակության միավորումների կողմից իրականացվել է նաև կոռուպցիոն ռիսկերի բացահայտման ու գնահատման մոնիտորինգ: ՀՀ պետական կառավարման մարմիններն իրականացնում են նաև խորհրդատվության և հետադարձ կապի ապահովման մի շարք միջոցառումներ, այդ թվում՝ իրավական փաստաթղթերի նախագծերի քննարկում, սեմինարներ, կլոր սեղան-քննարկումներ, հանրային կարծիքի ուսումնասիրություններ և այլն: Այդուհանդերձ, նման պրակտիկան չի կրում պարտադիր բնույթ և մասնակցային գործընթացի նախաձեռնումը կրում է հայեցողական բնույթ: Բացակայում են հանրությանը դիմելու, կառավարության ծրագրերի, գործողությունների մասին հետադարձ «արձագանք» ստանալու, այն պարտադիր վերլուծելու և դրանց հիման վրա

կառավարչական որոշում ընդունելու ընթացակարգերը: Քաղաքացիական հասարակության մասնակցությունը կոռուպցիայի դեմ պայքարի որոշումների կայացման գործընթացում մնում է սահմանափակ:

141. Հանրային կառավարմանը քաղաքացիական հասարակության կառույցների արդյունավետ մասնակցության առումով հատկապես կարևորվում են **հասարակական կազմակերպությունների հատվածի ինստիտուցիոնալ կարողությունները**: Դրանց զարգացման նպատակով 2005 թվականին ներդրվեց հասարակական կազմակերպություններին պետական աջակցության մեխանիզմներ: Այդուհանդերձ, կոռուպցիայի դեմ պայքարում պետական մարմինների հետ համագործակցելու քաղաքացիական հասարակության կառույցների կարողությունները մնում են սահմանափակ:
142. Հակակոռուպցիոն մարմինների գործունեության վերաբերյալ **հանրությանը իրազեկումը** հիմնականում իրականացվել է հասարակական կազմակերպությունների կողմից՝ հանրային քարոզարշավների շրջանակներում: Նշված միջոցառումների արդյունավետությունը եղել է ցածր՝ ֆինանսական միջոցների սահմանափակության պատճառով:
143. «Սահմանադրական դատարանի մասին» նոր օրենքի ընդունմամբ քաղաքացիները իրավունք ստացան դիմել Սահմանադրական դատարան: Հայաստանի օրենսդիր և գործադիր իշխանության մարմինների նկատմամբ դատական վերահսկողությունը սահմանադրական արդարադատության ուժեղացման և վարչական դատարանների ստեղծման շնորհիվ նոր մակարդակի հասցվեց: Վարչական արդարադատության ստեղծմամբ պետության գործադիր մարմիններն ապագայում ստիպված կլինեն հաշվի առնել այն հանգամանքը, որ մասնավոր անձինք՝ քաղաքացիներ, առևտրային և հասարակական կազմակերպություններ, դատարանում կարող են վիճարկել պետության վարչական վերնաշենքի բոլոր աստիճանների մարմինների ու պաշտոնատար անձանց որոշումների, գործողությունների և անգործության իրավաչափությունը: Միաժամանակ, «Քաղաքացիների առաջարկությունները, դիմումները և բողոքները քննարկելու կարգի մասին» ՀՀ օրենքը գործում է մասնակիորեն՝ միայն քաղաքացիների առաջարկությունների մասով և, գործող օրենսդրության բարեփոխմամբ պայմանավորված, ծավալուն փոփոխությունների կարիք ունի:
144. Որոշակի քայլեր են իրականացվել նաև **տեղեկատվության մատչելիության ապահովման** նոր մեխանիզմների ներդրման ուղղությամբ: 2003թ սահմանվել են տեղեկատվության ազատության իրավունքի և մատչելի տեղեկատվության ապահովման օրենսդրական երաշխիքները: Թեև տեղեկատվություն ստանալու իրավունքի պաշտպանության ընդհանուր մակարդակը Հայաստանում բարձր է, սակայն պետական մարմինների կողմից տեղեկություն ստանալու հարցումներին պատասխանելու մակարդակը, քաղաքացիների հարցումներին տրված պատասխանների լիարժեքությունը դեռևս ցածր է:
145. Ընթացքում է պետական մարմիններում քաղաքացիների սպասարկման **էլեկտրոնային կառավարման համակարգերի ներդրման** գործընթացը: Այդուհանդերձ, մինչ այժմ ստեղծված տեղեկատվական կենտրոնների և քաղաքացիների ընդունարանների աշխատանքի վերջնական արդյունքները դժվար կանխատեսելի են, քանի որ դրանց լիարժեք աշխատանքի համար պահանջվում է որոշում ընդունող իրավասու մարմինների հետ հանրության կապը հեշտացնող վարչական ընթացակարգերի հստակեցում, տեղեկատվական կենտրոնների և քաղաքացիների ընդունարանների հետևողական զարգացում և միջոցների պլանավորում պետական բյուջեում:
146. Տեղեկատվության մատչելիության ապահովման գործում կարևորվում են ՀՀ պետական մարմինների պաշտոնական **ինտերնետային կայքերը**: Դրանք թեև գործում են, սակայն միշտ չէ որ պարունակում են պարտադիր հրապարակման ենթակա տեղեկություններ՝ որոշումներ, բյուջեներ, հաշվետվություններ: ՀՀ վարչապետի հանձնարարականով 2008թ. պետական կառավարման մարմինները պարտավոր են ապահովել որոշումների կայացման գործընթացին քաղաքացիների մասնակցության իրական հնարավորություններ, հատկապես՝ նախագծերի մշակման, քննարկման և ընդունման գործընթացներում: ՀՀ պետական կառավարման մարմինները պարտավոր են պաշտոնական ինտերնետային կայքերում տեղադրել իրենց որոշումների նախագծերը, ինչպես նաև արձագանքել ՁԼՄ-ներում տեղ գտած հասարակական հնչեղություն ունեցող հրապարակումներին: Այդուհանդերձ, Հայաստանում ինտերնետային կայքի սահմանափակ մատչելիության հետևանքով պաշտոնական կայքերը ի գործու չեն լիարժեք կերպով ապահովել տեղեկատվության մատչելիությունը լայն հասարակությանը: Տպագիր մամուլի սահմանափակ տպաքանակի պարագայում, Հայաստանում տեղեկություններ տարածելու առավել արդյունավետ միջոցը մնում է հեռուստատեսությունը: Ընդ

որում, հավասարապես կարևորվում են տեղեկատվության տարածման թե՛ միջնորդավորված՝ մավր ասուլիսների միջոցով, թե՛ անմիջական՝ քաղաքացիների ընդունելությունների միջոցով, մեթոդները:

147. Պետական կառավարման մարմինների կազմակերպման, գործունեության և որոշումների ընդունման գործընթացների մասին ժամանակին և ամբողջական տեղեկատվություն ստանալու գործում քաղաքացիները գործնականում բախվում են մի շարք խոչընդոտների: Տեղեկությունները քաղաքացիներին հաճախ տրամադրվում են օրենքով սահմանված ժամկետների խախտմամբ և ոչ ամբողջական, իսկ մերժումները երբեմն լինում են չհիմնավորված, օրենքի պահանջից չբխող: Անպատասխան մնացած հարցումների քանակը ևս մտահոգիչ է: Դիմողների նկատմամբ երբեմն դրսևորվում է անհավասար, խտրական վերաբերմունք:
148. Տեղեկատվության ազատության իրավունքների խախտման դեպքում քաղաքացիները պետական մարմինների գործողությունները բողոքարկում են դատական կարգով: Պրակտիկայում սակայն քաղաքացիները խուսափում են իրենց իրավունքները դատական կարգով պաշտպանելուց: Ընդհանուր առմամբ տեղեկատվության մատչելիության լիարժեք և ժամանակին ապահովման խնդիրը մնում է օրակարգային⁹:
149. Հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման գործընթացում կարևորվում է քաղաքացիական հասարակության կողմից դրա իրականացման նկատմամբ վերահսկողությունը՝ **մոնիտորինգի** միջոցով, ինչպես նաև ՀՌԻՄՄ վերանայման ու վերահսկման գործընթացում մոնիտորինգի արդյունքների կիրառումը:
150. Քաղաքացիական հասարակության արդյունավետ **մասնակցության** համար անհրաժեշտ միջավայրը Հայաստանում կայացման փուլում է: Անկատար և աննպաստ է օրենսդրական և օրինաստեղծ միջավայրը, բացակայում են անհրաժեշտ մասնակցային մեխանիզմները, հասարակական կազմակերպությունների կարողությունները թույլ են, իսկ հանրության շրջանում դրանց հեղինակությունը ոչ նպաստավոր, մասնակցային մշակույթ ձևավորված չէ թե՛ որոշում կայացնողների, թե՛ հանրության շրջանում: Բավարար չեն նաև մասնակցության համար անհրաժեշտ ֆորմալ ընթացակարգերը և չափորոշիչները, քաղաքացիների մասնակցությունը խթանող ամբողջական քաղաքականությունը ձևավորված չէ: Կարևորվում են հակակոռուպցիոն մոնիտորինգի քաղաքացիական հասարակության կառույցների ձևավորումը, դրանց մասնագիտական պատրաստվածությունը, մոնիտորինգի մեթոդաբանությունն ու ընթացակարգերը:
151. Քաղաքացիական հասարակության կառույցների գործունեության շրջանակները սահմանելիս հարկ է հաշվի առնել հակակոռուպցիոն մոնիտորինգի շրջանակներում ընդգրկվող ծառայությունների առանձնահատկությունները: Անհրաժեշտ է նաև ապահովել քաղաքացիական հասարակության կառույցների կողմից մոնիտորինգի իրականացումը հասարակական հիմունքներով, օբյեկտիվ և հստակ սկզբունքների և չափորոշիչների հիման վրա: Մասնավորապես, անհրաժեշտ է խուսափել մոնիտորինգի գործընթացում տեղական ինքնակառավարման կամ պետական կառավարման այն մարմինների ներկայացուցիչների անմիջական ընդգրկումից, որոնց մատուցած ծառայությունների ոլորտում իրականացվում է մոնիտորինգ:
152. Քաղաքացիական հասարակության կառույցների կողմից իրականացվող մոնիտորինգը պետք է հիմնվի համադրելի միջազգային լավագույն փորձի վրա, թեև նման փորձն ըստ էության խիստ սահմանափակ է, հատկապես՝ մասնակցային հակակոռուպցիոն մոնիտորինգի մեթոդաբանության առումով: Հետևաբար կարևորվում է համագործակցությունը միջազգային կառույցների հետ՝ քաղաքացիական հասարակության կառույցների կարողությունների հետագա հզորացման նպատակով: Միաժամանակ պետք է երաշխավորվի քաղաքացիական հասարակության կառույցների անհրաժեշտ ֆինանսական և բարոյական անկախությունը:

153. **Կոռուպցիայի դեմ պայքարում քաղաքացիական հասարակության մասնակցության ընդլայնման նպատակով առաջարկվում է.**

- **Ընդլայնել քաղաքացիական հասարակության իրազեկությունը կոռուպցիայի, դրա պատճառների, վտանգների բնույթի, սպառնալիքների վերաբերյալ. Կոռուպցիայի դեմ պայքարում պետական քաղաքականությունը և դրա իրականացման ընթացիկ արդյունքները քաղաքացիական հասարակությանը կանոնավոր իրազեկման, կրթա-լուսավորչական**

⁹ Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն: Հանձնարարականների իրականացման գործողությունների (2006թ. դեկտեմբերից մինչև 2007թ. սեպտեմբեր) Հայաստանին նվիրված զեկույց 23-րդ հանձնարարական

քաղաքականության իրականացման, կոռուպցիա երևույթի պատճառների, հետևանքների, էության վերաբերյալ թեմաներով քարոզարշավների իրականացման, կոռուպցիայի դեմ պայքարի լուսաբանման և բնակչության ընկալման վրա ազդելու, հանրության տեղեկացվածության տարբեր միջոցառումների կազմակերպման և հետադարձ կապի ապահովման, հանրային կարծիքի ձևավորման, հանրային ծառայությունների վերաբերյալ քաղաքացիներին տեղեկատվության տրամադրման տպագիր, էլեկտրոնային նյութերի պատրաստման և տարածման, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների վեբ-կայքերը հակակոռուպցիոն տեղեկատվությամբ պարբերաբար թարմացման միջոցով

- **Ամրագրել որոշումների կայացման գործում քաղաքացիական հասարակության մասնակցության պարտադիր մեխանիզմներ.** քաղաքական որոշումներ կայացնողներին կից առանձին խորհուրդներում ու հանձնաժողովներում քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների ներգրավված մեխանիզմների և օրենսդրության վերանայման, մասնակցության ընթացակարգերի սահմանման, օրենսդրական նախաձեռնությունների քննարկումների վերաբերյալ հասարակական կառույցների ուսումնասիրությունների, եզրակացությունների, հիմնավորումների, հանրային կարծիքի արդյունքներն հաշվի առնելու և քննարկման առարկա դարձնելու, օրենսդրական նախաձեռնությունների և որոշումների նախապատրաստման փուլում քաղաքացիական հասարակության ներգրաման պրակտիկայի կիրառման, շահագրգիռ սոցիալական կամ մասնագիտական առանձին խմբերի (հաշմանդամներ, տարեցներ, մանկավարժներ և այլն) ներկայացուցիչների մասնակցությունը ապահովելու միջոցով:
- **Հրապարակայնացնել հակակոռուպցիոն մարմինների գործունեությունը և հասանելի դարձնել հակակոռուպցիոն մարմինները քաղաքացիական հասարակությանը.** ՉԼՄ-ներով պարբերական հաղորդումների, հրապարակումների, ինտերնետային պաշտոնական կայքերի, հանրային քննարկումների, լսումների, մամուլի ասուլիսների, տպագրված բուկլետների, կոնֆերանսների և հանրային քարոզարշավի ժամանակակից այլ միջոցներով, ՀՀ մարզերում հակակոռուպցիոն հանրային ընդունարանների ձևավորման, հակակոռուպցիոն բոլոր մարմիններին կից կոռուպցիոն դեպքերի մասին անանուն հեռախոսային «թեժ գծերի» և էլեկտրոնային կապի այլ միջոցներով անվճար խորհրդատվության ապահովման, զանգվածային լրատվության միջոցներով կոռուպցիոն դեպքերի բացահայտման և հրապարակման միջոցով.
- **Ակտիվացնել երկխոսությունը և համագործակցությունը պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ու բնակչության միջև** «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքից բխող ենթաօրենսդրական ակտերի, քաղաքացիներին տեղեկատվություն տրամադրման և տեղեկատվության հավաքման, դասակարգման ու պահպանման մեկ միասնական ընթացակարգի սահմանման, տեղեկությունների հրապարակման տարբեր մեխանիզմների կիրառման, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում քաղաքացիների սպասարկման էլեկտրոնային կառավարման արդյունավետ համակարգերի ներդրման, հանրության հետ կապը ապահովող վարչական ընթացակարգերի ընդունման, քաղաքացիներին մատուցվող ծառայությունների ստանդարտների՝ «քաղաքացիների կանոնակարգերի» մշակման պրակտիկայի ներդրման, տեղեկատվության հասանելի այլ միջոցների զարգացման, քաղաքացիների հարցումներին և դիմումներին ժամանակին և ամբողջական տեղեկատվություն տրամադրելու գործընթացում մարդկային սուբեկտիվ գործոնի նվազեցման, առավել արագ ընթացք տալու, կրկնակի դիմումների ու բողոքների կրճատման, պաշտոնական վեբ-կայքերի էլեկտրոնային հասցեներով ուղարկված նամակներին **on-line** արձագանքման միջոցով
- **Հզորացնել և զարգացնել տեղեկատվության մատչելիությունն ապահովող ինստիտուցիոնալ կառույցների կարողությունները.** պետական կառավարման տեղական ինքնակառավարման մարմիններում հասարակայնության հետ կապերի ստորաբաժանումների, տեղեկատվական կենտրոնների, քաղաքացիների ընդունարանների ստեղծման, դրանք նվազագույն տեխնիկական և մարդկային ռեսուրսներով հագեցման, տեղեկատվության ռեգիստրի հրապարակման, տեղեկատվության ազատության հարցերով պատասխանատու պաշտոնյաների նշանակման, ներքին եւ արտաքին հաղորդակցման ռազմավարությունների մշակման, աշխատակիցներին մասնագիտական վերապատրաստման և ուսուցման

կազմակերպման, տեղեկատվության տրամադրման էլեկտրոնային համակարգերի ներդրման, պաշտոնական էլեկտրոնային կայքերի միասնականացման, էլեկտրոնային կառավարման համակարգերին ինտեգրման, համապատասխան բյուջետային միջոցներով ապահովման միջոցով,

- **Կատարելագործել տեղեկատվության ազատության իրավունքի պաշտպանության մեխանիզմները.** միջազգային պրակտիկայում ընդունված և հաջողությամբ կիրառվող տեղեկատվության ազատության հանձնակատարի ինստիտուտի ձևավորման, տեղեկատվության ազատության իրավունքը ոտնահարած պաշտոնյայի նկատմամբ պատասխանատվություն սահմանելու, տեղեկատվության տնօրինման, հարցումներին պատշաճ և ժամանակին պատասխանելու ներքին ընթացակարգերի ու ուղեցույցների սահմանման, կոռուպցիոն ռիսկերին և դրսևորումներին վերաբերվող զանգվածային լրատվամիջոցներում հրապարակված տեղեկատվությանն արձագանքման նկատմամբ վերահսկողության սահմանման միջոցով:
- **Բարելավել ֆիզիկական և իրավաբանական անձ -վարչական մարմին հարաբերությունների վարչարարությունը`** օրենսդրական պրակտիկայի կիրարկման արդյունքների պարբերական վերլուծությունների և շարունակական կատարելագործման, հակակոռուպցիոն հանրային ընդունարանների և մեկ պատուհանի համակարգի և աշխատակարգերի ընդլայնելու և զարգացնելու, առանձին սոցիալական խմբերը պետական միջոցների հաշվին հանրային պաշտպանության անվճար իրավաբանական օգնության տրամադրման շրջանակներում ընդգրկելու, վարչական մարմինների կողմից քաղաքացիներին մատուցվող ծառայությունների ընթացակարգերում այլ պետական մարմիններից պահանջվող տեղեկատվությունը քաղաքացիների միջոցով ստանալու բացառման, վարչական վարույթում` հատկապես դիմումների և բողոքների, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում անձանց առաջարկությունների քննարկման ընթացքում անվճար իրավաբանական օգնության տրամադրման շրջանակները օրենսդրորեն հստակեցնելու, իրավաբանական օգնություն ցուցաբերող փաստաբանների կողմից պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին ուղղված դիմումների, բողոքների և առաջարկությունների լրացման անհատականացման, արագացված ընթացակարգերով ծառայությունների մատուցումը կանոնակարգելու, ծառայությունների մատուցման դիմաց պաշտոնական վճարների դրույքաչափերի նվազեցնելու միջոցով.
- **Կանոնակարգել հակակոռուպցիոն մասնակցային մոնիտորինգի իրականացման գործընթացը`** քաղաքացիական հասարակության կառույցների գործունեության շրջանակների հստակ սահմանման, այդ շրջանակների վերաբերյալ հանրության իրազեկման, մոնիտորինգի առավելագույն թափանցիկության ապահովման, մոնիտորինգի մեթոդաբանության և գործիքների վերաբերյալ քաղաքացիական հասարակության կառույցների և դրանց ներկայացուցիչների շարունակական ուսուցման, քաղաքացիական հասարակության կառույցների միջև տեղեկատվության և փորձի անընդհատ փոխանակման և դրանք քաղաքացիական հակակոռուպցիոն ցանցում միավորելու, մասնակցային մոնիտորինգի արդյունքների հետագա վերլուծության և այդ վերլուծության հիման վրա համակարգային փոփոխությունների առաջարկների ձևավորման, դրանց իրականացման ապահովման նպատակով մեխանիզմների ստեղծման միջոցով.
- **Զարգացնել քաղաքացիական հասարակության կարողությունները կոռուպցիայի դեմ պայքարում** հակակոռուպցիոն մոնիտորինգի, կոռուպցիայի մակարդակի, տարածվածության գնահատման և ուսումնասիրությունների իրականացման դրամաշնորհների, պետական պատվերների տրամադրման, հանրային շահերի պաշտպանության ու հասարակական վերահսկողության գործում հասարակական կազմակերպությունների ներգրավումը ակտիվացնելու, քաղաքացիական հասարակության մոնիտորինգի խմբերի համար վերապատրաստման ծրագրերի ու դասընթացների կազմակերպման, այդ թվում ավելի մեծ թվով հետաքննող լրագրողների պատրաստման միջոցով.
- **Ապահովել ՋԼՄ-ների անմիջական մասնակցությունը հակակոռուպցիոն մոնիտորինգին`** ՋԼՄ-ների համար մոնիտորինգի առավել նպատակահարմար և արդյունավետ մեխանիզմներ ու գործիքներ մշակելու, հանրային ծառայությունների մատուցող առանձին հաստատություններ ՋԼՄ-ների պարբերական այցերին աջակցելու, հետևողական և բովանդակային մոնիտորինգ

իրականացնելու գործում ՁԼՄ-ների կարողությունները հզորացնելու, նրանց համար պարբերաբար ուսուցողական սեմինարներ և միջազգային առաջավոր փորձի փոխանակում կազմակերպելու, ՁԼՄ-ների և հասարակական կազմակերպությունների միջև հետևողական համագործակցությունը խթանելու միջոցով:

- **Ապահովել Չանգվածային լրատվության ոլորտը կարգավորող մարմինների մասնագիտական անկախությունն և ինքնուրույնությունը**, զանգվածային լրատվամիջոցների տնտեսական և մասնագիտական անկախության մակարդակի բարձրացման, լրատվամիջոցների հավտարմագրման և գործունեության ազատ միջավայրի ապահովման օրենսդրական պահանջների նկատմամբ վերահսկողության սահմանման, զանգվածային լրատվության միջոցների և լրագրողների հանդեպ ճնշումների բացառման, օրենսդրական պահանջների կատարման նկատմամբ վերահսկողության խստացման, ճնշումների կիրառման դեպքերի բացահայտման և պատասխանատվության միջոցների խստացման միջոցով

ԳԼՈՒԽ IV. ՀՀ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ, ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁԻՆ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ ՈՒ ՃՅՈՒՂԵՐՈՒՄ

4.1. Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտ

154. Օրենսդրորեն հստակեցվել, կանոնակարգվել և ինստիտուցիոնալիզացվել են փողերի լվացման դեմ պայքարի մեխանիզմները: Քրեականացվել է հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացումը՝ փողերի լվացումը: Միաժամանակ, ՀՀ-ն վավերացրել է 1990թ. նոյեմբերի 8-ին Ստրասբուրգում ստորագրված «Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների լվացման, հետախուզման, ազդարարման և բռնագրավման մասին» Եվրախորհրդի կոնվենցիան, 2000թ. դեկտեմբերի 12-ին Պալերմոյում ստորագրված «Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ պայքարի մասին» ՄԱԿ-ի կոնվենցիան, 1999թ. դեկտեմբերի 9-ին Նյու-Յորքում ստորագրված «Ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՄԱԿ-ի կոնվենցիան: 2005 թ. մայիսի 16-ին Վարշավայում ստորագրված «Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների լվացման, հետախուզման, ազդարարման ու բռնագրավման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Եվրախորհրդի կոնվենցիան:

155. 2008թ. մայիսին ընդունվել է «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքը (2008թ. ՓԼ/ԱՖ դեմ պայքարի օրենք): 2008թ. ՓԼ/ԱՖ դեմ պայքարի օրենքում ընդլայնվել է հաշվետվություն ներկայացնող անձանց շրջանակը, օրենսդրորեն սահմանվել է քաղաքական ազդեցություն ունեցող անձի հասկացությունը: Ընդ որում, այն գործարքները, որոնցում ներգրավված են քաղաքական ազդեցություն ունեցող կամ նրանց հետ փոխկապակցված անձինք, համարվում են բարձր ռիսկային: Բացի այդ, հստակեցվել են հաճախորդի պատշաճ ուսումնասիրության, այդ թվում՝ հավելյալ ուսումնասիրության անցկացման կարգը, սահմանվել են բարձր և ցածր ռիսկի չափանիշները, գործարքը կասկածելի համարելու հիմքերը և չափանիշները, ինչպես նաև նախատեսվել են փողերի լվացման և ահաբեկչության (ՓԼ/ԱՖ) ռիսկերին հակազդելուն ուղղված մի շարք այլ դրույթներ: 2008թ. ՓԼ/ԱՖ դեմ պայքարի օրենքում, կախված հաշվետվություն տրամադրող անձանց տեսակից, հստակեցվել և ընդլայնվել է նաև պարտադիր տեղեկացման ենթակա գործարքների շրջանակը՝ այն համապատասխանեցնելով Ֆինանսական գործողությունների հատուկ հանձնախմբի (ՖԱՏՖ) ստանդարտներին: Բացի այդ 2008թ. ՓԼ/ԱՖ դեմ պայքարի օրենքի կարգավորման առարկայից բացառվել է նախկին՝ «Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» 2004թ. օրենքում նշված այն դրույթը, համաձայն որի, կասկածելի չի համարվում այն դրամական փոխանցումը, որի արժեքը չի գերազանցում հինգ միլիոն դրամը, և որը կատարվել է Հայաստանի տարածքից դուրս աշխատող ֆիզիկական անձի կողմից անձնական, ընտանեկան կամ նման այլ նպատակներով: 2008թ. ՓԼ/ԱՖ դեմ պայքարի օրենքը սահմանում է, որ հաշվետվություն տրամադրող անձինք պետք է կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվություն ներկայացնեն լիազոր մարմինին (Կենտրոնական բանկին՝ ի դեմս Ֆինանսական դիտարկումների կենտրոնի)՝ անկախ գումարի չափից: Միաժամանակ, 2008թ. ՓԼ/ԱՖ դեմ պայքարի օրենքի կիրարկումն ապահովելու նպատակով Կենտրոնական բանկի խորհրդի կողմից ընդունվել են մի շարք նորմատիվ և անհատական բնույթի իրավական ակտեր: Նշված օրենքը ՓԼ/ԱՖ դեմ պայքարի հիմնական օրենսդրական գործիքն է Հայաստանում, որն ընդհանուր առմամբ համապատասխանում է ՖԱՏՖ-ի միջազգային ստանդարտներին¹⁰ և կարգավորում է ՀՀ-ում ՓԼ/ԱՖ դեմ պայքարում գործառույթներ իրականացնող մարմինների փոխհարաբերությունները:

156. Օրենսդրորեն հստակեցվել են նաև ՓԼ/ԱՖ դեմ պայքարի լիազոր մարմնի և այլ մարմինների, մասնավորապես, վերահսկող և իրավապահ մարմինների փոխհարաբերությունները, կասկածելի գործարքների հետ կապված տեղեկատվության պաշտպանությունը: Կանոնակարգվել է օրենքի պահանջների կատարման նկատմամբ վերահսկողությունը, նշանակալիորեն խստացվել է պատասխանատվությունն օրենսդրության պահանջների խախտման համար:

¹⁰ Ինստիտուցիոնալ իրավիճակի գնահատումը կապիտալի ազատ տեղաշարժի բնագավառում: Տնտեսական քաղաքականության և իրավական խորհրդատվության հայ-եվրոպական կենտրոնի (AEPLAC), հոկտեմբեր 2007թ., Երևան, էջ 35:

157. ՀՀ Կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) խորհրդի որոշմամբ ՓԼ/ԱՖ դեմ արդյունավետ և համակարգված պայքար իրականացնելու նպատակով **2005թ.** մարտին ստեղծվել է ՀՀ ԿԲ Ֆինանսական դիտարկումների կենտրոնը (ՖԴԿ), որի հիմնական գործառնություններն են հանդիսանում անհրաժեշտ տեղեկատվության հավաքագրումը, փոխանակումը, կասկածելի գործարքների բացահայտման նպատակով այդ տեղեկությունների վերլուծությունը և ՓԼ/ԱՖ հիմնավոր կասկածների առկայության դեպքում քրեական հետապնդման մարմիններին հաղորդում ուղարկելը: ՖԴԿ-ն քրեական հետապնդման մարմիններին հաղորդում է ուղարկում, էթե հաշվետվություն տրամադրող անձանցից օրենքով սահմանված կարգով ստացված հաշվետվության կամ այլ տեղեկությունների հիման վրա կատարված վերլուծության արդյունքում գալիս է եզրակացության, որ առկա են փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման հիմնավոր կասկածներ: Ներկայումս ՖԴԿ-ն օրական ստանում է միջինը **350** պարտադիր տեղեկացման ենթակա գործարքների և ամսական միջին թվով **2-3** կասկածելի գործարքների մասին հաշվետվություններ, որոնք մուտքագրվում են ՖԴԿ տվյալների բազա: **2007թ.** ընթացքում ՖԴԿ կողմից իրավապահ մարմիններին է ուղարկվել **11** հաղորդում, իսկ **2008թ.** ընթացքում **28** հաղորդում: **2005թ.** մարտին ՀՀ ԿԲ Խորհրդի կողմից հաստատվել է ՖԴԿ եռամյա ռազմավարությունը, որով սահմանվում են ՖԴԿ գործունեության հիմնական ուղղությունները, խնդիրները, ակնկալվող արդյունքներն ու դրանց մոնիտորինգի ցուցիչները, անհրաժեշտ ռեսուրսներն ու միջոցառումների ժամանակացույցը: ՖԴԿ գործունեության ընթացիկ գերակայություններն են, մասնավորապես, ՓԼ/ԱՖ վերաբերյալ հանրային իրազեկման, ՓԼ/ԱՖ դեմ պայքարի նպատակով պետական և միջազգային կառույցների հետ համագործակցության զարգացումը, ՓԼ/ԱՖ դեմ պայքարի օրենսդրության արդյունավետ կիրարկման ապահովումը, ՖԴԿ կարողությունների զարգացումը և այլն:

158. ՓԼ/ԱՖ ոլորտում միջգերատեսչական համակարգումը բարձրագույն մակարդակում ապահովում է ՀՀ Նախագահի կարգադրությամբ **2002թ.** մարտին ստեղծված և **2008թ.** ապրիլին վերակազմավորված, «Հայաստանի Հանրապետությունում դրամանենգության, պլաստիկ քարտերի և այլ վճարային գործիքների բնագավառում զեղծարարության, փողերի լվացման, ինչպես նաև ահաբեկչության ֆինանսավորման դեմ տարվող պայքարի հարցերով» միջգերատեսչական հանձնաժողովը, որը գլխավորում է ՀՀ ԿԲ Նախագահը: Հանձնաժողովը, մասնավորապես, առաջարկներ է ներկայացնում ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում միասնական պետական քաղաքականության իրականացման վերաբերյալ, մշակում է ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում միջոցառումների պետական համալիր ծրագրերը և ապահովում է ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում օրենսդրական ակտերի նախագծերի մշակումը և քննարկումը: Հանձնաժողովը լիազորված է նաև իրականացնել քաղաքացիներից, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից ու պաշտոնատար անձանցից ստացված տեղեկությունների, առաջարկությունների ուսումնասիրություն և դրանց փորձաքննության նախաձեռնման աշխատանքներ:

159. ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում ՓԼ/ԱՖ կանխարգելման և կոռուպցիայի դեպքերի բացահայտման ուղղությամբ անհրաժեշտ է.

- **Շարունակականորեն կատարելագործել ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում ՀՀ օրենսդրությունը.** ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում ՀՀ օրենսդրությունը միջազգային չափանիշներին՝ միջազգային և ներպետական լավագույն փորձիը համապատասխանեցման, ինչպես նաև Եվրախորհրդի ՄԱՆԻՎԱԼ հանձնախմբի և Արժույթի միջազգային հիմնադրամի կողմից Հայաստանի Հանրապետության ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգի 3-րդ փուլի գնահատման արդյունքները հաշվի առնելու, քաղաքական ազդեցություն ունեցող անձանց միջազգային ռեսուրսներին հասանելիության ապահովման միջոցով
- **Հզորացնել ՖԴԿ ինստիտուցիոնալ կարողությունները.** ՖԴԿ-ն արդի տեղեկատվական տեխնոլոգիաներով, ուսումնասիրությունների և դիտարկումների, վերլուծության ժամանակակից գործիքներով և ծրագրային ապահովմամբ հագեցնելու, ՖԴԿ իրավասու պետական մարմինների տեղեկատվական շտեմարաններին հասանելիությունը ապահովելու և ՖԴԿ աշխատակազմի մասնագիտական որակավորումը շարունակականորեն բարձրացնելու, ՖԴԿ պաշտոնական կայքի կանոնավոր և պարբերական թարմացումը ապահովելու միջոցով
- **ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում հզորացնել վերահսկող մարմինների կարողությունները.** ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում ՀՀ ԿԲ-ի, որպես լիազոր մարմին,

վերահսկողական գործառնություններն իրականացնելու կարողությունները, ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ուղորտում վերահսկող այլ մարմինների վերահսկողական գործառնություններն իրականացնելու կարողությունները զարգացնելու միջոցով

- **Բարձրացնել ՓԼ/ԱՖ դեպքերի բացահայտման արդյունավետությունը.** ՓԼ/ԱՖ հանցագործությունների քննության հետ կապված քրեական հետապնդում իրականացնող և դատական մարմինների մասնագիտական կարողությունները զարգացնելու միջոցով

4.2. Հանրային ֆինանսների կառավարման ոլորտ

160. Հայաստանում հանրային ֆինանսների կառավարման բարեփոխումներն ուղղված են ֆինանսական կարգապահության, ֆինանսական հատկացումների և գործառնությունների արդյունավետության բարձրացմանը:
161. Հայաստանի Հանրապետության կառավարությունը վերջին տասնամյակում էապես բարելավել է **ֆինանսական կարգապահությունը**՝ հիմնականում կառուցվածքային բարեփոխումների և ընթացակարգերի բարելավման շնորհիվ: Էականորեն բարելավվել է բյուջեի ամբողջականությունը: Պետական բյուջեի ֆինանսական միջոցների հոսքը կառավարվում է պետական գանձապետական համակարգի կողմից, ինչն ապահովվում է հանրային ֆինանսների կառավարման հաշվետվողականությունը: Բյուջետային հաստատությունները հաշվետու են նաև արտաբյուջետային յուրաքանչյուր հոսքի համար՝ թե՛ ծախսերի, թե՛ եկամուտների մասով: Համայնքային բյուջեները նույնպես ընդհանուր առմամբ ամբողջական են: Այդուհանդերձ, պետական ոչ-առևտրային կազմակերպություններում (ՊՈԱԿ), ֆինանսների կառավարումն իրականացվում է բյուջետային կառավարման համակարգից դուրս, որը սահմանափակում է դրանց հաշվետվողականության մակարդակը և դժվարացնում է ՊՈԱԿ-ների սեփական եկամուտների և ծախսերի ամբողջականացումը:
162. **2003-2007թթ.** բարձրացել է նաև ֆինանսական կարգապահության **թափանցիկության** մակարդակը. պետական բյուջեն դարձել է առավել թափանցիկ, բարելավվել է բյուջետային փաստաթղթերի, ֆինանսական հաշվետվությունների և աուդիտի որակն ու մատչելիությունը: Այդուհանդերձ, ֆինանսական միջոցների և դրանց ծախսումների վերաբերյալ հաշվետվությունների հրապարակման պարտադիր պահանջ սահմանված չէ պետական բյուջեի միջոցների հաշվին հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների համար:
163. Ծախսումներ կատարող միավորները պարտավոր են մշակել **ռազմավարական տարրեր պարունակող ծրագրեր**: Այդուհանդերձ, առկա ռազմավարական ծրագրերում սահմանված չեն շոշափելի, հասանելի և չափելի ակնկալվող արդյունքները, դրանց չափման համար անհրաժեշտ ցուցիչները և այլն, ինչը սահմանափակում է հաշվետվողականությունը միջնաժամկետ հատվածում: Ավելին, հիմնականում գնահատված չեն հանրային ֆինանսների պլանավորման համար անհրաժեշտ ընթացիկ իրավիճակը նկարագրող հենանիշերը (**baseline**) և թիրախները, ինչը հնարավորություն չի տալիս գնահատել պլանների կատարման արդյունավետությունը:
164. **Պետական բյուջեի պլանավորման գործընթացի** հաշվետվողականության և թափանցիկության առումով, կատարելագործման կարիք ունեն բյուջեի մշակման գործընթացում ներգրավված կառույցներին ֆինանսների կառավարման պետական լիազոր մարմնի կողմից տրվող մեթոդական ցուցումները: Դրանք դեռևս բավարար չափով չեն շեշտում չափելի և դիտարկելի ցուցիչների ներառման, ինչպես նաև բյուջետային հայտերում մոնիտորինգի պլանի առկայության պահանջը: Ավելին, մեթոդական ցուցումները պատշաճ կերպով չեն պահանջում հստակ կազմակերպչական պատասխանատվություն սահմանել բյուջեի իրականացման գործընթացում, հատկապես՝ ՊՈԱԿ-ների և այլ բյուջետային հատկացումների պատվիրակման դեպքում: Մեթոդական ցուցումները հայտատուներից չեն պահանջում նաև հայտերում ներառել առկա ռիսկերը:
165. Բյուջեի կատարման գործընթացում **ծախսումների կառավարման** առումով Հայաստանն առաջընթաց է արձանագրել: Օրենսդրության հետևողական կիրառման արդյունքում զգալիորեն բարելավվել է բյուջեի վերանայման և լրացումների գործընթացի կարգավորման օրինականությունը և թափանցիկությունը: Այդուհանդերձ, Հայաստանում ծախսերի կառավարման համակարգը դեռևս ամբողջությամբ էլեկտրոնային չէ, իսկ Գանձապետարանի որոշ կարևոր գործառնություններ ավտոմատացված չեն և թղթատար են:

166. Հայաստանի Հանրապետության կառավարությունը շարունակականորեն ներդնում է բյուջետային դասակարգման **GFS 2001** և **հաշվապահական հաշվառման ու հաշվետվության IPSAS** չափորոշիչները, ինչը հնարավորություն կնձեռի հետևողականորեն բարելավել բյուջեի կազմակերպումը և հաշվետվությունների թափանցիկությունը: Այդուհանդերձ, ՊՈԱԿ-ների հաշվետվության համակարգի թափանցիկությունը մնում է սահմանափակ:
167. Արդիական են հանրային ֆինանսների կառավարման ապակենտրոնացված վերահսկողական համակարգի՝ **ներքին աուդիտի** ինստիտուտի զարգացման շարունակական բարեփոխումները: Սեղծվել են ներքին աուդիտի և դրա մոնիտորինգի իրականացման համար անհրաժեշտ կարևորագույն նախապայմանները: Հանրային հատվածում ներքին աուդիտի իրավական կարգավորման համակարգը համապատասխանեցվել է միջազգային չափանիշներին: **2004թ.** ՀՀ կառավարությունը հաստատել է ՀՀ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց ենթակա հիմնարկների եվ պետական ու համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների ներքին աուդիտի համակարգի զարգացման ռազմավարությունը, որը մասավորապես կապահովի Ֆինանսական խորը հսկողության կոշտ մեխանիզմից ներքին աուդիտի ապակենտրոնացված համակարգին սահուն անցումը: Թեև բոլոր պետական մարմիններում ներքին աուդիտի պատասխանատուները մշակում են աուդիտի պլաններ և հաշվետվություններ պատրաստում, այդուհանդերձ ներքին աուդիտը սահմանափակվում է հիմնականում գործառնությունների համապատասխանության ուսումնասիրություններով: Ներքին աուդիտորների կողմից ռիսկերի գնահատման վրա հիմնված մոտեցումները գործնականում չեն կիրառվում, անբավարար են ներքին աուդիտի գնահատման և հաշվետվությունների հետևողական կիրառման գործընթացները: Ներքին աուդիտ իրականացնող ծառայողների մասնագիտական կարողություններն ու փորձառությունը, ինչպես նաև նրանց անկախության աստիճանը մնում են անբավարար: Հանրային ֆինանսների կառավարման համակարգի մասնագետների որակավորման գործընթացը չի համապատասխանում այս բնագավառում միջազգային լավագույն փորձին, որը ենթադրում է, որակավորման գործընթացի պատվիրակումը մասնագիտական անկախ ինքնակարգավորվող մարմին: Հանրային ֆինանսների վերահսկողության բարելավման շարունակականությունը ապահովելու առումով կարևորվում է հաջորդաբար տեսչական առկա ծանր բեռը թեթևացնելը և ֆինանսական հսկողության մեխանիզմից ներքին աուդիտի ապակենտրոնացված համակարգին անցնելը:
168. Հայաստանում հանրային ֆինանսների **արտաքին աուդիտի** բարձրագույն մարմինը Հայաստանի Հանրապետության Վերասկիչ պալատն է, որի անկախության կարգավիճակն ամրագրված է սահմանադրորեն: **2006թ.** օրենսդրորեն ընդլայնվեցին ՀՀ Վերահսկիչ պալատի իրավասությունները, պալատը հնարավորություն ստացավ անկախ աուդիտորներ, փորձագետներ և խորհրդատուներ ներգրավել իր աշխատանքներում: Այդուհանդերձ, պալատը ներկայում իրականացնում է առավելապես գործառնական աուդիտ, ինչը չի համապատասխանում միջազգային չափանիշներին՝ հիմնականում պատշաճ ինստիտուցիոնալ և մասնագիտական կարողությունների անբավարարության պատճառով: Աուդիտի առկա մեթոդները հնարավորություն չեն ընձեռում համաչափորեն կիրառել ֆինանսական, համապատասխանության և արդյունավետության աուդիտի տարրերը: ՀՀ Վերահսկիչ պալատի իրականացրած աուդիտի արդյունքների հաշվետվության վերաբերյալ պաշտոնական արձագանքները սահմանափակ են, երբեմն կատարվում են ուշացումով, ամբողջական չեն և հիմնականում փոփոխությունների մասին չեն հիշատակվում:
169. ՀՀ Ազգային ժողովի մշտական հանձնաժողովները նույնպես հանրային ֆինանսների կառավարման գործում վերահսկողական դեր են կատարում: Այդուհանդերձ, հանրային ֆինանսների կառավարման բազմաթիվ հատվածներ գործնականում դուրս են մնում ՀՀ ԱԺ ուշադրությունից, այդ վերահսկողությունը հետևողական չէ, չի կատարվում պատշաճ խորությամբ և ամբողջությամբ: Արդյունքում, օրենսդիրը, բյուջետային գործընթացում իր հավասարակշռող կարևորագույն խնդիրն իրականացնում է մասնակիորեն:

170. Հանրային ֆինանսների ոլորտում կոռուպցիոն ռիսկերի կանխարգելման նպատակով առաջարկվում է.

- **Բարելավել օրենսդիր իշխանությանը ՀՀ կառավարության հաշվետվողականությունը. ՀՀ Ազգային ժողովի մշտական հանձնաժողովներին առանձին ոլորտներում և ճյուղերում բյուջեի կատարման համար պատասխանատու գործադիր մարմիններից բյուջետային ընթացիկ հաշվետվություններ պահանջելու հստակ իրավասություն վերապահելու, ՀՀ ԱԺ**

հանձնաժողովների ընթացակարգերը բարելավելու, ինչպես նաև դրանց մասնագիտական կարողությունները զարգացնելու միջոցով:

- **Բարձրացնել բյուջետային հատկացումների համար պատասխանատվությունն ու հաշվետվողականությունը.** բյուջետային փաստաթղթերի մշակման ընթացակարգերի բարելավման, պատվիրակված բյուջետային հատկացումներ ստացող կազմակերպությունների, ինչպես նաև առաջնային և պատվիրակված բյուջետային հատկացումներ ստացողների միջև ֆինանսավորման պայմանագրերի մասին մանրամասն տեղեկություններ ներառելու միջոցով:
- **Բարձրացնել հանրային ֆինանսների կառավարման կարգապահությունն ու թափանցիկությունը.** պետական բյուջեի միջոցների հաշվին հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների համար ֆինանսական միջոցների և դրանց ծախսումների վերաբերյալ հաշվետվությունների հրապարակման պարտադիր պահանջ սահմանելու, Ազգային ժողովում պետական բյուջեի նախագծի և պետական բյուջեի կատարման մասին ՀՀ կառավարության հաշվետվության քննարկման գործընթացին հանրային մասնակցությունը ընդլայնելու միջոցով:
- **Բարձրացնել միջնաժամկետ հատվածում հանրային ֆինանսների պլանավորման հաշվետվողականությունը.** ռազմավարական ծրագրերում ընթացիկ իրավիճակը նկարագրող հենանիշեր (**baseline**), թիրախներ և ցուցիչներ, շոշափելի, հասանելի և չափելի ակնկալվող արդյունքներ սահմանելու, բյուջեի մշակման գործընթացի մեթոդական ցուցումների կատարելագործման, բյուջետային հայտերում մոնիտորինգի պլանի և դիտարկելի ցուցիչների և ռիսկերի ներառման, բյուջեի իրականացման գործընթացում հստակ կազմակերպչական պատասխանատվության շրջանակների սահմանման միջոցով:
- **Բարելավել պետական բյուջեի ծախսումների կառավարման գործառնություններն ու ընթացակարգերը.** բիզնես գործընթացների բարելավման, անձնակազմի պարտականությունների հստակ սահմանման, մոնիտորինգի, վերահսկողության և հաշվետվության ընթացակարգերի, տվյալների կառավարման ամբողջական և հուսալի համակարգի ներդրման, գանձապետական համակարգում էլեկտրոնային կառավարման համակարգի ամբողջականացման միջոցով:
- **Բարձրացնել ՊՈԱԿ-ների ֆինանսավորման, ինչպես նաև սուբվենցիաների տրամադրման հաշվետվողականության մակարդակը.** ծառայությունների մատուցման ոչ-ֆինանսական, բովանդակային-կատարողական ցուցանիշներով հաշվետվության պահանջների սահմանման միջոցով:
- **Ապահովել հանրային ֆինանսների վերահսկողության շարունակական բարելավումը.** տեսչական ծանր բեռը թեթևացնելու, ֆինանսական հսկողության կենտրոնացված մեխանիզմից ներքին աուդիտի ապակենտրոնացված համակարգին անցնելու միջոցով:
- **Ամբողջականացնել ներքին աուդիտի համակարգը.** ներքին աուդիտի պրակտիկայում ֆինանսական, գործառնական համապատասխանության և արդյունավետության աուդիտի և ռիսկերի գնահատման մեթոդների ու ընթացակարգերի ներդրման, ներքին աուդիտի պլանների և հաշվետվությունների որակի բարձրացման, աուդիտորների մասնագիտական կարողությունները, փորձառությունն ու անկախության աստիճանը բարձրացնելու, աուդիտորների մասնագիտական որակավորման չափորոշիչները միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու, որակավորման գործընթացը միջազգային լավագույն փորձին համապատասխանեցնելու միջոցով:
- **Զարգացնել հանրային հատվածում արտաքին աուդիտի համակարգը.** ՀՀ Վերահսկիչ պալատի ինստիտուցիոնալ և մասնագիտական կարողությունների հզորացման, պալատի անդամների և անձնակազմի մասնագիտական որակավորման չափորոշիչների վերանայման, միջազգային չափանիշներին համապատասխան աուդիտի մեթոդների և համապատասխան ընթացակարգերի, միջազգային չափանիշներին համապատասխան ֆինանսական, գործառնական համապատասխանության և արդյունավետության աուդիտի մեթոդների մշակման և ներդրման, ՀՀ Վերահսկիչ պալատի իրականացրած աուդիտի հաշվետվություններին պարտադիր պաշտոնական արձագանքների հանդեպ վերահսկողության խստացման միջոցով:

4.3. Պետական գնումների համակարգ

171. Հայաստանում ձևավորվել են հանրային գնումների առկա օրենսդրական և ինստիտուցիոնալ շրջանակները: Այդուհանդերձ, հանրային գնումների հանդեպ վստահության ընկալման մակարդակը մնում է անբավարար¹¹: Մեկ աղբյուրից կատարվող գնումների ծավալը հանրային որոշ հատվածներում, մասնավորապես կրթության, առողջապահության բնագավառներում մնում է մեծ: Մրցույթին մասնակցող տնտեսվարողների միջին թիվը 2007թ.-ին կրճատվել է 2006թ. համեմատ, 2.7-ի փոխարեն կազմելով 1.55, ինչը տնտեսվարող սուբյեկտների շարունակական աճի պայմաններում ահագանգում է տնտեսական մրցակցության հետ կապված վտանգման մասին:
172. Օրենսդրորեն կարգավորված են պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, պետության կամ համայնքների հիմնարկների, ՀՀ կենտրոնական բանկի, պետական կամ համայնքների ոչ առևտրային և պետության կամ համայնքների հիսուն տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող կազմակերպությունների կողմից ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերման գործընթացի հետ կապված հարաբերությունները, սահմանված են այդ հարաբերությունների կողմերի հիմնական իրավունքները և պարտականությունները: Պետական գնումների գործընթացի կազմակերպման կարևորագույն կազմակերպչական օղակի **մրցույթային հանձնաժողովի** անդամների շահերի բախման հայտարարագրման օրենսդրական պահանջներ կամ ընթացակարգեր չկան, ինչը վտանգում է մրցակցային միջավայրը և ստեղծում կոռուպցիոն ռիսկեր:
173. Գնումների գործընթացի թափանցիկությունն ու հրապարակայնությունը հիմնականում ապահովվում է գնումների պաշտոնական **տեղեկատուի**, գնումների պաշտոնական կայքի և հրապարակային հայտարարությունների միջոցով: Այդուհանդերձ, տեղեկագրերը հրապարակվում են ոչ թե հստակ սահմանված պարբերականությամբ, այլ ելնելով հրապարակվելիք տեղեկատվության ծավալներից: Հանրային գնումների գործընթացի վերաբերյալ **անձանց բողոքները, առաջարկները և դիմումները** քննարկում է հանրային ֆինանսների կառավարման պետական լիազոր մարմինը, որը նաև մոնիտորինգ է իրականացնում հանրային գնումների գործընթացի, այդ թվում՝ ՊԳԾ գործունեության նկատմամբ: Այդուհանդերձ, գնումների գործընթացի վերաբերյալ բողոքները չեն քննարկվում գնումների պատվիրատու կազմակերպության կողմից, ինչը հնարավորություն կընձեռներ առավել արդյունավետ կերպով արձագանքել բողոքներին՝ կրճատելով դրանց քանակը և հնարավոր դատական բողոքարկման անհրաժեշտությունը:
174. 2006թ. հաստատված **Էլեկտրոնային գնումների համակարգի** ներդրման ռազմավարությունը ուղղված է պետական ծախսերի կառավարման արդյունավետության բարձրացմանը, թափանցիկության ընդլայնմանը, մրցակցության խթանմանն ու բյուջետային գործընթացում կոռուպցիոն ռիսկերի կրճատմանը: Էլեկտրոնային գնումների համակարգի ներդրման արդյունավետությունը ներկայումս սահմանափակվում է պատշաճ ընթացակարգերի բացակայությամբ, ինստիտուցիոնալ կարողություններով, այդ թվում՝ Էլեկտրոնային գնումների համակարգի շահագործման փորձառու մասնագետների բացակայությամբ, ինչպես նաև Հայաստանում հեռահաղորդակցության և էլեկտրոնային կապի միջոցների մատչելիության ցածր աստիճանով՝ հատկապես ՀՀ մարզերում և գյուղական բնակավայրերում: Պետական գնումների գործակալության կարգավիճակը հնարավորություն չի տալիս կիրառելու մասնագիտացված ծառայությանն ներկայացվող պահանջները՝ մասնավորապես էթիկայի և շահերի բախման կանոնակարգեր: Գնումների գործակալության աշխատակիցները քաղաքացիական ծառայողներ չեն:
175. Օրենսդրորեն սահմանված է առնվազն երեք տարին մեկ անգամ **հանրային գնումների մասնագետների ուսուցման և վերապատրաստման** և նրանց որակավորման գնահատման պահանջը: Այդուհանդերձ, գործնականում այս գործընթացը դեռևս պատշաճ կերպով չի կազմակերպվում: ՀՀ համայնքներում, հատկապես գյուղական համայնքներում, գնումների գործընթացը պատշաճ կերպով կազմակերպելու կարողությունները խիստ անբավարար են՝ համապատասխան մասնագիտական որակավորման և հմտությունների բացակայության պատճառով: Տեղական ինքնակառավարման մարմինները միշտ չէ, որ գնումների գործընթացը կազմակերպելիս օգտվում են Պետական գնումների գործակալության (ՊԳԾ) վճարովի ծառայություններից:

¹¹ GTZ, ProSME "Entrepreneurship Survey" 2007 as well as interviews conducted by consultants on this assignment. See also TI indicator on public perception in the field of procurement.

176. Պետական գնումների համակարգում կոռուպցիայի կանխարգելման, գնումների գործընթացի թափանցիկության, հրապարակայնության ապահովման նպատակով անհրաժեշտ է.

- **հզորացնել պետական գնումների ոլորտում լիազոր մարմինների ինստիտուցիոնալ կարողությունները.** էլեկտրոնային գնումների համակարգի գործարկման, շահագործման և զարգացման համար պատասխանատու մասնագիտացված ստորաբաժանման ստեղծման, որակյալ մասնագետներով, արդի տեղեկատվական տեխնոլոգիաներով և պատշաճ հզորության կապուղիներով ապահովման, Պետական գնումների գործակալության կարգավիճակի վերանայման, ՊԳԾ ղեկավարի և աշխատակիցների որակավորման չափորոշիչների սահմանման, գնումների մասնագետների պատրաստման, վերապատրաստման և որակավորման բարձրացման համակարգի ներդրման, գործակալության աշխատակիցների համար վարքագծի և շահերի բախման ծառայողական կանոնակարգերի սահմանման, պետական գնումների ընթացակարգերի պահպանման նկատմամբ խիստ վերահսկողություն սահմանելու միջոցով.
- **ապահովել պետական գնումների հրապարակայնությունը և թափանցիկությունը.** էլեկտրոնային գնումների համակարգի ներդրման, պետական գնումների համակարգը կանոնակարգող գործող օրենսդրության կատարելագործման և ընթացակարգերի, այդ թվում մրցույթային հայտերի գնահատման, ոչ-գնային չափորոշիչների և մասնակիցների նախաորակավորման իրականացման հստակ ընթացակարգերի սահմանման, տեղեկատվությունը էլեկտրոնային միջոցներով, առավել տարածված միջազգային լեզուներով, գնումների գործընթացին արտասահմանյան կազմակերպությունների մասնակցության ապահովման, հանրային գնումների տարեկան հաշվետվությունների հրապարակման և հանրային գնումների վերաբերյալ կանոնավոր ասուլիսների կազմակերպման միջոցով.
- **ապահովել պետական գնումների ընթացակարգերի պահպանման նկատմամբ վերահսկողությունը.** գնումների գործընթացի ապակենտրոնացմանը զուգահեռ աուդիտի որակի բարձրացման և գնումների գործընթացի ժամկետների և ընթացակարգերի պահպանման համար մարմինների ղեկավարների անհատական պատասխանատվություն սահմանելու, գնումների պլանները կատարելագործելու, մրցույթային հանձնաժողովի անդամների շահերի բախման հայտարարագրման օրենսդրական պահանջներ կամ ընթացակարգեր սահմանելու, գնումների գործընթացի վերաբերյալ բողոքները գնումների պատվիրատու կազմակերպության կողմից քննարկելու ընթացակարգերի սահմանման և հնարավոր դատական բողոքարկումների դեպքերը կրճատելու միջոցով.
- **աջակցել պետական գնումների օրինականության պահպանման համար նպաստավոր միջավայրի ձևավորմանը.** գնումների մրցակցային տեսակների և ընկերությունների մասնակցությունը մրցույթներին խթանելու, մրցույթային հանձնաժողովների հանդեպ վստահությունը բարձրացնելու և հանրային գնումների գործընթացում մրցակցային միջավայր ապահովելու միջոցով:

4.4. Հարկային և մաքսային համակարգեր

177. ՀՀ կառավարությունը կարևորում է հարկային համակարգում կոռուպցիոն ռիսկերի կրճատումը, այդ թվում հարկային վարչարարության բարելավման միջոցով: Հարկային մարմնում կոռուպցիայի հաղթահարումն ուղղությամբ նախորդ տարիներին մի շարք դրական քայլեր են արվել: **2005թ.** ներդրվել է հարկ վճարողների կողմից հաշվետվությունները փոստով հարկային մարմնին ներկայացնելու կարգը: Օրենսդրորեն սահմանվել է հարկային մարմինների կողմից ստուգումների կազմակերպման և անցկացման գործում կամերալ (գրասենյակային) ուսումնասիրությունների անցկացման հնարավորությունը: ՀՀ ԿԱ ՀՊԾ-ն իրականացնում է «Կոռուպցիայի իրավախախտումների հայտնաբերման և դրանց մասին իրավասու իրավապահ մարմիններին հայտնելու» ընթացակարգերը կանոնակարգող ուղեցույցը: Այդուհանդերձ, գործող հսկողական լծակները հիմնականում ենթադրում են հարկ վճարողի հետ հարկային ծառայողների անմիջական շփումներ, ինչը կառուպցիոն զգալի ռիսկեր է պարունակում: Հարկ վճարողները դժգոհում են հարկային վարչարարության անհավասարությունից և արդարացի չլինելուց: Համապատասխան ընթացակարգերի բացակայությունը կամ անհստակությունը հարկային տեսուչների համար տարբեր

հարկային տեսչություններում հայեցողական լուծումների և որոշումների լայն դաշտ է ստեղծում: Բողոքարկման գործող համակարգը ևս լիովին չի գոհացնում հարկ վճարողների սպասումները:

178. Օրենսդրորեն կարգավորվել են **հարկային ծառայության կազմակերպման և իրականացման**, հարկային ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց իրավական կարգավիճակի, հարցերը: Հարկային ծառայողների և հարկ վճարողների միջև ձևավորվող կապերը կանխելու և կոռուպցիոն ռիսկերը կրճատելու նպատակով ամրագրվել է հարկային ծառայողների ռոտացիայի սկզբունքը: Այդուհանդերձ, հարկային ծառայությունում չի գործում նյութական խրախուսման ժամանակակից համակարգ: Հարկային ծառայությունում պաշտոնային առաջխաղացման համակարգը հիմնված չէ բացառապես մասնագիտական ունակությունների գնահատման վրա: Ատեստավորման արդյունքները պատշաճ կերպով չեն ներառվում հարկային ծառայողների վերապատրաստման և պաշտոնական առաջխաղացման ընթացակարգերում: Հարկային ծառայողների ատեստավորման գործող համակարգը թույլ չի տալիս լիարժեքորեն գնահատել հարկային ծառայողների մասնագիտական ունակությունները: Գործուն չէ նաև հարկային ծառայողների վերապատրաստման մեխանիզմը, որն իրականացվում է ոչ պարբերաբար՝ առանց ուսումնական հատուկ ծրագրերի: Ամբողջականացված չէ և ըստ էության չի իրականացվում ներքին աուդիտի գործառնությունը: Հարկային ծառայողի վարքագծի կանոնները և դրանց պահանջների նկատմամբ վերահսկողությունը կրում են ձևական բնույթ:

179. Հարկային ոլորտում առավել խոցելի է մարդկային գործունը. եվրոպական չափանիշների համեմատ ՀՊԾ-ն հատկապես ետ է մնում էթիկայի, շխատակիցների գործունեությունը խթանող, նրանց աջակցող և պաշտպանող մարդկային ռեսուրսների կառավարման քաղաքականության և գործող պրակտիկայի, ինչպես նաև արդյունավետ ներքին հաղորդակցության համակարգի առումով: Հարկատուների և հարկային համակարգի աշխատակիցների միջավայրում հաղորդակցության կազմակերպման առումով հարկային մարմինը շուրջ **2.4** անգամ ետ է մնում եվրոպական նվազագույն չափանիշից: Եվրոպական չափանիշների համեմատ թերություն է մնում նաև ՀՀ հարկային մարմնի ստորաբաժանումների և աշխատակիցների կատարողականության գնահատման և աշխատանքի արդյունավետության կառավարման համակարգը, այդ թվում՝ հարկային մարմնում ներքին աուդիտի մեխանիզմը:

180. Հարկային ծառայության համակարգի գործունեության թափանցիկության, հրապարակայնության, հաշվետվողականության և օրինականության ապահովման նպատակով անհրաժեշտ է.

- **Բարձրացնել հարկային ծառայությունում մարդկային ռեսուրսների կառավարման արդյունավետությունը.** հարկային ծառայողի վարձատրության ու պարգևատրման համակարգերի բարելավման և հարկային ծառայողի պաշտոնական դրույքաչափի աստիճանական բարձրացման, սոցիալական երաշխիքների բարելավման, հարկային ծառայության պաշտոնի նշանակման ընթացակարգերի թափանցիկության և օբյեկտիվության սկզբունքների իրագործումն ապահովող ընթացակարգեր ներդնելու, հարկային ծառայողների պարտադիր ուսուցման, վերապատրաստման և պաշտոնական առաջխաղացման ընթացակարգերի հստակեցման, որակավորման գրավոր ընթացակարգերի և թեստավորման էլեկտրոնային համակարգի ներդրման, միջգերատեսչական ատեստավորման հանձնաժողովների ձևավորման, հարկային ծառայության մարմնի ղեկավար պաշտոնների պարտադիր կարգ սահմանելու և հարկային ծառայողների ռոտացիայի հստակ ընթացակարգեր ներդնելու, հարկային մարմնի համապատասխան ստորաբաժանման կողմից հարկային ծառայողների գործունեության օրինականության նկատմամբ հետևողական և խիստ հսկողության, հարկային ծառայողի վարքագծի կանոնների ամբողջականացման և դրանց պահպանման նկատմամբ հետևողական վերահսկողություն սահմանելու, հարկային ծառայողի շահերի բախումը կարգավորելու և շահերի բախման հայտարարագրման ինստիտուտ ներդնելու, շահերի բախման կարգավորման խախտումների համար պատասխանատվության իստացման և պատասխանատվության միջոցների հետևողական կիրառման, հարկային ծառայողների գույքի և եկամուտների վերաբերյալ հայտարարագրերի վերլուծության և մոնիտորինգի համակարգի ներդրման, հարկային ծառայողների շարունակական վերապատրաստման ծրագրերում կոռուպցիայի դեմ պայքարի միջոցների վերաբերյալ թեմաներ ընդգրկելու միջոցով:
- **Շարունակաբար նվազեցնել հարկային ծառայողների և հարկ վճարողների միջև անմիջական շփումները.** էլեկտրոնային հարկային ծառայությունների ընդլայնման, հարկային

հաշվետվությունները բացառապես փոստով կամ էլեկտրոնային փոստով ընդունելու պահանջի ամրագրման, հարկ վճարողների սպասարկման վերաբերյալ տեղեկատվության ընդունման կենտրոններ հիմնելու, հարկային մարմնի կողմից ստուգման ենթակա հարկ վճարողների ընտրության և ստուգումների պլանավորման ինքնագնահատման համակարգը զարգացնելու, հարկային հսկողության իրականացման ամբողջական վերլուծությունների մեթոդների ներդրման, հարկ վճարողների ներուժի գնահատման և կամերալ ուսումնասիրությունների մեթոդներ և ընթացակարգեր ներդնելու, հարկային հանցագործությունների քննության ընթացքում կոռուպցիայի հանցակազմը վեր հանելու և քննության պատշաճ մեթոդների կիրառմամբ տնտեսական հանցագործությունների և կոռուպցիոն իրավախախտումների կապերը բացահայտելու միջոցով.

- **Բարձրացնել հարկային մարմնի գործունեության հրապարակայնությունն, հաշվետվողականությունն ու օրինականությունը.** հարկային ծառայության ներհամակարգային միասնական ընթացակարգեր սահմանելու, հարկ վճարողների նկատմամբ դրանց միատեսակ կիրառման վերահսկողություն սահմանելու և ընթացակարգերի խախտման համար պատասխանատվությունը խստացնելու, հարկ վճարողների համար ուղեցույցեր հրապարակելու՝ այդ թվում հարկային մարմնի պաշտոնական էլեկտրոնային կայքում դրանք տեղադրելու և պարբերաբար թարմացնելու, հարկային մարմնում ներքին աուդիտի համակարգի լիարժեք ներդրման, հարկային մարմնի գործունեության ներքին աուդիտի և հարկային համակարգում կառուպցիայի կանխարգելման, բացահայտման և մեղավոր անձանց պատասխանատվության ներկայացման գործընթացների արդյունքները պարբերաբար հրապարակելու, հարկային ծառայության պաշտոնատար անձանց կողմից վարչական վարույթի իրականացման օրինականության նկատմամբ վերահսկողություն սահմանելու, հարկային ծառայության նկատմամբ բողոքարկման համակարգի ընթացակարգերի հստակեցման, հասարակությանն ու հարկ վճարողներին վստահություն ներշնչող «Գեժ գծի» և հարկային մարմնի պաշտոնական կայքում արդյունավետ հետադարձ կապի գործարկման, հարկային մարմնի և քաղաքացիական հասարակության կառույցների միջև համագործակցության արդյունավետ ընթացակարգեր ներդնելու միջոցով:

181. Մաքսային ծառայության համակարգի գործունեության թափանցիկության, հրապարակայնության, հաշվետվողականության և օրինականության ապահովման նպատակով անհրաժեշտ է .

- **Բարձրացնել մաքսային ծառայության կառավարման արդյունավետությունն ու հաշվետվողականությունը.** մաքսային ծառայության համակարգում կատարողականի գնահատման համակարգ և դրա վրա հիմնված մաքսային ծառայողի պաշտոնական առաջխաղացման ընթացակարգեր և մաքսային ծառայողի պարտադիր պարբերական ռոտացիայի կարգ ներդնելու, մաքսային ծառայողի էթիկայի կանոններ ներդնելու և դրանց նկատմամբ վերահսկողություն սահմանելու, մաքսային ծառայության գործունեության վերաբերյալ տարեկան հաշվետվությունների հրապարակման, ռիսկերի կառավարման վրա հիմնված մաքսային հսկողության համակարգ ներդնելու, ինքնահայտարարագրման համակարգի և էլեկտրոնային կապուղիներով մաքսային հայտարարագիր ներկայացնողների շրջանակն ընդլայնելու և մաքսային միջնորդի ինստիտուտը զարգացնելու, ՀՀ մաքսային սահմանով ավտոտրանսպորտային միջոցներով մեկնող և ժամանող քաղաքացիների մաքսային հսկողության երկուդային համակարգ (կարմիր և կանաչ ուղիներ) ներդնելու, մաքսային ձևակերպումների ժամանակահատվածի նկատմամբ մոնիտորինգ սահմանելու, պատկան մարմինների կողմից իրականացվող հսկողությունները իրականացնել նույն վայրում և նույն պահին կատարելու հնարավորությունն ընձեռող «Մեկ կանգառ» սկզբունքը ներդնելու, մաքսային հսկողության նպատակով ներկայացվող փաստաթղթերի ցանկը միջազգային լավագույն փորձին համապատասխանեցնելու, Միջազգային ճանապարհային փոխադրումների կոնվենցիայի (TIR) շրջանակներում ապրանքներ փոխադրող տրանսպորտային միջոցների համար պարզեցված մաքսային ընթացակարգեր սահմանելու, բարեխիղճ տնտեսվարող սուբյեկտների համար պարզեցված ընթացակարգեր սահմանելու միջոցով.
- **Ապահովել տնտեսվարող սուբյեկտների միջև մաքսային բեռի արդարացի բաշխումը և մաքսային ծառայության թափանցիկությունն ու օրինականությունը.** պետական ծառայողների հովանավորչությունը ձեռնարկատիրական գործունեության ոլորտում բացառելու, մաքսային

վարչարարության օրենսդրական կարգավորման հստակեցման և պարզեցման, թափանցիկ և պարզեցված ընթացակարգեր ներդնելու, մաքսային արժեքների որոշման հստակ չափանիշներ սահմանելու և դրանց մատչելիությունը, այդ թվում՝ ինտերնետի միջոցով ապահովելու, տնտեսվարողների նկատմամբ հավասար պայմաններում հավասար մոտեցումների կիրառման նկատմամբ վերահսկողություն սահմանելու, մաքսային վարչարարության բարեփոխումների ընթացքի վերաբերյալ հանրային իրազեկման, բարեխիղճ տնտեսվարող սուբյեկտների և իրավախախտում իրականացնողների վերաբերյալ տեղեկատվությունը մաքսային ծառայության ինտերնետային կայքում տեղադրելու, մաքսային ծառայության պաշտոնական էլեկտրոնային կայքի և թեժ հեռախոսագծի միջոցով մաքսային մարմնի ղեկավարի, քաղաքացիների և տնտեսվարողների միջև ուղիղ հաղորդակցությունն ապահովելու, տնտեսվարողներին մաքսային ընթացակարգերի և տեղեկատվական տեխնոլոգիաների վերաբերյալ տեխնիկական աջակցություն տրամադրելու միասնական համակարգ ներդնելու միջոցով:

4.5. Կրթության ոլորտ

182. Կրթության ոլորտում ՀՀ Կառավարությունը **2008-2012**թթ. նախատեսում է էականորեն բարելավել կրթության որակը և հասանելիությունը բնակչության անապահով խմբերի համար: Այս նպատակին հասնելու նախապայմանը կրթության ոլորտում կոռուպցիոն ռիսկերի էական կրճատումն է: Կրթության ոլորտի զարգացման պետական քաղաքականության երկու հիմնական ուղղությունները՝ ոլորտի ֆինանսավորման ծավալների կտրուկ աճի արդյունավետությունը և **12-ամյա** հանրակրթության համակարգի գործունեությունը հնարավոր է միայն այս ոլորտում կառավարման արդյունավետության բարձրացման պարագայում: Մասնավորապես, կրթության ոլորտին ուղղվող ծախսերի շարունակական աճն իմաստ ունի միայն հանրային ֆինանսների առավել արդյունավետ ու նպատակային օգտագործման, հետևաբար նաև ոլորտում կոռուպցիայի նվազեցման պարագայում:

183. Հատկանշական է, որ **բնակիչների շրջանում կոռուպցիայի ընկալման մակարդակը** մեծապես պայմանավորված է կրթության ոլորտում կոռուպցիայի տարածվածությանը տրված գնահատանով: Այսպես, բնակիչների **91.8** տոկոսը կրթության ոլորտը բնորոշվել են որպես այս կամ այն չափով կոռումպացված¹²: Կոռուպցիայի տարածվածության ընկալման այս ցուցանիշով կրթության ոլորտը զիջում է միայն ընտրական համակարգին: Ավելին, որպես երկրորդային կոռումպացված ոլորտ կրթության ոլորտը գլխավորում է ոլորտների ու ծառայությունների ցանկը: Քաղաքացիների նման ընկալումը, ըստ էության, պայմանավորված է նաև կրթության ոլորտի հետ բնակչության հիմնական հատվածի առավել շարունակական և հաճախակի շփումներով:

184. Կրթության ոլորտում առկա կոռուպցիոն ռիսկերը և երևույթները ունեն մի շարք էական առանձնահատկություններ: Կրթության ոլորտում կոռուպցիոն երևույթները համեմատաբար բաց են և սոցիալական բնույթ ունեն: Ավելին, քանի որ կրթության ոլորտում իրականացվում են դաստիարակչական և առաջնային սոցիալիականացման գործառնություններ, ոլորտում առկա կոռուպցիոն երևույթները էականորեն ազդում են ապագա քաղաքացու ձևավորման վրա: Միաժամանակ, կրթության ոլորտում կոռուպցիայի համեմատաբար հրապարակային դրսևորումները էականորեն վատթարացնում են այս ոլորտում կոռուպցիայի ընկալումը: Օրինակ, հանրակրթական դպրոցում անգամ մեկ մասնակցի ներգրավմամբ կոռուպցիոն դրսևորումն անմիջականորեն արձագանքվում է դպրոցական ողջ համայնքի շրջանում:

185. Հաշվի առնելով կրթության ոլորտում կոռուպցիայի առավելապես գործառնական և վարչական տեսակների տարածվածությունը՝ առանձնահատուկ է նաև այս ոլորտում կոռուպցիայի դեմ պայքարի միջոցների համադրությունը: Այսպես, կրթության ոլորտում առավել կարևորվում են կոռուպցիայի դեմ պայքարի կանխարգելիչ և կրթալուսավորչական միջոցները՝ կոռուպցիայի քրեականացման միջոցների սոսկ սահմանափակ կիրառմամբ: Առանձնապես կարևորվում է նաև կրթության ոլորտում կոռուպցիայի դեմ պայքարում քաղաքացիական հասարակության լայն ներգրավումը: Մասնավորապես, կարևորվում են, կրթության ոլորտում առկա համակարգային կոռուպցիոն ռիսկերի բացահայտումն ու դրանց կրճատումը՝ ընթացակարգային փոփոխությունների ճանապարհով, օրինական ընթացակարգերի օգտավետության խթանումը՝ այլընտրանքային կոռուպցիոն գործարքների համեմատ, և կոռուպցիոն երևույթների դեմ հասարակության շրջանում

¹² Կոռուպցիայի ընկալումները Հայաստանում 2006, S24/ԹԻ:

անհանդուրժողականության վերաբերմունքի ձևավորումն ու բարոյական պատժի մեխանիզմների կիրառումը:

186. Կրթության տարբեր մակարդակներում և համակարգերում առկա կոռուպցիոն ռիսկերն առավել ակնհայտ ու վտանգավոր են հատկապես կրթության տարբեր մակարդակների շփման եզրերում, ինչը խորացնում է կրթության ոլորտում կոռուպցիայի համակարգային բնույթը: Հետևաբար, կրթության ոլորտում կոռուպցիոն ռիսկերի կրճատմանն ուղղված միջոցառումները չպետք է սահմանափակվեն կրթության առանձին մակարդակին յուրահատուկ խնդիրներով: Ավելին, կրթության ոլորտում առկա կոռուպցիոն ռիսկերը սերտորեն աղերսվում են աշխատաշուկայի ներկա կառուցվածքին: Այսպիսով, կրթության ոլորտում կոռուպցիայի դեմ պայքարի միջոցներն ուղղված են, մի կողմից կրթության յուրաքանչյուր մակարդակում առկա կոռուպցիոն ռիսկերի կրճատմանը, և միաժամանակ, կրթության մեկ մակարդակից մյուսին անցնելու գործընթացում առկա կոռուպցիոն ռիսկերի բացահայտմանն ու կանխարգելմանը:

187. **Կրթության ոլորտի գործառնական ինստիտուտները**, այդ թվում՝ միասնական թեստավորման, գնահատման, կրթության տեսչության և այլ ինստիտուտները, կարևորվում են թե կրթության ոլորտում, թե ներինստիտուցիոնալ կոռուպցիոն ռիսկերի կրճատման առումով: Այսպես, կրթության ոլորտում օրինականության ապահովման նկատմամբ պետական վերահսկողության իրականացման գործում Կրթության պետական տեսչության դերակատարման մեծացումն ու կարողությունների զարգացումը պետք է ուղղված լինեն ոչ միայն օրենսդրության պահանջներին անհամապատասխանության բացահայտմանը, այլ կառուպցիայի կանխարգելմանը և տեսչության կայացմանը՝ որպես կրթության ոլորտի զարգացման քաղաքականությունը ուղղորդող: Կրթության պետական տեսչության գործառնականությունները կարգավորված են օրենսդրություն¹³: Այդուհանդերձ, տեսչության օրենսդրորեն սամանված լիազորությունները, կրթության պետական տեսչության իրավասություններն ու պարտականությունները, ինչպես նաև կրթության բնագավառի պետական տեսչավորման գործընթացի իրականացման կարգը լիարժեք կերպով չեն ապահովում տեսչության առջև դրված նպատակների ու խնդիրների իրագործումը:

188. **Կրթության սուբյեկտների ապակենտրոնացված կառավարման ինստիտուտը** դեռևս զարգացման նախնական փուլում է, իսկ կառավարման և վերահսկողության գործառնականություններում մասնակցային գործընթացներին պատշաճ դեր չի հատկացվում: Դպրոցների օրինակելի կանոնադրությունը լիարժեք կերպով չի համապատասխանում գործող պրակտիկային: Պատշաճ կերպով թափանցիկ և հրապարակային չէ դպրոցի կառավարմանն առնչվող տեղեկատվությունը:

189. Գործող ընթացակարգերը կադրերի ընտրության և նշակման հայեցողական որոշումների մեծ հնարավորություններ են ստեղծում, բավարար չափով թափանցիկ չեն, չեն բացառում շահերի բախումը կադրային նշանակումներում և մասնագիտական առաջխաղացման գործում, ուստի չեն երաշխավորում դպրոցներում մանկավարժական որակյալ կադրերի առկայությունը և բարեխղճությունը հանրային ծառայությունների այս հատվածում:

190. Շարունակական կատարելագործման կարիք ունեն գիտելիքների գնահատման համակարգը, այդ թվում՝ գնահատման միասնական չափորոշիչները, դրանց կիրառման գործնական պրակտիկայի պարբերական ամբողջականացմանն ուղիով:

191. Հանրակրթական **դպրոցին տրամադրվող համայնքային աջակցության կարգավորումը և ընթացակարգերը** անկատար են, կամավորականության և ծնողական համայնքի ինքնակազմակերպան սկզբունքների կիրառման տարամեկնաբանությունների հնարավորություն են ստեղծում և չեն ապահովում գործընթացի պատշաճ թափանցիկությունն ու հաշվետվողականությունը: Մտահոգիչ է նաև կրթության ոլորտում ոչ պաշտոնական վճարների առկայությունը, ինչպես նաև կրթական հաստատությունների կողմից և/կամ միջոցով մատուցվող ծառայությունների կարգավորումը: Մասնավորապես, կրթական հաստատություններում գործնականում երբեմն իրականացվում է կրթական գործընթացի հետ անմիջական կապ չունեցող գործարքներ՝ ի շահ երրորդ կողմի: Լիարժեք կերպով ապահովված չէ հանրակրթական դպրոցներում գույքի և նյութական միջոցների շրջանառության թափանցիկությունն ու հաշվետվողականությունը:

192. Հանրակրթական **դպրոցներում անհարգելի բացակայությունները** նույնպես կրում են մի շարք կոռուպցիոն ռիսկեր: Մասնավորապես, այդ պատճառներից են արտադասարանական

¹³ «Կրթության պետական տեսչության մասին» 2005թ. նոյեմբերի 15-ի ԳՅ օրենք:

պարապմունքները, աշակերտների միջև և աշակերտների ու ուսուցիչների միջև առկա կոնֆլիկտները, ինչպես նաև «պաշտպանությունը ֆինանսական կորուստներից», երբ աշակերտը անհարգալի բացակայում է դասերից՝ խուսափելու համար դպրոցում հայտարարված կամ սպասվող դրամահավաքից: Հատկանշական է, որ դպրոցական անհարգելի բացակայությունների հարցում կոռուպցիոն ռիսկերը գտնվում են նաև բարեկեցիկ ընտանիքների աշակերտների հետ հարաբերություններում¹⁴: Մտահոգիչ է նաև այպես կոչված «մեռած հոգիների» խնդիրը, երբ աշակերտի բացակայության պայմաններում նրա գոյությունը փաստաթղթավորվում է:

- 193.** Այսպիսով կրթության ոլորտում թափանցիկության, հրապարակայնության, հաշվետվողականության, օրինականության ապահովման և կոռուպցիոն ռիսկերի կրճատման նպատակով նպատակով անհրաժեշտ է.
- **Ապահովել կրթության ոլորտի զարգացման քաղաքականության մեջ կոռուպցիոն ռիսկերի շարունակական բացահայտումն ու կանխարգելումը.** ՀՀ կրթության քաղաքականության մշակման գործընթացում իրականացվող վերլուծությունների շարքում կրթության յուրաքանչյուր մակարդակում առկա կոռուպցիայի ընկալման, ռիսկերի բացահայտման, համակարգերի կառավարման թափանցիկության, մասնակցության, և այլ հետազոտություններ ներառելու, ավագ դպրոցի կառավարմանն առնչվող կոռուպցիոն ռիսկերի գնահատումն ու կանխարգելման ուղղված մոտեցումները ներառելու, բարձրագույն և միջին մասնագիտական կրթության հաստատությունների կառավարման մարմիններում կառավարության ներկայացուցիչների կողմից առանձին հաստատությունում կոռուպցիոն ռիսկերի կանխարգելման և բացահայտման հարցերը կառավարման մարմնի օրակարգում պարտադիր կերպով ընդգրկման պահանջ և համապատասխան ընթացակարգեր սահմանելու միջոցով.
 - **Բարձրացնել կրթության ոլորտի կառավարման արդյունավետությունն ու հաշվետվողականությունը.** կրթության ոլորտում վերահսկողական գործառնություններ իրականացնող և ուսումնական հաստատություններում ստուգումներ և ուսումնասիրություններ իրականացնող մարմինների լիազորությունների տարանջատումը և գործառնությունները հստակեցնելու, այդ մարմինների գործունեությունը համակարգելու և դրանց միջև միջգերատեսչական համագործակցությունն ապահովելու, Կրթության պետական տեսչության նպատակների և խնդիրների իրականացմանը համահունչ օրենսդրական գործիքներ սահմանելու և ընթացակարգեր ներդնելու, կրթության ոլորտի կառավարման համակարգում կոռուպցիայի վերաբերյալ իրազեկման և հակակոռուպցիոն թեմաներով վերապատրաստման ծրագրերի իրականացման միջոցով:
 - **Բարձրացնել հանրակրթական դպրոցների կառավարման թափանցիկությունը, հրապարակայնությունը, հաշվետվողականությունն ու օրինականությունը.** դպրոցների կառավարման օրենսդրական կարգավորման գործնական պրակտիկական շարունակականորեն վերլուծելու և ամփոփելու, դպրոցների օրինակելի կանոնադրությունը գործող պրակտիկային համադրելու, ՀՀ Հանրակրթության ոլորտում համադպրոցական ցանցի ընդլայնման և էլեկտրոնային ուսուցման բարելավման հայեցակարգին համապատասխան կրթության կառավարման տեղեկատվական համակարգ ներդնելու և դրա ընձեռած հնարավորությունների կիրառմամբ թափանցիկ և հետևողական կերպով դպրոցի կառավարմանն առնչվող լիարժեք տեղեկատվությունը, այդ թվում՝ աշակերտի առաջադիմության ցուցանիշները, դպրոցական համայնքին հասանելի դարձնելու հստակ ընթացակարգեր ներդնելու, ծնող-դպրոց գրավոր հարաբերությունների պրակտիկան, այդ թվում՝ թղթային և էլեկտրոնային կապի միջոցներով, ներդնելու, դպրոցի կառավարման և վերահսկողության գործառնություններում ծնողական, մանկավարժական և մեթոդական խորհուրդների գործուն մասնակցությունն ապահովող ընթացակարգեր ներդնելու, ավագ դպրոցում աշակերտների, աշակերտական խորհուրդների դերը և լիազորությունները օրենսդրորեն ընդլայնելու և համապատասխան ընթացակարգեր ներդնելու, դպրոցներում պարբերական գույքագրման ընթացակարգեր և էլեկտրոնային հաշվապահության պրակտիկա ներդնելու, դպրոցներում անհարգելի բացակայությունների նկատմամբ վերահսկողությունը խստացնելու, դպրոցից դպրոց բարձր դասարաններում սովորող աշակերտների տեղաշարժերի

¹⁴ «Քաղաքացիական հասարակության համայնքային խմբերի կողմից ԳՅ առողջապահության և կրթության ոլորտներում հակակոռուպցիոն մասնակցային մոնիտորինգի արդյունքների» 2007թ. ամփոփ հաշվետվություն, էջ 30:

նկատմամբ խիստ վերահսկողություն սահմանելու, դպրոցներում առկա ոչ պաշտոնական վճարումները կանոնակարգելու և ստվերային միջոցներն իրավական դաշտ բերելուն մեխանիզմներ ներդնելու, ծառայությունների դիմաց վճարումները, նվիրատվություններն ու դպրոցին համայնքի ֆինանսական աջակցությունը բացառապես անկախիկ եղանակով իրականացման ընթացակարգեր ներդնելու, յուրաքանչյուր նման գործարքի պարագայում գումարի բնույթն ու հատկացման նպատակը գրավոր արձանագրելու պարադիք պայման սահմանելու միջոցով:

- **Բարձրացնել կրթական հաստատություններում կադրերի ընտրության, նշանակման, պաշտոնեական առաջխաղացման և աշխատանքային հարաբերությունների կարգավորման թափանցիկությունը, հրապարակայնությունն ու օրինականությունը.** մանկավարժական կադրերի ընտրության մրցութային գործընթացը կարգավորելու, կադրերի ընտրության, նշանակման և պաշտոնեական առաջխաղացման հստակ մեխանիզմներ և ընթացակարգեր ներդնելու, կրթական հաստատությունների աշխատակիցների համար պաշտոնի նկարագրություն և վարքագծի միասնական կանոններ սահմանելու, հանրային ծառայության այս ոլորտում շահերի բախման հայտարարագրերի կիրառման կարգը սահմանելու, ուսուցչի և դասախոսի անձնական գործը որպես հրապարակային փաստաթուղթ սահմանելու և դրա հրապարակման կարգը ներդնելու, հասարակական կառույցների կողմից կրթական հաստատությունների և մանկավարժների գործունեության գնահատման ինքնակարգավորման ինստիտուտ ներդնելու միջոցով:
- **Ապահովել գիտելիքի գնահատման համակարգերի թափանցիկությունն ու օրինականությունը.** միջազգային լավագույն փորձի վրա հիմնված գնահատման միասնական, անկախ համակարգը լիարժեք և հետևողական կերպով ներդնելու, գնահատման համակարգի կիրառման նկատմամբ արտաքին վերահսկողություն սահմանելու և ներքին վերահսկողության հետևողական ընթացակարգեր ներդնելու, միասնական գնահատման ու դպրոցում առկա գնահատականների վերլուծություններ պարբերաբար իրականացնելու, դրանց հիման վրա հանրակրթության քաղաքականության մեջ պարբերաբար ճշգրտումներ կատարելու, միասնական և ավարտական քննությունների ընթացակարգերի թափանցիկությունն ապահովելու, քննությունների ընթացքի նկատմամբ վերահսկողությանը հասարակական կազմակերպությունների լայն ներգրավումը կանոնակարգելու և ընթացակարգեր ներդնելու, թեստային քննությունների ընթացքում հսկիչների լիազորությունները հստակեցնելու և նրանց կողմից քննությունների կանոնները խախտող աշակերտների նկատմամբ կիրառվող պատժամիջոցների չափանիշներն ու ցանկը սահմանելու միջոցով:

4.6. Առողջապահության ոլորտ

194. Առողջապահության համակարգում կոռուպցիոն ռիսկերը հատկապես շոշափելի են առողջապահական համակարգի կառավարման, ֆինանսավորման, բժշկական որակյալ ծառայությունների մատուցման գործում: Բուժհաստատություններում ներքին կառավարման ցածր արդյունավետությունը, անբավարար թափանցիկությունը և վերահսկողության մեխանիզմների անկատարությունը, պետության կողմից տրամադրված ֆինանսների ոչ նպատակային օգտագործումը ստեղծում են կոռուպցիոն դրսևորումների առաջացման նպաստավոր պայմաններ:
195. Ըստ ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության տնային տնտեսությունների ընտրանքային հետազոտության տվյալների, թե պոլիկլինիկաներում և հիվանդանոցներում, հիվանդները կատարում են «ոչ ֆորմալ» վճարումներ¹⁵: Ըստ SՉԿ/ԹԲ 2006թ. իրականացրած կոռուպցիայի ընկալման վերաբերյալ հարցման արդյունքների՝ առողջապահությունը զբաղեցրել է առաջին տեղը երեք առավել կոռումպացված ոլորտների և ծառայությունների շարքում: Հարցման արդյունքներով պարզվել է, որ 50 000 ՀՀ դրամից ցածր ամսական միջին եկամուտ ունեցող անձինք որպես առաջին ամենակոռումպացված ոլորտ առավել հաճախ նշել են առողջապահությունը: Հատկանշական է, որ ավելի շատ գյուղաբնակներ, քան քաղաքաբնակներ են առաջին հերթին մատնանշել առողջապահությունը որպես առավել կոռումպացված ոլորտ: Քաղաքիների՝ բժշկական օգնություն և

¹⁵ Սոցիոլոգիական հարցման վերջնական հաշվետվություն. «Հանրային ծառայությունների շրջանակում Հազարամյակի Ձարգացման նպատակների(ՅՁՆ)2003-2006թթ. իրականացման գործընթացի արտացոլումը հասարակական կարծիքում» Երևան, 2006-07թթ.:

սպասարկում ստանալու իրավունքին առընչվող առավել տարածված բողոքներն առնչվում են անվճար կամ արտոնյալ պայմաններով դեղեր ձեռք բերելու, պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնություն տրամադրելու կարգին և այլն¹⁶:

196. Անվճար բժշկական օգնության պետական պատվերի հիմքերի և մատուցված բժշկական օգնության որակի համապատասխանության գործընթացի մոնիտորինգը ցույց տվեց, որ անհետաձգելի բժշկական միջամտություն պահանջող վիճակների և հիվանդությունների ցանկը սահմանափակ է և չի արտահայտում իրական կարիքները¹⁷: Երևան քաղաքի հիվանդանոցային օդակի համար սահմանված համավճարային գումարները, հիմնավորված չլինելով կոնկրետ հաշվարկով, չեն ծառայում պաշտոնական վճարների կրճատմանը:

197. Առողջապահական հիմնական ծառայությունների փաթեթն ավելի ծավալուն է պետական բյուջեի իրական հնարավորությունների համեմատ: Հիմքում չունենալով իրատեսական տնտեսագիտական դասակարգում՝ բուժման ընթացիկ գներն չեն արտահայտում իրական ծախսերը, այլ սոսկ անդրադարձնում են բյուջետային ֆինանսավորման ծավալները՝ հող ստեղծելով ոչ պաշտոնական վճարումների համար: Պետական պատվերի շրջանակներում իրականացվող բժշկական օգնության և սպասարկման գների ոչ պատշաճ հիմնավորվածությունն ազդում է նաև բուժհաստատություններում վճարովի առողջապահական ծառայությունների գների ձևավորման վրա: Հիվանդանոցների հետ կնքվող պայմանագրերում սկսած **2000թ.**-ից կիրառվում է սահմանափակ բյուջեի սկզբունքը, որն ուղղված է առաջին հերթին բուժհիմնարկներում պետության պարտքերի կուտակման և հավելագրումների անվերահսկելի գործնթացի կասեցմանը: Այդուհանդերձ, խնդիրը դեռևս պատշաճ կերպով կարգավորված չէ, ինչը համապատասխան պաշտոնյաներին հաճախ հայեցողական որոշումների կայացման հնարավորություն է ընձեռում: Լրացուցիչ պետական ֆինանսավորում ստանալու ակնկալիքով, պետական պատվերի սահմանափակ բյուջեն արհեստականորեն հաճախ ուռճացվում է, ինչը հիմք է հանդիսանում պետական պատվերի կատարողականի հավելագրումների համար: Ավելին, Պետական առողջապահական գործակալության (ՊԱԳ) և բուժհիմնարկների միջև կնքվող պայմանագրում նախապես սահմանվում է տվյալ հիմնարկի տարեկան սահմանափակ բյուջեն՝ այն առավելագույն գումարը, որից ավելի այդ բուժհիմնարկը չի կարող ֆինանսավորվել ՊԱԳ-ի կողմից: Համապատասխանաբար, բուժհիմնարկները վճարվում են ըստ փաստացի դուրս գրված հիվանդների թվաքանակի՝ պետականորեն սահմանված բուժման արժեքով: Նման մոտեցման արդյունքում պետության կողմից երաշխավորված և բուժհաստատությունների կողմից մատուցված բուժօգնության որոշ ծավալներ չեն փոխհատուցվում պետության կողմից, ինչը խաթարում է բուժհաստատությունների գործունեության հաշվետվողականությունը:

198. **Վճարովի բժշկական ծառայությունների** դաշտը գրեթե կանոնակարգված չէ: Վճարովի բուժօգնության գները և դրանց մատուցման կարգը սահմանում են բուժհիմնարկները, ինչի արդյունքում տարբեր բուժհիմնարկներում նույնանման ծառայությունների գները կարող են էականորեն տարբերվել՝ հիմնականում հիմնավորված չլինելով տնտեսագիտական հաշվարկներով: Վճարովի ծառայությունների գնագոյացումը միտված է սովերային եկամուտների մեծացմանը, ցածր՝ ոչ իրատեսական պաշտոնական գների սահմանման միջոցով, հիմք ընդունելով պետպատվերի գները, և միաժամանակ ծառայությունների դիմաց ոչ պաշտոնական վճարումներ պահանջելով: Սովերային դրամաշրջանառությունն իր հերթին անվստահություն է ձևավորում առողջապահության համակարգի բարեփոխումների հանդեպ:

199. Բուժօգնության **որակի գնահատման և վերահսկման չափորոշիչների բացակայությունն** հանգեցնում է տեխնոլոգիական խախտումների, թերի բուժման, անփոփոխ բուժման էլքով դեպքերի, որոնց ֆինանսավորումը կատարվում է ընդհանուր սկզբունքներով: Բնակչության անբավարար **իրազեկությունը** հիվանդի ծախսային բեռի ավելացման լուրջ նախադրյալ է: Իր իրավունքներին, մասնավորապես պետական պատվերով բուժման ծավալներին, անիրազեկ հիվանդը ավելի հաճախ է «ոչ պաշտոնական» վճարումներ կատարում:

200. **2008թ.**-ի ՀՀ առողջապահության նախարարի հրամանով քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների ներգրավմամբ ստեղծվել են մոնիտորինգային հանձնաժողովներ որոնք,

¹⁶ ԳՅ Մարդու իրավունքների պաշտպանի 2006թ. տարեկան զեկույց: Երևան, 2006թ. (<http://www.ombuds.am>):

¹⁷ ՄԱԿ-ի Զարգացման Ծրագրի «Իրազեկման և հակազդեցության բարելավում հայաստանում կոռուպցիայի բացահայտման գործնառնություն» ծրագրի շրջանակներում Քաղաքացիական հասարակության համայնքային խմբերի կողմից ԳՅ առողջապահության և կրթության ոլորտներում հակակոռուպցիոն մասնակցային մոնիտորինգի արդյունքները(Անփոփ հաշվետվություն):

բժշկական ծառայություններից բնակչության բավարարվածությունը գնահատելու նպատակով, իրականացնում են ծննդօգնության պետական հավաստագրի համակարգի ներդրման գործընթացի շարունակական հսկողություն: Այդուհանդերձ, քաղաքացիների մասնակցությունն առողջապահության կառավարմանը, հասարակության իրազեկության աստիճանի բարձրացմանը, կոռուպցիայի հանդեպ անհանդուրժողականության ձևավորմանը և փոփոխությունների հանդեպ վստահության վերականգնմանը մնում է սահմանափակ:

201. Բժշկական հաստատություններում կադրերի ընտրության մրցութային կարգը դեռևս պատշաճ ձևով ներդրված չէ, ինչը բարենպաստ պայմաններ է ստեղծում կադրերի հայեցողական ընտրության և հովանավորչության համար: Բժշկական անձնակազմի օպտիմալ թվաքանակի հաշվարկման համար անհրաժեշտ մեթոդաբանության ու նորմատիվների բացակայության պատճառով հաստիքային ցուցակների ուռճացվածությունը և պետական լիազոր մարմնի կողմից հաստիքանախահաշվային կարգապահության նկատմամբ անբավարար վերահսկողությունը լրացուցիչ կոռուպցիոն ռիսկեր են ստեղծում: Բուժանձնակազմի պաշտոնական ցածր աշխատավարձերը էականորեն նպաստում են ոչ պաշտոնական վճարումների երևույթի արմատավորմանը: Բժշկական հաստատություններում երկու և ավելի ֆիզիկական անձինք հաճախ զբաղեցնում են մեկ դրույք՝ տվյալ հաստիքի համար սահմանված նվազագույն աշխատավարձը վերաբաշխելով հաստիքը զբաղեցնողների միջև:

202. ՀՀ դեղագործության ոլորտում կոռուպցիոն ռիսկեր առկա են դեղերի շրջանառության տարբեր օղակներում և պայմանավորված են թե օրենսդրական կարգավորման, թե ընթացակարգերի թերություններով կամ բացակայությամբ: Դեղերի ստվերային շրջանառության տեսակարար կշիռը դեղերի ընդհանուր շրջանառության մեջ գնահատվում է **50-80%**-ի սահմաններում: Հատկանշական է, որ տնային տնտեսությունների կողմից դեղագործական ապրանքների ձեռքբերման ծավալը **5,65** անգամ գերազանցել է դրանց մանրածախ առևտրով զբաղվող կազմակերպությունների կողմից ցույց տրված վաճառքի ծավալներին: Ավելացել է դեղերի ապրանքային շուկաներում գերիշխող դիրք ունեցող տնտեսվարողների թիվը: Վերջին տարիներին հանրապետությունում ավելացել են կեղծ և որակի ստանդարտներին չհամապատասխանող դեղերի և պետական գրանցում չունեցող դեղերի շրջանառությունը: Դեղաշրջանառության ոլորտի մասնագիտական հսկողության լիազորությունը վերապահված է ՀՀ առողջապահության նախարարությանը, սակայն **2002**թ.-ից ի վեր լիազոր մարմնի կատարած աշխատանքների վերաբերյալ հաշվետվություն չի հրապարակվել: Թեև հատուկ նշանակության դեղորայքի գնումները և բաշխումն իրականացվում են կենտրոնացված կարգով, այդուհանդերձ, սահմանված չեն կենտրոնացված գնումներով ձեռք բերվող դեղերի պահանջարկի որոշման սկզբունքներն ու կարգը: Դեղերի կենտրոնացված գնումների համակարգը բավարար կերպով թափանցիկ չէ, ինչը խաթարում է գնումների արդյունավետության համար անհրաժեշտ մրցակցային միջավայրը: Թերի է նաև մրցույթում հաղթող կազմակերպությունների կողմից դեղերի մատակարարման պայմանագրային պարտավորությունների կատարման հանդեպ պատշաճ վերահսկողության համակարգը, իսկ նման վերահսկողություն իրականացնելու համար պետական լիազոր մարմնի ինստիտուցիոնալ կարողությունները խիստ սահմանափակ են: Հիմնական դեղերի ցանկի վերանայման պարբերականությունը կարգավորված չէ և իրականացվում է հայեցողական սկզբունքով: Ավելին, ՀՀ հիմնական դեղերի ցանկին պոլիլիինիկայի բժշկի նշանակումների համապատասխանեցման գործող ընթացակարգը պատշաճ կերպով չի կանոնակարգում անհրաժեշտ դեղերի ստացման օրինականությունը: Մարդասիրական օգնության խողովակներով ստացված դեղերի վերաբաշխման մեխանիզմները հստակ չեն: Հիվանդանոցները հաճախ հաշվի չեն առնում անհրաժեշտ ծավալի և տեսականու դեղերի իրական պահանջարկը և դեղորայքի գնումներն առանձին դեպքերում հանգեցնում են պետական միջոցների ոչ արդյունավետ օգտագործման և չարաշահումների, ինչպես նաև դեղերի ոչ նպատակային գնման¹⁸: Դեղերի և բժշկական նշանակության այլ ապրանքների ստացման, պահպանման, հաշվառման և բաշխման կարգի թափանցիկության և հաշվետվողականության անկատարությունն անհնարին է դարձնում դեղորայքի շարժի լիարժեք վերահսկումը: Գործող կարգում դեղորայքը հիվանդին հասցնելու օրինականությունն ապահովող դրույթները թերի են: Հիվանդանոցներում բժիշկների կողմից հիվանդներին նշանակված դեղորայքի **26%**-ը ձեռք են բերվում հիվանդների կողմից՝ նույնիսկ հիվանդանոցում այդ դեղերի առկայության

¹⁸ Հիվանդանոցային բժշկական հաստատության ֆինանսական մուտքերը, անկախ ֆինանսավորման աղբյուրից, հաշվառվում են ընդհանուր դրամարկղում և առաջին հերթին ուղղվում են կոլեկտիվի անդամների աշխատանքի վարձատրությանը, դեղորայքային և բժշկական նշանակության այլ ապրանքների ապահովմանը:

պարագայում¹⁹: Պետպատվերով բուժվող հիվանդները, բացառությամբ առաջին անհրաժեշտության դեղերի, բժիշկների կողմից նշանակված մնացած դեղերը ձեռք են բերում ինքնուրույն: Հիվանդանոցներում առկա է պիտանելիության ժամկետը լրացած դեղերը և բժշկական պարագաները հիվանդների վրա դուրս գրելու հնարավորություն: Ներհիվանդանոցային դեղաշրջանառության մեխանիզմի անկատարության արդյունքում, դեղորայքային բուժման տեխնոլոգիական խախտումները, հաճախ դրսևորվում են բժշկի կողմից ներկայացված դեղորայքի չտրամադրման, ավել կամ պակաս տրամադրման դեպքերով²⁰: Անվճար կամ արտոնյալ պայմաններով դեղերի տրամադրման գործընթացը անկատար է նաև ամբուլատոր-պոլիկլինիկական հաստատություններում²¹: Օգտագործման համար ոչ պիտանի դեղերի պարտադիր ոչնչացման կարգը դեռևս ընդունված չէ: Արդյունքում, 1998թ-ից մինչ օրս հանրապետությունում կուտակվել է շուրջ 150 տոննա ժամկետանց դեղորայք, ինչը զանազան չարաշահումների հնարավորություններ է ստեղծում:

203. Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում հանրապետության ամբողջ տարածքում բնակչության բոլոր խմբերի համար երաշխավորվում է **արտահիվանդանոցային անհետաձգելի շտապ բուժօգնություն և հոսպիտալացում՝** ընդհանուր բժշկական (գծային), ֆեդերատիվ բրիգադաների, ինչպես նաև սանիտարական ավիացիայի կանչերի միջոցով: Շտապ բժշկական օգնության մեկ կանչի համար սահմանված գինն իրատեսական չէ, ինչը հաճախ հանգեցնում է բնակչության կողմից կատարվող ոչ պաշտոնական վճարումների: Սահմանափակ բյուջեի շրջանակներից դուրս իրականացված կանչերը որոշակի ռիսկի տոկոսը (5%) գերազանցելու դեպքում պետության կողմից չեն ֆինանսավորվում, ինչը հանգեցնում է պետական միջոցների անարդյունավետ օգտագործման և ոչ պաշտոնական վճարումների, իսկ ցածր կատարողականի դեպքում՝ պայմանագրային ծավալներին համապատասխանեցնելու նպատակով մեծացնում փաստացի կանչերի հնարավոր հավելագումների ռիսկը: Հստակ սահմանված չեն բնակչության առանձին (հատուկ) խմբերում չընդգրկված անձանց՝ անհետաձգելի բժշկական օգնություն պահանջող հիվանդություններն ու վիճակները, ինչը հայեցողական որոշումների և տարամեկնաբանությունների լայն դաշտ է ստեղծում²²:

204. **Ամբուլատոր-պոլիկլինիկական (ԱՄՊ)** համակարգում սկսած 2006թ. հունվարի 1-ից բնակչության բոլոր խավերի բժշկական օգնությունը և սպասարկումն ամբողջությամբ մատուցվում է պետական պատվերի շրջանակներում: Այդուհանդերձ, ԱՄՊ օղակում առկա են բուժօգնության դիմաց ոչ պաշտոնական վճարումների ռիսկեր, հատկապես՝ որակյալ բուժօգնություն ստանալու ակնկալիքով: ԱՄՊ համակարգում դիտարկման²³ արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ անվճար կամ արտոնյալ պայմաններով դեղերի հատկացումը կարգավորող հիմնական փաստաթղթում առկա բաց թողումներն ու թերությունները կոռուպցիոն ռիսկեր են պարունակում: Առողջապահության բյուջեով հաստատված ֆինանսական միջոցների ոչ ռիթմիկ ֆինանսավորման հետևանքով առաջանում են ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված խոցելի խմբերի դեղորայքի օրինական պահանջների մերժման դեպքեր: Անվճար կամ արտոնյալ պայմաններով դեղերի ձեռք բերման համար ֆինանսական սահմանաքանակների հաշվարկման հիմքում ընկած է ոչ թե իրական կարիքը, այլ տարածքային սպասարկվող մեկ բնակչի հաշվով ֆիքսված չհիմնավորված արժեք: Բժշկի նշանակումները ՀՀ հիմնական դեղերի ցանկին համապատասխանեցնելու պահանջը ցանկի ներկա պահանջներին չբավարարելու պարագայում դեղորայքի օրինական պահանջների մերժման հիմնական պատճառն է:

205. Դեռևս ընդունված չեն բնակչության **սանիտարա-համաճարակային անվտանգության** ապահովման օրենսդրական պահանջների իրականացման համար անհրաժեշտ ընթացակարգերը: ՀՀ առողջապահության նախարարության կազմում գործող Հայաստանի Հանրապետության պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչությունն առավելապես զբաղվում է ընթացիկ

¹⁹ ՄԱԿ-ի Ձարգացման Ծրագրի «Իրազեկման և հակազդեցության բարելավում հայաստանում կոռուպցիայի բացահայտման գործնառնություն» ծրագրի շրջանակներում Քաղաքացիական հասարակության համայնքային խմբերի կողմից ՀՀ առողջապահության և կրթության ոլորտներում հակակոռուպցիոն մասնակցային մոնիտորինգի արդյունքները (Ամփոփ հաշվետվություն):

²⁰ Տե՛ս նույն տեղում

²¹ Տե՛ս նույն տեղում:

²² ՀՀ առողջապահության նախարարի հրամանով հաստատված «Պետության կողմից երաշխավորված անվճար հիվանդանոցային բժշկական օգնություն պահանջող հիվանդությունների և վիճակների ցանկ»

²³ «Քաղաքացիական հասարակության համայնքային խմբերի կողմից ՀՀ առողջապահության և կրթության ոլորտներում հակակոռուպցիոն մասնակցային մոնիտորինգի արդյունքների» 2007թ. ամփոփ հաշվետվություն

վերահսկողության գործունեությամբ՝ ի վնաս կանխարգելիչ, վերլուծական և նորմատիվ բնույթի աշխատանքների: Մանիտարական գրքույկների առկայության և պատշաճ մակարդակով բժշկական գննության կատարման նկատմամբ իրականացվող վերահսկողության թափանցիկությունը և հաշվետվողականությունը մնում են անբավարար:

206. Այսպիսով առողջապահության ոլորտում թափանցիկության, հաշվետվողականության և օրինականության ապահովման, կոռուպցիոն ռիսկերի կրճատման նպատակով անհրաժեշտ է.

- **Բարելավել առողջապահության համակարգում գնագոյացման համակարգը և վերացնել ոչ պաշտոնական վճարումների համար նպաստավոր պայմանները.** բժշկագիտական և տնտեսագիտական չափորոշիչներ մշակելու և ներդնելու, ծառայությունների ծախսատարության, ինքնարժեքի վրա հիմնված իրատեսական բուժօգնության գներ սահմանելու, վճարովի բժշկական օգնության և ծառայությունների սակագների պետական կարգավորման մեխանիզմներն օրենսդրորեն կարգավորելու, պետական բժշկական հաստատություններում գործող վճարովի բժշկական օգնության և ծառայությունների ժամանակավոր գնացուցակները պետական լիազոր մարմնի կողմից յուրաքանչյուր տարի քննարկելու և հաստատելու, բուժհաստատություններում հիմնադրի կողմից գնագոյացման և վճարովի գործունեության արդյունքում գոյացած հասույթի բաշխման մեխանիզմները ներդնելու, պետական լիազոր մարմնի կողմից բուժհաստատությունների վերահսկողությունը ծախսային առաջնահերթությունների պահպանման նկատմամբ խստացնելու, ֆինանսական փոխհատուցման համավճարային համակարգի ներդրումը բժշկական օգնության համար անհրաժեշտ իրական ծախսերի և պետության կողմից նախատեսվող ծախսերի տարբերությամբ հիմնավորելու, բնակչության և բուժաշխատողների շրջանում համավճարային սկզբունքի վերաբերյալ համակողմանի և ընդգրկուն քարոզչական և կրթալուսավորչական աշխատանքներ իրականացնելու միջոցով:
- **Կրճատել ստվերային դրամաշրջանառության ծավալները, բարձրացնել պետական պատվերի թափանցիկությունը, հասցեականությունը և հաշվետվողականությունը, բարձրացնել բուժհաստատությունների գործունեության թափանցիկությունն ու հաշվետվողականությունը.** պետության կողմից ֆինանսավորվող առողջապահական ծառայությունների շրջանակը շարունակաբար հստակեցնելու և ՀՕՓ-ն պարբերաբար վերանայելու և փոփոխելու, բնակչության զգալի հատվածն ընդգրկող սոցիալական պաշտպանության հասցեագրված համակարգի՝ պարտադիր բժշկական ապահովագրության համակարգը հաջորդականորեն ներդնելու, պետական պատվերի պայմանագրային ծավալների հիմնավորվածությունն ապահովելու, նախքան պետական պատվերի պայմանագրերի կնքումը նախորդ տարիների կատարողականները և դրանց ծավալների հնարավոր մեծացման միտումները մանրակրկիտ վերլուծելու, պետական լիազոր մարմնի կողմից պետական պատվերի պայմանագրերի կնքման գործնթացի նկատմամբ վերահսկողությունը խստացնելու և պետական պատվերի հնարավոր հավելագրումներն ու բուժհաստատությունների վնասաբեր գործունեությունը կանխելու, անհետաձգելի բժշկական միջամտություն պահանջող վիճակների և հիվանդությունների ցանկը հստակեցնելու, ցանկի թափանցիկությունը և հնարավոր պարզությունն ապահովելու, ՀՀ առողջապահության համակարգում տվյալների միասնական բազա ստեղծելու, բուժհաստատություններում բժշկական, վիճակագրական և ֆինանսական տվյալների հաշվառման էլեկտրոնային միասնական համակարգեր ներդնելու, յուրաքանչյուր բուժհաստատության պաշտոնական կայքում հաստատված ցանկով պարտադիր տեղեկատվություններ տեղադրելու միջոցով:
- **Ապահովել հիվանդների իրավունքների լիարժեք իրականացումը.** հիվանդների և բուժաշխատողների իրավունքների ու պարտականությունների օրնադրական ամրագրումն հստակեցնելու, այդ իրավունքների իրականացման գործուն մեխանիզմներ ներդնելու, դրանց խախտման դեպքում բողոքարկումների ընթացակարգեր ներդնելու, պացիենտների իրազեկման հասցեական մեխանիզմներ, այդ թվում բուժօգնության պետական հավաստագրեր, ներդնելու, պետական պատվերով հիվանդանոցային բուժում ստացող հիվանդին իր իրավունքների և բուժօգնության ծավալների մասին ընդունարանից սկսած իրազեկելու, բժշկական օգնության և ծառայությունների որակի գնահատման և վերահսկման չափորոշիչներ սահմանելու միջոցով:
- **Ապահովել առողջապահության ոլորտում կադրերի մրցութային ընտրությունը և բուժաշխատողների զբաղեցրած պաշտոններին նրանց համապատասխանությունը.**

բուժանձնակազմի թափուր հաստիքների ընտրության մրցութային կարգ սահմանելու, բուժանձնակազմի օպտիմալ թվաքանակի չափորոշիչներ սահմանելու, պետական մասնակցությամբ բժշկական հաստատություններում հաստիքացուցակների հաստատման գործընթացի նկատմամբ վերահսկողություն սահմանելու, բուժաշխատողների նվազագույն աշխատավարձի միասնական դրույքաչափեր սահմանելու միջոցով:

- **Կրճատել դեղերի ստվերային շրջանառությունը և բարձրացնել դեղաշրջանառության ոլորտի մասնագիտական հսկողության արդյունավետությունը.** դեղաշրջանառության ոլորտի մասնագիտական հսկողությունը օրենսդրորեն կարգավորելու, դեղաշրջանառության վերահսկման, այդ թվում՝ մոնիտորինգի և տվյալների հավաքագրման ու վերլուծության, մասնագիտացված կառույց ստեղծելու, դրա գործունեության համար անհրաժեշտ ընթացակարգեր ներդնելու և ինստիտուցիոնալ կարողություններ ապահովելու, դեղագործական գործունեության լիցենզավորման համակարգի շարունակական կատարելագործման, պետական ծրագրերի շրջանակներում դեղերի պահանջարկի գնահատման համակարգ ներդնելու, որակի ստանդարտներին չհամապատասխանող և կեղծված դեղերի արտադրությունը և տարածումը քրեականացնելու, դեղերի որակին և հիվանդի առողջությանը սպառնացող մասնագիտական խախտումների համար վարչական պատասխանատվություն սահմանելու, լաբորատոր, կլինիկական գործունեության, արտադրական, մատակարարման և դեղատնային գործունեության նկատմամբ նվազագույն պահանջներ և դրանց կատարման նկատմամբ պետական վերահսկողություն սահմանելու միջոցով:
- **Ապահովել դեղորայքի պետական գնումների և բաշխման կենտրոնացված գործընթացի թափանցիկությունը, հաշվետվողականությունն ու օրինականությունը.** դեղերի պետական գնման համար նախատեսվող ֆինանսական միջոցների տեսակարար կշիռը առողջապահության ոլորտի պետական բյուջեի հատկացումներում էականորեն մեծացնելու, դեղերի գնումների գործընթացի կարգավորումը հստակեցնելու, հիմնական դեղերի ցանկում ընդգրկված դեղերի գների շարունակական դիտարկման և ապրանքային շուկաներում մրցակացության պաշտպանության, դեղերի կենտրոնացված պետական գնումների գործընթացի թափանցիկությունը և հաշվետվողականությունը բարձրացնելու, դեղերի կենտրոնացված գնումների մրցություն հաղթող կազմակերպությունների կողմից մատակարարման պայմանագրային պարտավորությունների կատարման նկատմամբ վերահսկողությունը խստացնելու միջոցով:
- **Ապահովել ամբուլատոր պոլիկլինիկաներում անվճար կամ արտոնյալ պայմաններով դեղերի տրամադրման գործընթացի թափանցիկությունը, հաշվետվողականությունն ու օրինականությունը.** Հիմնական դեղերի ցանկում ընդգրկված դեղերի համար պետության կողմից փոխհատուցման համակարգի կարգավորումը հստակեցնելու և ընթացակարգեր ներդնելու, Հիմնական դեղերի ցանկի պարտադիր վերանայման չափորոշիչները և պարբերականությունը սահմանելու, հիվանդներին և բուժաշխատողներին՝ իրենց իրավունքների մասին հասցեական իրազեկման և բողոքարկման մեխանիզմներ ներդնելու, առողջապահության մասնագետների և հիվանդների համար դեղերի էլեկտրոնային տեղեկատվական համակարգեր ստեղծելու միջոցով:
- **Ապահովել մարդասիրական օգնության շրջանակներում դեղերի ստացման, պահպանման և բաշխման թափանցիկությունը, հաշվետվողականությունն ու օրինականությունը.** մարդասիրական խողովակներով ներկրվող դեղերի ստացման, պահպանման և բաշխման ընթացակարգերը հստակեցնելու, դրանց թափանցիկությունը բարձրացնելու, մարդասիրական օգնության շժրջանակներում դեղերի ստացման, պահպանման և բաշխման նկատմամբ պատշաճ վերահսկողություն սահմանելու, մարդասիրական օգնության շրջանակներում դեղաշրջանառության վերաբերյալ տեղեկատվական հոսքերի կարգավորման և այդ դեղերի վերաբաշխման հստակ մեխանիզմներ ներդնելու, մարդասիրական դեղեր տրամադրող կազմակերպությունների հետ իրականացվող գործառնությունները համակարգող և պահանջարկն ու մնացորդներն ուսումնասիրող պետական լիազոր մարմնի իրավասությունները սահմանելու, դեղերի գովազդի շարունակական դիտարկումն ապահովելու և վերահսկողությունը խստացնելու միջոցով:

- Ապահովել ներհիվանդանոցային դեղաշրջանառության թափանցիկությունը, հաշվետվողականությունն ու օրինականությունը.** դեղաբուժության օպտիմալ սխեմաներ և դրանց կիրառման նկատմամբ մասնագիտական վերահսկողություն սահմանելու, հիվանդանոցային բուժհաստատություններում ծախսային առաջնահերթությունների պահպանման նկատմամբ վերահսկողությունը խստացնելու, հիվանդանոցային բուժհաստատություններում դեղորայքի չտրամադրման դեպքում պայմանագրային հիմունքներով սահմանված ֆինանսական պատժամիջոցները վերանայելու, վճարովի սկզբունքով իրականացվող բուժօգնության գնի մեջ դեղորայքային ծախսերի պարտադիր ներառում և դրա նկատմամբ վերահսկողություն սահմանելու, հիվանդանոցային դեղաթերապևտիկ կոմիտեների գործունեության ընթացակարգերի հստակեցման, դրանց գործունեության հանդեպ արտաքին վերահսկողություն սահմանելու միջոցով:
- Ապահովել դեղերի ոչնչացման գործընթացի օրինականությունը.** ժամկետանց և օգտագործման համար ոչ պիտանի դեղերի անվտանգ ոչնչացման կարգ սահմանելու, դրա կիրարկման հանդեպ վերահսկողություն սահմանելու և կարգի խախտումների համար պատասխանատվություն սահմանելու միջոցով:
- Բարձրացնել շտապ բժշկական օգնության համակարգի արդյունավետությունը, թափանցիկությունն ու հաշվետվողականությունը.** պետական պատվերով իրականացվող շտապ բժշկական օգնության կանչերի համար սահմանված գների հիմնավորվածությունը բարձրացնելու, շտապ օգնության կայան (բաժանմունք) դիմած բոլոր հիվանդների անհետաձգելի բժշկական օգնությունը փաստացի կատարված այցերի հիման վրա պետականորեն փոխհատուցելու, շտապօգնության կանչերի սպասարկման գծով պետական պատվերի կառուցվածքում շտապօգնության ծառայություն ունեցող բժշկական հաստատություններում տեղադրելու, պետական պատվերի կատարողականի նկատմամբ խիստ վերահսկողություն սահմանելու, շտապօգնության վճարովի գործունեությունը կարգավորելու և համապատասխան ընթացակարգեր ներդնելու, ֆինանսական գործառնությունների նկատմամբ վերահսկողությունը խստացնելու, գոյացած հասույթի բաշխման առաջնահերթության սկզբունքներ սահմանելու, բողոքարկման և քաղաքացիների բողոքներին արձագանքման մեխանիզմներ ներդնելու և դրանց մասին բնակչությանն իրազեկելու, շտապօգնության ծառայությունից բնակչության բավարարվածության աստիճանը հարցումների միջոցով գնահատելու միջոցով:
- Բարձրացնել ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական հաստատությունների գործունեության թափանցիկությունը, հաշվետվողականությունը և օրինականությունը.** հիվանդներին պոլիկլինիկաներից ստացիոնար բուժհաստատություններ անհարկի ուղեգրումների նկատմամբ վերահսկողությունը խստացնելու, բուժհաստատություններում իրականացվող հետազոտությունների համար գնվող ռեակտիվների, ժապավենների և այլ պարագաների ծավալների նկատմամբ պատշաճ վերահսկողություն սահմանելու, անվճար կամ արտոնյալ պայմաններով դեղերի ձեռք բերման համար անհրաժեշտ ֆինանսական սահմանափակումների հաշվարկման և դեղորայքի բաշխման ընթացակարգերը հստակեցնելու, անվճար կամ արտոնյալ պայմաններով դեղերի հատկացումը պայմանագրային սկզբունքով աշխատող լիցենզավորված դեղատների միջոցով իրականացնելու, առողջության առաջնային պահպանման մակարդակում բուժօգնության որակի կառավարման և բարելավման մեթոդներ սահմանելու, ապացուցողական բժշկության վրա հիմնված կլինիկական ուղեցույցեր և չափորոշիչներ ներդնելու, որակի բարելավման գործընթացի և արդյունքների շարունակական ստուգազնման և մոնիտորինգի մեխանիզմներ ներդնելու, ԱՄՊ համակարգում ընտանեկան բժշկի և նեղ մասնագետների աշխատավարձի հաշվարկումը մատուցած ծառայությունների որակի և բուժման արդյունքի գնահատման և կատարողականի վրա հիմնված ֆինանսավորման ու խրախուսական վարձատրության համակարգերի հետ կապելու, բժշկական ծառայությունների իրական ինքնարժեքի հիման վրա բուժծառայությունների իրատեսական գներ սահմանելու միջոցով:
- Բարձրացնել հիգիենիկ և հակահամաճարակային ծառայության գործունեության թափանցիկությունը, հաշվետվողականությունը և օրինականությունը.** հիգիենիկ և հակահամաճարակային ոլորտում պետական վերահսկողության ծավալների կրճատման, տնտեսվարող սուբյեկտներում ներքին վերահսկողության համակարգի կատարելագործման,

հանրային առողջության անվտանգության բնագավառում գործունեություն իրականացնող սուբյեկտների ակրեդիտացման համակարգ ներդնելու, հանրային առողջության անվտանգության բնագավառում գործունեություն իրականացնող սուբյեկտներում աշխատողների անձնական սանիտարական գրքույկների առկայության և պատշաճ մակարդակով բժշկական զննությունների կատարման նկատմամբ իրականացվող վերահսկողությունը խստացնելու և վերահսկողական գործառնությունների թափանցիկությունն ու հաշվետվողականությունը երաշխավորող ընթացակարգեր սահմանելու միջոցով:

4.7. Դատական համակարգ

207. Դատական համակարգում կոռուպցիայի դեմ պայքարի արդյունավետությունն ապահովելու համար անհրաժեշտ է համադրել պայքարի հետևյալ ուղղությունները. կոռուպցիոն հանցագործությունների լատենտայնության նվազեցումը, դատավարական ֆորմալ ընթացակարգերի պարզեցումը և դատարանների բեռնաթափումը, դատավորի գործունեության նյութական և սոցիալական երաշխիքների ամրապնդումը և դատավորի պատասխանատվության խստացումը, դատավորների շահերի բախման, եկամուտների և գույքի հայտարարագրումը և դատական կորպուսը որակյալ կադրերով համալրումը, վարձատրության և նյութական երաշխիքների անհրաժեշտ ծավալի ապահովումը, քրեականացումը, ֆինանսական թափանցիկությունը, ծառայության բարեխղճությունը, կոռուպցիայի դեմ անհանդուրժողական վերաբերմունքի ձևավորմանն ուղղված մասնագիտական ուսուցումը և այլն:
208. **Դատավարական ֆորմալ ընթացակարգերի պարզեցումը և դատարանների բեռնաթափումը** դատարաններում կոռուպցիոն ռիսկերի կրճատման առավել կարևոր միջոց է: Դատախարակական բարեփոխումների երկրորդ փուլում հիմնավորվեց և հատկապես կարևորվեց դատարանները գործերից բեռնաթափելու անհրաժեշտությունը վեճերի լուծման այլընտրանքային միջոցներ կիրառելու ճանապարհով: Հաշտարարության դատավարական պարտադիր ընթացակարգերի սահմանումը՝ որպես հակակոռուպցիոն միջոցառում, նախատեսվել է նաև Հայաստանի Հանրապետության դատական համակարգի հակակոռուպցիոն ռազմավարության ծրագրով:
209. **Վեճերի լուծման այլընտրանքային միջոցների** շարքում 2006 թ. ընդունվեց «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքը, որով միջազգային չափորոշիչներին համապատասխան օրենսդրական կարգավորման ենթարկվեց արբիտրաժը: Մյուս այլընտրանքային միջոցները, հատկապես՝ հաշտարարությունը (մեդիացիան), դեռևս օրենսդրորեն կարգավորված չեն և գործնականում հազվադեպ են կիրառվում ՀՀ-ում: «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի որոշ դրույթների անհստակությունների հետևանքով գործնականում վիճելի է մնում մի շարք իրավահարաբերություններից բխող վեճերի՝ արբիտրաժի միջոցով լուծման հնարավորության հարցը (մասնավորապես՝ աշխատանքային, ընտանեկան): Արդյունքում վեճերի լուծման այլընտրանքային միջոցները դեռևս չեն կիրառվում մասնավոր իրավահարաբերությունների այլ ոլորտներում, ինչպես նաև հանրային իրավահարաբերությունների առանձին ոլորտներում, ինչը սահմանափակում է նման գործերով ֆորմալ դատավարական ընթացակարգերը վեճերի լուծման այլընտրանքային միջոցներով փոխարինելու կամ գոյություն ունեցող դատավարական ընթացակարգերի պարզեցնելու հնարավորությունը:
210. **Դատավորի գործունեության նյութական և սոցիալական երաշխիքները** դատավորի անկողմնակալությունը և նրա կողմից բացառապես օրենքի հիման վրա արդարադատության իրականացումն ապահովող մեխանիզմի կարևորագույն տարրերն են: Դատավորների աշխատավարձերի մակարդակը Հայաստանի Հանրապետությունում շարունակում է մնալ ոչ համարժեք: Հայաստանի Հանրապետությունում դատավորների աշխատավարձերն ավելի ցածր են, քան Արևելյան Եվրոպայի, մերձբալթյան պետությունների և ԱՊՀ այլ մի շարք պետությունների դատավորների աշխատավարձերը՝ համեմատած Հայաստանում բնակչության թվի համեմատ դատավորների քանակի և ծանրաբեռնվածության հետ: Դատավորների նյութական և սոցիալական երաշխիքների բարելավումը պետք է զուգակցվի դատական իշխանություն իրականացնելիս թույլ տված խախտումների համար **պատասխանատվության խստացմամբ**, ինչը դրսևորվում է դատավորի կողմից կաշառք ստանալու, շահադիտական կամ անձնական այլ դրդումներով ակնհայտ անարդար դատավճիռ, վճիռ կամ դատական այլ ակտ կայացնելու, ինչպես նաև դատավորի կողմից օրենքով իր

վրա դրված այնպիսի պարտականություններ չկատարելու համար պատասխանատվության խստացմամբ, որոնք նպաստում են կոռուպցիայի դեպքերի բացահայտմանն ու կանխարգելմանը:

211. Դատական իշխանության իրականացմանն ապօրինի միջամտությունը դատական համակարգում կոռուպցիոն ռիսկերի դրսևորման առավել նպաստավոր պայմաններ ստեղծող և դեռևս հաճախ հանդիպող երևույթ է: Արդարադատության իրականացմանը և քննությանը խոչընդոտելու համար նախատեսված քրեական պատասխանատվությունը համեմատաբար մեղմ է և ունի վերանայման կարիք: Արդարադատության և օրենքով նախատեսված այլ լիազորությունների իրականացման կապակցությամբ իր գործունեությանը օրենքով չնախատեսված միջամտության մասին ՀՀ դատարանների նախագահների խորհրդի էթիկայի հանձնաժողովին հայտնելու իր պարտականությունը չկատարելու դեպքում դատավորը ենթակա է կարգապահական պատասխանատվության: Այդուհանդերձ, կարգապահական պատասխանատվությունը բավարար կանխարգելիչ նշանակություն չի ունենում դատավորների կողմից իրենց գործունեությանը օրենքով չնախատեսված գործունեության դեպքերի մասին չհայտնելը կանխելու համար: Բացակայում է էթիկայի հանձնաժողովի կողմից դատավորի չհայտնելու դեպքերի հայտնաբերման մեխանիզմը:

212. Դատավորների շահերի բախման, եկամուտների և գույքի հայտարարագրումը կարևորվում է դրանց վերահսկելիության ապահովման և եկամուտների ու գույքի՝ ապօրինի ճանապարհով ստացման դեպքերի բացահայտման համար: Ներկայում դատավորների եկամուտների հայտարարագրումն իրականացվում է «Ֆիզիկական անձանց գույքի և եկամուտների հայտարարագրման մասին» ՀՀ օրենքի հիման վրա: Եթե ՀՀ ԴՆԽ էթիկայի հանձնաժողովը գտնում է, որ դատավորի կամ նրա ազգականի կողմից օրենքով սահմանված դեպքերում ստացված նվերի վերաբերյալ տրամադրված տեղեկություններն ամբողջական չեն կամ կասկածելի են, ապա կարող է սեփական նախաձեռնությամբ կազմակերպել հարցի քննարկում՝ մասնակից դարձնելով դատավորին: ՀՀ ԴՆԽ էթիկայի հանձնաժողովը քաղաքացիների և իրավաբանական անձանց հաղորդումները քննարկում է բացառապես այն դեպքում, երբ դրանք վերաբերում են դատավորի վարքագծի կանոնների խախտմանը: Միաժամանակ անհրաժեշտ է լրացուցիչ միջոցներ ձեռնարկել հայտարարագրման ինստիտուտի թափանցիկության բարձրացման, բնակչության համար տեղեկատվության մատչելիությունը ապահովելու, կոռուպցիայի մասին տեղեկատվություն փնտրելու, ստանալու, հրապարակելու և տարածելու ազատությունը խրախուսելու համար:

213. Դատական կորպուսի համալրումը որակյալ կադրերով դատական համակարգում կոռուպցիոն ռիսկերի կրճատման կարևորագույն գործոն է: ՀՀ դատական օրենսգիրքը նախատեսում է դատավորների նշանակման այնպիսի մեխանիզմ, որը հնարավորություն է տալիս բարձրացնել դատավորի թափուր պաշտոններին նշանակվող անձանց մասնագիտական որակավորումը: **2008թ.** սկսեց գործել ՀՀ դատական դպրոցը, որն իրականացնում է դատավորների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց նախնական ուսուցման և դատավորների տարեկան վերապատրաստումը կազմակերպելու գործառնություններ՝ դրա համար մշակելով համապատասխան ուսումնական ծրագրեր: Այնուամենայնիվ, ՀՀ դատական դպրոցում իրականացվող նախնական ուսուցման ժամանակահատվածը և մեթոդաբանությունը վերանայման կարիք ունեն: Որակավորման ստուգում անցած և թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձինք ՀՀ դատական դպրոցում անցնում են նախնական ուսուցում ընդամենը յոթ ամիս տևողությամբ: Ուսուցման և փորձաշրջանի առկա տևողությունը հնարավորություն չի տալիս կիրառելու արդյունավետ մեթոդաբանություն և լիարժեք իրականացնելու ուսուցման նպատակները: Դատախազները, փաստաբաններն ու քննիչները, ընդգրկվելով դատավորների թեկնածությունների ցուցակ, դատավոր նշանակվելու համար պետք է վերապատրաստման անհատական դասընթաց անցնեն ՀՀ Դատական դպրոցում: Սակայն, ՀՀ դատական օրենսգիրքը չի սահմանում այդ անհատական դասընթացի նվազագույն տևողությունը և վերջինիս ներկայացվող պահանջները: **2008թ.** կոռուպցիայի դեմ պայքարին առընչվող դատավորների վերապատրաստման թերևս միակ թեմատիկ դասընթացը վերաբերվում էր փողերի լվացման և անհաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարին:

214. Այսպիսով, դատական ոլորտում կոռուպցիոն ռիսկերի կրճատման նպատակով անհրաժեշտ է.

- **Ընդլայնել վեճերի լուծման այլընտրանքային միջոցների կիրառումը.** արբիտրաժի՝ որպես վեճերի լուծման այլընտրանքային միջոցի կիրառման օրենսդրական շրջանակները որոշակիացնելու նպատակով «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի կարգավորումները հստակեցնելու, արբիտրաժային քննության դիմելու հնարավորությունը աշխատանքային, ինչպես նաև

ընտանեկան իրավահարաբերությունների որոշ ոլորտներում խրախուսելու, մեղիացիայի գործընթացը իրավական կարգավորման ելթարկելու միջոցով:

- **Բարելավել դատավորի գործունեության նյութական և սոցիալական երաշխիքները՝ միաժամանակ խստացնելով դատական իշխանություն իրականացնելիս թույլ տված խախտումների համար պատասխանատվությունը.** ընդհանուր իրավասության դատարանների դատավորների աշխատավարձի դրույքաչափի բարձրացման ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու, երկրի սոցիալ-տնտեսական վիճակի դինամիկայի ուսումնասիրության արդյունքների ամփոփման և դրա հիման վրա դատավորների աշխատավարձի վերահաշվարկման արդյունավետ և դատավորի աշխատավարձի համարժեք չափ ապահովելու հնարավորություն տվող մեխանիզմ ներդնելու, տարբեր ատյանների դատավորների աշխատավարձերի միջև էական տարբերությունը նվազեցնելու, դատական իշխանություն իրականացնելիս թույլ տված խախտումների համար դատավորի պատասխանատվության խստացման, մասնավորապես՝ դատավորի կողմից կաշառք ստանալու, շահադիտական կամ անձնական այլ դրդումներով ակնհայտ անարդար դատավճիռ, վճիռ կամ դատական այլ ակտ կայացնելու համար քրեական պատասխանատվության խստացման, արդարադատության իրականացմանը խոչընդոտելու նպատակով դատարանի գործունեության ցանկացած ձևով միջամտելու հանցագործության համար քրեական պատասխանատվությունը խստացնելու, ինչպես նաև դատավորի կողմից դատական իշխանության իրականացմանը օրենքով չնախատեսված միջամտության դեպքերի մասին էթիկայի հանձնաժողովին չհայտնելու դեպքերի հայտնաբերման մեխանիզմները կատարելագործելու միջոցով:
- **Ապահովել դատավորների շահերի բախման, եկամուտների և գույքի հայտարարագրման թափանցիկությունը և վերահսկելիությունը.** դատավորների ֆինանսական միջոցների թափանցիկության ապահովման գործում ԴՆԽ էթիկայի հանձնաժողովի դերը բարձրացնելու, այդ թվում՝ քաղաքացիների և ֆիզիկական անձանց հաղորդումների հիման վրա էթիկայի հանձնաժողովի կողմից դատավորների ֆինանսական թափանցիկության հարցեր քննարկելու հնարավորությունը նախատեսելու, այդպիսի հաղորդումների քննարկման հստակ ընթացակարգեր սահմանելու միջոցով:
- **Բարելավել դատավորների թեկնածուների նախնական ուսուցման և դատավորների վերապատրաստման գործընթացը.** ՀՀ Դատական դրպոցում նախնական ուսուցման ժամկետը միջազգայնորեն ընդունված չափանիշներին համապատասխան երկարաձգելու, բոլոր դատական ատյաններում արդյունավետ փորձաշրջան անցնելու համար բավարար ժամանակահատված նախատեսելու, դատավորի թեկնածու հանդիսացող դատախազների, փաստաբանների և քննիչների անհատական վերապատրաստման դասընթացի նվազագույն տևողությունը և պահանջները օրենսդրորեն կարգավորելու միջոցով, ՀՀ ԴՆԽ կողմից հաստատվող վերապատրաստման ուղենիշների շարքում վերապատրաստման հատուկ՝ կոռուպցիայի կանխարգելմանը և դրա դեմ պայքարին վերաբերող պարտադիր դասընթացի ներառված լինելը երաշխավորելու, ինչպես նաև դատավորի վարքագծի կանոններին վերաբերող ուղղություններ ներառելու միջոցով:

4.8. Քրեակատարողական ծառայություն

215. Արդարադատության իրականացման ոլորտում կոռուպցիայի դեմ պայքարի հետևողական իրականացումը պետք է ընդգրկի նաև դրան հաջորդող՝ պատիժների ի կատար ածման փուլը: Միաժամանակ, նախաքննության մարմիններում կոռուպցիոն ռիսկերի կրճատումը չի կարող հանգեցնել դրական արդյունքների, եթե չզուգակցվի կալանքի տակ պահելու և պատիժ կատարելու լիազորություն ունեցող մարմիններում կոռուպցիայի դեմ պայքարի հետ: Այս առումով նշված գործառնություններն իրականացնող քրեակատարողական ծառայությունում կոռուպցիոն ռիսկերի կրճատումը կոռուպցիայի դեմ պայքարի առանձին ուղղություն է:

216. Քրեակատարողական ծառայությունում կոռուպցիոն ռիսկերի կրճատման համար մեծ նշանակություն ունի **հսկողության և ներքին վերահսկողության մեխանիզմների կատարելագործումը:** Ներկայում Հայաստանի Հանրապետությունում ներդրված է պատիժները կատարող մարմինների ու հիմնարկների նկատմամբ դատական, գերատեսչական, հասարակական, ինչպես նաև

վերահսկողության ներպետական և միջազգային (Մարդու իրավունքների պաշտպան, Խոշտանգումների եվրոպական կոմիտե (CPT)այլ մեխանիզմներ: Կոռուպցիոն ռիսկերի կրճատման առումով կարևորվում են թե դատական վերահսկողությունը, որն իրականացվում է պատիժը կատարող մարմնի կամ հիմնարկի վարչակազմի գործողությունների դեմ դատապարտյալների բողոքների դատական քննության միջոցով, թե պատիժների կատարման նկատմամբ հասարակական և գերատեսչական շարունակական վերահսկողությունը:

217. Հասարակական վերահսկողությունը պատիժների կատարման նկատմամբ իրականացվում է ՀՀ արդարադատության նախարարության կազմավորած հասարակական դիտորդների խմբի միջոցով²⁴: Խմբում կարող են ընդգրկվել 7-ից մինչև 21 դիտորդներ, որոնց լիզենզիայի ստացման հիմնք տարի է: Հասարակական դիտորդներն իրավունք ունեն առանց հատուկ թույլտվության անարգել մուտք ու ելք գործել պատիժը կատարելու վայր: Հասարակական դիտորդների խումբը կարևոր դեր է կատարում հասարակությանը քրեակատարողական ծառայության հիմնախնդիրները ներկայացնելու, քրեակատարողական ծառայությունում մարդու իրավունքների խախտումների բացահայտմանը և կանխարգելմանն ուղղված գործունեություն ծավալելու, քրեակատարողական հիմնարկներում ազատազրկվածների, ինչպես նաև քրեակատարողական մարմինների հսկողության տակ գտնվող անձանց հետ կապված այլ խնդիրների լուծմանն աջակցելու գործում, քանի որ իրավասու է քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում իրավիճակի վերլուծություններ, եզրակացություններ և առաջարկություններ, ինչպես նաև քրեակատարողական օրենսդրության բարեփոխմանն ուղղված առաջարկներ ներկայացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությանը և հասարակությանը: Հասարակական դիտորդների խմբի գործունեության նպատակները, կարգը և կազմը սահմանված են ՀՀ արդարադատության նախարարի հրամանով²⁵: Խմբի վերահսկողական գործառնությունները չեն սահմանափակվում միայն քրեակատարողական հիմնարկներում պատիժ կրող անձանց իրավունքների իրականացման ոլորտով և առնչվում են քրեակատարողական հիմնարկների բնականոն գործունեության կազմակերպման տարբեր խնդիրներին, հետևաբար՝ կարող են էական դեր խաղալ նաև քրեակատարողական մարմիններում և հիմնարկներում կոռուպցիայի դեմ պայքարի առումով: Հարկ է նշել, որ առկա կարգավորումները նախատեսում են խմբի բնականոն գործունեության համար անհրաժեշտ ընթացակարգեր: Ավելին, խումբը կազմված է քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներից. և համալրվում է հասարակական կազմակերպությունների կողմից երաշխավորված անձանցից՝ իրավաբանի, մանկավարժի, բժշկի, հոգեբանի մասնագիտություն և մասնագիտական աշխատանքային փորձ ունեցող անձանց տրվող նախապատվությամբ: Խմբի կազմը հաստատում է ՀՀ արդարադատության նախարարը: Այսպիսով դիտորդների խմբի մանդատը, ընթացակարգերը, կառուցվածքը և կազմը հնարավորություն են տալիս վերջինիս հանդես գալ որպես կոռուպցիայի դեմ պայքարի գործուն մեխանիզմ:

218. Այնուամենայնիվ, առկա են քրեակատարողական ծառայության վերոհիշյալ գործառնությի նկատմամբ քաղաքացիական հասարակության վերահսկողական գործառնությի իրականացման հետ կապված որոշ խնդիրներ: Այսպես, խումբը արդարադատության նախարարին ներկայացնում է երեք տեսակի հաշվետվություններ՝ ընթացիկ, տարեկան և հրատապ, որոնց կապակցությամբ ՀՀ արդարադատության նախարարը տալիս է իր մեկնաբանությունները՝ ներկայացման պահից համապատասխանաբար մեկ ամսվա, երեք ամսվա և երեք օրվա ընթացքում: Փաստորեն, հաշվետվությունները հանդիսանում են խմբի վերահսկողական գործառնությի իրականացման և դրա ընթացքում բացահայտված խնդիրների և արված առաջարկությունների գործիք, որի հրապարակումը և մատչելիությունը հասարակության լայն շրջանակների համար հասարակական դիտորդների խմբի վերահսկողական գործառնությի թափանցիկության ապահովման էական գործոն է: Այդուհանդերձ, հաշվետվությունների և դրանց վերաբերյալ ՀՀ արդարադատության նախարարի արձագանքի հրապարակման մեխանիզմ նախատեսված չէ: ՀՀ արդարադատության նախարարի թիվ ՔՀ-66-Ն հրամանը նախատեսում է դրույթ հաշվետվությունների և դրանց վերաբերյալ տրված մեկնաբանությունների հրապարակման վերաբերյալ, սակայն չի սահմանում հրապարակման կարգը, ժամկետները և չհրապարակման հետևանքները:

²⁴ ԳՅ քրեակատարողական օրենսգիրք, հոդված 21:

²⁵ ԳՅ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողության իրականացման կարգը և հասարակական դիտորդների խմբի կազմը սահմանելու մասին ԳՅ արդարադատության նախարարի 2005 թ. նոյեմբերի 18-ի թիվ ՔՀ-66-Ն հրաման:

219. Հասարակական դիտորդների խմբի գործունեության արդյունավետության առումով կարևոր են նաև քաղաքացիական հասարակության դիտորդական առաքելության իրականացման պատշաճ կարողությունները և ակտիվությունը: Դիտորդները գործում են հասարակական հիմունքներով, ինչը, կարևոր երաշխիք է պետական ապարատից հասարակական դիտորդների անկախության ապահովման առումով, թեև երբեմն խմբում ընդգրկվելու ուղղությամբ ակտիվության նվազման պատճառ է դառնում: Բացի այդ, դիտորդական խումբը շարունակական տեխնիկական աջակցության, այդ թվում միջազգային լավագույն փորձի ծանոթանալու հնարավորությունների ապահովման կարիք ունի: Այս խնդիրը ներկայում լուծվում է հիմնականում դրամաշնորհների միջոցով:

220. Կատարելագործման անհրաժեշտություն ունի նաև քրեակատարողական ծառայության նկատմամբ **գերատեսչական հսկողության մեխանիզմը**: ՀՀ քրեակատարողական օրենսգրքի համաձայն պատիժներ կատարող մարմինների և հիմնարկների գործունեության նկատմամբ գերատեսչական վերահսկողություն Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով իրականացնում են վերադաս մարմինները և դրանց պաշտոնատար անձինք²⁶: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ քրեակատարողական ծառայությունը հանդիսանում է ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի առանձնացված ստորաբաժանում²⁷ դրա նկատմամբ գերատեսչական վերահսկողությունը պետք է իրականացնի ՀՀ արդարադատության նախարարությունը: Քրեակատարողական ծառայության մասին ՀՀ օրենքով քրեակատարողական ծառայության նկատմամբ ընդհանուր վերահսկողություն իրականացնում է ՀՀ արդարադատության նախարարը²⁸: Հաշվի առնելով ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի կառուցվածքը՝ այդ վերահսկողությունը պետք է իրականացվի նախարարության աշխատակազմի վերահսկողության վարչության կողմից: Մակայն ՀՀ արդարադատության նախարարության վերահսկողության վարչության կողմից գերատեսչական վերահսկողության իրականացման գործընթացը լիարժեք կանոնակարգված չէ: Մասնավորապես, բացակայում են վերահսկողության նպատակային ուղղությունները, քրեակատարողական ծառայության գործունեության արդյունավետությունը գնահատելու չափանիշներն ու մեխանիզմները և այլն:

221. Քրեակատարողական ծառայության ոլորտում կոռուպցիայի դեմ պայքարի համար կարևոր նշանակություն ունի քրեակատարողական հիմնարկների նյութատեխնիկական վերազինումը և քրեակատարողական ծառայողների անմիջական մասնակցության նվազեցումը պատիժը կրող անձանց օրենքով վերապահված որոշ իրավունքների իրականացման գործընթացում: Քրեակատարողական ծառայության առանձնահատկություններից մեկն այն է, որ դատապարտյալների կողմից իրենց իրավունքներն իրականացնելուն խոչընդոտելու, իրավունքների բնականոն իրականացման հետ կապված կոռուպցիայի դեպքերը հաճախ տեղի են ունենում ավտոմատացված համակարգերի բացակայության պայմաններում: Այսպես, օրինակ, քրեակատարողական հիմնարկում դատապարտյալների զբոսանքի համար նախատեսված ժամին դռների բացումն իրականացվում է քրեակատարողական ծառայողի կողմից: Պատիժը կրող անձանց իրավունքների իրականացման բնականոն գործընթացի կախվածությունը քրեակատարողական ծառայողներից էական կոռուպցիոն ռիսկեր է ստեղծում:

222. Քրեակատարողական ծառայության կադրային ապահովվածությունը քրեակատարողական ծառայության ոլորտում կոռուպցիոն ռիսկերի կրճատման կարևոր գործոն է: Քրեակատարողական ծառայությունը հասարակության համար գրավչությամբ չօժտված պետական ծառայության ոլորտ է, մինչդեռ ծառայության պատշաճ իրականացման համար անհրաժեշտ է ծառայությանը ներգրավել համապատասխան որակներով և գիտելիքներով օժտված կադրերի: Ներկայում քրեակատարողական ծառայության կրտսեր խմբում պաշտոնում կարող է նշանակվել առնվազն միջնակարգ կրթություն ունեցող քաղաքացին²⁹: Միաժամանակ, կրթական ցենզի կամ պահանջվող մասնագիտական որակների բարձրացումը կարող է հանգեցնել քրեակատարողական ծառայությունում կադրերի անբավարարության: «Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքը նախատեսում է քրեակատարողական ծառայողների դրամական բավարարման ճկուն համակարգ, քրեակատարողական ծառայողի համար որոշակի սոցիալական երաշխիքներ են նախատեսվում նաև

²⁶ ՀՀ քրեակատարողական օրենսգրքի, հոդված 19:
²⁷ ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի կառուցվածքը սահմանվել է ՀՀ կառավարության 2002 թ. նոյեմբերի 28-ի N 1917-Ն որոշման 3-րդ կետով:
²⁸ «Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենք, հոդված 25, 2-րդ պարբերություն:
²⁹ «Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենք, հոդված 17, մաս 5:

«Զինճառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքով, ըստ որի քրեակատարողական ծառայողները համարվում են զինճառայողներին հավասարեցված անձինք (ոչ թե կարգավիճակով, այլ՝ սոցիալական երաշխիքների իմաստով) և օգտվում վերջիններիս վերապահված սոցիալական արտոնություններից և երաշխիքներից: Այդուհանդերձ, քրեակատարողական ծառայողի աշխատավարձի պաշտոնային բազային դրույքաչափը մնում է ծայրեղ ցածր: Այսպես, **2005-2006**թթ. այն կազմել է **8,000** դրամ, իսկ **2006-2008**թթ.՝ **12,000** դրամ:

223. Քրեակատարողական ծառայության ոլորտում կոռուպցիոն ռիսկերի կրճատման նպատակով կարևոր է քրեակատարողական ծառայողների և քրեակատարողական հիմնարկում պահվող անձանց սերտաճման բացառումը: Սերտաճման ռիսկերն առաջանում են քրեակատարողական ծառայողի՝ որևէ քրեակատարողական հիմնարկում երկարատև ժամանակահատվածի ընթացքում աշխատելու դեպքում և ընդգրկում են այդ հիմնարկում պատիժը կրող անձանց: Սերտաճման արդյունքում քրեակատարողական հիմնարկի վարչակազմի և պատիժը կրող անձանց միջև բնականորեն առաջանում են այնպիսի միջանձնային հարբերություններ, որոնք խոչընդոտում են քրեակատարողական ծառայության գործառույթների բնականոն իրականացմանը: «Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքը նախատեսում է քրեակատարողական ծառայողին առանց իր համաձայնության իր զբաղեցրած պաշտոնին համարժեք այլ պաշտոնի փոխադրելու հնարավորություն, եթե դա պայմանավորված է ծառայողական անհրաժեշտությամբ: Նման փոխադրումը հնարավոր է, եթե քրեակատարողական ծառայողը իր պաշտոնում ծառայել է առնվազն մեկ տարի: Մեկ այլ դրույթ կարգավորում է քրեակատարողական ծառայողի փոխադրումը զբաղեցրած պաշտոնին համարժեք այլ պաշտոնի՝ քրեակատարողական ծառայողին մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված անձանց (ծնող, ամուսին, զավակ, եղբայր, քույր, պապ, տատ, ամուսնու ծնող, զավակ, եղբայր, քույր, պապ և տատ)՝ քրեակատարողական հիմնարկում պատիժը կրելու կամ կալանքի տակ գտնվելու ընթացքում³⁰: Շահերի բախման այլ կարգավորումներ քրեակատարողական օրենսդրությունը չի պարունակում: Ընդ որում, այլ համարժեք պաշտոնի փոխադրելը վերը նշված հիմքերի առկայության դեպքում ամրագրված է որպես իրավունք, այլ ոչ թե պարտականություն: Միաժամանակ, օրենքը սահմանում է, որ քրեակատարողական ծառայության բարձրագույն խմբի պաշտոններում, ինչպես նաև քրեակատարողական հիմնարկների պետերին այլ պաշտոնի փոխադրում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարը՝ քրեակատարողական վարչության պետի առաջարկությամբ, իսկ քրեակատարողական ծառայության պաշտոնների գլխավոր, առաջատար, միջին և կրտսեր խմբերում այլ քրեակատարողական ծառայողներին՝ քրեակատարողական վարչության պետը: Ծառայողական անհրաժեշտության դեպքերի վերաբերյալ բացակայում է միասնական պրակտիկան, իսկ բացակայության և օրենքով այլ պաշտոնի փոխադրելու հարցում փոխադրելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի հայեցողական լիազորության պայմաններում փոխադրումը չի կարող ծառայել որպես սերտաճումը կանխելու և շահերի բախումը բացառելու գործուն միջոց:

224. Այսպիսով, քրեակատարողական ծառայության ոլորտում կոռուպցիոն ռիսկերի կրճատման նպատակով անհրաժեշտ է.

- **Կատարելագործել քրեակատարողական ծառայության գործառույթների իրականացման նկատմամբ հասարակական և գերատեսչական վերահսկողության մեխանիզմները.** հասարակական դիտորդների խմբում քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների ակտիվությունը խրախուսող միջոցներ ներդնելուն խմբին շարունակական տեխնիկական աջակցություն ապահովելու, հասարակական դիտորդների խմբի հաշվետվությունները և դրանց վերաբերյալ ՀՀ արդարադատության նախարարի մեկնաբանությունները ՀՀ արդարադատության պաշտոնական կայքում հրապարակելու, ՀՀ արդարադատության նախարարության վերահսկողության վարչության գործառույթները հստակեցնելու, գերատեսչական վերահսկողության ընթացակարգեր սահմանելու, քրեակատարողական ծառայության գործունեության արդյունավետությունը գնահատելու համար չափորոշիչներ մշակելու և ներդնելու, կարգապահական վարույթի նյութերի նախապատրաստման և վարույթի հարուցման միասնական կարգ, տիպային ձևեր և ժամկետներ նախատեսելու միջոցով:

³⁰ «Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենք, հոդված 21, մաս 1, կետեր 1) և 4):

- **Նվազեցնել քրեակատարողական ծառայողների անմիջական մասնակցությունը պատիժը կրող անձանց իրավունքների իրականացման ապահովման գործում.** ավտոմատացված համակարգեր ներդնելու, առկա քրեակատարողական հիմնարկները տեխնիկապես վերազինելու և քրեակատարողական հիմնարկների ենթակառուցվածքները զարգացնելու, միջազգային չափանիշներին համապատասխան նոր քրեակատարողական հիմնարկներ կառուցելու միջոցով: Այդ կապակցությամբ մշակել նաև քրեակատարողական հիմնարկների ենթակառուցվածքային երկարաժամկետ բարեփոխումների ռազմավարություն:
- **Խրախուսել որակյալ կադրերի ներգրավվածությունը քրեակատարողական ծառայությունում.** ծառայության գրավչությունը բարձրացնող նյութական և սոցիալական երաշխիքներն ամրապնդելու, մասնավորապես՝ աշխատավարձերը բարձրացնելու, ինչպես նաև պաշտոնները զբաղեցնելու համար պիտանի լինելը փաստող օբյեկտիվ չափանիշներ ներդնելու, քրեակատարողական ծառայողների վերապատրաստման ծրագրերը վերանայելու և կատարելագործելու միջոցով:
- **Բացառել քրեակատարողական ծառայություն իրականացնելիս քրեակատարողական ծառայողի և պատիժը կրող անձանց սերտաճման, ինչպես նաև շահերի բախման հնարավորությունները.** քրեակատարողական ծառայողին այլ պաշտոնի փոխադրելու իմպերատիվ դեպքեր սահմանելու, քրեակատարողական ծառայողի համար շահերի բախման կանոններ սահմանելու և դրանց նմատմամբ վերահսկողության մեխանիզմներ նախատեսելու միջոցով:

4.9. Իրավաբանական անձանց պետական գրանցում

225. Հայաստանում գործարարության զարգացումը և հասարակական միավորումների ակտիվությունը խրախուսելու համար մեծ նշանակություն ունի իրավաբանական անձանց պետական գրանցման ոլորտում կոռուպցիոն ռիսկերի կրճատումը: Կոռուպցիայի դեմ պայքարը իրավաբանական անձանց պետական գրանցման ոլորտում պետք է իրականացվի երկու զուգահեռ ուղղություններով՝ գրանցման գործընթացի բարելավում և իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության գործառնությունների և դրանց պատշաճ իրականացման նկատմամբ վերահսկողության գործընթացի հստակեցում:
226. Թեև իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի պետական գրանցման գործընթացն ընդհանուր առմամբ կանոնակարգված է, գրանցման ընթացակարգը ծանրաբեռնված է անհարկի վարչարարությամբ և կարգը հետագա շարունակական պարզեցման կարիք ունի: Իրավաբանական անձի ստեղծումը կամ որպես անհատ ձեռնարկատեր գրանցումը դեռևս ենթադրում է զգալի թվով փաստաթղթերի ներկայացում և ստուգում: Գործնականում լինում են դեպքեր, երբ գրանցման համար ներկայացված փաստաթղթերի ընդունման մասին գրառում չի կատարվում, փաստաթղթերը վերադարձվում են օրենքի պահանջներին համապատասխանեցնելու նպատակով, ինչը փաստորեն երկարաձգում է գրանցման համար նախատեսված ժամկետը:
227. Կոռուպցիոն ռիսկերի կրճատման համար էական նշանակություն ունի իրավաբանական անձի պետական գրանցման համար տարբեր մարմիններին դիմելու և դրանցից անհրաժեշտ փաստաթղթեր ձեռք բերելու գործընթացի բացառումը: Այսպես, առևտրային իրավաբանական անձինք պարտավոր են դիմել բանկ՝ իրավաբանական անձի գրանցման համար օրենքով սահմանված պետական տուրքը վճարելու նպատակով, հարկային մարմին՝ հարկ վճարողի հաշվառման համար (ՀՎՀՀ) ստանալու նպատակով: Անձը ստիպված է լինում մեկ գրանցման շրջանակներում առնչվել մի քանի պետական ծառայողների հետ, ինչը բարձրացնում է կոռուպցիոն ռիսկերի դրսևորման հնարավորությունը: Այս առումով առաջադրնթաց է կատարվել **2008**թ. «Ֆիրմային անվանումների մասին» նոր օրենքի ընդունմամբ՝ գործարարությամբ զբաղվող անձին հնարավորություն տալով դիմելու անմիջապես պետական գրանցումն իրականացնող մարմինին, ֆիրմային անվանման պետական գրանցման մասին լիազորված մարմնի որոշումը ներկայացնելու նախկինում գրոծող կարգի փոխարեն:
228. Բարեփոխման կարիք է գգում իրավաբանական անձի լուծարման պետական գրանցման մեխանիզմը: Ներկայում լուծարման գործընթացը իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում հաճախ ձգձգվում է, քանի որ լուծարումը գրանցելու համար իրավաբանական

անձը և անհատ ձեռնարկատերը պետք է պետական ռեզիստրի տարածքային ստորաբաժանմանը ներկայացնեն տեղեկանք հարկային և սոցիալական ապահովության մարմիններից՝ պետական բյուջեի և սոցիալական ապահովագրության գծով պարտավորությունների բացակայության մասին: Ընդ որում, նման տեղեկանք չներկայացնելու դեպքում պետական ռեզիստրի տարածքային ստորաբաժանումը եռօրյա ժամկետում հարցում է ուղարկում հարկային մարմինների համապատասխան տարածքային ստորաբաժանումներին՝ պետական բյուջեի և սոցիալական ապահովագրության գծով իրավաբանական անձի պարտավորությունների բացակայությունը հավաստելու վերաբերյալ: Հարկային մարմինները պատասխանում են հարցմանն այն ուղարկելու օրվանից **30** օրվա ընթացքում. սահմանված ժամկետում չպատասխանելը կամ այլ պատասխան ուղարկելը դիտվում է որպես պարտավորությունների բացակայության հավաստում: **30**-օրյա ժամկետի ավարտից կամ պատասխան ուղարկելու հետո իրավաբանական անձը համարվում է լուծարված և մեկ աշխատանքային օրվա ընթացքում տրվում է լուծարման մասին տեղեկանք: **30**-օրյա ժամկետի վերապահումը տեղեկանք տրամադրելու համար բարձրացնում է հարկային մարմինների հայեցողության դրսևորման աստիճանը և ստեղծում է կոռուպցիայի դեպքերի համար նպաստավոր պայմաններ:

- 229.** ՀՀ արդարադատության նախարարության վերասկողության մեխանիզմների բարելավումը իրավաբանական անձանց պետական ռեզիստրի գործակալության գործունեության ոլորտում կոռուպցիայի դեմ արդյունավետ պայքարի կարևոր նախապայման է: Ներքին վերահսկողության խնդիրը պայմանավորված է վերահսկողության ընթացակարգերի անբավարարությամբ և դրանց արդյունքների իրավական հետևանքների թերկարգավորվածությամբ:
- 230.** **2008**թ.-ի Հայաստանի վերաբերյալ ԳԲԿՈ-ի գեկույցում ընգծվում է իրավաբանական անձանց պետական գրանցման ժամանակ նրանց հիմնադիրների քրեական անցյալի և մասնագիտական որակագրկման վերաբերյալ տեղեկությունների ստուգման մեխանիզմի ներդրման անհրաժեշտությունը: Այս առումով մշակվել էր «Իրավաբանական անձանց գրանցման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու նախագիծ, որով նախատեսում էր իրավաբանական անձանց գրանցման մերժում, եթե իրավաբանական անձի հիմնադիրը դատապարտվել է ՀՀ քրեական օրենսգրքի **187-216, 217.1, 308-313** հոդվածներով նախատեսված հանցագործություններից որևէ մեկի համար: Նշված մեխանիզմի կյանքի կոչումը էլ ավելի կբարձրացնի ՀՀ մասնավոր հատվածի հուսալիությունը:
- 231.** Այսպիսով, իրավաբանական անձանց պետական գրանցման ոլորտում կոռուպցիոն ռիսկերի կրճատման նպատակով անհրաժեշտ է.
- **Պարզեցնել իրավաբանական անձանց պետական գրանցման գործընթացը.** առևտրային իրավաբանական անձանց պետական գրանցման համար պահանջվող փաստաթղթերի նմուշային ձևեր հաստատելու և ՀՀ արդարադատության նախարարության պաշտոնական կայքի միջոցով մատչելի դարձնելու, իրավաբանական անձանց պետական ռեզիստրի գործակալությունը տեխնիկապես վերազինելու և պետական գրանցման առցանց հնարավորություն նախատեսելու, իրավաբանական անձանց պետական գրանցման ժամանակ հիմնադիրների քրեական անցյալի վերաբերյալ տեղեկությունների ստուգման մեխանիզմ ներդնելու միջոցով:
 - **Ներդնել «մեկ պատուհանի» սկզբունքը իրավաբանական անձանց պետական գրանցման ոլորտում.** ֆիրմային անվանումների տվյալների միասնական ավտոմատացված համակարգ մշակելու, փնտրման և ֆիրմային անվանման առցանց գրանցում իրականացնելու հնարավորություն նախատեսելու, ՀՎՀՀ ստացման առցանց մեխանիզմ մշակելու, պետական գրանցման համար այլ պետական մարմիններից պահանջվող փաստաթղթերը իրավաբանական անձանց պետական ռեզիստրի գործակալության միջոցով ստանալու կարգ սահմանելու, իրավաբանական անձանց պետական ռեզիստրի գործակալության և այլ պետական մարմինների միջև պետական գրանցման արագ և արդյունավետ իրականացման նպատակով փոխգործակցությունը կանոնակարգելու միջոցով:
 - **Պարզեցնել իրավաբանական անձանց լուծարման և վերակազմակերպման գրանցման ընթացակարգերը.** լուծարման համար պահանջվող փաստաթղթերի ստացման համար ավտոմատացված համակարգեր ներդնելու, պարտավորությունների բացակայությունը հավաստող տեղեկանքների տրամադրման, լուծարման գրանցման ժամկետները կրճատելու և լիազոր մարմնի շրջանակներում մեկ օղակով սահմանափակելու միջոցով:

- **Բարելավել պետական լիազոր մարմնի շրջանակներում իրականացվող գերատեսչական վերահսկողության մեխանիզմները.** Ռեզիստրի գործակալության մարմինների գործունեության նկատմամբ վերահսկողության մեթոդները վերանայելու, դրանց արդյունքների ամփոփման ընթացակարգեր սահմանելու, կարգապահական վարույթի նյութեր նախապատրաստելու և վարույթ հարուցելու միասնական կարգ, տիպային ձևեր և ժամկետներ նախատեսելու, ծառայողների խրախուսման գործող եղանակները վերանայելու և նոր եղանակներ ներդնելու միջոցով:

4.10. Դատական ակտերի հարկադիր կատարման ծառայություն

232. Արդարադատության իրականացման ոլորտում կոռուպցիոն ռիսկերի կրճատումն ուղղված է դատական իշխանության բնականոն իրականացման ապահովմանը: Դատական իշխանության իրականացման արդյունքը դատական ակտն է, որի պատշաճ կատարումը մեծ նշանակություն ունի դատական իշխանության հեղինակության և դրա նկատմամբ հասարակական վստահության բարձրացման առումով: Դատական համակարգում կոռուպցիայի դեմ պայքարի նպատակների տեսանկյունից կենսական նշանակություն ունի դատական ակտերի հարկադիր կատարման համակարգում կոռուպցիոն ռիսկերի նվազեցումը, առանց որի հնարավոր չէ արդարադատության ոլորտում պետական համակարգի նորմալ կենսագործունեության հետևողական ապահովումը:

233. Դատական ակտերի հարկադիր կատարման ոլորտում կոռուպցիոն ռիսկերի կրճատման առումով դրական ազդեցություն կարող է ունենալ **դատական ակտերի հարկադիր կատարման այլընտանքային ծառայությունների ստեղծումը**: Դատական ակտերի հարկադիր կատարման առանձնահատկությունն այն է, որ ակտը կամովին չկատարվելու դեպքում ցանկալի է հասնել ակտի կատարմանը այնպիսի պայմաններում, որոնք առավելապես արտահայտում են թե՛ պահանջատիրոջ և թե՛ պարտապանի շահերը: Դատական ակտերի հարկադիր կատարման համար պատասխանատու պետական ծառայողն, իհարկե, պարտավոր է հարկադիր կատարման ընթացքում հաշվի առնել այդ շահերը, որոնց մի մասն իր ամրագրումն է ստացել օրենքում: Այսպես, օրենքով հստակ սահմանված են պարտապանի գույքի վրա բռնագանձում տարածելու հերթերը (առաջին հերթին՝ պարտապանի դրամական միջոցների վրա): Միաժամանակ, ամրագրված է կանոն, ըստ որի պարտապանի գույքի վրա բռնագանձումը տարածվում է այն չափով, որն անհրաժեշտ է կատարողական թերթի պահանջների կատարման համար, ներառյալ՝ կատարման ծախսերը³¹: Մակայն հարկադիր կատարման արդյունավետության ապահովման տեսանկյունից այս ոլորտում օրենսդրական կարգավորումները այս ոլորտում համեմատաբար ճկուն են, ինչն էլ առանձին դեպքերում հարկադիր կատարողին վերապահում է հայեցողություն դրսևորելու լայն հնարավորություններ: Այսպես, եթե միևնույն հերթում առկա են գույքի տարբեր տեսակներ, ապա դրանց վրա բռնագանձում տարածելու հերթականությունը որոշում է հարկադիր կատարողը: Նման ճկունությունը հնարավորություն է տալիս հարկադիր կատարողին առավելապես գործել հարկադիր կատարման արդյունավետության շահերից ելնելով: Այնուամենայնիվ, հարկադիր կատարողի կողմից այդ շահերը պատշաճ գնահատելու դրդապատճառները բավարար չեն: Իհարկե, կողմերը կարող են հարկադիր կատարողի գործողությունները բողոքարկել դատարան: Այդուհանդերձ, հայեցողական լիզորությունների իրականացման հետ կապված բողոքարկումը, հատկապես հարկադիր կատարողի կողմից հարկադիր կատարման կարգի խախտում թույլ տված չլինելու դեպքում, միշտ չէ, որ հանդիսանում է պաշտպանության արդյունավետ միջոց և հարկադիր կատարողի կողմից իր լիզորությունները պատշաճ իրականացնելու համար նախականիչ նշանակություն ունեցող գործոն: Դրա պատճառներից մեկը հարկադիր կատարման սկզբունքների օրենսդրական ամրագրման բացակայությունն է³²: Միաժամանակ, պետք է հաշվի առնվի այն կարևոր

³¹ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ԶԳ օրենք, հոդված 43, մաս 2:
³² Հարկադիր կատարողի կողմից անձանց շահերը հաշվի առնելու վերաբերյալ նախատեսված եզակի դրույթ է թերևս «Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության մասին» ԶԳ օրենքի 45-րդ հոդվածում առկա այն դրույթը, ըստ որի հարկադիր կատարողը պարտավոր է իրեն վերապահված իրավունքներն օգտագործել օրենքից համապատասխան և իր գործունեության մեջ թույլ չտալ քաղաքացիների ու կազմակերպությունների իրավունքների և օրինական շահերի որևէ խախտում:

հանգամանքը, որ հարկադիր կատարողի հայեցողական լիազորությունների խիստ սահմանափակումը կբացառի հարկադիր կատարման առավել արդյունավետ իրականացմանն ուղղված ճկունությունը:

234. Հարկ է նշել, որ մոտիվացիայի բարձրացման և հայեցողական լիազորությունների պատշաճ օգտագործման խնդրի լուծման տարբերակներից մեկը դատական ակտերի հարկադիր կատարման գործառնությունի մասնակի ապապետականացումն է: Միջազգային փորձը վկայում է, որ դատական ակտերի հարկադիր կատարման գործառնություններն արդյունավետ իրականացվում են նաև մասնավոր կազմակերպությունների կողմից, որոնք գտնվում են հետևողական պետական վերահսկողության ոլորտում:
235. Ներկայում դատական ակտերի հարկադիր կատարումը Հայաստանի Հանրապետությունում իրականացվում է բացառապես ՀՀ արդարադատության նախարարության առանձնացված ստորաբաժանում հանդիսացող դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության կողմից: Ի տարբերություն քաղաքացիական ծառայության, դատական ակտերի հարկադիր կատարումը հատուկ ծառայության տարատեսակ է, որը սահմանվում է «Դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության մասին» օրենքով: Դատական ակտերի հարկադիր կատարման ոչ մի այլընտրանքային մեխանիզմ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված չէ:
236. Դատական ակտերի հարկադիր կատարման ոլորտում կոռուպցիոն ռիսկերի կրճատման համար կարևոր պայման է նաև պարտապանի՝ հարկադիր կատարման կարգով բռնագանձման ենթակա գույքը հայտնաբերելու տեխնիկական հնարավորությունների բարձրացումը: Թեև «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքը նախատեսում է պարտապանի՝ հարկադիր կատարողին իր տնօրինության տակ եղած գույքի վերաբերյալ տեղեկատվություն տալու պարտականությունը, և այդպիսի տեղեկատվություն չտրամադրելու կամ տվյալները խեղաթյուրելու դեպքում պարտապանը ենթակա է ընդհուպ մինչև քրեական պատասխանատվության³³, գործնականում հարկադիր կատարումն իրականացնելու նպատակով անհրաժեշտ է պարտապանի գույքի հետախուզում հայտարարել: Պարտապանի գույքի գտնվելու վայրի մասին տեղեկություններ չլինելու դեպքում հարկադիր կատարողը որոշում է կայացնում պարտապանի գույքի հետախուզում հայտարարելու մասին: Պարտապանի գույքի հետախուզումն իրականացվում է անշարժ գույքի կադաստր, պետական ռեգիստր, դեպոզիտարիա, հարկային, մաքսային, պետավտոտեսչության մարմիններին հարցումներ կատարելու միջոցով: Պարտապանի գույքի հայտնաբերման այլ միջոցների հարցը օրենքը չի կարգավորում:
237. Վերջապես, ՀՀ արդարադատության նախարարության կողմից վերահսկողության մեխանիզմների բարելավումը մեծ նշանակություն ունի նաև դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության՝ որպես արդարադատության նախարարության աշխատակազմի առանձնացված ստորաբաժանման գործունեության արդյունավետությունն ու վերահսկելիությունն ապահովելու համար:
238. Այսպիսով, դատական ակտերի հարկադիր կատարման ոլորտում կոռուպցիոն ռիսկերի կրճատման նպատակով անհրաժեշտ է.
- **Բարձրացնել հարկադիր կատարողների կողմից պարտապանի գույքը հայտնաբերելու հնարավորությունը.** պարտապանի գույքի հետախուզում հայտարարելու հարցում հարկադիր կատարողի լիազորությունները հստակեցնելու, պարտապանի գույքի հայտնաբերման միջոցները վերանայելու, պարտատիրոջ կողմից պարտապանին պատկանող գույք հայտաբերելու վերաբերյալ պարտատիրոջ տեղեկատվությունը ստուգելու կարգը հստակեցնելու միջոցով:
 - **Բարելավել ՀՀ արդարադատության նախարարության շրջանակներում իրականացվող վերահսկողության մեխանիզմները.** դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության գործունեության նկատմամբ վերահսկողության մեթոդները վերանայելու, դրանց արդյունքների ամփոփման ընթացակարգեր սահմանելու միջոցով:

³³ ՀՀ քրեական օրենսգրք, հոդված 345¹:

4.11. Ոստիկանական ծառայություն

239. **Ճանապարհային երթևեկության** ոլորտում առկա հիմնախնդիրների լուծման նպատակով 2006թ. ՀՀ Նախագահի կարգադրությամբ հաստատված միջոցառումները հիմնականում ի կատար են ածվել, սակայն ոլորտում կոռուպցիոն ռիսկերի տեղիք տվող ինչպես օրենսդրական, այնպես էլ գործանականում առաջացած բացերը դեռևս ամբողջովին հաղթահարված չեն:
240. **Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովումը և երթևեկության կանոնների խախտման համար վարչական պատասխանատվության ենթարկելը** թերևս մնում են ճանապարհային ոստիկանության գործունեության առավել խոցելի ոլորտներից: Ճանապարհային երթևեկության կանոնները հաստատվել են «Հայաստանի Հանրապետության ճանապարհային երթևեկության կանոնները և տրանսպորտային միջոցների շահագործումն արգելող անսարքությունների և պայմանների ցանկը հաստատելու մասին» (ՃԵԿ) ՀՀ կառավարության 2007թ. որոշմամբ: 2007թ. Վարչական իրավախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում (ՎԻՎՕ) կատարված փոփոխություններով զգալիորեն խստացվեց պատասխանատվությունը ճանապարհային երթևեկության կանոնների խախտման համար: Այդուհանդերձ, ինչպես ՃԵԿ-ով նախատեսված երթևեկության կանոնները, այնպես էլ ՎԻՎՕ-ում նախատեսված իրավախախտումների սահմանումները գերծ չեն թերություններից և անհստակություններից, ինչը գործնականում բարդություններ է ստեղծում քաղաքացիների կողմից դրանց ընկալման համար: Մասնավորապես, ՎԻՎՕ-ով պատասխանատվություն առաջացնող մի շարք իրավախախտումների էությունը հասկանալու համար պետք է դիմել ճանապարհային երթևեկության կանոններին և դրանք համադրել ՎԻՎՕ-ով նախատեսված պատասխանատվություն սահմանող նորմերի հետ: Իրավական կարգավորումների անհստակությունը և խրթինությունը, թույլ տալով ոստիկանության ծառայողների կողմից տարաբնույթ մեկնաբանությունների հնարավորություն, կոռուպցիոն դրսևորումների պարարտ հող են հանդիսանում:
241. **Վարչական պատասխանատվության ենթարկելու ակտի իրավաչափությունը և օրինականությունը** վարչական իրավախախտումների համար պատասխանատվության ենթարկելու հարցում հաճախ արծարծվող և խնդիրներ առաջացնող հարցերից է: Գործականում վարչական ակտերը թերի են և հազիվ, թե համապատասխանում են գրավոր վարչական ակտին «Վարչական վարույթի և վարչարարության հիմունքների մասին» ՀՀ օրենքով ներկայացվող պարտադիր պահանջներին: Մասնավորապես, վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ ճանապարհային ոստիկանության կողմից կայացվող ակտերում բացակայում է լուծվող հարցի նկարագրությունը, ակտի ընդունման հիմնավորումը, ակտի բողոքարկման ժամկետները և մարմինը, ներառյալ՝ դատարանը, որին կարող է այդ ակտը բողոքարկվել: Առանձին դեպքերում նույնիսկ պարզ չէ, թե կոնկրետ որտեղ է կատարվել իրավախախտումը: Նույնը վերաբերում է նաև վարչական իրավախախտումների վերաբերյալ արձանագրություններին, մինչդեռ, ճանապարհային ոստիկանության ծառայողներն իրենց կողմից կայացվող վարչական ակտերը չեն ապահովում համապատասխան ապացույցներով, որոնք հետագայում՝ դրանց վիճարկման դեպքում, կարևոր են գործի լուծման համար: Նման իրավիճակներում պետք է հստակորեն գործի օրենսդրական այն սկզբունքը, որ վարչական մարմնի կողմից քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ անձի ներկայացրած տվյալները, տեղեկությունները համարվում են հավաստի բոլոր դեպքերում, քանի դեռ վարչական մարմինը հակառակը չի ապացուցել: Նշված մոտեցումներն արտացոլված են նաև վարչական դատարանի կողմից կայացված մի շարք վճիռներում, որոնցով ճանապարհային ոստիկանության վարչական ակտերը ճանաչվել են ոչ իրավաչափ ու վերացվել են:
242. **Անձին տեղում վարչական պատասխանատվության ենթարկելու և նշանակվող տուգանքը գանձելու** հնարավորություն վերապահելը ճանապարհային ոստիկանության աշխատակիցներին և միաժամանակ վարչական պատասխանատվության խստացումը՝ տուգանքների չափերի աճը, կոռուպցիոն նոր ռիսկերի աճ արձանագրեցին: Ըստ էության նախապայմաններ ստեղծվեցին խախտում կատարած անձի հետ ոստիկանության աշխատակցի կողմից համաձայնության գալու և կատարված առավել ծանր իրավախախտման փոխարեն անձին առավել թեթև խախտման համար վարչական պատասխանատվություն ենթարկելու գայթակղության համար:
243. Երթևեկության կանոնների խախտման համար պատասխանատվության ենթարկելիս մեծ է **պատասխանատվության տեսակների և պատժաչափերի հարցում հայեցողության դրսևորման**

վտանգը, ինչի արդյունքում, գործնականում թերևս չի իրականացվում պատժի անհատականացման սկզբունքը: Ավելին, խնդիր է ներկայացնում նաև առանձին իրավախախտումների կրկնակիության համար ՎԻՎՕ-ով նախատեսված առավել խիստ պատասխանատվության միջոցների հարցը: Գործնականում, իրավախախտումը կատարելու վայրում անձին պատասխանատվության ենթարկող ոստիկանը հակված է կիրառել առավել խիստ պատասխանատվության միջոց, ակնկալելով, որ անհամաձայնության դեպքում անձը կարող է գնալ բողոքարկման ճանապարհով՝ փոխանակ բացահայտելու, թե անձը որերորդ անգամ է կատարում համապատասխան իրավախախտումը: Մինևնայն ժամանակ, չարաշահվում են վարչական ներգործության այնպիսի լծակներ, ինչպես տրասնպորտային միջոցի համարանիշները հանելը կամ վարորդական իրավունքից զրկելը հատկապես այն դեպքերում, երբ կոնկրետ խախտման համար այդ միջոցների կիրառումը նախատեսված չէ՝ վարորդների համար առաջացնելով համարանիշները կամ վկայականը հետ ստանալու համար լրացուցիչ քաշքշուկներ ու հավելյալ ծախսեր:

244. Ըննապարհային գծանշման պատշաճ վիճակի ապահովումը ևս կարևոր նախապայման է ոլորտում կոռուպցիոն ռիսկերի նվազեցման հարցում: Գծանշումների ոչ բավարար տեսանկյունները կամ դրանց ի սպառ բացակայությունը գործնականում օգտագործվում են որպես վարորդներին պատասխանատվության ենթարկելու բավական լավ սողանք: Կոռուպցիոն ռիսկերի նվազեցման տեսանկյունից կարևոր խնդիր է ներկայացնում ճանապարհային երթևեկության նշանների տեղադրման չարաշահումը, երթևեկության գերկարգավորումը կամ սխալ կարգավորումը, ինչը կոռուպցիոն դրսևորումների և վարորդների համար անհարկի խոչընդոտների աղբյուր է:

245. Վարորդական վկայականների տրամադրումը ճանապարհային ոստիկանությանը վերապահված մյուս կարևոր գործառնություններից է, որտեղ տարիներ շարունակ զգալի են եղել կոռուպցիոն ռիսկերը: Խնդիր է ներկայացրել վարորդական վկայականների տրամադրման համար քննությունների անցկացման թափանցիկությունը ու հայեցողության դրսևորման բացառումը: **2008թ.** ՀՀ կառավարությունը հաստատել է վարորդական վկայական ստանալու քննություններ ընդունելու և վարորդական վկայական տալու նոր կարգ, որը մանրամասն կարգավորման է ենթարկում վարորդական վկայականների տրամադրելու համար տեսական և գործնական քննությունների անցկացման ընթացքը: Սակայն այս ակտի փորձարկումը գործնականում՝ կոռուպցիոն ռիսկերի տեսանկյունից, դեռևս ժամանակ է պահանջում:

246. Ըննապարհային ոստիկանության գործունեության արդյունավետության մասին դատելու լուրջ չափանիշներից է հանրապետությունում **վթարայնության մակարդակը**: Ոստիկանության տվյալների համաձայն **2008 թ. 1-**ին կիսամյակի ընթացքում վթարայնությունը հանրապետությունում պահպանել է աճի միտումը: Ըննապարհատրասնպորտային պատահարների ճշտագրիտ թվի բացահայտումը և հրապարակային դարձնելը ճանապարհային ոստիկանության աշխատանքի արտապատկերն է և թույլ է տալիս գնահատել ձեռնարկված միջոցառումների արդյունավետությունը: Ներկայում կառուպցիոն նկատելի ռիսկեր են պարունակում պատահարների հանգամանքների պարզումը և ճանապարհատրասնպորտային պատահարի սխեմաների կազմումը, որտեղ կարող է դրսևորվել հայեցողություն և շահագրգռվածություն: Սխեմաները վերծանելու հարցում վարորդների անտեղյակությունը լրացուցիչ կոռուպցիոն ռիսկեր է ստեղծում:

247. Ըննապարհային ոստիկանության **կյութական խրախուսման և տեխնիկական զարգացման արտաբյուջետային ֆոնդն** ուղղված է ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման արդյունավետությունը բարձրացնելուն: Ոստիկանության գործունեության օրինականության ապահովման տեսանկյունից կարևոր է արտաբյուջետային ֆոնդի գոյացման և դրանից միջոցների ծախսման թափանցիկության ապահովումը, հատկապես ճանապարհային երթևեկության անվտանգության բնագավառում վարչական իրավախախտումների համար գանձված տուգանքների առումով:

248. Կոռուպցիոն ռիսկեր է ծնում նաև ճանապարհային ոստիկանությանը վերապահված իրավասությունների ոլորտում գործող բազամաթիվ **ենթաօրենդական ակտերին քաղաքացիների անտեղյակությունը**, ինչը պաշտոնատար անձանց հնարավորություն է տալիս չարաշահել իրենց իշխանական լիզորությունները և քաղաքացիներին ներքաշել անհարկի վարչարության մեջ, նրանց վրա դնել օրենքով չնախատեսված պարտականություններ: Ավելին, համապատասխան ընթացակարգերը քաղաքացիներին բացատրելու ու մատչելի դարձնելու փոխարեն, վերջիններիս իրավական անտեղյակությունը ծառայեցվում է շահույթ ստանալու նպատակ հետապնդող մասնավոր գործունեության այլ տեսակների համար:

249. **Անձնագրային ռեժիմի** բնագավառում կոռուպցիոն ռիսկերի նվազեցման և միջազգային պահանջներին ՀՀ-ում տրվող անձնագրերի համապատասխանեցման նպատակով **2008թ. ՀՀ կառավարության կողմից հաստատվել է «Հայաստանի Հանրապետության միգրացիայի համակարգի և Հայաստանի Հանրապետությունում կենսաչափական կողմնորոշիչներ պարունակող էլեկտրոնային անձնագրերի և նույնացման քարտերի համակարգի ներդրման հայեցակարգով նախատեսված միջոցառումների ծրագրից բխող գործողությունների իրականացման ժամանակացույցը»:** Բարեփոխումների համատեքստում, կոռուպցիոն ռիսկեր են ձևավորվում սահմանային անցման կետերում ռստիկանության ծառայողներին կողմից վարչական տույժեր կիրառելու իրավասության վերապահումը՝ ՎԻՎՕ **201** հոդվածով նախատեսված իրավախախտումների համար:

250. **Անձնագրերի տրամադրումը և դրանց վավերականության ժամկետների երկարաձգման գործընթացում** առաջացող գործնական խնդիրները հիմնականում պայմանավորված են անձնագրերի տրամադրման և օտարերկրյա պետություններում քաղաքացու անձնագրի վավերականության հաստատման ժամանակատարության հետ: Հատկապես նոր անձնագրերի տրամադրման ժամկետների տևականությունը պայմանավորված է ինչպես սուբյեկտիվ, այնպես էլ օբյեկտիվ գործոններով: Անձնագրի տրամադրման համար հիմքերը փոստային ծառայությունների միջոցով ուղարկվում են համապատասխան կենտրոնական մարմին, որի հետևանքով էլ այն վերածվում էր ժամանակատար պրոցեսի (մոտ երկու շաբաթ): Ներկայում քայլեր են ձեռնարկվում անձնագրի հիմքերի վերաբերյալ տվյալների էլեկտրոնային կարգով փոխանակման համակարգ ներդնելու ուղղությամբ, որի արդյունքում հնարավոր կլինի զգալիորեն կրճատել անձնագրերի տրամադրման ժամկետները:

251. **2007թ. ընդունված** նոր կարգով հստակեցվեց Հայաստանի Հանրապետության **մուտքի վիզա** ստանալու համար օտարերկրացու կողմից մուտքի վիզա տրամադրող մարմին ներկայացվող փաստաթղթերի ցանկը, դիմումի քննարկման, մուտքի վիզաների տրամադրման և դրանց ժամկետի երկարաձգման կարգը: Կոռուպցիոն ռիսկերից խուսափելու համար կարևոր քայլ էր վիզայի ստացման, դրա ժամկետի երկարաձգման համար սահմանված պետական տուրքի, ինչպես նաև համապատասխան տուգանքների գանձումը միայն բանկային հաստատությունների միջոցով՝ ի տարբերություն նախկինում առկա պրակտիկայի, երբ գանձումները կատարվում էին նաև պետական սահմանի անցման կետերում կամ ռստիկանության անձնագրային և վիզաների վարչության կողմի առձեռն՝ հաճախ անձին չտրամադրելով անգամ վճարման անդորրագիր:

252. Ոստիկանության գործունեության հետ կապված ընդհանուր նկատառումներից է վերջինիս **գործունեության թափանցիկության պակասը**, ոլորտին առնչվող առանձին իրավական ակտերի ընդունման հարցում հանրային քննարկումների բացակայությունը և հասարակական երկխոսության բացակայությունը: Արդյունքում, քաղաքացիական հասարակության կառույցները և հասարակությունը ընդհանրապես կտրված են ընթացող դինամիկ զարգացումներից, չունեն դրանց ժամանակին արձագանքելու հնարավորություն, ինչն էլ խորացնում է ռստիկանության օտարվածությունը հասարակությունից և վերջինիս հանդեպ վստահության պակասը: Կարևորվում է նաև ռստիկանության այն ստորաբաժանումների աշխատանքի և սպասարկման որակի բարձրացումը, որոնք առավել սերտ շփում ունեն քաղաքացիների հետ:

253. Այսպիսով, ռստիկանության ծառայության գործունեության շրջանում օրինականության բարձրացման, հասարակական վստահության ամրապնդման և կոռուպցիայի դեմ պայքարում գործուն մեխանիզմների ներդրման նպատակով անհրաժեշտ է.

- **Կատարելագործել ճանապարհային երթևեկության կանոններն ու դրանց խախտման համար պատասխանատվություն նախատեսող նորմերը.** առկա իրավական կարգավորումների անհստակությունները և տարամեկնաբանությունների տեղիք տվող նորմերը վերացնելու, պատասխանատվության տեսակների և պատժաչափերի ընտրության հարցում հայեցողության դրսևորման վտանգները, ինչպես նաև ճանապարհային կանոնների խախտման համար նախապայմաններ ստեղծող այլ խոչընդոտները վերացնելու միջոցով.
- **Բարձրացնել ճանապարհային ռստիկանության գործունեության թափանցիկությունը, հրապարակայնությունը և հաշվետվողականությունը.** ռստիկանության նյութական խրախուսման և տեխնիկական զարգացման արտաբյուջետային ֆոնդի ձևավորման և միջոցների ծախսման թափանցիկությունն ապահովող ընթացակարգեր ներդնելու,

ճանապարհային պատահարների, գրանցված վարչական իրավախախտումների վերաբերյալ վիճակագրության մատչելիությունն ապահովող ընթացակարգեր ներդնելու միջոցով.

- **Ապահովել ճանապարհային երթևեկության կազմակերպման կահավորանքի, գծանշումների պատշաճ վիճակը.** պատշաճ վայրերում ճանապարհային երթևեկության նշանների տեղակայելու և անհարկի կամ խոչընդոտներ ստեղծող նշաններն հանելու գործընթացների արդյունավետ կազմակերպման ընթացակարգերն հստակեցնելու, այդ գործընթացներում ճանապարհային ոստիկանության և համայնքային մարմինների միջև համագործակցության գործուն ընթացակարգեր ներդնելու, երթևեկության կազմակերպման կահավորանքի և ճանապարհային նշանների տեղադրման հրապարակայնությունն ապահովող ընթացակարգեր ներդնելու և դրանց արդյունավետության գնահատման շարունակական մոնիթորինգի միջոցով.
- **Բարձրացնել բնակչության պետական ռեգիստրի գործունեության արդյունավետությունը և օգտակարությունը.** պետական ռեգիստրի համակարգի շարունակական կատարելագործման, հանրային ծառայություններ մատուցելիս պետական ռեգիստրի տվյալների արդյունավետ օգտագործումն ապահովող ընթացակարգեր ներդնելու, պետական ռեգիստրում առկա հասցեով անձին ուղարկված ծանուցագրերը պատշաճ հասցեով ուղարկված համարելու վերաբերյալ նորմեր սահմանելով (եթե անգամ անձի փաստացի բնակության վայրը տարբեր է):
- **Ներդնել անհատական տվյալների անձեռնմխելիությունը ապահովող համապատասխան իրավական նորմեր,** բնակչության ռեգիստրին համապատասխան տվյալներ չհաղորդելու, առանց նույնացման քարտի բնակվելու, բնակչության ռեգիստրին պաշտոնատար անձանց կողմից օրենքով սահմանված տվյալները չտրամադրելու կամ դրանք թերի տրամադրելու համար իրավական հետևանքներ նախատեսելու միջոցով.
- **Բարձրացնել ոստիկանության գործունեության օրինականությունը և պատասխանատվությունը** վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ իրավաչափ և օրենքի պահանջներին համապատասխանող վարչական ակտերի կայացումն ապահովելու, ոստիկանության պաշտոնատար անձանց գործողությունների բողոքարկման ընթացակարգերի մատչելիությունը բարելավելու, ոստիկանության ծառայողների աշխատավարձերի զգալի բարձրացմանը զուգահեռ նրանց գործունեության օրինականությանն նկատմամբ հսկողական մեխանիզմները խստացնելու, ապօրինի վարձատրությունից ստացվող եկամուտների համար ռիսկայնության աստիճանն ու պատժի անխուսափելիությունը բարձրացնելու միջոցով.
- **Ապահովել ոստիկանության մարմինների աշխատանքի և քաղաքացիների սպասարկման պատշաճ որակը** ոստիկանության միջանկյալ օղակների և ծառայող-քաղաքացի շփման անհրաժեշտությունը նվազագույնի հասցնելու, հասարակության և ոստիկանության մարմինների միջև փոխգործակցությունը խրախուսելու և քաղաքացիական մասնակցության ընթացակարգեր ներդնելու, ոստիկանության գործունեության վերաբերյալ հանրային իրազեկումը բարձրացնելու, քաղաքացիների իրավունքների և պարտականությունների և վարչարարական գործընթացների պատշաճ լուսաբանումն ապահովելու միջոցով:

4.12. Քաղաքական հատված և քաղաքական կոռուպցիա

254. Ջարգացող և անցումային փուլում գտնվող պետություններում քաղաքական կոռուպցիան հաղթահարելու անհրաժեշտությունը հատկապես կարևորվում է նրանով, որ այն խարխուլում է ժողովրդավարական նորաստեղծ ինստիտուտները՝ պետության հիմքերը: Ավելին, քաղաքական կոռուպցիայի վտանգավորությունը պայմանավորված է քաղաքական գործիչների կամ ժողովրդի կողմից ընտրված ներկայացուցիչների մասնակցությամբ³⁴: Այդ տեսանկյունից Հայաստանի Հանրապետությունում որպես քաղաքական կոռուպցիայի սուբյեկտ պետք է դիտարկել քաղաքական ազդեցություն ունեցող անձանց, մասնավորապես, քաղաքական որոշումներ ընդունելու իրավասություն ունեցող՝ քաղաքական պաշտոն զբաղեցնող անձանց:

³⁴ Տես՝ Բաժին առաջին. Քաղաքական կոռուպցիա, Ռոբին Հոդեսս (www.transparency.org/content/download/4459/26786/file/Introduction_to_political_corruption.pdf):

255. Քաղաքական կոռուպցիայի ռիսկերը առկա են մասնավորապես ընտրությունների կազմակերպման, քաղաքական կուսակցությունների ֆինանսավորման, քաղաքական նկատառումներով բարեգործության իրականացման, իշխանության օրենսդիր, գործադիր և դատական թևերի միջև հակակշիռների խախտման մեջ:

256. Հայաստանի Հանրապետությունում հակակոռուպցիոն քաղաքականության մշակման և իրականացման գործում առանցքային և վճռորոշ դեր ունի Ազգային ժողովը: Այս առումով հատակապես կարևորվում են այն բարձր չափանիշները, որոնց պետք է համապատասխանի Ազգային ժողովի **պատգամավորներից յուրաքանչյուրի վարքագիծը**: Հայաստանի Հանրապետության քաղաքացիներն իրավունք ունեն Ազգային ժողովի պատգամավորներից ակնկալելու պատշաճ վարագծի դրսևորում ինչպե՛ս Ազգային ժողովում, այնպե՛ս էլ նրանից դուրս՝ պատգամավորական լիազորություններն իրականացնելիս: Հայաստանի Հանրապետությունում Ազգային ժողովի պատգամավորների վարքագծի կանոնների ընդունման անհրաժեշտությունը բխում է նաև ՄԱԿ-ի «Կոռուպցիայի դեմ կոնվենցիայից», որով սահմանված է, որ յուրաքանչյուր մասնակից պետություն պետք է ձգտի իր ինստիտուցիոնալ և իրավական համակարգերի շրջանակներում հանրային պաշտոնատար անձանց համար (այդ թվում՝ պատգամավորների) ընդունել վարքագծի կանոնագրքեր և չափորոշիչներ, որի օրինակ է բերված «Պետական պաշտոնատար անձանց պահվածքի միջազգային կանոնագիրքը»³⁵: Պատգամավորների վարքագծի կանոնների ընդունման գործընթացը խթանելու կապակցությամբ ՄԱԿ-ի նշված կոնվենցիայի կարևոր դերի մասին նշված է նաև Խորհրդարանականներն ընդդեմ կոռուպցիայի միջխորհրդարանական ցանցի (**GOPAC**) Խորհրդարանականների վարքագծի կանոնագրքի վերաբերյալ բանաձևում³⁶:

257. ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների վարքագծի կանոնների հետ կապված հարցերը լիովին և լիարժեքորեն կարգավորված չեն: Օրենքով սահմանված են որոշ դրույթներ, որոնք վերաբերվում են պատգամավորների վարքագծին: Մասնավորապես, իրենց լիազորությունները ստանձնելիս պատգամավորները երդվում են, սակայն պատգամավորների՝ երդվելուց հրաժարվելու համար պատասխանատվություն նախատեսված չէ: Ազգային ժողովի նիստի ժամանակ դահլիճում արգելվում է բջջային և կապի այլ միջոցների օգտագործումը, բացառությամբ դահլիճում տեղադրված հեռախոսի, սակայն այդ նորմի պահանջները միշտ չէ, որ հստակորեն պահպանվում են: Պատգամավորը պետք է գրանցվի և քվեարկի անձամբ, որը միշտ չէ, որ պահպանվում է: Այս խախտումների համար կոնկրետ պատասխանատվություն սահմանված չէ, թեև տրամաբանական կլինեք կարգապահականից ավելի խիստ պատասխանատվություն սահմանել, քանի որ նման խախտումները կարող են էականորեն ազդել Ազգային ժողովի որոշման ընդունման վրա: Խախտումների համար սանկցիաների գործող համակարգը ճկուն է, սակայն այն պետք է ըստ խախտումների տեսակների կոնկրետացնել և սահմանել յուրաքանչյուր դեպքում իրավասու մարմնի կողմից արձագանքելու և ներգործության միջոցներ ձեռնարկելու հստակ կարգ և ժամկետներ: Պատգամավորը կարող է Ազգային ժողովի նիստի վարման կարգի վերաբերյալ իր ելույթում հերքել իր անձի վերաբերյալ արված արտահայտությունը, սակայն վիրավորական արտահայտություն թույլ տվողի անձի նկատմամբ կոնկրետ պատասխանատվություն նախատեսված չէ: Ազգային ժողովի պատգամավորների վարքագծի կանոնները պետք է սահմանված լինեն օրենքով: Սակայն, Ազգային ժողովի պատգամավորի վարքագծին առնչվող դրույթներ պետք է պարունակվել նաև այլ օրենքներում և առաջին հերթին՝ ՀՀ ընտրական օրենսգրքում: Քանի որ Ազգային ժողովի լիազորությունների ժամկետն ավարտվում է նորընտիր Ազգային ժողովի առաջին նիստի գումարման պահին, ուստի ընտրությունների ժամանակ պատգամավորները դեռևս պահպանում են իրենց լիազորությունները և շատ կարևոր է, որ այդ ժամանակահատվածում նույնպես հանդես գան պատշաճ վարքագծով և օրինակ ծառայեն քաղաքական պայքարին մասնակցող կողմերի համար:

258. ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների շահերի բախման հետ կապված հարաբերությունների կանոնակարգման գործընթացում առանձնահատուկ դեր ունի **պատգամավորների ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու նկատմամբ սահմանադրական արգելքը**: Ընդհանուր առմամբ պատգամավորների ձեռնարկատիրական գործունեությունը, ինչպես նաև պատգամավորական գործունեությունից բացի՝ այլ վճարովի աշխատանք իրականացնելն արգելող սահմանադրական նորմերի կիրառման լիարժեք օրենսդրական մեխանիզմները բացակայում են: Սահմանված չեն տնտեսական ընկերության գործունեությանը պատգամավորի մասնակցության

³⁵Տես՝ Կոնվենցիայի 2-րդ հոդվածի «a» կետ և 8-րդ հոդված, <http://www.un.org/russian/documen/convents/corruption.pdf>:

³⁶Տես՝ http://www.gopacnetwork.org/Docs/Global/Final_DOCS/Codes_of_Conduct_Resolution.pdf:

այն ձևերը, որոնք ձեռնարկատիրական գործունեություն չեն համարվում: Բացակայում են պատգամավորի կողմից գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքների իրականացման և դրանց դիմաց վճարումներ կատարելու այնպիսի կարգերը, որոնք կբացառեն այդպիսի աշխատանքներ կատարելիս սահմանադրական նորմերի շրջանցումը և այլոց մասնավոր շահերով պատգամավորների առաջնարդվելը: Սահամադրությամբ և Ազգային ժողովի կանոնակարգ օրենքով Սահամադրության 65-րդ հոդվածով նախատեսված պաշտոնը զբաղեցնելու կամ աշխատանքի անցնելու դեպքում իրավասու մարմիններին տեղյակ պահելու պարտականություն պատգամավորը չունի: Բացակայում են նաև պատգամավորի կողմից Սահամադրության 65-րդ հոդվածով նախատեսված պայմանները խախտելու փաստը պարզելու և պատգամավորի լիազորությունների դադարման հարցը լուծելու կարգերը:

259. Օրենսդիր մարմնում կոռուպցիայի կրճատման առումով կարևոր նշանակություն ունի նաև **պատգամավորական անձեռնմխելիության** հետ կապված խնդիրների հստակ օրենսդրական կանոնակարգումը: Պատգամավորական անձեռնմխելիության չարաշահումը լուրջ կոռուպցիոն սպառնալիք է ժողովրդավարացման ուղին որդեգրած երիտասարդ պետությունների համար: Սակայն մյուս կողմից պատգամավորական (խորհրդարանական) անձեռնմխելիության ինստիտուտի հիմնական նշանակությունը պատգամավորական մանդատի անարգել իրականացման, ինչպես նաև իշխանության գործադիր և դատական թևերի ազդեցությունից օրենսդիր մարմնի անդամների պաշտպանության ապահովումն է: Ըստ այդմ, Հայաստանի Հանրապետությունում հակակոռուպցիոն պայքարի շրջանակներում իրականացվող ժողովրդավարական բարեփոխումները պետք է ուղղված լինեն մի կողմից՝ քաղաքական հետապնդումներից պատգամավորների պաշտպանության և մյուս կողմից՝ պատգամավորական անձեռնմխելիությունը սեփական շահերին ծառայեցնելուն հակադրվելու միջոցների կատարելագործմանը և ոչ թե՝ ընդհանրապես պատգամավորական (խորհրդարանական) անձեռնմխելիության ինստիտուտի վերացմանը:

260. Ազգային ժողովի գործունեության ընթացքում **շահերի բախման կարգավորման** տեսանկյունից կարևոր նշանակություն ունի պատգամավորների գույքի և եկամուտների հայտարարագրման համակարգի կատարելագործումը, շահերի հայտարարագրման ինստիտուտի ներդրումը և նվերների ստացման կարգավորումը: Պատգամավորների գույքի և եկամուտների հայտարարագրման համակարգի հետագա կատարելագործումը պետք է տեղի ունենա հայտարարագրերի ստուգման և անճշտությունների հայտնաբերման մեխանիզմների կատարելագործման, ինչպես նաև պատշաճ կարգով հայտարարագրերի ներկայացման մասին պահանջները պատգամավորական վարքագծի կանոններում ներառելու և դրանց խախտման համար պատասխանատվության միջոցներ նախատեսելու ճանապարհով: Բացի այդ, օրենսդրորեն պետք է կարգավորել նաև պատգամավորների տնտեսական, անձնական և այլ մասնավոր շահերի հայտարարագրման հետ կապված հարաբերությունները: Պատգամավորների կողմից նվերների ստացման հետ կապված հարաբերությունները Հայաստանի Հանրապետության օրենսդրությունում կարգավորված են թերի: Այս հարաբերությունները դեռևս կարգավորվում են ՀՀ կառավարության «Պաշտոնի բերումով ստացված նվերները պետությանը հանձնելու կարգի մասին» **1993թ.** որոշմամբ:

261. Կոռուպցիայի կանխարգելման տեսանկյունից կարևոր է նաև օրենքների և Ազգային ժողովի **որոշումների ընդունման ընթացակարգերի** կատարելագործումը՝ դրանցում ավելի շատ տեղ տալով քաղաքացիական հասարակության մասնակցությանը: Գլխադասային հանձնաժողովներում օրենքի և Ազգային ժողովի որոշումների նախագծի քննարկումների փուլում հասարակական միավորումների ներկայացուցիչների և անհատ քաղաքների մասկայացությունը կարող է դրսևորվել ինչպես Ազգային ժողովի հանձնաժողովների նիստերին ներկա գտնվելու, այնպես էլ՝ նախագծի և դրա վերաբերյալ առաջարկությունների քննարկմանը մասնակցելու ձևերով, եթե նրանք այդ փաստաթղթերի հեղինակն են: Նախագծի վերաբերյալ առաջարկություններ ներկայացրած հասարակական միավորման ներկայացուցիչը կամ քաղաքացին հանձնաժողովի նիստին կարող է ներկա գտնվել միայն հանձնաժողովի որոշմամբ: Օրենքով սահմանված չէ քննարկվող նախագծի վերաբերյալ առաջարկություն ներկայացրած հասարակական միավորման ներկայացուցչին տեղեկացնելու կարգը: Խորհրդարանական լուսնների հասարակական միավորումների ներկայացուցիչների և քաղաքացիների առավել լիարժեք մասնակցությանը խոչընդոտում է այն հանգամանքը, որ հրավիրվածների ցանկը սահմանում է հանձնաժողովը:

262. Այսպիսով իշխանության օրենսդիր մարմնում կոռուպցիոն ռիսկերը նվազեցնելու, օրենսդրի գործունեության թափանցիկությունը, հրապարակայնությունը, հաշվետվողականությունն ու օրինականությունը ապահովելու նպատակով, անհրաժեշտ է.

- **Սահմանել պատգամավորների վարքագծի կանոնները.** Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի վարքագծի կանոններին առնչվող հարաբերությունները «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքով կարգավորելու և դրանցում պատգամավորների վարքագծի հիմնական սկզբունքներն ամրագրելու, Ազգային ժողովի և նրա մշտական հանձնաժողովների նիստերում պատգամավորի վարվելակերպի կանոնները, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց պաշտոնատար անձանց, հասարակական կազմակերպությունների, զանգվածային լրատվության միջոցների, օտարերկրյա պետություններում և օտարերկրյա անձանց հետ փոխհարաբերություններում պատգամավորի վարվելակերպի կանոնները սահմանելու, Ազգային ժողովի աշխատակազմի, ընտրողների հետ աշխատանքներում պատգամավորի վարվելակերպի կանոնները սահմանելու, վարքագծի կանոնների խախտման համար ներգործության միջոցները սահմանելու, յուրաքանչյուր հերթական նստաշրջանի սկզբում Ազգային ժողովի էթիկայի ժամանակավոր հանձնաժողով ստեղծելու և դրա լիազորությունները սահմանելու միջոցով:
- **Ապահովել պատգամավորի ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու արգելքի սահմանադրական դրույթների կատարումը.** Ազգային ժողովի պատգամավորի անհատ ձեռնարկատեր լինելու արգելքի, ինչպես նաև տնտեսական ընկերությանը նրա մասնակցության արգելվող և թույլատրելի ձևերը սահմանելու, Ազգային ժողովի պատգամավորի կատարած գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքի իրականացման և դրա դիմաց վճարումը կատարելու կարգը սահմանելու, իր կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության կամ Սահմանադրության 65-րդ հոդվածով նախատեսված այլ պայմանների խախտման դեպքում պատգամավորի կողմից Ազգային ժողովի իրավասու հանձնաժողովին անհապաղ տեղեկացնելու կարգը սահմանելու, Սահմանադրության 65-րդ հոդվածով սահմանված պայմանների խախտման փաստի հայտնաբերման կամ այդ փաստի քննության առթիվ Ազգային ժողովի իրավասու հանձնաժողովի կողմից ձեռնարկվելիք միջոցառումները և դրանց իրականացման կարգը սահմանելու միջոցով:
- **Ապահովել անհարգելի բացակայության հետևանքով պատգամավորի լիազորությունների դադարման սահմանադրական դրույթների իրականացումը.** Սահմանադրության 67-րդ հոդվածով նախատեսված՝ մեկ հերթական նստաշրջանի ընթացքում քվեարկությունների ավելի քան կեսից անհարգելի բացակայելու դեպքում պատգամավորների լիազորությունների դադարման կարգը հստակեցնելու, Ազգային ժողովի նախագահի և Ազգային ժողովի պետական-իրավական հանձնաժողովի կողմից Ազգային ժողովի քվեարկություններից պատգամավորների բացակայության պատճառները հարգելի համարելու մասին դրույթները վերանայելու, Ազգային ժողովի քվեարկություններից բացակայության պատճառները հարգելի համարելու դեպքերը հնարավորինս հստակեցնելու, դրա մեջ անազատության մեջ, ժամանակավոր անաշխատունակության մեջ, գործուղման, վճարովի արձակուրդում գտնվելը՝ սահմանելով յուրաքանչյուր դեպքի համար անհրաժեշտ փաստաթղթերի ներկայացման կարգը ներառելու, բացակայության պատճառի հարգելի լինելու փաստն հավաստող՝ օրենքով նախատեսված փաստաթղթի բացակայության դեպքում հարցը Ազգային ժողովում քննարկմանը դնելու կարգը սահմանելու միջոցով:
- **Կատարելագործել պատգամավորների անձեռնմխելիության համակարգը.** պատգամավորական անձեռնմխելիությունը չարաշահողներին հայտնաբերելու, նրանց վերաբերյալ հասարկությանը պատշաճ կարգով տեղեկացնելու և նրանց նկատմամբ պատասխանատվության միջոցներ կիրառելու հստակ կանոններ սահմանելու, քաղաքական նկատառումներով պատգամավորների հետապնդումը բացառող պատգամավորական անձեռնմխելիության համակարգ սահմանելու, պատգամավորական անձեռնմխելիության չարաշահման դեպքերը բացահայտելու նպատակով լրագրողական հետաքննություններ իրականացնելու լրագրողների հմտությունները, ինչպես նաև լրագրողական հետաքննություններին հասարակությանը տեղեկացնելու կարողությունները զարգացնելու մջոցով:
- **Կատարելագործել պատգամավորների շահերի հայտարարագրման մեխանիզմները.** պատգամավորների վարքագծի կանոններում պատգամավորների կողմից նշված շահերի

հայտարարագրման կարգը և պայմանները սահմանելու, Ազգային ժողովում օրենսդրական նախաձեռնությամբ հանդես գալուց, ինչպես նաև Ազգային ժողովի և նրա հանձնաժողովների նիստերում հարցի քննարկումից (այդ թվում՝ քվեարկությունից) առաջ պատգամավորի կողմից հայտարարագիրը ներկայացնելու պահանջ սահմանելու, շահերի բախման դեպքում պատգամավորի վարքագծի կանոններն օրենսդրորեն ամրագրելու, պատգամավորի՝ իր լիազորությունները այլ անձանց պատվերով կամ ի շահ այլ անձանց կատարելու անթույլատրելիությունը սահմանելու, այլ անձանց կողմից, իրենց ընտանեկան, սոցիալական, պաշտոնական կամ այլ դիրքից ելնելով, պատգամավորի որոշման վրա ազդեցության բացառումն ամրագրելու, շահերի բախման դեպքում կամ այնպիսի փաստերի կամ հանգամանքների դեպքում, որոնք կարող են ողջամիտ կասկած հարուցել տվյալ հարցի քննարկման, ընդ որում՝ քվեարկության ժամանակ պատգամավորի անկողմանակալության մեջ, պատգամավորի կողմից պարտադիր ինքնաբացարկ հայտնելու դրույթ սահմանելու և առանձին հարցի քննարկման ընթացքում ինքնաբացարկի հիմքերը սահմանելու, տնտեսական շահ հասկացությունը սահմանելու միջոցով:

- **Ամբողջականացնել պատգամավորի կողմից նվերներ ստանալու արգելքին վերաբերվող նորմերը.** կարգավորման հիմքում պաշտոնատար անձանց կողմից նվերներ ստանալու արգելքի օրենսդրական կարգավորման դատավորի վարքագծի կանոններում ամրագրված դրույթները դնելու, անհամարժեք ցածր գնով վաճառված գույքը կամ մատուցված ծառայությունը, փոխառությունը, ուրիշի գույքի անհատույց օգտագործումը ընդգրկող նվեր հասկացությունը սահմանելու, նվերներ ընդունելու կարգը սահմանելու, պատգամավորի կողմից ի պաշտոնե որևէ մեկից նվեր ընդունելու կամ այն հետագայում ընդունելու համաձայնություն տալու, ինչպես նաև իր հետ բնակվող ընտանիքի անդամներին այդպիսի գործողություններից զերծ պահելու դրույթներ ամրագրելու, ինչպես նաև նվերներ ստանալու արգելքի չգործելու բացառությունները սահմանելու, թույլատրելի համարվող նվերների այն առավելագույն արժեքը, որի գերազանցման մասին պատգամավորը պարտավոր է հայտնելի պատգամավորների վարքագծի կանոնների պահպանումը վերահսկող հանձնաժողովին սահմանելու, արգելված նվերը վերադարձնելու կամ պետությանը հանձնելու կարգը սահմանելու միջոցով:
- **Ապահովել օրենսդիր մարմնի աշխատանքներին քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների արդյունավետ մասնակցությունը.** Ազգային ժողովի կանոնակարգ օրենքում Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ ընտրական իրավունք ունեցող անձանց ոչ պակաս, քան 1 տոկոսի ստորագրությամբ առաջարկված օրենքի կամ Ազգային ժողովի որոշման նախագիծն Ազգային ժողովում պաշտոնապես շրջանառության մեջ դնելու հարցով խորհրդարանական լսումներ անցկացնելու դրույթ սահմանելու, առանց Ազգային ժողովի հանձնաժողովի որոշման՝ հանձնաժողովի նիստերին քննարկվող նախագծերի մշակմանը մասնակցած կամ դրա վերաբերյալ առաջարկություններ ներկայացրած անձանց մասնակցությունը թույլատրելու, տվյալ հարցի քննարկման օրվա մասին նրանց նախապես տեղյակ պահելու և հանձնաժողովի նիստում ելույթի իրավունք սահմանելու, քաղաքացիներին լսումներին մասնակցելու համար առաջարկությամբ հանդես գալու հնարավորությունն ընդլայնելու, հրավիրվածների՝ լսումներին լիարժեք մասնակցելու, հարցեր տալու, առաջարկություններ ներկայացնելու և ելույթ ունենալու իրավունք սահմանելու, խորհրդարանական լսումներն Ազգային ժողովի խմբակցության, ինչպես նաև Ազգային ժողովում չներկայացված կուսակցությունների կամ այլ հասարակական միավորումների առաջարկությամբ՝ հանձնաժողովի որոշմամբ հրավիրելու դրույթներ սահմանելու, առաջին ընթերցմամբ ընդունված օրենքի նախագծի վերաբերյալ ներկայացված առաջարկությունները դասակարգելու միջոցով:

4.13. Ընտրական համակարգ

263. **Քաղաքական կոռուպցիան** առավել ցայտուն դրսևորվում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններում: Միջազգային չափանիշներին համապատասխան սահմանադրությամբ երաշխավորված ընտրելու և ընտրվելու իրավունքի անարգել իրականացումը՝ ազատ և արդար ընտրությունների անցկացումը և դրանց միջոցով լեգիտիմ

իշխանությունների ձևավորումը, ըստ էության Հայաստանի Հանրապետությունում կոռուպցիայի դեմ արդյունավետ և իրական պայքարի կարևորագույն նախապայմանն է:

264. ՀՀ ընտրությունների համապատասխանությունը միջազգային չափորոշիչներին մեծապես պայմանավորված է ընտրական գործընթացներում մասնագիտացված հեղինակավոր միջազգային կառույցների դիտորդական առաքելությունների գործունեությամբ: Այսպես, ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի, Եվրախորհրդի Վենետիկյան հանձնաժողովի, միջազգային կազակերպությունների և մասնագետների առաջարկություններով ՀՀ Ընտրական օրենսգրքում բազմիցս կատարվել են էական փոփոխություններ, ինչի արդյունքում **ՀՀ ընտրական օրենսգրքին** համապատասխանեցվել է միջազգային չափանիշներին: Այդուհանդերձ, ընտրական գործընթացները շարունակական կատարելագործման կարիք ունեն: Հակակոռուպցիոն պայքարի արդյունավետության բարձրացման տեսանկյունից հատկապես խոցելի են ընտրացուցակների կազմման և անճշտությունների վերացման, նախընտրական հիմնադրամների ձևավորման և նախընտրական քարոզչության իրականացման, ընտրական հանձնաժողովների կազմավորման և դրանց գործունեության թափանցիկության ապահովման գործընթացները:
265. Ընտրությունների կազմակերպման և անցկացման նպատակով Հայաստանի Հանրապետությունում գործում է **ընտրական հանձնաժողովների** եռաստիճան համակարգ:
266. Կենտրոնական ընտրական հանձնաժողովը կազմավորվում է Ազգային ժողովում խմբակցություն ունեցող յուրաքանչյուր կուսակցության կամ դաշինքի ներկայացուցիչներից, Հանրապետության Նախագահի նշանակած մեկ անդամից, Հայաստանի Հանրապետության դատարանների նախագահների խորհրդի նշանակած 2 դատական ծառայողից **2008թ.** Հանրապետության Նախագահի ընտրությունների ընթացքում ընտրատարածքային հանձնաժողովների նախագահների, նրանց տեղակալների և քարտուղարների մեծ մասը ներկայացված են եղել Հայաստանի Հանրապետության կառավարությունը ձևավորած քաղաքական ուժերի կողմից: Դիտորդական առաքելությունների կարծիքով ընտրական հանձնաժողովները պետք է ավելի հավասարակշռված կազմ ունենան: Որոշ կուսակցություններ խնդիրներ են ունեցել տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամների համալրման հարցում՝ ինչը վկայում է, հանձնաժողովների ձևավորման ներկա մեխանիզմների անկատարությունը: Միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ընտրական հանձնաժողովների անդամներին առավելագույնս պետք է զերծ պահել քաղաքական գործընթացներում ներգրավվելուց:
267. Համապետական ընտրություններում կենտրոնական և ընտրատարածքային հանձնաժողովների գործունեության նկատմամբ ընդհանուր առմամբ դրական արձագանքների պարագայում, դեռևս մտահոգիչ են դիմումների և բողոքների քննարկման գործընթացները: Այսպես, ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի դիտորդական առաքելությունը նշել է, որ պետք է իրագործել ընտրական բողոքների քննարկման կարգի վերաբերյալ **2007թ.** Ազգային ժողովի ընտրությունների կապակցությամբ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի առաջարկությունները, ըստ որոնց՝ ՀՀ ընտրական օրենսգրքում անկատար է նաև ընտրական հանձնաժողովներում դիմումների (բողոքների) և առաջարկությունների քննարկման կարգը սահմանող **401-րդ** հոդվածը, որն առավելապես պարունակում է այդ փաստաթղթերին ներկայացվող ձևական պահանջներ: Սահմանադրական դատարանը գտել է, որ ընտրական գործընթացներն արդյունավետ վերահսկելու, ընտրությունների նկատմամբ հանրության վստահությունը բարձրացնելու առումով անհրաժեշտ է, հստակ նորմատիվ պահանջ ներկայացնել հատկապես ընտրական հանձնաժողովներում դիմումների (բողոքների) և առաջարկությունների ընթացակարգային քննարկմանն ու դրա արդյունքում պատճառաբանված որոշումներ կայացնելուն: Թեև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով և «ՀՀ վարչական դատավարության մասին օրենսգրքով» Հայաստանի Հանրապետությունում ներդրվեցին հանրային-իրավական, այդ թվում՝ ընտրական իրավունքի պաշտպանության բնագավառի հարցերի լուծման՝ միջազգային լավագույն փորձում առկա ամենարդյունավետ մեխանիզմները, այդուհանդերձ բավարար չափով կարգավորված չէ նաև ընտրական հանձնաժողովների նիստերում իրենց բարձրացրած հարցերի քննարկման ժամանակ շահագրգիռ անձանց մասնակցությունը:
268. Ընտրական գործընթացի **հրապարակայնությունը** հիմնականում կենսագործվում է ընտրական հանձնաժողովների աշխատանքներին հասարակական կազմակերպությունների և զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների մասնակցության, ինչպես նաև նրանց աշխատանքի անհրաժեշտ և հավասար պայմանների ապահովման միջոցով: Ընտրական

գործընթացների հրապարակայնության բարձրացմանը կնպաստի ՁԼՄ-ների ներգրավումը թե՛ կոնկրետ թեմաների վերաբերյալ մասնագիտացած լրագրողների, թե՛ հետքննող լրագրողներ, և թե՛ լրատվամիջոցների ղեկավարների ու խմբագիրների մակարդակով: Հասարակական կազմակերպությունները պետք է աջակցեն ՁԼՄ-ների արձարձած հակակոռուպցիոն խնդիրների հետևողական քննարկմանն ու լուծմանը: ՁԼՄ-ներն իրենց հերթին պետք է ըստ պատշաճի արձագանքեն ՀԿ-ների կողմից բարձրացվող հարցերին և հնարավորինս լայնորեն և խորը լուսաբանեն ներկայացվող խնդիրներն ու առաջարկվող լուծումները: Նման համագործակցությունը պետք է ծավալվի կոնկրետ գործունեության, ավելին՝ առանձին գործողությունների շուրջ: Հասարակական կազմակերպությունների կողմից արդյունավետ ձևով դիտորդական առաքելության իրականացման, ինչպես նաև ՁԼՄ-ների կողմից ընտրական գործընթացներում տեղ գտած կոռուպցիոն երևույթների պատշաճ լուսաբանման առաջին նախապայմանը դիտորդների և ՁԼՄ-ների ներկայացուցիչների կողմից Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսդրության վերաբերյալ բավարար կարողությունների՝ գիտելիքների և հմտությունների առկայությունն է: Ընտրական գործընթացներում կոռուպցիայի կանխարգելման գործում հասարակական կազմակերպությունների և ՁԼՄ-ների մասնակցությունը չի կարող սահմանափակվել միայն վերահսկողության իրականացմամբ: Նրանք շատ կարևոր դեր ունեն նաև ընտրողների՝ ընտրական օրենսդրության իմացության մակարդակը բարձրացնելու և հասարակության շրջանում ընտրակաշառք վերցնելու երևույթն արմատախիլ անելու դեմ ակտիվ քարոզչություն տանելու գործում, որի իրականացման համար նույնպես անհրաժեշտ է պետության աջակցությունը:

269. Հայաստանում ընտրական գործընթացների փորձն առանձնացնում է մի շարք հիմնական կոռուպցիոն ռիսկեր, այդ թվում. նախընտրական քարոզչությունն օրենքով արգելված աղբյուրներից ֆինանսավորելը, նախընտրական քարոզչություն իրականացնելու նպատակով իշխանական լիազորություններն օգտագործելը, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների գույքը և միջոցներն օգտագործելը, ընտրողների «ձայները գնելը» և ընտրական հանձնաժողովների կողմից ընտրակեղծիքներ կատարելը:

270. Ընտրողների ցուցակների պատշաճ կազմելն ու ընթացիկ փոփոխություններ կատարելը համընդհանուր ընտրական իրավունքի ապահովման գլխավոր գործիք է: **2005թ.** մայիսից Հայաստանի Հանրապետությունում ներդրվեց ընտրացուցակների վարման նոր համակարգ՝ Հայաստանի Հանրապետության ընտրողների ռեգիստր (ընտրողների ազգային գրանցամատյան), որը հնարավորություն տվեց ԿԸՀ կայքում տեղադրել ընտրացուցակները և բարձրացնել դրանց մատչելիությունը՝ թույլ տալով ընտրությունների ելքով շահագրգիռ կազմակերպություններին և անձանց նախօրոք ստուգելու ընտրողների ցուցակների ստույգ լինելը և ձեռնարկելու միջոցներ այն ճշգրտելու համար: Ընտրողների ռեգիստրն ուղղակիորեն կապված է բնակչության պետական ռեգիստրի հետ, որը **2006թ.** հուլիսի **1**-ից վարում է ՀՀ ոստիկանությունը:

271. Ընտրական գործընթացներում կոռուպցիոն երևույթների կանխարգելման տեսանկյունից կարևորվում է **նախընտրական քարոզչության** հասկացության օրենսդրական հստակ սահմանումը, որը հիմք կհանդիսանա ոչ միայն բոլոր թեկնածուների նախընտրական քարոզչության իրականացման համար հավասար պայմանների ապահովման համար, այլև կուրվագծի քաղաքական, հայեցողական պաշտոններ զբաղեցնող, պետական ծառայող հանդիսացող անձանց կողմից իրականացվող նախընտրական քարոզչության սահմանափակումների շրջանակները: Թեև նախընտրական քարոզչության հասկացության սահմանման անհրաժեշտության մասին դիտորդական առաքելություններն արձանագրել են դեռևս **2007թ.** Ազգային ժողովի ընտրությունների արդյունքում, սակայն հարցը դեռևս օրակարգային է: Չնայած ՀՀ ընտրական օրենսգրքով սահմանված սահմանափակումներին, նախընտրական քարոզչության գործընթացում կոռուպցիոն երևույթները հաճախ դրսևորվում են վարչական ռեսուրսի կիրառմամբ և ձայների առք ու վաճառքով, ընդ որում վարչական ռեսուրսն օգտագործվում է ինչպես ուղղակիորեն՝ պաշտոնատար անձանց կողմից, այնպես էլ անուղղակիորեն՝ նրանց կուսակցությունների կողմից: Ավելին, թեև նախընտրական քարոզչության ընթացքում թեկնածուներին (կուսակցություններին) օրենքն արգելում է քաղաքացիներին անհատույց կամ արտոնյալ պայմաններով տալ (խոստանալ) դրամ, սննդամթերք, արժեթղթեր, ապրանքներ կամ մատուցել (խոստանալ) ծառայություններ՝ սակայն համապետական ընտրությունների փորձի վերլուծությունը ցույց է տալիս, որ այս նորմը միշտ չէ, որ պահպանվում է: Ընտրողներին «ընտրակաշառքներ» տալու գործընթացը հաճախ նաև քողարկվում է բարեգործության

անվան տակ, որը կարելի է համարել նաև ընտրությունների ժամանակ քաղաքական և գործարար շահերի միահյուսման արդյունք:

272. Քաղաքական կուսակցությունների ֆինանսավորման գործընթացի վերահսկողության մեխանիզմների կատարելագործումը քաղաքական կոռուպցիայի հաղթահարման բնագավառում հակակոռուպցիոն ռազմավարական ծրագրի հիմնական ուղղություն է: Քաղաքական կուսակցությունների բնականոն գործունեության, այդ թվում՝ ընտրություններին մասնակցելու համար անհրաժեշտ են որոշակի ֆինանսական միջոցներ, որոնց շուրջ՝ հատկապես ընտրական գործընթացների ժամանակ կարող են առաջանալ կոռուպցիոն ռիսկեր, մասնավորապես, երբ կուսակցության կամ նրա կողմից առաջադրված թեկնածուների կողմից գերազանցվում է նախընտրական քարոզչության համար նախատեսված միջոցների չափը, կուսակցությունն օգտագործում է պետական կամ օրենքով արգելված այլ միջոցներ կամ կուսակցական միջոցները ծախսվում են ընտրակաշառքներ տալու համար: Համապետական վերջին ընտրությունները ցույց տվեցին, որ նախընտրական հիմնադրամներում ընդգրկվող դրամական միջոցներից բացի՝ որոնց առավելագույն չափը սահմանված է ՀՀ ընտրական օրենսգրքով, թեկնածուներն անվերահսկելիորեն կարող են օգտագործել նաև այլ միջոցներ, ինչը խախտում է հավասար պայմաններով նախընտրական քարոզչություն իրականացնելու սկզբունքը և թույլ է տալիս ներգրավել ստվերային միջոցներ, որն անխուսափելիորեն բերում է կոռուպցիոն ռիսկերի բարձրացմանը:

273. Միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ քաղաքական կուսակցությունների ֆինանսավորման միասնական մոդել չկա: Հայաստանում կուսակցությունների ֆինանսական գործունեության թափանցիկությունը և դրա նկատմամբ վերահսկողությունն ապահովվում է «Կուսակցությունների մասին» օրենքով, որի դրույթների կենսագործումը կարող է բավարար հիմք հանդիսանալ նաև ընտրական գործընթացներում կուսակցությունների ֆինանսական գործունեության վերահսկողության արդյունավետության օրենսդրական ապահովման խնդրում, եթե վերահսկման մեխանիզմները ներդաշնակ լինեն օրենքի պահանջներին, ինչն արձանագրել է ՀՀ սահմանադրական դատարանը: Քաղաքական կուսակցությունների և ընտրական գործընթացների ֆինանսավորման փոխկապակցվածության մասին է վկայում նաև Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի 2003թ. ապրիլի 8-ի «Քաղաքական կուսակցությունների և ընտրական գործընթացների ֆինանսավորման ընթացքում կոռուպցիայի դեմ միասնական կանոնների մասին» **Rec (2003)4** հանձնարարականը, որի կատարման և ներպետական օրենսդրության մեջ համակարգային ձևով ամրագրման ու երաշխավորման ուղղությամբ քայլեր կատարելու մասին նշել է նաև ՀՀ սահմանադրական դատարանը: Հանձնարարականը սահմանում է կուսակցությունների և ընտրական գործընթացների ֆինանսավորման ընթացքում կոռուպցիայի դեմ ուղղված հիմնական պահանջները: Հանձնարարականը սահմանում է, որ նվիրատվություն է համարվում նաև ցանկացած կամավոր գործողություն, որն ուղղված է քաղաքական կուսակցությանը տնտեսական կամ այլ բնույթի առավելություն տրամադրելուն, ինչը ՀՀ օրենսդրությունում մեջ լիովին իրացված չէ: «Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքում նվիրատվության չափի որևէ սահմանակալում չկա, բացի նրանից, որ այդ օրենքով սահմանված է, որ կուսակցության ստացած՝ օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից ավել արժողությամբ նվիրատվության աղբյուրը նշվում է կուսակցության ֆինանսական հաշվետվությունում: Որով ըստ էության ընդգծվում է նվիրատվության այն առավելագույն չափը, որից հետո սկսում է գործել հրապարակայնության ապահովման ավելի բարձր պահանջ: Բացի այդ, Հայաստանի Հանրապետության Նախագահի թեկնածուի, ինչպես նաև Ազգային ժողովի պատգամավորության թեկնածուի և կուսակցության նախընտրական հիմնադրամներում ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից կատարվող մուծումների առավելագույն չափերը հնարավոր է շրջանցել, մասնավորապես այն պատճառով, որ «Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքում ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից կուսակցությանը տրամադրվող նվիրատվությունների չափը սահմանափակված չէ: Չնայած քաղաքական կուսակցությունների նվիրատվությանը և ընտրությունների ընթացքում նախընտրական հիմնադրամների գոյացմանը ներկայացվող օրենսդրական պահանջների որոշակի նմանությանը, այնուամենայնիվ կուսակցություններին նվիրատվությունների կատարման և դրանց նկատմամբ վերահսկողության մեխանիզմները մնում են թերի: Հարկ է սահմանափակել քաղաքական կուսակցությունների կողմից ընտրարշավների ֆինանսավորումը, պահանջելով՝ ընտրարշավների ընթացքում յուրաքանչյուր քաղաքական կուսակցության, թեկնածուների ցուցակի և թեկնածուի նկատմամբ ուղղակիորեն կամ անուղղակիորեն կատարված բոլոր ծախսերի հաշվառում: Քաղաքական կուսակցությունները պետք է հաշվետվություններ ներկայացնեն, որոնք պետք է տարին

առնվազն մեկ անգամ հարապարակվեն: Պետությունը պետք է ապահովի նաև քաղաքական կուսակցությունների և ընտրարշավների ֆինանսավորման վերահսկողությունը, այդ նպատակով աջակցի մասնագիտացված իրավապահ կամ այլ մարմին:

274. Պետական և տեղական ինքնակառավարման մարմինները չեն կարող նվիրատվություններ կատարել կուսակցություններին և պարտավոր են կուսակցություններին հավասար պայմաններով տրամադրել իրենց պատկանող շինությունները, կապի միջոցները, ինչպես նաև միջոցառումներ անցկացնելու նպատակով կուսակցությունների համար ապահովել հավասար պայմաններ: Այդուհանդերձ, անհրաժեշտ են կոնկրետ օրենսդրական և այլ միջոցներ բացառելու համար պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից՝ արտոնյալ կամ գրեթե անվճար հիմունքներով առանձին կուսակցությունների գրասենյակների համար տարածքներ տրամադրելը, իշխանություններին մոտ կանգնած առևտրային կամ հասարակական կազմակերպությունների վարկավորումը (ֆինանսավորումը), հետագայում այդ վարկերի ամբողջ գումարը կամ դրա մի մասը կուսակցություններին նվիրատվության տեսքով կամ ֆինանսավորման այլ ձևերով փոխանցելը, խորհրդատվական և այլ ծառայությունների դիմաց օտարերկրյա առևտրային, հասարակական և այլ կազմակերպությունների կողմից կուսակցությունների ղեկավար մարմինների նարկայացուցիչների վարձատրությունը, սոցիալական և այլ ծրագրերի իրականացման համար կուսակցության անդամներին դրամաշնորհներ տրամադրելը, կուսակցությունների ստեղծած լրատվական միջոցները ֆինանսավորելը, հանրամատչելի ծրագրերի իրականացման միջոցով կուսակցության անհատույց նյութական օժանդակություն տրամադրելը: Կուսակցությունների կողմից հրապարակային հաշվետվությունների ներկայացումը լիովին չի ապահովում օրենսդրությամբ սահմանված արգելանքների պահպանումը, քանի որ կուսակցությունները կարող են հրապարակել իրականությունից հեռու հաշվետվություններ:

275. Այսպիսով, ընտրությունների կազմակերպման և կուսակցությունների ֆինանսավորման գործընթացներում առկա քաղաքական կոռուպցիայի ռիսկերի կրճատման նպատակով անհրաժեշտ է.

- **Բացառել քաղաքական գործընթացներում ընտրական հանձնաժողովների անդամների ներգրավումը.** բոլոր մակարդակների ընտրական հանձնաժողովների անդամներին պետական ծառայողների կազմից նշանակելու և ընտրություններին նախորդող վերջին մեկ տարվա ընթացքում քաղաքական գործընթացներին նրանց ակտիվ մասնակցությունը բացառելու միջոցով:
- **Բարելավել ընտրական հանձնաժողովներին ուղղված դիմումների և բողոքների քննարկման գործընթացը.** ընտրական հանձնաժողովներում դիմումների և բողոքների քննարկման կարգի հստակեցման, այդ դիմումները և բողոքները «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով քննարկելու, ընտրական հանձնաժողովների պատասխանատվությունը բարձրացնելու, անհրաժեշտության դեպքում՝ հանձնաժողովների որոշումները դատական կարգով վիճարկելու ընթացակարգերը հստակեցնելու, իսկ ընտրությունների արդյունքներով պայմանավորված գործընթացներում՝ նաև անձանց սահմանադրական իրավունքների դատական արդյունավետ պաշտպանությունը երաշխավորելու միջոցով:
- **Ընդլայնել ընտրական գործընթացների վերահսկողությանը քաղաքացիական հասարակության մասնակցությունը**՝ ընտրական գործընթացների վերահսկողության գործընթացում դիտողական առաքելությունների և ՋԼՄ-ների անաչառությունն ապահովելու, նախընտրական հիմնադրամներում մուծումներ կատարելու և նախընտրական քարոզչություն իրականացնելու գործընթացներում դիտողական առաքելություն իրականացնող հասարակական կազմակերպությունների անարգել գործունեությունը երաշխավորող ընթացակարգեր ներդնելու միջոցով:
- **Շարունակաբար կատարելագործել ընտրացուցակների վարման գործընթացը.** բնակչության պետական ռեգիստրի կազմման որակը բարձրացնելու և տեղական ռեգիստրների ներդրման աշխատանքները շարունակելու, **ընտրացուցակները պարբերաբար** թարմացնելու, այդ թվում՝ ընտրելու իրավունք չունեցող, ընտրացուցակներում գրանցված անձանց հանելու և ընտրելու իրավունք ունեցող, բայց այս կամ այն պատճառով չգրանցված ընտրողների տվյալները լրացնելու և հրապարակելու միջոցով:

- **Հստակ տարանջատել պաշտոնատար անձանց քաղաքական ընթացիկ գործունեությունը նախընտրական քարոզչությունից.** նախընտրական քարոզչության նպատակով պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին պատկանող գույքը նրանց կողմից անհատույց կամ արտոնյալ պայմաններով օգտագործելը բացառությամբ հատուկ դեպքերի, արգելելու և այդ գույքի օգտագործումը բոլոր թեկնածուների համար հավասար հիմունքներով նախատեսելու, բացառությամբ հատուկ այդ նպատակի համար հատկացված տեղերի, քարոզչական նյութերի ցուցադրումը հանրային սեփականություն հանդիսացող վայրերում արգելելու, նախընտրական քարոզչության ժամանակահատվածում քաղաքական և հայեցողական պաշտոններ զբաղեցնող անձանց աշխատանքային պարտականությունների կատարումից ազատելու կարգը սահմանելու միջոցով:
- **Խտացնել ընտրակաշառք երևույթի դեմ պայքարը.** ընտրողների իրավագիտակցության բարձրացմանն ուղղված հանրամատչելի ուսուցողական ծրագրերի կազմակերպմանն ու անցակցմանն աջակցելու, քաղաքական գործունեության և բարեգործության միատեղումը բացառելու, այդ թվում նախընտրական քարոզչության հետ միաժամանակ բարեգործություն իրականացնելը արգելելու և դրա համար վարչական պատասխանատվություն նախատեսելու, կուսակցությունների կողմից նախընտրական քարոզչության ժամանակահատվածում, և դրանից դուրս, որևէ ձևով ընտրողներին ֆինանսական և/կամ նյութական օժանդակություն ցուցաբերելը բացառելու և կուսակցություններին քաղաքացիներին անհատույց կամ արտոնյալ պայմաններով դրամ, սննդամթերք, արժեթղթեր, ապրանքներ կամ ծառայություններ տալը, մատուցելը, խոստանալը արգելելու, ընտրակաշառք բաժանողներին և վերցնողներին հայտնաբերելու և պատասխանատվության ենթարկելու միջոցով:
- **Հստակեցնել նախընտրական հիմնադրամների միջոցով ոչ դրամական միջոցների օգտագործման կարգը.** նախընտրական հիմնադրամներում ոչ դրամական միջոցների ներգրավման և տնօրինման կարգը սահմանելու միջոցով:
- **Բարձրացնել կուսակցությունների ֆինանսավորման թափանցիկությունը և ֆինանսական գործունեության վերահսկողությունը.** կուսակցությունների ֆինանսավորման մեխանիզմները ՀՀ ընտրական օրենսգրքով՝ նախընտրական հիմնադրամների ձևավորման համար սահմանված մեխանիզմներին համապատասխանեցնելու, այդ թվում «Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքում քաղաքացիություն չունեցող անձանց, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունի կամ համայնքների բաժնեմասով տնտեսական կազմակերպությունների կողմից կուսակցություններին նվիրատվությունների կատարումը բացառելու, յուրաքանչյուր համապետական ընտրություններից հետո՝ օրենքով սահմանված ժամկետում պետության կողմից ֆինանսավորվող կուսակցությունների ֆինանսատնտեսական գործունեության ստուգման պարտադիր առդիտի, ինչպես նաև կուսակցության համագումարի կամ մշտապես գործող մարմնի որոշմամբ՝ բոլոր կուսակցությունների կամավոր առդիտի անցկացման մասին դրույթներ ՀՀ օրենսդրությամբ ամրագրելու, կուսակցությունների ֆինանսատնտեսական գործունեության առդիտի չափորոշիչները սահմանելու, պարտադիր առդիտի անցկացման համար անհրաժեշտ գումարները պետության կողմից կուսակցությանը տրամադրվող ֆինանսական աջակցության ծավալներում ներառելու միջոցով:

4.14. Տեղական ինքնակառավարում

276. Ըստ Ֆրիդոմ Հաուզ կազմակերպության **2006թ.** հրապարակած «Ազգերն անցումային շրջանում» զեկույցի, ՀՀ տեղական ինքնակառավարման համակարգը **2005-2006թթ.** շարունակաբար գնահատվել է **5.50** միավոր, ինչը նշանակում է, որ ՀՀ տեղական ինքնակառավարման համակարգը դեռևս ավտորիտարից՝ ժողովրդավարական կառավարման համակարգի անցման փուլում է³⁷: **ՏԶԿ/ԹԻ 2006թ.** իրականացրած «Կոռուպցիայի ընկալումը Հայաստանում» հարցումը³⁸ բացահայտել է, որ կոռուպցիայի ընկալումը ներառել է նոր ոլորտներ և ծառայություններ, որոնք մտնում են ՏԻՄ-երի անմիջական լիազորությունների և պարտականությունների մեջ, մասնավորապես՝ քաղաքացիական կացության ակտերի գրանցման, սոցիալական աջակցության ծառայությունները,

³⁷ <http://www.freedomhouse.org/template.cfm>

³⁸ Տես՝ <http://www.transparency.am>:

համատիրությունները, գերեզմանատների գործունեությունը և այլն: Հարցվողները նշել են կոռուպցիայի այնպիսի դրսևորումներ, որոնք առնչվում են ՏԻՄ-երի գործառույթներին. ոչ պաշտոնական վճարումներ առավել հաճախ կատարվում են նաև համայնքային պատվերներ (գնումներ) ձեռք բերելու, գործարարության թույլտվություններ ստանալու, հարկային պարտավորությունները կատարելու, հողհատկացումների, գույքային սակարկությունների ժամանակ: ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի (ՄԻՊ) տարեկան զեկույցները նույնպես բացահայտում են տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման համակարգերում առկա կոռուպցիոն հիմնական ռիսկերը: Երևանի քաղաքապետարանի դեմ ուղղված բողոքները ՄԻՊ-ը համարում է վատ վարչարարության, բյուրոկրատիզմի և քաշքշուկների արդյունք: Նման երևույթներ առկա են եղել հատկապես «Ինքնակամ կառույցների և ինքնակամ զբաղեցրած հողատարածքների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի և դրա կիրառման կարգին վերաբերող ՀՀ կառավարության որոշումների կատարման ընթացքում: Երևանի թաղապետարանների դեմ բողոքները հիմնականում վերաբերել են շենքերի ընդհանուր օգտագործման տարածքների սպասարկմանը, ընդհանուր օգտագործման տարածքների զավթմանը, ինքնակամ կառուցապատում իրականացնելու հետևանքով այլոց իրավունքների խախտմանը, բնակարանի հատկացմանը, և այլ խնդիրներին, որոնց իրականացման ապահովումը նաև թաղապետարանների խնդիրն է՝ քանի դեռ համատիրությունները վերջնականապես չեն կայացել: ՄԻՊ-ին ուղղվել են նաև թաղապետարանների կողմից քաղաքացիների դիմումներին չպատասխանելու վերաբերյալ բողոքներ³⁹:

277. Կոռուպցիայի դեմ պայքարի պետական քաղաքականության մեջ տեղական ինքնակառավարման ոլորտը նախկինում չի դիտարկվել: Տեղական ինքնակառավարման ոլորտում հակակոռուպցիոն քաղաքականության հիմնական ուղղություններն են՝ ՏԻՄ-երի լիազորությունները և դրանց իրականացումը, համայնքի ֆինանսների կառավարումը, համայնքային ծառայությունների մատուցումը, համայնքային ծառայողների կարողությունները:
278. ՀՀ համայնքների մեծ մասը (հատկապես փոքր քաղաքային և գյուղական համայնքները), օբյեկտիվ և սուբյեկտիվ տարբեր պատճառներով, չեն կարողանում ամբողջությամբ իրականացնել իրենց վերապահված լիազորությունները, որի հետևանքով ՏԻՄ-երի պարտադիր և պետության կողմից պատվիրակված լիազորությունների մեծ մասը թերակատարվում է կամ չի կատարվում ընդհանրապես: Այսպիսով, տեղական ինքնակառավարման օրենսդրորեն սահմանված իրավունքները հաշվի չեն առնում համայնքների՝ այդ իրավունքների կիրառման հնարավորությունները և կարողությունները: Թեև ՏԻՄ-երին օրենքով տրված լիազորությունները **2003-2007**թթ. ընթացքում որոշակիորեն փոփոխվել և լրացվել են, սակայն արմատական փոփոխություններ այս առումով չեն կատարվել:
279. ՀՀ տեղական ինքնակառավարման համակարգի հետագա զարգացումն ուղղակիորեն կապված է ապակենտրոնացման և ժողովրդավարացման ընդհանուր գործընթացների խորացման հետ: Տեղական ինքնակառավարման համակարգում արդյունավետ հակակոռուպցիոն պայքարն, առաջին հերթին, ենթադրում է տեղական ինքնակառավարման ոլորտում համակարգված, արդյունավետ քաղաքականությունը սահմանող ռազմավարություն՝ ուղղված **տեղական ինքնակառավարման արդյունավետության և բնակչությանը մատուցվող համայնքային ծառայությունների որակի և մատչելիության բարձրացմանը**: Հրատապ է համայնքների խոշորացման խնդիրը, քանի որ ՀՀ մեծ թվով փոքր համայնքներ չունեն համապատասխան տնտեսական, ֆինանսական, մարդկային ռեսուրսներ, պայմաններ և կարողություններ՝ արդյունավետ տեղական ինքնակառավարում իրականացնելու և բնակչությանը որակյալ համայնքային ծառայություններ մատուցելու համար: Վարչատարածքային բաժանման օպտիմալացման հաջորդ խնդիրը միջհամայնքային միավորումների ձևավորումն է, որի առաջնահերթ խնդիրներից է՝ տնտեսական, ֆինանսական և մարդկային քիչ ռեսուրսներ և թույլ կարողություններ ունեցող համայնքներին պարտադիր և պետության կողմից պատվիրակված լիազորությունների իրականացման հարցում աջակցելը՝ նպաստելով փոքր համայնքների բնակչության կենսական նշանակություն ունեցող խնդիրների լուծմանը, համայնքների միջև բնեռվածության աստիճանի նվազեցմանը, միջոցների փոշիացման ու կոռուպցիայի կանխարգելմանը:
280. Հայաստանում լիազորությունների ապակենտրոնացման մակարդակը դեռևս պատշաճ չէ և հասունացել է բնակչությանը հանրային ծառայությունների մատուցման լիազորությունների

³⁹ Stu՝ <http://www.ombuds.am>:

իրականացման կենտրոնացման և ապակենտրոնացման միջև նոր, առավել արդյունավետ հարաբերակցության սահմանման խնդիրը: Ընդ որում, այս առումով Հայաստանը զգալիորեն զիջում է Արևելյան Եվրոպայի և Մերձբալթյան երկրներին:

- 281.** ՏԻՄ-երի պարտադիր և պատվիրակված լիազորությունների իրականացման օրենսդրորեն սահմանված կարգերի բացակայությունը լուրջ խոչընդոտներ է ստեղծում ինչպես այդ լիազորությունների իրականացման համար պահանջվող ֆինանսական միջոցների նվազագույն ծավալների սահմանման, այնպես էլ դրանց իրականացման նկատմամբ պատշաճ ներքին և արտաքին վերահսկողության սահմանման համար: Նշված օրենսդրական բացը ստեղծում է լրացուցիչ կոռուպցիոն ռիսկեր, քանի որ ՏԻՄ-երը հստակորեն և միատեսակ չեն սահմանում պարտադիր լիազորությունների իրականացման արժեքները և տարաբնույթ կամայականությունների տեղիք են տալիս: Մյուս կողմից, վերահսկողություն իրականացնող մարմինները՝ չունենալով պարտադիր լիազորությունների իրականացման չափորոշիչները և նորմատիվները՝ սահմանող իրավական հիմքը, չեն կարողանում լիարժեքորեն և արդյունավետորեն իրականացնել վերահսկողության, մոնիտորինգի և գնահատման իրենց գործառնությունները: Հիմնականում նման մեթոդաբանությունների բացակայության պատճառով, կառավարությունը դեռևս չի սահմանել ՏԻՄ-երի պարտադիր և պատվիրակված լիազորությունների իրականացման և ֆինանսական ապահովման կարգերը:
- 282.** Կարևորվում է համայնքի կառավարման ռացիոնալ ու արդյունավետ համակարգի կայացումը, ինչը մեծապես պայմանավորված է համայնքի ավագանու և ղեկավարի փոխհարաբերություններով և համագործակցությամբ, նրանց միջև հակակշիռների և զսպումների լիարժեք ընթացակարգերով և գործունակ կառուցակարգերով: Այդուհանդերձ, ներկայում ՀՀ-ում ավագանու ինստիտուտը լիարժեքորեն ձևավորված և կայացած չէ՝ ավագանու անդամների ընտրության գործող օրենսդրական կարգավորման թերությունների պատճառով: Մասնավորապես, գործող օրենսդրությամբ ավագանու քաղաքական պատասխանատվություն չի նախատեսվում: Այս առումով բացառություն է կազմում Երևան համայնքը, որի ավագանու ընտրությունները անցկացվում են համամասնական սկզբունքով:
- 283.** Համայնքի ֆինանսների կառավարման թափանցիկության և հաշվետվողականության առումով կարևորվում է **համայնքում արդյունավետ ռազմավարական պլանավորումը**: Հայաստանի բոլոր համայնքներն ունեն համայնքի զարգացման քառամյա ծրագիր, սակայն դրանք հիմնականում չեն արտացոլում համայնքի իրական վիճակը և չեն պարունակում ռազմավարական պլանավորման գոնե հիմնական տարրերը: Ավելին, համայնքների զարգացման քառամյա ծրագրերը ներդաշնակեցված չեն թե՛ պետական ռազմավարական, թե՛ մարզի զարգացման ծրագրերի հետ, բացակայում են մարզային զարգացման և համայնքային զարգացման ծրագրերի համահունչ կազմման մեթոդական ուղեցույցերը: Համայնքի զարգացման քառամյա ծրագրերի մշակմանը և իրականացմանը քաղաքացիական հասարակության և գործարար հատվածի մասնակցությունն անբավարար է և դրանց ներգրավումը ռազմավարական պլանավորման գործընթացում ՏԻՄ-երի կողմից պատշաճ կերպով չի իրականացվում: Կարևորվում է համայնքի զարգացման քառամյա ծրագրերի իրականացման **մոնիտորինգի և գնահատման** համակարգի մշակումը և կիրառումը՝ դրանք մշակողների և իրականացնողների պատասխանատվությունը և հաշվետվողականությունը ապահովելու, ինչպես նաև այդ փաստաթղթերի թափանցիկությունը և հրապարակայնությունը ապահովելու գործում:
- 284.** Համայնքների **ֆինանսների կառավարման հաշվետվողականության և ֆինանսական կարգապահության** առումով, համայնքային ոչ-առևտրային կազմակերպություններում (ՀՈԱԿ) ֆինանսների կառավարումն իրականացվում է բյուջետային համակարգից դուրս՝ դրանով իսկ սահմանափակելով դրանց հաշվետվողականությունը և դժվարացնելով բյուջետային և արտաբյուջետային միջոցների ամբողջականացումը: Շատ համայնքներում առկա է հողի հարկի և գույքահարկի տեղեկատվական ավտոմատացված համակարգի սպասարկման մասնագետների պակաս, իսկ մասնագետների շարունակական ուսուցման և վերապատրաստման խնդիրը մնում է օրակարգային: Գույքահարկի և հողի հարկի տվյալների շտեմարաններում դեռևս առկա են իրական պատկերից շուրջ **20-30%** անճշտություններ: Օրենսդրական կարգավորման կարիք ունի համայնքների կողմից տեղական հարկերի սահմանումը: Շատ համայնքներ իրենց սեփականության գույքի պետական գրանցում դեռևս չեն իրականացրել, ինչը համայնքային գույքի օտարման պարագայում կոռուպցիոն ռիսկեր է առաջացնում՝ նման գույքի պետական գրանցման ծախսերը դնելով գույքի պոտենցիալ գնորդի վրա:
- 285.** Համայնքների բյուջեների միջոցները երբեմն ծախսվում են՝ առանց հաշվի առնելու օրենքով սահմանված պարտադիր լիազորությունների իրականացման պահանջը: ՀՀ կառավարության կողմից

սահմանված՝ ՀՀ պետական բյուջեից համայնքներին սուբվենցիաների տրամադրման կարգը վերանայման կարիք ունի: Համայնքների կողմից ներկայացված հայտերը կառավարությունը քննարկում և որոշում է կայացնում հստակ չափորոշիչների և ընթացակարգերի բացակայության պարագայում: Ավելին, որոշումները հաճախ հայեցողական են, դրանց ընդունման գործընթացը թափանցիկ և հաշվետվողական չէ:

286. Համայնքների բյուջեների ձևավորման **հրապարակայնության** ապահովման օրենսդրական պահանջների կատարումը գործնականում անբավարար է՝ համայնքների ճնշող մեծամասնությունում տեղական լրատվամիջոցների կամ ինտերնետային կայքերի բացակայության պայմաններում: Ավելին, ՏԻՄ-երը, վերահսկող մարմինները և քաղաքացիական հասարակությունը այս հարցում հետևողական չեն, թափանցիկ բյուջետավորման մշակույթը դժվարությամբ է մտնում համայնքներ, կարծես մղված է երկրորդ պլան՝ մնալով սոցիալ-տնտեսական խնդիրների ստվերում:

287. Գործնականում ՀՀ համայնքներում, հատկապես գյուղական և փոքր քաղաքային համայնքներում, **գնումների գործընթացի** կազմակերպումը ցածր մակարդակի վրա է՝ հիմնականում մասնագիտական գիտելիքների և հմտությունների պակասի պատճառով: Միաժամանակ, ՏԻՄ-երը միշտ չէ, որ օգտվում են Պետական գնումների գործակալության (ՊԳԳ) վճարովի ծառայություններից, նկատելի է ՊԳԳ-ից ՏԻՄ-երի խուսափողական գործելաճը: Օրենսդրորեն սահմանված է գնումներով զբաղվող մասնագետների ուսուցման, վերապատրաստման և որակավորման գնահատման պահանջը, որի իրականացումը, սակայն, պատշաճ մակարդակի վրա չէ: Օրենսդրորեն կարգավորված չեն համայնքային գնումներում մրցույթի կամ առաջարկների գնահատող հանձնաժողովի անդամների շահերի բախման հայտարարագրման պահանջները, ինչն ուղղակիորեն վտանգում է գնումների մասնակիցների մրցակցային հնարավորությունները և մեծացնում կոռուպցիոն ռիսկերը: Համայնքներում իրականացվող մրցույթների արդյունքում հաճախ հաղթում են հիմնականում համայնքի ղեկավարի կողմից հովանավորվող կազմակերպությունները: Ավելին, մրցույթի հանձնաժողովի ձևավորողն ու նախագահը համայնքի ղեկավարն է: Թեև որոշումների վերահսկողությունն իրականացնում է համայնքի ավագանին, սակայն վերջինս ՏԻՄ-երի որոշումների կայացման և վերահսկման գործում դեռևս չունի լուրջ դերակատարություն: Արդյունքում, համայնքների տնտեսվարող սուբյեկտների և, ընդհանրապես, բնակչության վստահության և գոհունակության մակարդակը համայնքային գնումների նկատմամբ անբավարար է:

288. Համայնքային ֆինանսների կառավարման ապակենտրոնացված վերահսկողական համակարգի՝ **ներքին աուդիտի ինստիտուտի** գործառույթները համայնքներում պատշաճ կերպով չեն իրականացվում, շատ համայնքներում չեն մշակվում աուդիտի պլաններ, չեն պատրաստվում բյուջեի կատարման վերաբերյալ հաշվետվություններ և չեն ներկայացվում համայնքի ավագանու քննարկմանը: Ներքին աուդիտ իրականացնող համայնքային ծառայողների մասնագիտական կարողությունները և հմտությունները խիստ անբավարար են, նրանք անկախ չեն և գործում են հիմնականում իրենց վերահասի անմիջական ցուցումներով, աուդիտի իրականացումը լավագույն դեպքում սահմանափակվում է ֆինանսական համապատասխանության աուդիտով: Գործնականում ընդհանրապես չեն կիրառվում բյուջեի ռիսկերի վրա հիմնված մոտեցումներ ու կանխատեսումներ, անբավարար են ներքին աուդիտի գնահատման և հաշվետվությունների կիրառման գործընթացները:

289. Կոռուպցիայի կանխարգելման առումով կարևորվում է **ՏԻՄ-երի գործունեության նկատմամբ պետական արդյունավետ վերահսկողության** կազմակերպումը և իրականացումը: **2005**թ.-ի նոյեմբերին փոփոխված Մահմանադրությունում ամրագրվել է ՏԻՄ-երի գործունեության օրինականության նկատմամբ պետության կողմից իրավական հսկողություն սահմանելու և իրականացնելու դրույթը: Մարզպետների իրավական և մասնագիտական հսկողության գործառույթները դեռևս հստակ տարանջատված չեն, բացակայում են դրանց իրականացման համապատասխան կառուցակարգերը: Մարզպետարանների գործող կանոնադրություններն ու կառուցվածքները համապատասխանեցված չեն վերոնշյալ վարչական հսկողության գործառույթների իրականացման համար: Իրավական հսկողության բարձրագույն մարմնի հաստատած տարեկան աշխատանքային ծրագրին համապատասխան մարզպետի վարչական հսկողության գործառույթն իրականացնելու համար անհրաժեշտ է վերանայել մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքը և գործառույթները վերոնշյալ նոր պահանջներին համապատասխան: Համայնքների սեփականություն համարվող գույքի և բյուջեի միջոցների կառավարման նկատմամբ ՀՀ Ազգային ժողովի վերահսկողական գործառույթները փոխանցվել են ՀՀ Վերահսկիչ պալատին, որի վերահսկողական գործառույթների իրականացումը դեռևս կայացման փուլում է:

290. ՏԻՄ-երի գործունեության նկատմամբ **արտաքին աուդիտի** բարձրագույն մարմինը ՀՀ Վերահսկիչ պալատն է, որը **2008թ.**-ից ակտիվացրել է իր գործունեությունը համայնքներում: Ստուգումների արդյունքում մի շարք քաղաքային և գյուղական համայնքներում հայտնաբերվել են բազմաբնույթ խախտումներ⁴⁰, ինչպես գուտ օրենսդրական և ընթացակարգային, այնպես էլ ֆինանսատնտեսական բնույթի, տեղի ունեն բավականին խոշոր չափի կոռուպցիոն երևույթներ: Վերահսկիչ պալատն առայժմ իրականացնում է առավելապես գործառնական աուդիտ՝ հիմնականում ինստիտուցիոնալ և մասնագիտական խորը կարողությունների պակասի պատճառով, ստուգումների մեթոդները չեն համապատասխանում միջազգային չափանիշներին, համաչափորեն չեն կիրառվում աուդիտի խորհրդատվական, ֆինանսական և արդյունավետության տարրերը:

291. Կոռուպցիոն բազմաթիվ ռիսկեր առկա են ՏԻՄ-երի կողմից **բնակչությանը համայնքային անվճար և վճարովի ծառայությունների մատուցման գործում**: ՀՀ համարյա բոլոր համայնքներում բնակարանային-կոմունալ տնտեսության ոլորտում ծառայությունները մատուցվում են ոչ լրիվ ծավալով, անբավարար որակով ու հասանելի չեն ամբողջ բնակչությանը: Փոքր համայնքներում թվարկված շատ ծառայություններ ընդհանրապես չեն մատուցվում: Ընդհանուր առմամբ, բնակարանային-կոմունալ տնտեսության ծառայությունների մատուցումը դեռևս ամբողջովին կարգավորված չէ, չեն գործում միասնական նորմեր և չափորոշիչներ, չկան աշխատանքների կատարման հաստատված ցուցանիշներ և գնահատման հստակ չափանիշներ: Վճարովի ծառայությունների մատուցման վարձավճարների դրույքաչափերն, ըստ էության, ՏԻՄ-երի կողմից սահմանվում են՝ առանց լուրջ տնտեսական հաշվարկներ կատարելու, իսկ ծառայության մատուցման ծախսաձածկման խնդիր չի էլ դրվում: Ծառայություններ մատուցող կազմակերպությունները (համայնքային ենթակայության, մասնավոր կամ խառը սեփականության) գործում են հիմնականում անարդյունավետ: Թույլ է վերահսկողությունը ծառայություններ մատուցող կազմակերպությունների գործունեության նկատմամբ: Վերջիններս համայնքի բյուջեից ֆինանսավորվում են հիմնականում սուբսիդիայի տեսքով և ՏԻՄ-երին ներկայացնում են միայն աշխատանքների կատարման ավարտական ակտեր, սակայն չեն ներկայացնում կատարողական մանրամասն հաշվետվություններ, որոնց հիման վրա հնարավոր կլիներ գնահատել ծառայության մատուցման ծավալը, որակը և արդյունավետությունը: Քանի որ այս ծառայությունների մատուցումը ՏԻՄ-երի համար հիմնականում պարտադիր լիազորություններ են, դրանց կանոնակարգումը հնարավոր է միայն պարտադիր լիազորությունների իրականացման և ֆինանսավորման կարգն օրենսդրորեն սահմանելու, յուրաքանչյուր ծառայության համար համապատասխան իրավական ակտերն ընդունելու պարագայում:

292. ՀՀ-ում գործող շուրջ **800** համատիրությունները ակտիվ չեն կամ կայացած չեն: Հստակ չեն համայնք-համատիրություն փոխհարաբերությունները, կանոնակարգված չեն համայնքի կողմից համատիրությանը ցուցաբերվող օժանդակության կառուցակարգերը և ձևերը: Նման օժանդակություններն ակտիվանում են, որպես կանոն, ամեն տեսակի ընտրություններից առաջ՝ այս կամ այն թեկնածուին սատարելու նպատակով:

293. Մտահոգիչ է գերեզմանատների գործունեության և նրանց պահպանման լիազորությունների իրականացման արդյունավետությունն ու օրինականությունը: Այսպես, ծառայությունը մատուցող կազմակերպության կողմից գերեզմանատեղերի տրամադրման և այլ վճարովի ծառայությունների մատուցման ժամանակ առկա են մեծ չափերի հասնող ոչ պաշտոնական գումարների շորթման ռիսկեր՝ պայմանավորված ծառայության չափորոշիչների և ընթացակարգերի վերաբերյալ բնակչության իրազեկության, ծառայության մատուցման թափանցիկության և հաշվետվողականության հատկապես ցածր մակարդակով:

294. Կրթության, մշակույթի, սպորտի և առողջապահության ոլորտում համայնքային ծառայությունները ՏԻՄ-երը մատուցում են հիմնականում իրենց կողմից հիմնած բյուջետային կամ ոչ-առևտրային կազմակերպությունների միջոցով, իսկ աշխատանքների համակարգումն իրականացնում են համայնքի ղեկավարի աշխատակազմի կրթության, մշակույթի, սպորտի և առողջապահության բաժինների միջոցով: Այդուհանդերձ, ՀՀ շատ համայնքների այդպիսի կազմակերպություններում ոչ պաշտոնական կանխիկ վճարների ծավալը մեծ է, իսկ ՏԻՄ-երի ներքին վերահսկողությունն այդ երևույթների նկատմամբ պատշաճ մակարդակի վրա չէ՝ ներքին աուդիտի ինստիտուտի չկայացածության պատճառով: Այս ոլորտներում ՏԻՄ-երի լիազորությունների կատարման նկատմամբ

⁴⁰ «Հայաստանի հանրապետություն» օրաթերթ, 25 սեպտեմբերի 2008, հինգշաբթի, թիվ 187 (4524). Շարունակվող ստուգումներ:

իրավական և մասնագիտական հսկողությունն իրականացնում են մարզպետարանի համապատասխան ստորաբաժանումները, սակայն այս վերահսկողական գործառնությունները ևս մեծամասամբ թերի են իրականացվում:

- 295.** Ընտանեկան նպաստների համակարգում և միանվագ օգնությունների տրամադրման ցուցակներում ընդգրկելու համար սոցիալական ծառայությունները քաղաքացիներից պահանջում են օրենսդրությամբ սահմանված բազմաթիվ տեղեկանքներ, այդ թվում՝ ՏԻՄ-երից և համատիրություններից: Հաճախ քաղաքացիներն ընդգրկվում են ընտանեկան նպաստների համակարգում կեղծ տեղեկանքների հիման վրա: Խնամակալությանը և հոգաբարձությանն առնչվող լիազորությունների իրականացման գործընթացը թափանցիկ չէ և համայնքի ղեկավարի՝ խնամակալություն և հոգաբարձություն սահմանելու վերաբերյալ որոշումն, ըստ էության, հայեցողական է:
- 296.** Քաղաքացիական կացության ակտերի գրանցման (ՔԿԱԳ) ծառայությունները հիմնականում գտնվում են քաղաքային համայնքներում և սպասարկում են նաև հարակից գյուղական համայնքներին, իսկ գանձվող պետական տուրքերը մուտքագրվում են միայն համապատասխան քաղաքային համայնքների բյուջեներ: Թեև ՔԿԱԳ ծառայությունների պահպանման ծախսերը, որպես պետության կողմից պատվիրակված լիազորության իրականացման ծախսեր, կատարվում են ՀՀ պետական բյուջեից համայնքների բյուջեների միջոցով, դրանք իրենց գործունեության վերաբերյալ կատարողական հաշվետվություններ չեն ներկայացնում ՏԻՄ-երին, իսկ ՔԿԱԳ ծառայությունների և գանձվող պետական տուրքերի դրույթաչափերի վերաբերյալ քաղաքացիների իրազեկությունը ցածր է:
- 297.** ՀՀ տեղական ինքնակառավարման համակարգում զբաղված շուրջ 7000 համայնքային ծառայողների արհեստավարժության, բանիմացության, կառավարման և կոռուպցիայի դեմ պայքարի ունակություններն ու հմտությունները մնում են համայնքների արդյունավետ կառավարման պահանջներին անբավարար: Այս կամ այն լիազորության մասնագիտական բնույթով պայմանավորված՝ առկա է համապատասխան մասնագիտական կրթություն, որակավորում, փորձ և հմտություն ունեցող մասնագետների պակաս: Քանի որ ՏԻՄ-երն իրականացնում են նաև պետության կողմից համայնքներին պատվիրակված լիազորություններ, ապա ակնհայտ է դրանց կարողությունների զարգացման գործում պետության շահագրգռվածությունը: Ավելին, ՏԻՄ-երի կողմից օրենքով սահմանված լիազորությունների պատշաճ և արդյունավետ իրականացումը պետության ապակենտրոնացման քաղաքականության հետագա զարգացման և ՏԻՄ-երի լիազորությունների շրջանակի ընդլայնման երաշխիքն է: Հատկանշական է, որ ՏԻՄ-երի և նրանց աշխատակիցների ուսուցման և վերապատրաստման ծրագրերն իրագործվել են հիմնականում միջազգային ու տեղական կազմակերպությունների և ՀՀ կառավարության (ի դեմս ՀՀ տարածքային կառավարման նախարարության) համագործակցության արդյունքում՝ ՀՀ պետական բյուջեի և այլ միջոցների հաշվին:
- 298.** Համայնքային ծառայության ներդրման արդյունքում ողջ հանրապետությունում 2009 թվականի հունվարի 1-ի դրությամբ սահմանված համայնքային ծառայության 6688 պաշտոններից թափուր են մնացել 1186-ը կամ 17,8 տոկոսը: Համայնքային ծառայության թափուր պաշտոններից շուրջ 300-ը համայնքների ղեկավարների աշխատակազմերի քարտուղարների պաշտոններ են, որոնք զբաղեցնող անձինք գրկվել են իրենց պաշտոններից՝ պաշտոնի անձնագրով սահմանված չափանիշներին չհամապատասխանելու պատճառով: Փոքր համայնքներում համայնքային ծառայության ներդրման խնդիրների լուծումը մեծապես պայմանավորված է համայնքների խոշորացմանն ուղղված քաղաքականությամբ: Համայնքի ավագանու անդամների համար օրենքով կրթական ցենզ սահմանված չէ, ուստի նրանք կարող են լուրջ մասնագիտական դժվարություններ ունենալ մրցութային և ատեստավորման հանձնաժողովներում իրենց աշխատանքում: Մա վտանգում է համայնքային ծառայության ներդրման արդյունավետությունը: Համայնքների մեծամասնության ներկա սուղ ֆինանսական վիճակը և հնարավորությունները էականորեն սահմանափակում են համայնքային ծառայողների վերապատրաստման հնարավորությունները:
- 299.** Այսպիսով, ՀՀ տեղական ինքնակառավարման և տարածքային կառավարման համակարգերի գործունեության ներդաշնակությունը, արդյունավետությունը, թափանցիկությունը, հաշվետվողականությունն ու օրինականությունը ապահովելու նպատակով, անհրաժեշտ է.
- **Ամբողջականացնել ՀՀ տեղական ինքնակառավարման զարգացման համակարգված և արդյունավետ քաղաքականությունը. ՀՀ տեղական ինքնակառավարման զարգացման**

ռազմավարական ծրագիր մշակելու, նպատակները, խնդիրներն ու միջոցները միասնության և փոխադարձ կապի մեջ սահմանելու, ՏԻՄ-երին նոր լիազորությունների փոխանցման ոլորտները, ժամկետները, փուլերը, իրականացման կարգերը օրենսդրորեն սահմանելու, տարրական ու տեխնիկական կրթության, սոցիալական ապահովության, առողջապահության, հասարակական կարգի պահպանության (մուսիցիպալ ռատիկանության), հարկային, բնակչության հաշվառման ու գրանցման և այլ ոլորտներում լիազորությունների ապակենտրոնացման միջազգային լավագույն փորձը տեղայնացնելու և փորձական ծրագրերի արդյունքները օգտագործելու միջոցով:

- **Ամբողջականացնել ՀՀ տարածքային կառավարման զարգացման համակարգված և արդյունավետ քաղաքականությունը.** ՀՀ տարածքային կառավարման զարգացման հայեցակարգ մշակելու, տարածքային կառավարման զարգացման պետական քաղաքականության սկզբունքները, նպատակները, խնդիրներն ու միջոցները սահմանելու, ՀՀ մարզերում պետական կառավարման գործադիր մարմինների կառուցվածքների և գործառույթների օրենսդրական կարգավորումը հստակեցնելու, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների փոխհարաբերությունները օրենսդրորեն հստակեցնելու միջոցով:
- **Բարձրացնել տեղական ինքնակառավարման համակարգի արդյունավետությունը.** ընտրված առանձին մարզերում համայնքների խոշորացման փորձական ծրագրերի իրականացման արդյունքների վերլուծության և գնահատման, ձեռք բերված փորձի ամբողջականացման հիման վրա, ՀՀ ամբողջ տարածքում գործնականում համայնքների խոշորացումը կամավորության և պարտադիր սկզբունքների համադրությամբ աստիճանաբար իրականացնելու, միջհամայնքային միավորումների ձևավորումը, միջհամայնքային միավորումների և դրանց կազմում ընդգրկված համայնքների լիազորությունները, կառավարման մարմինները, նրանց փոխհարաբերությունները, սեփականություն համարվող գույքը, բյուջեների եկամուտների աղբյուրները և ծախսային ուղղությունները օրենսդրորեն կարգավորելու, պետական բյուջեի միջոցներով այդ կառույցների ձևավորմանը և կայացմանն օժանդակելու միջոցով:
- **Կատարելագործել համայնքի ղեկավարի և ավագանու ինստիտուտների միջև զսպումների և հակակշիռների համակարգը.** համայնքի ավագանու ձևավորման ընտրական օրենսդրությունը կատարելագործելու, ավագանու անդամության թեկնածուներին ներկայացվող պահանջները հստակեցնելու, ավագանու ներքին կազմակերպական կառուցվածքը և գործունեության կանոնակարգերն ու ընթացակարգերը հստակեցնելու, դրանք հանրային լայն քննարկման դնելու, ընդունելու և ՀՀ համայնքներում ներդնելու, ավագանու գործունեության պայմանները բարելավելու միջոցով:
- **Ապահովել ՏԻՄ-երի պարտադիր և պետության կողմից պատվիրակված լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցներ.** ՏԻՄ-երին վերապահված լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացմանը համարժեք ֆինանսական միջոցներով համայնքների ապահովման օրենսդրական երաշխիքներ ամրագրելու, ՏԻՄ-երի պարտադիր և պատվիրակված լիազորությունների իրականացման արժեքների հաշվարկման մեթոդաբանություններ մշակելու և ընդունելու, պահանջվող ֆինանսական միջոցների նվազագույն ծավալները որոշելու, այդ մեթոդաբանությունների հիման վրա ՏԻՄ-երի պարտադիր և պետության կողմից պատվիրակված լիազորությունների իրականացման կարգերը օրենսդրորեն ամրագրելու, անհրաժեշտ ընթացակարգեր և կառուցակարգեր ընդունելու և ներդնելու միջոցով:
- **Բարձրացնել համայնքի ֆինանսական անկախությունը և համայնքի բյուջեի ծախսերի կառավարման արդյունավետությունը.** համայնքի ռազմավարական պլանավորման և բյուջետային գործընթացի վերաբերյալ մեթոդական ուղեցույցեր մշակելու և ներդնելու, մարզի զարգացման ծրագիրը և համայնքների զարգացման քառամյա ծրագրերը ներդաշնակ և համահունչ դարձնելու, ծրագրային և բյուջետային փաստաթղթերի մշակման գործընթացների ժամանակացույցերի համաձայնեցման օրենսդրական պարտադիր պահանջ սահմանելու և ընթացակարգեր ներդնելու, համայնքներում ծրագրային բյուջետավարման համակարգ ներդնելու և բյուջետային գործընթացի դրա շրջանակներում կազմակերպման ընթացակարգեր ներդնելու, բազմամյա կապիտալ պլանավորման և բյուջետավարման, կապիտալ ծրագրերի մշակման և իրականացման, համայնքի ֆինանսական վիճակի վերլուծության, վարկունակության գնահատման և վարկավորման բնագավառներում համայնքների

կարողությունները և ունակությունները զարգացնելու, համայնքային տնտեսությունում վարկային ծրագրեր ներգրավելու, արժեթղթեր (պարտատոմսեր) թողարկելու և լրացուցիչ եկամուտներ ապահովելու, համայնքներում բյուջետային դասակարգման **GFS 2001** և հաշվապահական հաշվառման ու հաշվետվության միասնական համակարգերը ներդնելու, տեղական նոր հարկատեսակներ օրենսդրորեն սահմանելու, գույքահարկի և հողի հարկի տեղեկատվական ավտոմատացված համակարգերի արդյունավետ շահագործումն ապահովելու, համայնքի սեփականություն համարվող գույքի արդյունավետ կառավարման միասնական տեղեկատվական համակարգեր ու համայնքային գույքի կառավարման պլաններ մշակելու և ներդնելու, համայնքի տարածքում գործունեության թույլտվությունների տրամադրման և դրանց դիմաց տեղական տուրքերի գծով գանձումների ապահովման գործընթացի օրինականության նկատմամբ ՏԻՄ-երի պատասխանատվությունը բարձրացնելու միջոցով:

- **Բարձրացնել համայնքներում գնումների գործընթացի արդյունավետությունը, թափանցիկությունը, հաշվետվողականությունը և օրինականությունը.** համայնքային գնումների ընթացակարգերի պահպանման և կիրառման նկատմամբ պետական խիստ վերահսկողություն սահմանելու, համայնքային գնումների մրցույթի հայտերի գնահատման չափորոշիչների և մրցույթի մասնակիցների նախաորակավորման հստակ ընթացակարգեր սահմանելու, մրցույթի հանձնաժողովի անդամների շահերի բախման ու հայտարարագրման պահանջներ և ընթացակարգեր սահմանելու, գնումների գործընթացում համայնքների ղեկավարների լիազորությունները հակակշռելու և անհատական պատասխանատվություն սահմանելու, գնում կատարող կազմակերպությունների միջև մրցակցությունը խրախուսելու միջոցով:
- **Բարձրացնել համայնքների բյուջեներին պետական ֆինանսական օժանդակության համակարգի արդյունավետությունը, թափանցիկությունն ու հաշվետվողականությունը.** համայնքների ֆինանսական համահարթեցման նոր սկզբունքներին համապատասխան դոտացիաների բաշխման առավել նպատակային և հասցեական ընթացակարգեր ներդնելու, նպատակային հատկացումների (սուբվենցիաների) տրամադրման կառուցակարգ մշակելու և ներդնելու, նպատակային հատկացումների հայտերի և ծրագրերի կազմման չափորոշիչները սահմանելու և դրանց վերաբերյալ համայնքներին հրապարակային իրազեկելու միջոցով:
- **Բարձրացնել ՏԻՄ-երի գործունեության թափանցիկությունը և հրապարակայնությունը.** բնակչության կողմից համայնքի դերի գիտակցումը խթանելու, համայնքի բյուջեի նախագծի և բյուջեի կատարման վերաբերյալ տեղեկատվության պարտադիր հրապարակման և հանրային քննարկումների կազմակերպման հստակ ընթացակարգեր սահմանելու, համայնքների ղեկավարների և ավագանիների անդամների ուսուցման և վերապատրաստման ծրագրեր կազմակերպելու, բնակչությանը ՏԻՄ-երի գործունեության մասին պարբերաբար իրազեկելու, քաղաքացիների ընդունելության կազմակերպման հստակ ընթացակարգեր սահմանելու, համայնքային սեփականություն համարվող գույքի օտարման և օգտագործման տրամադրման հրապարակային սակարկությունների ընթացակարգերը հստակեցնելու, հրապարակային սակարկությունների ժամանակ անշարժ գույքի և հողի մեկնարկային և շուկայական գները մոտեցնելու, ՏԻՄ-երի կողմից մատուցվող հանրային ծառայությունների վերաբերյալ բնակչության իրազեկությունը և ներգրավվածությունը բարձրացնելու միջոցով:
- **Բարձրացնել ՏԻՄ-երի գործունեության հաշվետվողականությունը և օրինականությունը.** ՏԻՄ-երի գործունեության նկատմամբ պետական վերահսկողությունը կարգավորելու, պետության կողմից համայնքին պատվիրակված լիազորությունների իրականացման նկատմամբ պետական վերահսկողության կարգը և մարզպետի կողմից վարչական հսկողության իրականացման ընթացքում ձեռնարկվող միջոցները օրենսդրորեն սահմանելու, վերահսկողության ընթացակարգեր ներդնելու, մարզպետի կողմից ՏԻՄ-երի գործունեության նկատմամբ վարչական հսկողության գործառույթներն ամբողջականացնելու, մարզպետարանների և նրանց ենթակառույցների վերահսկողական կարողությունները բարելավելու, մարզպետարաններում կառավարման ժամանակակից տեխնոլոգիաներ ներդնելու, նրանց գործունեության թափանցիկությունը և հրապարակայնությունն ապահովող ընթացակարգեր ներդնելու, համայնքում ներքին և արտաքին վերահսկողության ընթացակարգերը հստակեցնելու, համայնքի քառամյա զարգացման ծրագրի կատարման վերաբերյալ համայնքի ղեկավարի հաշվետվությունը կազմելու, ավագանու քննարկմանն ու հաստատմանը ներկայացնելու և

հրապարակելու օրենսդրական պարտադիր պահանջ սահմանելու և համապատասխան ընթացակարգեր ներդնելու, համայնքային ծառայություններ մատուցող կազմակերպություններում աշխատանքների կատարման հստակ ցուցանիշներ սահմանելու, մոնիտորինգի և գնահատման ընթացակարգեր ներդնելու, գնահատման արդյունքները պարբերաբար հրապարակելու պարտադիր պահանջ սահմանելու, ՏԻՄ-երի գործունեության արտաքին աուդիտի իրականացման գործընթացում ՀՀ Վերահսկիչ պալատի և ՏԻՄ-երի միջև արդյունավետ համագործակցությանը և տեղեկատվական հոսքերի կարգավորմանն ուղղված ընթացակարգեր ներդնելու, ՀՀ համայնքների սեփականություն համարվող գույքի պարտադիր պետական գրանցման պայմաններն ու ընթացակարգերը հստակեցնելու, ավագանու և պետության կողմից համայնքի սեփականություն համարվող գույքի պետական գրանցման և արդյունավետ կառավարման նկատմամբ վերահսկողությունը խստացնելու միջոցով:

- **Բարձրացնել համայնքի և համատիրության միջև գործակցության արդյունավետությունը, թափանցիկությունն ու հաշվետվողականությունը.** համայնքի կողմից համատիրությանն օժանդակության ձևերը և համատիրությանը ՏԻՄ-երի առանձին լիազորությունները պատվիրակելու կարգը օրենսդրորեն սահմանելու և համապատասխան ընթացակարգեր ներդնելու, այս գործընթացում համայնքի ղեկավարի կողմից կայացված հայեցողական որոշումները վերահսկելու, համայնք-համատիրություն-բնակիչ փոխհարաբերությունները հստակեցնելու, այդ փոխհարաբերությունների հստակ կարգավորման և դրանց օրինականության պահպանման նկատմամբ պետական վերահսկողություն սահմանելու միջոցով:
- **Բարձրացնել ՔԿԱԳ ծառայությունների գործունեության արդյունավետությունը.** դրանք բարձր տեխնոլոգիական միջոցներով վերազինելու, դրանց համագործակցված աշխատանքն ապահովող միասնական ժամանակակից տեխնիկական համակարգ ներդնելու, ծառայության գործառնություններն ավտոմատացնելու, տվյալների միասնական էլեկտրոնային բանկ ստեղծելու, ՔԿԱԳ ծառայությունների դիմաց կոնկրետ համայնքի բնակչից գանձվող պետական տուրքը նույն համայնքի բյուջե մուտքագրման կառուցակարգ սահմանելու, ՔԿԱԳ ծառայությունները համայնքային լիարժեք կառավարմանն աստիճանականորեն հանձնելու միջոցով:
- **Զարգացնել ՏԻՄ-երի կարողությունները և ամբողջականացնել համայնքային ծառայության համակարգը.** համայնքների աշխատակազմերի օպտիմալ կառուցվածքների մոդելներ մշակելու և ներդնելու, ՏԻՄ-երի կառավարման գիտելիքներն ու հմտությունները զարգացնելու, քաղաքացիների, մասնավոր սեկտորի, ՀԿ-երի և այլ շահագրգիռ կազմակերպությունների հետ արդյունավետ համագործակցություն ծավալելու, համայնքային խնդիրների լուծմանը նպատակաուղղված նրանց իրազեկման ու մասնակցության համապատասխան ձևեր և եղանակներ կիրառելու, սոցիալական գործընկերության իրականացմանն ուղղված ՏԻՄ-երի գործունեությունը խթանելու և լիազորությունները պատվիրակելու, ՏԻՄ-երի և համայնքային ծառայողների ուսուցման և վերապատրաստման ծրագրեր կազմակերպելու, համայնքի ավագանու անդամների համար համայնքային ծառայության համակարգի վերաբերյալ ուսուցման ծրագրեր կազմակերպելու, նրանց որակավորման և շարունակական վերապատրաստման համակարգերը շարունակաբար զարգացնելու, համայնքային ծառայության թափուր պաշտոնների համալրման մրցույթների թափանցիկությունն ապահովող ընթացակարգեր ներդնելու, համայնքներում կառավարման ժամանակակից տեխնոլոգիաներ ներդնելու, համայնքների տվյալների տեղեկատվական միասնական բանկ ստեղծելու, ՏԻՄ-երում համակարգչային ներքին ցանցեր ներդնելու, համայնքային կառավարման միասնական համակարգեր ներդնելու, այդ համակարգերի համատեղելիությունը և փոխգործակցությունն ապահովելու, տարածքային կառավարման միասնական տեղեկատվական համակարգերում դրանք ներառելու և ինտեգրելու, համայնքների տեղեկատվական համակարգերն օգտագործող աշխատակիցների ուսուցման և վերապատրաստման ծրագրեր իրականացնելու միջոցով:
- **Բարձրացնել Երևանում տեղական ինքնակառավարման արդյունավետությունը, թափանցիկությունը և հաշվետվողականությունը.** «Երևանում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ նոր օրենքի կիրարկման միջոցառումների ծրագիր մշակելու և իրականացնելու, Երևանում ՏԻՄ-երի ձևավորման ժողովրդավարական ընտրություններ կազմակերպելու և անցկացնելու, ՏԻՄ-երի գործունեության կանոնակարգեր և կանոնադրություններ ընդունելու, կառավարման տարբեր մակարդակի մարմինների գործառնությունները հստակեցնելու և

սահմանելու, Երևանի ավագանու, քաղաքապետարանի, նրա տարածքային ստորաբաժանումների և ենթակա կազմակերպությունների կարողությունները, փոխհարաբերությունները, տեղեկատվության կառավարման հոսքերը բարելավելու, կառավարման ժամանակակից տեխնոլոգիաներ ու տեղեկատվական կենտրոններ ներդնելու, հանրային ծառայությունների մատուցման «Մեկ պատուհանի սկզբունք» ընդունարանը զարգացնելու միջոցով:

4.15. Մասնավոր հատված

300. Հայաստանում ընկերությունների 84 տոկոսը⁴¹ դժգոհ է երկրում գործող օրենսդրական և վարչական կանոնակարգումից: Հայաստանում ձեռնարկատիրությունը կարգավորող օրենսդրությունն ընդհանուր առմամբ բավարար է, սակայն օրենքները պատշաճ կերպով չեն կիրառվել: Պետական կառավարման մարմինների կողմից ընկերությունների նկատմամբ ոչ միանման վերաբերմունքը և անազնիվ մրցակցությունը ձեռնարկատիրությունը խոչընդոտող հիմնական գործոններից են: Ընկերություններն իրենց գործունեության որոշ մասը իրականացնում են սովետային հատվածում: Օրենսդրական փոփոխությունները նախքան կիրառության մեջ դրվելը հազվադեպ են ներկայացվում գործարար հանրությանը: Օտարերկրյա ներդրողի և պետական մարմինների բանակցությունների վարման վարչարարությունը բարդ ու ժամանակատար է⁴²:

301. Ձեռնարկատիրության թափանցիկությանն առնչվող հիմնական հարցերի, մասնավորապես ընկերության ռեեստրի, հիմնադիրների ու բաժնետերերի կազմի հրապարակայնության առումով Հայաստանը ԱՊՀ երկրների շարքում վերջին տեղերից մեկն է զբաղեցնում: Ընկերությունների ֆինանսական հաշվետվության որակը նույնպես դեռևս ցածր է: «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքը, ինչպես նաև ձեռնարկատիրությանը առնչվող այլ օրենսդրական փաստաթղթեր չեն կարգավորում առևտրային կազմակերպություններում աշխատանքի բարեխղճության, ձեռնարկատերերի և մյուս համապատասխան աշխատակիցների վարքագծի կանոնները և շահերի բախումների առաջացումը կանոնակարգող սահմանափակումները: Այս ուղղությամբ ՀՀ առևտրա-արդյունաբերական պալատի կողմից քայլեր չեն ձեռնարկվում բարեխիղճ առևտրային պրակտիկայի խրախուսման ուղղությամբ: Բացի այդ, առևտրային գործարքների ոլորտը կարգավորող օրենքները թերի են, որի հետևանքով պայմանագրերն ավելի շատ կնքվում են ոչ ֆորմալ դաշտում:

302. Այսպիսով, կոռուպցիայի դեմ պայքարի գործում Հայաստանի մասնավոր հատվածում կոռուպցիայի կրճատման ու կանխարգելման նպատակով անհարաժեշտ է.

- **Ուժեղացնել մասնավոր հատվածում կոռուպցիայի առաջարկի կանխարգելումը.** հաշվապահական հաշվառման և աուդիտի միջազգային ստանդարտների ներդրման, այդ պահանջների չպահպանման համար քաղաքացիաիրավական, վարչական կամ քրեական պատժամիջոցների կիրառման, մրցակցության հավասար պայմանների ապահովման, տնտեսական մրցակցության օրենսդրության դրույթները խախտող, հակամրցակցային վարքագիծ դրսևորող, շուկայում գերիշխող դիրքը կամ մենաշնորհը չարաշահող տնտեսվարողների նկատմամբ պատասխանատվության միջոցների խստացման և այդ դեպքերի լայն լուսաբանման, Տնտեսական մրցակցության պետական հանձնաժողովի կարողությունների զարգացման և լիազորությունների ընդլայնման, հարկային, մաքսային ծառայությունների վարչարարության կատարելագործման, կոռուպցիայի դեմ պայքարում մասնավոր հատվածի իրազեկվածության բարձրացման միջոցով:
- **Ապահովել մասնավոր կազմակերպությունների աշխատանքում բարեխղճությունը.** Առևտրի միջազգային պալատի (ԱՄՊ) կողմից ընդունված կոռուպցիայի դեմ պայքարի կանոնակարգերի և էթիկայի կանոնների⁴³ ճանաչման ու տեղայնացման, դրանից բխող ստանդարտների և ընթացակարգերի մշակման, մասնավոր կազմակերպություններում բարեխիղճ վարքագծի կանոնակարգերի և շահերի բախման կանխարգելման կանոններ սահմանելու միջոցով:

⁴¹ Համաշխարհային բանկի կողմից 2004 թվականին իրականացված գործարար միջավայրի ուսումնասիրության արդյունքներ:

⁴² Հայաստան, Կովկասյան Վագրը, Հատոր 1, Կայուն տնտեսական աճի պահպանման քաղաքականություններ, Համաշխարհային Բանկ, 2006թ., էջ 91:

⁴³ Մանրամասն տես՝ <http://www.iccwbo.org/policy/anticorruption/id870/index.html>:

- Նրախուսել առևտրային կազմակերպությունների և պետության միջև համագործակցությունը.** պայմանագրային հարաբերություններում բարեխիղճ առևտրային պրակտիկայի կիրառման, ձեռնարկությունների ռեյտինգավորման, ազնիվ գործարարության համար մրցանակաբաշխությունների սահմանման, տնտեսվարողների կողմից ծառայությունների մատուցման արդյունքում սպառողներին պատճառված վնասի հատուցումը երաշխավորելու նպատակով լիցենզավորման ենթակա ձեռնարկատիրական գործունեության որոշ տեսակների համար պարտադիր ապահովագրության համակարգերի ներդրման, սպառողների իրավունքների պաշտպանության օրենսդրական երաշխիքների հետագա բարելավման և դրանց իրականացումն ապահովող պետական, համայնքային մարմինների և քաղաքացիական հասարակության կառույցների ինստիտուցիոնալ կարողությունների զարգացման կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի կազմում գործարար միջավայրի ներկայացուցիչների ներգրավման, պետական պաշտոնյա և գործարար հարաբերություններում էլեկտրոնային կառավարման համակարգերի ներմուծման, «թեժ գծերի» օգտագործման միջոցով:
- Արմատավորել ձեռնարկությունների կորպորատիվ կառավարման սկզբունքները.** օրենսդրորեն բաժնետերերի՝ սեփականատեր-գործադիր տնօրեն փոխհարաբերությունների տարանջատման ու հստակեցման, տնօրենների խորհրդի պաշտոնական պարտականությունների ու հաշվետվողականության սահմանման, ձեռնարկությունների գործունեության գնահատման համակարգի ներդրման, պետական գնումների համակարգում այդ գնահատման արդյունքների կիրառման, հրապարակայնության ապահովման, ըստ առդիտի արդյունքների պետական գնումների նախատրակավորման չափորոշիչների սահմանման միջոցով:
- Զարգացնել ՀՀ առևտրա-արդյունաբերական պալատի, ինչպես նաև խոշոր գործարարների շահերը ներկայացնող այլ կազմակերպությունների կարողությունները.** առևտրի միջազգային պալատի հետ համագործակցության զարգացման, մասնավոր հատվածում կոռուպցիայի առաջարկի կրճատման, լավագույն միջազգային փորձի փոխանակման, աշխատակիցներին և մասնավոր հատվածի ներկայացուցիչների համար գործնական և ճանաչողական այցերի կազմակերպման, կորպորատիվ կառավարման ուսումնական և վերապատրաստման դասընթացների կազմակերպման միջոցով:

ԳԼՈՒԽ V. ՀՀ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԴՐԱ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

- 303.** ՀՌԻՄԾ գործող մոնիտորինգի համակարգն իր էությունը հանգում է ծրագրի միջոցառումներով սահմանված գործողությունների կատարմանը: Իրականացվող մոնիտորինգը վարչական է և սահմանափակվում է օրենսդրական նախաձեռնությունների վերաբերյալ կոնկրետ նախագծերի ընդունման մասին որոշումների կայացմամբ, ինչը հնարավորություն չի տալիս ՀՌԻՄԾ-ում նշված ոլորտներում և բնագավառներում գնահատել կոռուպցիայի մակարդակի փոփոխությունները, ներառել բովանդակային՝ կատարողական մոնիտորինգի համակարգը, հաշվետվությունների, այդ թվում՝ տարեկան արդյունքների ամփոփման պահանջները, ընթացիկ իրավիճակի չափելի նկարագրերը և միջոցառումների իրականացման ելքերի և արդյունքների գնահատման ցուցիչները, մոնիտորինգի և գնահատման համակարգը ամրապնդել գործուն մեխանիզմներով: Բացի այդ, ՀՌԻՄԾ մոնիտորինգի ցուցանիշների գնահատման համակարգի բացակայությունը դժվարացրել է կոռուպցիայի դեմ պայքարի գործընթացի հավաստի վերլուծության և միջազգայնորեն համադրելի ցուցանիշների կիրառումը:
- 304.** ՀՌԻՄԾ-ի իրականացման վերաբերյալ պետական կառավարման մարմինների և ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման մոնիտորինգի հանձնաժողովի հաշվետվությունների վերլուծությունը ցույց է տվել, որ դրանց հիման վրա դժվար է ՀՌԻՄԾ -ի իրականացման արդյունքների գնահատումը: Դրանք գործուն հիմք չեն կարող հանդիսանալ ծրագրի հետագա վերանայումների համար:
- 305.** ՀՌԻՄԾ-ի մշակմանը զուգահեռ, կարևորվում է ծրագրի մոնիտորինգի և գնահատման համակարգի կատարելագործումը: Կառավարությունը, հաշվի առնելով **2003-2007**թթ. հակակոռուպցիոն ռազմավարության մոնիտորինգի ու գնահատման համակարգի բացերը, նկատելի թերություններն ու առկա խնդիրները, ՀՌԻՄԾ-ի իրականացման մոնիտորինգի և գնահատման գործընթացի բարելավման նպատակով, **2009-2012**թթ. ՀՌԻՄԾ-ի ձևավորված վարչական մոնիտորինգի համակարգից անցում կկատարի ՀՌԻՄԾ-ի ըստ արդյունքների կատարողականի մոնիտորինգի և գնահատման գործուն համակարգի ներդրմանը: Վերջինս սերտորեն պետք է համահունչ լինի ծրագրային բյուջետավորման, ինչպես նաև պետական կառավարման մարմիններում ծրագրային հենքով ըստ արդյունքների կատարողականի գնահատման համակարգերի ներդրմանը: ՀՌԻՄԾ մոնիտորինգի և գնահատման համակարգի զարգացումը ենթադրում է ինչպես գործող ինստիտուցիոնալ համակարգի կատարելագործում, այնպես էլ գնահատման ցուցանիշների համակարգի մշակում՝ **վերջնական, միջանկյալ և գործունային** գնահատման մակարդակներում, որոնք պետք է զուգակցվեն համապատասխան մարմինների ու ոչ պետական հատվածի կարողությունների հզորացման նպատակային ու հասցեական միջոցառումներով:
- 306.** ՀՌԻՄԾ-ի մոնիտորինգի և գնահատման համակարգի կատարելագործման առումով կարևորվում է թե՛ պետական մարմինների, թե՛ քաղաքացիական հասարակության միավորումների համապատասխան մասնագիտական կարողությունների ձևավորումը և զարգացումը՝ մեթոդական աջակցության և գործնական վերապատրաստման դասընթացների կազմակերպման և միջազգային լավագույն փորձի և տեխնիկական աջակցության ներգրավման միջոցով:
- 307.** ՀՌԻՄԾ-ի մոնիտորինգի ինստիտուցիոնալ կառույցի ձևավորումը պետք է սկսվի պետական կառավարման մարմիններում մոնիտորինգի և գնահատման համապատասխան միավորների ձևավորմամբ: Ընդ որում, ՀՌԻՄԾ-ի մոնիտորինգի և գնահատման գործառնություններն կարող են համատեղվել պետական կառավարման մարմիններում ռազմավարական պլանավորման, կատարողականի գնահատման, և մասնավորապես կայուն զարգացման ռազմավարության մոնիտորինգի ձևավորվելիք ինստիտուցիոնալ կառույցներին և դրանց ձևավորված համակարգին ներդաշնակեցման միջոցով:
- 308.** ՀՌԻՄԾ-ի մոնիտորինգի ինստիտուցիոնալ կառույցի գործունեության ապահովմանն անհրաժեշտ տեղեկատվական հոսքերի ապահովումը, դրանց կանոնակարգումը, ինչպես նաև կոռուպցիայի դեմ պայքարի ամբողջականացված վիճակագրական համակարգի ձևավորման, թափանցիկ և հրապարակային հաշվետվությունների, կոռուպցիոն ռիսկերի վերաբերյալ ուսումնասիրությունների, քաղաքացիների և գործարար միջավայրի ներկայացուցիչների

հարցումների, առանձին ոլորտային զեկույցների պարբերական հրապարակումների միջոցով հնարավոր կլինի ձևավորել ՀՌԻՄԾ-ի իրականացման գնահատման, ինչպես նաև հաջորդող տարիների համար հիմնական նպատակադրումների առաջադրման ու հնարավոր վերանայումների համար անհրաժեշտ, իրատես և որակյալ տեղեկատվական բազա:

309. ՀՌԻՄԾ-ի մոնիտորինգի ինստիտուցիոնալ կառույցի ձևավորմանը զուգընթաց կձևավորվի ու կկատարելագործվի կոռուպցիայի գնահատման ցուցանիշների համակարգը: Կոռուպցիայի գնահատման խնդիրները ներառում են, մասնավորապես, կոռուպցիայի մակարդակի և միտումների, տարածվածության և տեսակների, պատճառների և հետևանքների գնահատումը (**assessment**): Ավելին, կունկրետ ոլորտներում և համակարգերում կոռուպցիայի գնահատումը նախապայման է կոռուպցիայի կրճատմանն ուղղված ոլորտային նպատակային ծրագրեր մշակելու, իրականացնելու, վերահսկելու և ազդեցությունը գնահատելու (**evaluation**) համար:
310. Հայաստանում հասարակության և թիրախ խմբերի կողմից հակակոռուպցիոն ռազմավարության **ազդեցության ընկալման գնահատումը** ներառում է հարցումների և հետազոտությունների իրականացումը. (ա) տնային տնտեսությունների, գործարարների կամ այլ առանձին թիրախ խմբերի շրջանում **կոռուպցիայի մակարդակի կրճատման նկատելիությունը** պարզելու նպատակով, (բ) տնային տնտեսությունների, գործարարների կամ այլ առանձին թիրախ խմբերի շրջանում **կոռուպցիայի մակարդակի կրճատման տեմպերից բավարարվածությունը** գնահատելու նպատակով, (գ) տնային տնտեսությունների, գործարարների կամ այլ առանձին թիրախ խմբերի կողմից **պետական մարմինների մատուցած հանրային ծառայությունների որակից բավարարվածությունը գնահատելու** նպատակով:
311. Վերը նշված հետազոտությունների համար անհրաժեշտ ռեսուրսների ապահովումը պետք է ներառել ՀՀ միջնաժամկետ ծախսային ծրագրում և պետական բյուջեում: Միաժամանակ, անհրաժեշտ է այդ նպատակներին ուղղել և արդյունավետ կերպով օգտագործել միջազգային կազմակերպությունների կողմից տրամադրվող տեխնիկական աջակցությունը և իրականացվող ծրագրերը:
312. ՀՌԻՄԾ -ի մոնիտորինգի և գնահատման արդյունավետ համակարգի կայացման համար անհրաժեշտ է պետական կառավարման մարմինների կողմից իրականացվող մոնիտորինգի և գնահատման մեխանիզմը համալրել այլընտրանքային հետադարձ կապի ապահովման տարրերով: Մասնավորապես, ոչ պետական հատվածին կամ քաղաքացիական հասարակությանը ոլորտային վերլուծություններ ու գնահատումներ իրականացնելու իրավասության պատվիրակմամբ՝ նախապես ձևավորելով համապատասխան մեթոդաբանություն և կարողություններ: Այս առումով, դոնոր հանրության կողմից արդեն իսկ իրականացված առանձին քայլերն ու փորձնական ծրագրերն Կառավարության համար կծառայեն որպես լավագույն օրինակներ:
313. ՀՀ Կառավարությունը կարևորում է ՀՌԻՄԾ-ի մոնիտորինգի և գնահատման գործընթացին **քաղաքացիական հասարակության մասնակցությունը**: Այն ապահովելու է քաղաքացիական հասարակության կողմից իրականացված մոնիտորինգի ուսումնասիրության, հետազոտությունների արդյունքների ու գնահատականների ներառումը ՀՌԻՄԾ-ի հաշվետվությունում, կոռուպցիոն ռիսկերի կրճատմանն ուղղված առաջարկությունների քննարկումը ՀՌԻՄԾ -ի վերանայման գործընթացում, ինչպես նաև քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների ուղղակի մասնակցությունը կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի աշխատանքներին: ՀՌԻՄԾ-ի մոնիտորինգի և գնահատման համակարգը պետք է ապահովի ոչ միայն ծրագրի առաջընթացի գնահատումն ու համապատասխան միջոցառումների հետևանքների ազդեցության չափումը կոռուպցիայի մակարդակի վրա, այլև պետք է ներառի ՀՌԻՄԾ-ի մասնակցային գործընթացում ընդգրկված քաղաքացիական հասարակության շահագրգիռ ներկայացուցիչների համար համապատասխան տեղեկատվության մատչելիության չափորոշիչներ, որոնք կօգտագործվեն ինչպես վերլուծական նշանակությամբ, այնպես էլ ոլորտային կանխատեսումների և քաղաքականության մշակման աշխատանքներում:
314. ՀՌԻՄԾ -ի սահմանված նպատակադրումները, ցուցանիշները, ինչպես նաև քաղաքականության հիմնական ուղղություններն ու առաջնահերթությունները ենթակա են փոփոխման ծրագրի վերանայմամբ՝ հիմք ընդունելով երկրում արձանագրված հիմնական զարգացումներն ու տեղաշարժերը, ծրագրի իրականացման առաջընթացի հաշվետվություններում ներկայացված մոտեցումները, ինչպես նաև շահագրգիռ կողմերի առաջարկություններն ու մոնիտորինգի արդյունքները:

315. ՀՀ Հակակոռուպցիոն ռազմավարության և իրականացման 2009-2012թթ. միջոցառումների ծրագրի (ՀՌԻՄԾ) մոնիտորինգի և գնահատման ցուցանիշների համակարգը ներկայացված է կից Հավելվածում:

316. Այսպիսով, ՀՌԻՄԾ մոնիտորինգի և գնահատման իրականացման նպատակով անհրաժեշտ է.

- **Ապահովել ՀՌԻՄԾ միջոցառումների մոնիտորինգի և դրանց արդյունավետության գնահատման իրականացումը հանրային կառավարման, տնտեսության առանձին ոլորտներում և ճյուղերում.** ՀՌԻՄԾ կատարողական բովանդակային մոնիտորինգի համակարգը ներդնելու, հանրային ծառայություններ տրամադրողների և ստացողների մասնակցությամբ կոռուպցիոն ռիսկերը շարունակականորեն գնահատելու, գնահատված ռիսկերի կրճատման թիրախներն ու անհրաժեշտ միջոցառումները սահմանելու, յուրաքանչյուր միջոցառման իրականացման ընթացիկ մասնակցային մոնիտորինգի ընթացակարգեր ներդնելու, կոռուպցիոն ռիսկերի կրճատման գնահատման մեթոդներ ներդնելու միջոցով.
- **Ապահովել քաղաքացիական հասարակության կողմից ՀՌԻՄԾ ազդեցության ընկալման գնահատման իրականացումը.** տնային տնտեսությունների, գործարարների և հասարակության առանձին թիրախ խմբերի շրջանում կոռուպցիայի մակարդակի կրճատման նկատելիությունը և դրա տեմպերից բավարարվածությունը գնահատելու, պետական մարմինների մատուցած հանրային ծառայությունների որակից բավարարվածությունը գնահատելու միջոցով.
- **Ձևավորել և շարունակականորեն զարգացնել ՀՌԻՄԾ մոնիտորինգի և գնահատման ինստիտուցիոնալ կարողությունները.** պետական կառավարման մարմիններում ՀՌԻՄԾ մոնիտորինգի և գնահատման համապատասխան միավորներ ձևավորելու, մոնիտորինգի, վերլուծության և գնահատման ընթացակարգեր սահմանելու և ուղեցույցներ ներդնելու և դրանց արդյունքներով ՀՌԻՄԾ վերանայման գործընթացը հստակ կանոնակարգելու, ՀՌԻՄԾ կատարողական հաշվետվությունների, այդ թվում՝ տարեկան արդյունքների ամփոփման չափորոշիչներ և ընթացակարգեր սահմանելու, հակակոռուպցիոն մոնիտորինգի միջազգային լավագույն փորձի և տեխնիկական աջակցության ներգրավման, պետական մարմինների և քաղաքացիական հասարակության կառույցների ներկայացուցիչների համար ՀՌԻՄԾ մոնիտորինգի և գնահատման վերաբերյալ համատեղ վերապատրաստման դասընթացներ կազմակերպելու միջոցով:

ՀԱՎԵԼՎԱԾ: ՀՀ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ և ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ 2009-2012ԹԹ. ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ և ԳՆԱՀԱՏՄԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ

1. ՀՀ Հակակոռուպցիոն ռազմավարության և իրականացման 2009-2012թթ. միջոցառումների ծրագրի (ՀՌԻՄԾ) մոնիտորինգի և գնահատման համակարգը խարսխված է ծրագրում կոռուպցիայի գնահատման ցուցանիշերի համակարգի և դրանց մեթոդաբանության, գործոնների տրամաբանության վրա: Այսպես, ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության **վերջնական արդյունքը (impact)** կոռուպցիայի ընդհանուր մակարդակի կրճատումն է, որը չափվում է Կոռուպցիայի ընկալման համաթիվ (ԹԻ) և Կոռուպցիայի հսկողության համաթիվ (ՀԲԻ) ցուցանիշերի թիրախների և ընթացիկ վիճակի միջև նախանշված խզման կրճատմամբ:
2. ՀՌԻՄԾ-ի վերջնական արդյունքը պայմանավորված է մի շարք **միջանկյալ արդյունքներով (outcomes)**, որոնց մոնիտորինգն ու գնահատումը սահմանված են ըստ կառավարման արդյունավետության ազդեցացված ցուցանիշերի՝ կարգավորման որակ (ՀԲԻ), կառավարման արդյունավետություն (ՀԲԻ), օրենքի գերակայություն (ՀԲԻ), ձայնի լսելիություն և հաշվետվողականություն (ՀԲԻ), քաղաքական կայունություն (ՀԲԻ), քաղաքացիական ազատություններ/ԱԱ (ՖՀ):
3. ՀՌԻՄԾ-ի միջանկյալ արդյունքները՝ գործառնական, վարչական և քաղաքական կոռուպցիայի մակարդակի կրճատումը, պայմանավորված են առանձին ոլորտներում և համակարգերում արդյունավետության, թափանցիկության և հրապարակայնության, հաշվետվողականության և օրինականության մակարդակի բարձրացմանն ուղղված **միջոցառումներով**: Վերջինների իրականացման և արդյունքների մոնիտորինգի և գնահատման համար կիրառվում են համապատասխան **գործոնային ցուցիչներ**:
4. ՀՌԻՄԾ մոնիտորինգի ցուցանիշների համակարգում ընդգրկված ցուցանիշները, որպես կանոն, բավարարում են մի շարք պահանջներ: Դրանք հստակ սահմանելի են և բացառում են երկակի մեկնաբանման հնարավորությունները: Ցուցանիշները ընդհանրացման որոշակի աստիճանում ուղղակիորեն նկարագրում են որոշակի գործընթաց՝ դրված նպատակի ապահովում, միջոցառման արդյունքների գնահատական: Դրանք քանակապես չափելի են և բնութագրում են ՀՌԻՄԾ քաղաքականությունների, ըստ բնագավառի՝ գործողությունների, և ըստ ոլորտի՝ միջոցառումների, միմյանց վրա ազդեցության մակարդակները: ՀՌԻՄԾ մոնիտորինգի ցուցանիշները ներկայում մատչելի են կամ, մատչելիությունը հնարավոր է ապահովել, առնվազն, մոտ ապագայում՝ համեմատաբար փոքր ծախսերի հաշվին:
5. ՀՌԻՄԾ մոնիտորինգի ցուցանիշների համակարգը ընդհանուր զարգացումներից բացի պետք է ապահովի նաև ծրագրի տեսանկյունից կարևոր մասնավոր զարգացումների ու միտումների գնահատականը: Այս նպատակով մոնիտորինգի համակարգում ընդգրկված ցուցանիշներն, տարբերվում են միմյանցից նաև ազդեցացվածության աստիճանով: Մասնավորապես, ՀՌԻՄԾ քաղաքականությունների ցուցանիշները բնութագրում են ռազմավարության իրագործման գերակայությունների նվաճման աստիճանը և կապ են հաստատում իրականացված քաղաքականությունների ու նպատակադրումների (թիրախ հանդիսացող ու միջազգային կազմակերպությունների կողմից չափվող ազդեցացված ինդեքսների խզման աստիճանի նվազեցման) միջև, ըստ ՀՌԻՄԾ բնագավառների մոնիտորինգի ցուցանիշները՝ բնութագրում են ՀՌԻՄԾ գերակա ուղղություններով իրականացվող գործողությունները, իսկ ՀՌԻՄԾ ոլորտային ցուցանիշերը հնարավորություն են ընձեռում չափել կոնկրետ միջոցառման թե դինամիկ զարգացման ուղղվածությունը և թե իրագործման աստիճանը: ՀՌԻՄԾ մոնիտորինգի վերջին երկու խումբ ցուցանիշները բացահայտում են զարգացումների առանձնահատկություններն, անհրաժեշտության դեպքում, բաղադրվելով ըստ որոշակի հայտանիշների՝ տարածքային կտրվածքի, կառավարման մակարդակների, հանրային ծառայությունների տեսակի, հանրային ծառայությունների ճյուղի, քաղաքացիական խմբերի մասնակցության և այլն:
6. Առանձնացված հայտանիշների խումբը ըստ նպատակահարմարության կարող է լրացվել այլ հայտանիշներով, եթե դրանք անհրաժեշտ են այս կամ այն գործընթացի որոշակիորեն առանձնացված այլ կտրվածք դիտարկելու համար: Առանձնացված հայտանիշներով

ցուցանիշների մոնիտորինգի անհրաժեշտությունը պայմանավորված է նաև ՀՌԻՄԾ իրագործման ընթացքի վերանայումների՝ արդյունավետության ապահովման նկատառումներով:

7. Իրականացվող միջոցառումների արդյունքների դրսևորումը համապատասխան ցուցանիշների վարքագծում ժամանակային առումով կարող են չհամընկնել՝ պայմանավորված որոշակի ժամանակային լագի առկայությամբ: Այս նկատառումներից ելնելով, ցուցանիշները ըստ ժամանակի մեջ զգայունության աստիճանի տարբերակվում են հետևյալ երեք խմբերի՝ երկարաժամկետ արձագանքման (5-10 տարի), միջնաժամկետ արձագանքման (2-5 տարի), կարճաժամկետ կամ անմիջական արձագանքման (1 տարի): Առաջին խմբում, որպես կանոն, ընդգրկված են նպատակի ապահովում նկարագրող ցուցանիշները, իսկ երկրորդ և երրորդ խմբերում՝ միջոցառման արդյունք և պրոցես նկարագրող ցուցանիշները: Երրորդ խմբի ցուցանիշների մեջ գերակշռում են դիսկրետ ցուցանիշները: Ժամանակի մեջ զգայունության դիտարկումը հատկապես կարևոր է նպատակի ապահովում նկարագրող ցուցանիշների դեպքում, որոնք, որպես կանոն, ժամանակի մեջ համեմատաբար «քիչ զգայուն» են:

ՆՊԱՏԱԿ 1. Գործառնական կոռուպցիայի մակարդակի կրճատում

8. ՀՀ կառավարությունն ակնկալում է, որ 2012թ. գործառնական կոռուպցիայի մակարդակի կրճատման արդյունքում կբարձրանա կառավարման արդյունավետությունը, կբարելավվեն կարգավորման որակն ու կառավարման գործառնականությունը և կբարձրանա տեղական ինքնակառավարման համակարգի արդյունավետությունը

Միջանկյալ արդյունք	Միջանկյալ արդյունքի մոնիտորինգի ցուցանիշներ	Մոնիտորինգի գործոնային ցուցանիշներ
<p>1. Գործառնական կոռուպցիայի մակարդակի կրճատում</p>	<p>Կառավարման արդյունավետության համաթիվ (ՀԲԻ)</p>	<p>1.1 Ծառայությունների մատուցման սահմանված ժամկետների և իրականում մատուցված ժամկետների հարաբերությունը (որքան մոտ է 1-ին այնքան բարձր կարելի է համարել հանրային ծառայությունների մատուցման որակը)</p>
	<p>Կարգավորման որակի համաթիվ (ՀԲԻ)</p>	<p>1.2 Պետական գնումների մրցույթների արդյունքների և դրանց ծանուցման միջև ընկած ժամանակահատվածի խրոնոմետրաժը (որքան երկարատև է այնքան մեծ են կոռուպցիոն ռիսկերի հավանականությունը)</p> <p>1.3 Պետական ծառայողների հետ շփման հաճախականության և օրենքով սահմանված պաշտոնական ընթացակարգերի վրա ընկերությունների և կամ ղեկավարների ծախսած գործառնականությունների թվաքանակի հարաբերությունը, (որքան մոտ է 1-ին այնքան ցածր կարելի է համարել պետական համակարգում գործառնական կոռուպցիայի մակարդակը)</p> <p>1.4 Պաշտոնյաների հետ կայացած հանդիպումների թվի հարաբերությունը օրենսդրորեն սահմանված և պահանջվող պաշտոնական փոխհարաբերությունների թվաքանակին (որքան մոտ է 1-ին այնքան ցածր կարելի է համարել պետական համակարգում գործառնական կոռուպցիայի մակարդակը)</p> <p>1.5 Գործարքների վրա ծախսված ժամանակահատվածի հարաբերությունը</p>

		<p>գործառնությունների իրագործման ժամկետներին, նորմավորումը ըստ ժամանակի միավորի. (որքան մոտ է 1-ին այնքան ցածր կարելի է համարել պետական համակարգում գործառնական կոռուպցիայի մակարդակը)</p> <p>1.6 Ոչ պաշտոնական հանդիպումների թվի հարաբերությունը օրենքով սահմանված ժամկետներում ձեռք բերված հնարավորությունների թվաքանակին (որքան մոտ է 1-ին այնքան բարձր կարելի է համարել պետական համակարգում գործառնական կոռուպցիայի մակարդակը)</p> <p>1.7 Լիցենզիաների և թույլտվությունների ձեռք բերման իրական ժամանակահատվածի հարաբերությունը օրենսդրորեն սահմանված ժամկետներին (դիմելու օրվանից մինչև լիցենզիան ստանալու կամ պաշտոնական մերժում ստանալու ժամանակահատվածը). (որքան մոտ է 1-ին այնքան ցածր կարելի է համարել պետական համակարգում վարչական կոռուպցիայի մակարդակը):</p>
--	--	--

ՆՊՍՏԱԿ 2. Վարչական կոռուպցիայի մակարդակի կրճատում

9. ՀՀ կառավարությունն ակնկալում է, որ **2012թ.** վարչական կոռուպցիայի մակարդակի կրճատման արդյունքում էականորեն կբարձրանա օրենքի գերակայության ապահովման մակարդակը, կտրուկ կմեծանա դատական համակարգի անկախության աստիճանը, կբարձրանա պաշտոնի չարաշահումների հայտնաբերման և հետապնդման մակարդակը, էականորեն կբարձրանա կառավարման մարմինների հաշվետվողականության և թափանցիկության մակարդակը, ինչպես նաև կամբողջականացվի հակակոռուպցիոն քաղաքականության իրականացման ինստիտուցիոնալ համակարգը:

Միջանկյալ արդյունք	Միջանկյալ արդյունքի մոնիտորինգի ցուցանիշներ	Մոնիտորինգի գործոնային ցուցանիշներ
<p>2. Վարչական կոռուպցիայի մակարդակի կրճատում</p>	<p>Օրենքի գերակայություն (ՀԲԻ)</p>	<p>2.1 ՀՀ օրենսդրությամբ միջազգային չափորաշիջներին համապատասխան հստակեցված և սահմանված է կոռուպցիոն հանցագործությունների շրջանակը (այո/ոչ)</p> <p>2.2 Պասիվ կոռուպցիայի համար նախատեսված են ոչ պակաս պատժամիջոցներ քան ակտիվ կոռուպցիոն դեպքերի պարագայում (այո/ոչ)</p> <p>2.3 Սահմանվել են ապօրինի եկամուտների բռնագրավման միարժեք ընթացակարգ և օրենսդրորեն ամրագրվել է իրավաբանական անձանց քրեական պատասխանատվությունը (այո/ոչ)</p> <p>2.4 Առկա է «Տեղեկություն տրամադրողների պաշտպանության» մասին ՀՀ օրենքը (այո/ոչ)</p>
	<p>Ձայնի լսելիություն և հաշվետվողականություն (ՀԲԻ)</p>	

ՆՊԱՏԱԿ 3. Քաղաքական կոռուպցիայի մակարդակի կրճատում

10. ՀՀ կառավարությունն ակնկալում է, որ **2012թ. քաղաքական կոռուպցիայի** մակարդակի կրճատման արդյունքում կմեծանա քաղաքական կայունությունը, կբարձրանա քաղաքական իրավունքների և քաղաքացիական ազատությունների, այդ թվում՝ քաղաքական բազմակարծության և մասնակցության, խոսքի և դավանանքի ազատության, միավորվելու, կազմակերպվելու աստիճանը, կկատարելագործվեն ընտրական գործընթացները, կմեծանա լրատվամիջոցների անկախության և կայունության աստիճանը, կհզորանա քաղաքացիական հասարակությունը և կընդլայնվի կառավարման գործընթացներին քաղաքացիական մասնակցությունը, էականորեն կբարելավվի շահերի խմբերի և շահերի բախումների կարգավորումը և կապահովվի արդյունավետ հակամենաշնորհային քաղաքականության իրականացումը:

Միջանկյալ արդյունք	Միջանկյալ արդյունքի մոնիտորինգի ցուցանիշներ	Մոնիտորինգի գործոնային ցուցանիշներ
<p>3. Քաղաքական կոռուպցիայի մակարդակի կրճատում</p>	<p>Քաղաքական կայունություն (ՀԲԻ)</p>	<p>3.1 Կարգապահական վարույթների քանակի հարաբերությունը կիրառված կարգապահական տույժերի թվաքանակին (որքան մոտ է 1-ին այնքան ցածր կարելի է համարել էթիկայի կանոնների պահպանման մակարդակը),</p>
	<p>Քաղաքական իրավունքներ/ԱԱ (\$Հ)</p>	<p>3.2 Վարչական դատարանում պետության դեմ ուղղված հայցերի թվաքանակի հարաբերությունը ի վնաս պետության կայացված դատավճիռների քանակին (որքան մոտ է 1-ին այնքան բարձր կարելի է համարել ձայնի լսելիության մակարդակը),</p>
	<p>Քաղաքացիական ազատություններ/ԱԱ (\$Հ)</p>	<p>3.3 Գործի ընդունելիս վիճակագրական անհավասարակշռության նվազում (սեռ, ծագում, կրոն, աշխարհագրություն)</p> <p>3.4 Պետական բյուջեով նախատեսված ֆունկցիոնալ հատկացումներից շեղման % (ցածր թվերը մատնանշում են գործադիր – օրենսդիր հարաբերություններում բարձր հաշվետվողականություն),</p> <p>3.5 Թափանցիկ բյուջետային ընթացակարգի առկայություն (պետական և համայնքային բյուջեի վերաբերյալ տեղեկատվություն, հաշվառվող հանդիպումներ – ավելացնում է թափանցիկությունը),</p> <p>3.6 Որակավորման գերակայություն (այն դեպքերի %-ը, երբ որոշումներն ընդունվում են մասնագիտական փորձի / որակավորման / կատարողականի կամ կրթական մակարդակի հիման վրա) (հետազոտություն, աուդիտ),</p> <p>3.7 ՉԼՄ-ների նկատմամբ ճնշումների կիրառման բացահայտված և պատասխանատվության ենթարկված դեպքերին նվիրված հրապարակումների քանակը,</p> <p>3.8 ՉԼՄ-ների նկատմամբ ճնշումների փաստերի առթիվ դատարան ներկայացված հայցադիմումների քանակի հարաբերակցությունը դրանց առիթով</p>

	<p>դատական վճիռների թվին,</p> <p>3.9 Ընտրողների ռեզիստրում անճշտությունների հետ կապված բողոքների քանակը:</p> <p>3.10 «Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի» և «Հանրային հեռուստառադիոընկերության» խորհրդի մասնագիտական անկախությունն ապահովելու նպատակով կատարվել են համապատասխան օրենսդրական փոփոխություններ (այո/ոչ),</p> <p>3.11 ՁԼՄ-ների հավատարմագրումը օրենսդրորեն պարզեցված է (այո/ոչ),</p> <p>3.12 ՀՀ Կառավարությունը սահմանել է «Պետական մարմինների կողմից տեղեկատվության տրամադրման մասին» կարգը և քրեական օրենսգրքում կատարվել են դրանցից բխող փոփոխություններ (այո/ոչ),</p> <p>3.13 Նորմատիվ միաբժեքության նպատակով ՀՀ ընտրական օրենսգիրքում կատարվել են համապատասխան փոփոխություններ (այո/ոչ),</p> <p>3.14 Օրենսդրորեն ամրագրվել են նախընտրական միջավայրի վերահսկման ընթացակարգերը (այո/ոչ),</p> <p>3.15 Ընտրական օրենսգրքի խախտումների համար պատժամիջոցները օրենսդրորեն խստացվել են (այո/ոչ),</p> <p>3.16 Ընտրական գործընթացներում քարոզարշավների համար ՁԼՄ-ների կողմից ստեղծված անհավասար պայմանների նկատմամբ կիրառվում են օրենսդրությամբ ամրագրված վարչական և քրեական պատասխանատվության միջոցներ (այո/ոչ)</p>
--	---